

31155ար

555

Բնագրի



Երկուշաբթի, 28 Օգոստոս 1996 թ.՝ 86ամեայ տարիքին, Քիրականի մէջ իր մահկանացուն կնքել համաշխարհային աստղագիտութեան հսկաներէն հանդիսացող Վիկտոր Համբարձումեան:

Վ. Համբարձումեան ծնած է 1908 թ.՝ Թիֆլիս: Լախա կրթութիւնը սրանաւէ ետք, 1928 թ.՝ կ'ատարէ Լենինկրապի համալսարանը: 1928-1931 տարիներուն՝ կուսակի Խորհրդային Միութեան Գիտութիւննրու գլխաւոր աստղադիւրաբանին մէջ: 1931-1943 տարիներուն՝ իբրի ղսասխօս կը պաշտօնավարէ Լենինկրապի համալսարանին մէջ:

1930ական քուսկաններուն՝ կը մշակէ աստղագիտական շարք մը նոր տեսութիւններ ու կը նուաճէ միջազգային համբաւ: 1943 թ.՝ կը դառնայ Հայկական Գիտութիւններու Ակադեմիայի գլխաւոր հիմնադիրներէն մէկը ու անոր ատաշին նախագահը: 1968-1972 տարիներուն՝ կը սրանկնէ նախագահութիւնը Գիտական Ընկերութիւններու Միջազգային Խորհուրդին:

Կը տեղափոխուի Հայաստան ու կը նշանակուի Երեւանի աստղադիւրաբանի դիկաւար: 1946 թ.՝ իր նախաձեռնութեամբ կը սկսի Քիրականի աստղադիւրաբանի կառուցումը, որ ատարելով կը նուաճէ միջազգային համբաւ:

Բազմաթիւ շքանշաններու ու փոփոխումներու արժանացած Վ. Համբարձումեան երկար տարիներ իր մասնակցութիւնը ցերած է նաեւ Խորհրդային Միութեան ու Հայաստանի քաղաքական կեանքին:



1/ 2060-1997

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) * * *	Ստորերին վար
3) ՇԱԲԱՐԵ ՆԱՐԿՈՒՆԻ	Գովասանություն Վիկտոր Համբարձումյանի
8) ԶՕՐԻ ԲԱՍՏԵԱՆ	Սողեյու սիրապեղիան
9) Ն. ՉԱՐԻՈՒՏԵԱՆ	Սնդեմականին դարը
21) Վ. ԹԵՔԵԱՆ	Կաղանդի Ծառ
24) Վ. ՕՇԱԿԱՆ	Նոր արմար
44) ՎԱՐԱՆԻ	Կրկներկոյթ
55) Կ. ՀԷՔԻՄԵԱՆ	Բանաստեղծություններ
60) Գ. ԱԲԷԼԵԱՆ	Պերուք
68) * * *	Ջինքին առընթեր՝ զիրքը...
69) ՀՐԱՆՏ ԱՆԵՔՄԱՆԵԱՆ	Յոնիսը ասելի ծայրին
75) ՍԱՐՏԻՐՈՍ ՈՐՆ	Պասեանս՝ ծաղկեփնջով
81) ՆՈՐԵԿ ԳՄՄԱՐԵԱՆ	Բանաստեղծություններ
87) ԺԱՆՆԱ ԲԵՂԱՐԵԱՆ	Բանաստեղծություններ
91) * * *	Ընդգծումներ...
93) Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգոյն խորը
111) Գ. ՊԸԼՏԵԱՆ	Վերին յղացքը
130) Գ. ԱՆԱՆԵԱՆ	«Ջոր ասեմ, ասեմ և ոչ ամաչեմ»
140) ԼԵԻՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ	«Գեղարդ» Սուրիանայ պարեզիք-Ե. հարոր
145) Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ	«Էջեր հայ գաղթավայրերի դարմութեան»
147) * * *	Մշակութային լուրեր

Բագին

ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Լ.Չ. ՏԱՐԻ ԹԻԻ 1 ՉՄԵՌ 1997 ՊԷՅՐՈՒԹ

ԱՍՏՂԵՐԷՆ ՎԱՐ...

«Բագին»-ի ընթերցողներեն ոչ ոք զարմացաւ հարկաւ, երբ ներկայ համարին կողքին տեսաւ նոր հորին դարձած Վիկտոր Համբարձումեանի նկարը, եւ տարակոյս չունինք, որ ողբացեալ Շաւարշ Նարդուհիի անոր ձօնած գովասանութեան ընթերցումը անգամ մը եւս հպարտութեամբ պիտի ուռեցնէ սրտերը:

Քսաներորդ դարու մեր Էն շողափայլ աստղերէն Վիկտոր Համբարձումեան միայն աստղերու վերծանումով չգրադեցաւ, այլ առինքնող գործունէութիւն մը ծաւալեց նաեւ աստղերէն վար, մա՛նաւանդ Լուսաւորչի Աստղին տակ, հայրենապաշտութեան ընդոծին տարբերներուն մղումներով:

Ուրուագրենք քանի մը հատը--

Մամուլին մէջ մեզմէ շատեր կարդացած են կամ այցելուներէն լսած, որ իբրեւ Գիտութիւններու Ակադեմիայի նախագահ՝ Համբարձումեան նշանաւոր հաստատութեան հիմնարկներուն մէջ պարտադիր դարձուցած է Հայոց լեզուին գործածութիւնը եւ այդ ուղղութեամբ դոյզն ինչ գիշում չէ ըրած, երբ շարք մը հասկացողութիւններու հայերէնն անգամ հրամանագրով արգիլուած էր եւ ուրիշ հաստատութիւններու մէջ սանձարձակօրէն կը տիրապետէր ռուսերէնը:

Քիչ մը անդին ուշադրութեան կը յանձնենք համբարձումեանական ուրիշ սխրագործութեան մը մէկ նմայշը, Զօրի Բայայեանի ստորագրութեամբ, ի մասին Խորհրդային համագումարներէն մէկուն մէջ իր յանդուգն մէկ ելոյթին, ուր ան «պահանջեց քննարկել Կարսի պայմանագրի չեղեալ համարելու հարցը»: Ա՛յս:

Ամէնէն աննպաստ պայմաններուն մէջ հայոց լեզուն պարտադիր համարել տալու կամքին ու նոյնքան վտանգաւոր մթնոլորտի մը մէջ հայրենական մեր շարք մը եզերքներուն վերադարձը պահանջող քաղաքացիական ճաշութեան հետ, կրնա՞յ միթէ մէկը մտնուի մեր աչքին



առջեւ տեղի ունեցած աստղագետին աստեղային վերջին գոհարերա-
թիւնը, երբ քանի մը ուրիշ նուիրեալներու հետ, ութսունամեայ տա-
րիքին՝ հացադուլի դիմեց յանուն Արցախի արդարութեան:

Մտաւարական յարկի մը տակ եւ գիրքերով ու գրական դէմքերով
հարուստ միջավայրի մը մէջ հոգի ու ոսկոր կազմած Վիկտոր Համ-
բարձումեան անտարբեր չէր նաեւ հայ գրականութեան հանդէպ եւ սերտ
կապ մը կը զգար ժամանակակից բոլոր դէմքերուն հետ՝ Բաֆֆին մինչեւ
Թումանեան եւ Յովհաննէս Շիրազ: Հարկ է աւելցնել տակաւին, որ ան
պարզ ընթերցողի մը պէս չէր բանար ու գոցէր գիրքերը, այլ կրնար ա-
նոց ոգին խորութեամբ ըմբռնել եւ հաւաստի բնորոշումներով գնա-
հատել բոլորը: Յատկանշական նմայշ մը, Շիրազի գլուխ-գործոցին
մասին:

«Շիրազի «Քիրիլական» պոեմը հայ գրականութեան մէջ անսովոր
երեւոյթ է: Փիլիսոփայական իմաստով չափազանց խորը, նա միաժա-
մանակ ունի բարձր գեղարուեստական գրուածքի բոլոր արժանիքները:
Շիրազին բնորոշ պատկերների թարմութիւնն ու ինքնատուրքիւնը
պահպանում են եւ այս պոեմում, այդպիսիք գուցակցում են վառ հա-
մեմատութիւնների անպասելի հակադրութիւնների հետ: Շիրազը մեր
սրտից է խօսում, ինչքան ազգային, այնքան համամարդկային է նա:
«Քիրիլական»ից եւ գեղարուեստական մեծ հանդիստացայ: Մեծ պոետի
գլուխ-գործոցն է «Քիրիլական» պոեմը»:

Գիտութեան վրայ գումարած իր նշանակալի ներդրումները, նայն
մարզին մէջ խլած բազում ու բազմապիսի տիտղոսները, շքանշաններով
ու կոչումներով զարդարուած ըլլալու փառքն ու ստացած պատուանշան-
ները անչափելի արժէքներ են հարկաւ, բայց կը կարծեմք, որ ատենց
ձգողականութենէն աւելի՝ մեր ժողովուրդին հոգեբանութեան մէջ տեղ
ունին ու տեղ պիտի ունենան վերը յիշատակուած հայրենական իր իմաս-
տուն նախնանքները եւ անոց նմանները, որոնք անմեռ ծա-
ռանգութեան մը պէս պիտի փողփողին բոլոր ժամանակներուն:

Մեզ վեր, «վերն ամէնէն մեծ աստղին», աստղերուն նայելու յաւել-
ւածական հպարտութեան մը տէր դարձուցած աստղապսակ անուն մը
ինք՝ Վիկտոր Համբարձումեան, որ աստղերէն վար եւս ձգեց կտակա-
րանային ժառանգութիւն մը, գուտ ազգային, որով նաեւ կրկնակի-



20550-011
145-20 01
A.R.A.R.@

ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆԻ

«Յուան ցայտին փող սարեզն Հայկայ»:

ԱԼԵՃԱՆ

Ճամբայ ելա պատանին,
 Ճամբայ ելա հայ գիղէն:
 Գիղին անունն է ազգի թորքերէնով՝
 Բասար-գեշար:
 Արեւմտեան թորքերէնով՝
 Պասար-կէշէր,
 Որ թարգմանի՝ կը կոխէ-կ'անցնի:
 Եւ պատանին, հայ՛ն պատանին կորեց երկար, երկար՝ ճամբայ,
 Կոխեց-անցա գիղ ու քաղաք,
 Ինչպէս ըրին, ժամանակին, իր փաստոր նախնիքը,
 Որոնք գացին Բիզանդիոն՝ գահակալելու,
 Գացին Աթէնք՝ ճառագայթելու,
 Գացին Հոմ՝ իրենց թագը խլելու:
 Այսպէս պատանին, մեկնելով հայ Բասար-գեշարէն,
 Կոխեց-անցա Երեսանը,
 Կոխեց-անցա Թիֆլիսը,
 Կոխեց-անցա Մոսկուան,
 Կոխեց-անցա Լեմինկրաւորը,
 Կոխեց-անցա աշխարհի մեծ ու փաստական ժայռաքարաքանդը,
 Մինչեւ Թորիօ, մինչեւ Ռաշինկթըն ու Լոնտոն:
 Այսօր, ահա, կանգնած է այքերուս դիմաց,
 Սորպոնի մեծ ամփոքարունին մէջ,
 Մարդկային իմացականութեան Ռոյնպոսին վրայ,
 Անմահներով շրջապատուած:
 Անոնք բոլորը հագուած գաղճառփառ ակադեմական,
 Եւ պատմուճան քրմական,
 Որոնց վրայ կը խաղան
 Հանրապետական գոյները, կարմիրն ու կապուտը,
 Ժապատէն կազմած,
 Իրենց վզին շորջ՝ վակաս սպիտակ եւ խորշխորջան,
 Եւ գլխին՝ շարփուշ:
 Իսկ եւ կը դողան,
 Իսկ եւ կը լողան լոյսերու մէջ ցոլցումն,
 Երբ դիցուին Հայոց պատմութեան

Կը գրկէ զիս ու կը տանի
 Դէպի ետ, դէպի մեր պատմաբօր տունը:
 –Տրդա՛տն է, կը մոնջէ ականջիս, Տրդա՛տն է,
 Որ եկեր է Հոռմ,
 Եկեր է Հոռմ՝ իր թագն ստանալու:
 –Ոչ,–կը պատասխանեմ,–ուրի՛շ է այս Տրդատը,
 Ասիկա կու գայ, իր թագն ի ձեռին արդէն,
 Ըսելու անմահներու,–«Առէք,
 Առէք այս թագը ու դրէք գլուխս»:
 Եւ ես տեսա՛յ–ի՛նչ երջանիկ եմ,
 Եւ ես տեսա՛յ–ի՛նչ բախտաւոր եմ,
 Եւ ես տեսայ որ ազգերը ոտքի ելան խոնարհաբար,
 Ոտքի ելան անմահները եւ իրե՛նց ձեռքով
 Կատարեցին Հայ Հանճարին թագադրութիւնը,–
 Պսակեցի՛ն Հայուն գլուխը:

*
 * *
 *

Ո՛վ անմահներ, մտիկ ըրէք,–
 Մենք այն ժողովուրդն ենք, որ
 Բուներ է Արարատեան դաշտին վրայ,
 Ինչպէս զինեւտ խաղողատունկ,
 Եւ ողկոյզ է կապեր,
 Ողկոյզ է կախեր՝ Մասիսն իրեն սարսիհնայ,
 Բաժակ լեցուցեր բարկ եւ հպանուշ զինիով,
 Մատուակեր եւ արբուցեր ամէն երկիր:
 Ո՛վ անմահներ, մտիկ ըրէք,–
 Մենք այն ժողովուրդն ենք, որ
 Եմեր է սպերախտ հողամասի մը վրայ,
 Բայց աշխատեր, դատեր, տքներ,
 Ու շիներ է Գառնի,
 Շիներ է Ջուարթնոց,
 Շիներ է Աղթամար,
 Շիներ է Անի:
 Հրամայեր է ժայերուն, որոնք գլուխ են ծոեր,
 Դարձեր արձան, դարձեր պալատ, դարձեր եկեղեցի,
 Հրամայեր է գետերուն, որոնք հնազանդեր են,
 Դարձեր ազգի, դարձեր ցորեան, դարձեր կտաւ,
 Որպէսզի մարդիկ երգեն հրաշափառ.–
 «Հայաստա՛ն, երկի՛ր դրախտալայր»:
 Ո՛վ անմահներ, մտիկ ըրէք,–
 Մենք այն ժողովուրդն ենք, որ

Կանոնիս սրբանցեր խաւարին մէջ Ասիոյ,
 Լեզու է ստեղծեր եւ սատուածներուն սորվեցուցեր,
 Գիր է յօրիներ՝ սատղն՝ ըր կարդացեր,
 Լացեր եւ երգեր,
 Երգեր եւ լացեր
 Անոր համար որ
 Աստուածներու ընկեր՝
 Դեւերու մէջ է ինկեր,
 Շա՛տ է տառապեր,
 Բայց եւ մնացեր միշտ հաւատարիմ
 Յատերժական Հալկեան Հանճարին:
 Ահա զաւակը նոյն ա՛յդ ժողովորդին,
 «Փոքր ածուին»,
 «Փոքր դաշնակիցին»,
 Որ կայսրեր տուա սէզ Բիզանդիոնի,
 Իմաստուններ պատրաստեց հպարտ Աթէնքի մէջ,
 Պերճախօսութեան արձաններ կանգնեց օգոստոսիտ Հոռոմի
 մէջ,

Կրակի եւ արեան մկտրութիւնն ընտրեց
 Յանուն իր մշակոյթին պաշտպանութեան
 Եւ ստեղծագործելու ազատութեան:
 Ահա զաւակը նոյն այդ ժողովորդին,
 Որ չգոհացա՛ւ իր փաստակով ա՛յս երկրագունդին վրայ,
 Իր նուաճումով ամուր հողի վրայ,
 Ու կոխեց-անցաւ, յառաջ պացաւ, եւ ահա
 Կը բարձրանա՛ւ, կը բարձրանա՛ւ
 Ազատն ի վեր ի Մասիս,
 Կը բարձրանա՛ւ երկնքի մէջ,
 Կը բարձրանա՛ւ դէպի սատղերը,
 Գրեզու համար երկնակամարին վրայ
 Վկայութի՛ւնն Հալկական Տաղանդին:
 Ո՛ր գուշակն է արդէօք,
 Որ անուն է տուեր սգս անմահին,
 Եւ մկտրե՛ր կնքեր Վիկտոր,
 Որ թարգմանի՛ յաղթական:
 Այդ մակդիրն էր տրուած Արէս սպառազէն սատուածին,
 Արձանն յաղթութեան՝ ի ձեռին:
 Այդ մակդիրն էր տրուած Արամազդ սատուածաբօր,
 Որ պարտութեան մատնեց երկնային ուժերը թողր՝
 Վեհապետութի՛ւնն հոշակելու համար:
 Այդ մակդիրն էր տրուած յաղթապանճ Հերակլէսի,
 Որ ջախջախեց թողր հրէշները եւ սազակները,
 Տպտապարելու համար յաղաղութիւն եւ ի մարտիկ հաճութիւն:

Ի՞նչ անըմբռնելի զուգարիպություն, դարձեալ,
 Որ սցս անմահին կը միճակի դէտ կրել
 Մակամուն մը խորհրդանշական,—
 Համբարձումեա՛ն:
 Հրաշագի թայով մը պարփակեալ,—
 Համբատեա՛լ:
 Ուխտելով, մաղթելով սուպահովաբար,—
 Որպէսզի համբատեա՛լ, բարձրանա՛լ երկինք:
 Նստի ածպերուն շրթներուն վրայ
 Եւ գրեթէ պատմութեան էջերուն վրայ,
 Գրէ երկնքի պատմութեան մէջ,
 Անունն այն ժողովուրդին,
 Որ իր անմահութիւնն է հաստատած արդէն,
 Աստի մը տազով իր անունն աղուոր,—
 Հազկ համաստեղութիւն:
 Ես լաւ չսեցի —զի գինով էի—
 Խօսքը, փոխ առնուած Քանթէն,
 —Օ՛, գիտութիւն ստոյգ եւ անստոյգ,—
 Զոր արտասանեց Փրոֆ. Զամանակի,
 Երբ կը կարդար իր ներքողեանը՝ երկու անմահներուն
 ուրբեալ:

Մին աստեղագէտ, Վիկտոր,
 Միւսը հնէաբան, Սիմիւրն,
 Մին երկնափայլ:
 Միւսը երկրափայլ:
 Մին ստարկազ ընտրած՝ անշօշափելին,
 Անհունութեան մէջ կորստած,
 Միւսը՝ առարկան իր ձեռքին մէջ պինդ բռնած:
 Սակայն, քանիօ՞ն դժուար, քանիօ՞ն կնճոտ,
 Առասպելապին աշխատանք է ընտրած
 Այն որ Բիրական բարձրացած՝
 Կը դիտէ երկինքը,
 Կը զննէ աստղերը,
 Կը քննէ շարժումը մոլորակներուն,
 Եւ իմացականութեան ուժով ցեղածին՝
 Կը ճամբորդէ անջրպետին մէջ,
 Ժամանակին մէջ,
 Տարածութեան մէջ,
 Անհունութեան մէջ անակիզք եւ անվախ ճան:
 Ո՛վ տուա իրեն
 Այսքան քաջութիւն, այսքան ընդունակութիւն,
 Առատկ եւս ճաշակ:
 Հա՛յրը, որ, ինչպէս կը վկայէ՝

Քերթուածներուն փունջով,
 Կը սիրէր սաստկով «Անճումնի էջերում»:
 Կամ Վահագն,
 Որո շահատակութեան հետքերուն վրայ,
 Դարեր ետք, պիտի քալէր նոյնիցն՝ Վիկտոր,
 Ոստանապիղծով աստղերու ածուն,
 Որ կազմուած է, կ'ըսեն՝ ըստ աւանդութեան,
 Վահագնի գողցած ու ճամբան թափած խորձ մը յարդերով,
 «Յարդգողի ճամբայ» անուամբ ճանչցուած մէջ,
 Կամ ըստ յունական աւանդութեան,
 Ի յուշ Հեղապի ծիծերէն ժայթքած կաթի հետքերուն՝
 Այժմ արտել «ծիր կաթին» անուամբ ծանօթ,
 Որպէսզի կոչուի պատմեառեա եւ միշտ յարտեան՝
 Գազաքսիա Համբարձումեան:
 Ստոյգ է, սակազն, նախաստիմանեա՛լ,
 Հրաբուխի՛ է նման Հանճարը Հակեան:
 Խաւարին մէջ դարերու
 Յանկարծակի կը բորնկի, կը բորբոքի,
 Կը բոցախափ,
 Ու դուրս կը վազէ «ի բոցուն»
 Պատանի մը, զոր սովոր ենք երգել պսալէս,
 «Նա հուր հեր ունէր,
 Եւ աչկունքն էին արեգակունք»:
 Այդ պատանին է, ահա, որ ծնա
 Ի Բասար-գեչար:
 «Ծագէ Հայ Հանճար, փայլէ թիւր բոցեր,
 Իմանան ազգեր,
 Թէ Հայք չեն մտեր»:
 Թող թշնամին իմանայ,
 Թող իմանա՛լ թշնամին,
 Թող չըսէ թէ լուր չունէր,—
 Մեր պատմութեան պատգամն է ստ պատանին որ ծնա
 Ի գիւղ Բասար-գեչար-
 —Կոխէ՛ վրան եւ անցի՛ր:

ՅԱԻԱՐԸ ՆԱՐԴՈՒՆԻ

ԱՊՐԵԼՈՒ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ

Կարճը դա առևտրական երկու եկեղեցի է, առևտրական դրսորոց, առևտրական «Կարա» պարբերական հրատարակութիւն: Եւ այս ամէնը յանձնուեց Թուրքիային Ստալինի մատուցումով, որը ցուցում տուեց հայերին ոչ մի թիզ հող չթողնել: Եւ Թուրքերը, որոնք թէկուզ «յանուն քաղաքավարութեան» կոնֆերանսից առաջ պատրաստ էին հայերին յանձնել նրանց հինաւուրց մայրաքաղաք Անիի աւերակները, հրաժարուեցին նաեւ այդ «լուսութիւնից», խմանալով Ստալինի ցանկութեան մասին, որին կոչում էին եռլիաշ Չուղան:

Դպրոցում մենք անցել ենք, որ առև մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը արտասահմանում չի եղել: Բայց հագիւ թէ բանաստեղծը գիտեմար, որ մահուանից ութսուն տարի յետոյ իր կենսագրութեան մէջ ճշգրտումներ պիտի մտցուէին: Նա ճանապարհուել է դէպի հայկական էրզրում քաղաք հայկական տարածքով, որը մտնում էր Ռուսական պետութեան կազմի մէջ: Այսօր էրզրումն արդէն արտասահման է: Դա Թուրքիա է: Դա ՆԱՏՕ է: Դա ռազմայինազատեր է պատմական Հայաստանի հողում, որը արեան գնով մտաւ Ռուսաստանի կազմի մէջ եւ այժմ դարձել է, ինչպէս սաւում է, թշնամական տարածք:

Հաւանորէն ձեռանից ոչ մէկը ուշադրութիւն չի դարձրել համագումարում ԽՍՀՄ Ժողովրդական ղեկաւորատ, ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումեանի ունեցած ելոյթի վրայ, որը պահանջեց քննարկել Կարսի պայմանագիրը չեղեալ յայտարարելու հարցը: Չէ՞ որ խօսքն այն մասին չէ, որ անհրաժեշտ է անմիջապէս պատերազմ թայտարել Թուրքիային: Խօսքն այն մասին է, որ այդ պայմանագրի համաձայն հայկական խորհրդային հողերը ոչ միայն բուն Թուրքիային անցան, այլեւ հայկական հողերը ամբողջութեամբ հէնց նոր ստեղծուած Թուրքիական սոցիալիստական կազմաւորմանը, որն ստացաւ Ադրբեյջան անուանումը, որտեղ մուսուլմաններն իրենց յամառօրէն Թուրք են անուանում:

(...): Եկէք կրկին վերադառնանք քսանմէկ թուականի իրադարձութիւններին: Թուրքիայի հետ կնքուած երկու ստալինեան պայմանագրեր եւ երկուսն էլ յանգեցրին նրան, որ ամբողջապէս վերածնուեց նախկին Ռուսական պետութեան հարաւային սահմանների քարտէսը: Եւ այսօր դեռ խօսում են այն մասին, որ վերակառուցումը սահմանների վերածնում չէ: Իսկ այդ դէպքում հապա ի՞նչ է վերակառուցումը, եթէ ոչ Ստալինի վերածնուած սահմանների վերածնում: Առաջին անգամ Ռուսաստանը իր հողերը տուեց ուրիշ («Աւանգարդ», 8 Հոկտեմբեր 1989, հատուած):

ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

Ն. ՉԱՐԻՆՈՒՏԵԱՆ

ԱՆԴԵՆԱԿԱՆԻՆ ՊԱՏԸ

—Պատմուածք—

«Երկինքէն իջած հրեշտակ մըն է», կ'ըսէին իր մասին:
Արդարեւ, զայն աշխարհ բերելէ առաջ, մայրը ուզած էր, որ
զաւակը մկրտեն հրեշտակի մը անունով՝ Ուրիէլ:

Ուրիէլ հպարտ գլուխով, լայն ճակատով, սեւ ու խոշոր աչքերով,
բարձրահասակ ու բարեկամ բրիտասարդ մըն էր: Հոգին ալ մա-
քուր էր, ջինջ ու անկեղծ՝ իր աչքերուն պէս:

Բայց ինչպէս երկինքէն աքսորուած ունէ հրեշտակ, Ուրիէլ
դժբախտ էր: Մայրը մեռած էր քսան տարեկանին՝ իրեն ծնունդ
տուած օրը: Տարի մը ետք, հայրը ուրիշ կին մը բերած էր տունը:
Համալսարանին մէջ, ընկերները կը նախանձէին իրեն, որովհետեւ
խելացի էր ու փայլուն, ու վերջապէս սիրած աղջիկը դացած էր
ուրիշ մարդու մը գիրկը:

Շուտով անդրադարձաւ, որ մարդիկ կեղծաւոր ու խաբերայ
էին, աշխարհ՝ կատարեալ նեխածութիւն մը, կիները՝ անհաւատա-
րիմ եւ թեթեւաոյիկ:

Միակ անձը, որ պիտի կարենար զինք սփոփել ու պաշտպանել
կեանքի ապականութեան եւ սաղրանքներուն դէմ, մեկնած
էր ուրիշ աշխարհ մը:

Հին օրերուն, իր կացութեան մէջ գտնուող երիտասարդները
կը դառնային թափառական ասպետ, կամ կը քաշուէին վանք
ծառայելու համար Աստուծոյ եւ իրենց թշուառ եղբայրներուն:
Բայց ներկայիս, մարդկութիւնը ընտրած էր նիւթը իբր աստուած
եւ կը պաշտէր դրամը: Ուստի՝ Աստուած երես դարձուցած
էր մարդոցմէ եւ չէր լսեր անոնց աղօթքները եւ աղաչանքները:

Վանքերը եւ եկեղեցիները պարապ էին, եւ երբ քահանաները
պատարագ կը մատուցանէին եւ «Առէ՛ք, կերէ՛ք» կ'աղաղա-
կէին, Յիսուս չէր իջներ խորանին վրայ: Հիմա՝ որ տէր էին
գիտութեան եւ հարստութեան, մարդիկ կը կարծէին, որ պէտք
չունէին Աստուծոյ: Ո՞մանք նոյնիսկ կը պնդէին, որ Աստուած
չէր կրնար գոյութիւն ունենալ առանց իրենց աղօթքներուն,
խունկերուն եւ ծէսերուն:

Երբ մանուկ էր, Մեռելոցի օրերը, տարին մէկ-երկու անգամ
հայրը զինք կը տանէր մօր գերեզմանը, որ կը գտնուէր քաղաքին
մօտիկ բլրակի մը վրայ: Մօր շիրիմը մարմարէ քառանկիւն կա-
ռոյց մըն էր, որուն վրայ գրուած էին անուն մը եւ երկու թուա-
կաններ: Այցելութիւնը կարճ կը տեւէր, որովհետեւ հայրը շատ
զբաղած մարդ մըն էր եւ ժամանակ չունէր մեռելներուն յատկա-
ցընելու: Ուրիէլ մօր շիրմաքարին վրայ կը գետեղէր գերեզմանատան

մուտքէն զնուած ծաղկեպսակը, կարճ աղօթք մը կ'ընէր եւ կը հետեւէր հօր, որ անհամբերութեան նշաններ ցոյց կու տար:

Եկաւ ատեն մը, երբ հայրը գաղտնից իր այցելութիւնները՝ մեծ վիշտ պատճառելով զաւակին՝ Անցան տարիներ: Երբ Ուրիէլ դարձաւ պատանի, արտօնութիւն խնդրեց հօրմէն, որպէսզի մինակը երթայ մօրը այցելութեան: Հայրը մերժեց: Օր մը, չանստով հօր մերժումին, դպրոցէն արձակուելուն պէս, ինքնաշարժ մը վարձեց եւ զնաց գերեզմանատուն:

Երբ հասաւ շիրիմին առջեւ, արդէն մութը սկսած էր կոխել: Ուրիէլ ծունկի եկաւ եւ սկսաւ աղօթել: Շուրջը լուռ էր ու ամայի, բայց ինք երկիւղ չէր զգար, որովհետեւ գիտէր, որ մայրը պառկած է այս մարմարին տակ, իր հողէ անկողինին մէջ: Ուրիէլ լացաւ, ողբաց, աղաչեց: Եւ յանկարծ հողին տակէն կարծեց լսել մօր ձայնը:

—Ուրիէլ, զաւակս, մի՛ լար, մի՛ տիրիր, ես վերէն կը հսկեմ վրագ: Գիտեմ, որ մինակ ես ու դժբախտ, բայց օր մը միասին կ'ըլլանք հօն՝ ուր կը դռնուիմ հիմա: Երբեք զիս մի՛ մոռնար, երբ ժամանակ ունենաս, եկուր քովս, որպէսզի քեզ մխիթարեմ: Ուրիէլ այդ իրիկուն չկրցաւ աւելի երկար մնալ մօր շիրիմին քով, որովհետեւ ինքնաշարժին վարորդը քովը եկաւ եւ ըսաւ, որ մէկ ժամը արդէն անցած էր:

Երբ տուն հասաւ, հայրը, որ մտահոգ էր իր երկար բացակայութենէն եւ կը պատրաստուէր օստիկանութեան հեռաձայնելու, զինք յանդիմանեց:

—Հայրիկ, — ըսաւ Ուրիէլ, — պէտք չունէիր մտահոգուելու, որովհետեւ զայցած էի մայրս տեսնելու:

—Այսուհետեւ քեզի խստիւ կ'արգիլեմ, որ մինակը գերեզմանատուն երթնայ օրուան այդ ժամուն:

Ուրիէլ, կարծելով, որ հօր վերապահութիւնը կը վերաբերէր այցելութեան ժամուն, գերեզման զնաց կիրակի նախամիջօրէնները, պատարագէն հաք:

Երբ Ուրիէլ քսան տարեկան եղաւ, որոշեց հեռանալ աշխարհէն: Ան պահանջեց մօր ձգած ժառանգութիւնը:

—Մըր պիտի երթաս, — հարցուց հայրը:

—Որեւէ տեղ, որ հեռու ըլլայ այս աշխարհէն:

Հայրը բան չհասկցաւ ու դուրսը շարժեց: Ինչ կ'ուզէր ըսել զաւակը՝ Միայն մահը կրնար տանիլ ուրիշ աշխարհ մը:

Ուրիէլ ուզեց վերջին իրիկունը անցընել մօրը քով: Մունկի եկաւ, աղօթեց ու խօսեցաւ:

—Կ'ուզեմ մօտը գալ, բայց ճամբան չեմ գիտեր: Ինծի օգնէ: Մահը այք առած եմ, բայց ատիկա դիւրին եւ հասարակ միջոց մըն է: Պատրաստ եմ կրելու զրկանքներ, ընելու գրհոգութիւններ, միայն թէ կարենամ մէյ մը տեսնել քեզ, լսել ձայնդ, վայելել ժպիտդ, համբուրել ձեռքերդ:

—Ես չեմ կրնար քեզի ուղղութիւն տալ, բայց անկողն ու մաքուր հողիներուն համար ամէն ինչ կարելի է: Կարդա՛ Գիրքը եւ պիտի գտնես Երկինքի Թագաւորութեան ճամբան:

Մայր ու զաւակ երկար խօսեցան, երբ Ուրիէլ ոտքի ելաւ, արդէն գիշերը հասած էր իր վախճանին եւ այգաբացը կը ծածկէր երկնակամարին արեւելեան մասը:

Ուրիշ ուշի-ուշով կարգաց Գիրքին համարները եւ յուսախար
չեղաւ: Ան ո՛չ միայն կը խօսէր Երկինքի Արքայութեան մասին,
այլեւ կը յայտնէր գայն նուաճելու միջոցները:

«Խնդրեցէ՛ք, եւ ձեզի պիտի տրուի, փնտոնցէ՛ք, եւ պիտի գրա-
նէք, զարկէ՛ք, եւ դուռը պիտի բացուի»:

«Եթէ մանուկներու պէս անմեղ չըլլաք, պիտի չմտնէք Երկինքի
Արքայութիւնը»:

«Հաւատքը կը տեղափոխէ լեռները»:

«Ե՛ս եմ ձամբան, կեանքը եւ ճշմարտութիւնը»:

Բայց ո՛վ իրեն ցոյց պիտի տար Անդենականին ճամբան»:

Անցեալին կային արդար ու սուրբ մարդիկ, որոնք ամէն բան
գիտէին: Անոնք կ'ապրէին վանքերու մութ խուցերուն մէջ կամ
կը ճգնէին անմարդաբնակ վայրերը: Բայց ո՛ւր գտնել այդպիսի
մէկը»:

Ուրիշ չըլլեցաւ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր, վանքէ վանք:
Այցելեց սրբավայրեր: Եգիպտոսի հուսկաւոր մենաստանները բոյն
դարձած էին շնագայլերու եւ իժերու, Հայաստանի վանքերուն
մէջ չըլլիկներ եւ մողէզներ կը վխտային, Նոր Աշխարհի առաքեա-
լատուները տակաւին կը պահէին իրենց պաշտպան սուրբերուն
անուաները՝ Սանթիակօ, Սան Փաւլօ, Սան Տիէկօ, Սան Կապրիէլ,
Սանթա Պարպարա, Սան Լուիս, Սան Հոսէ, բայց դարձած էին
գրօսաչրջիկութեան վայրեր: Անցաւ Եւրոպա եւ սկսելով Սպանիա-
յէն մէկիկ-մէկիկ այցելեց այն մենաստանները, ուր սուրբեր եւ
սրբուհիներ ապրած էին, - Ավրլա, Պուրլոս, Սարակոս:

Ուրիշ անցաւ Փիրենեան լեռները: Երկար աղօթեց Լուրտի
եկեղեցիին մէջ, ճիշդ այդ փոքրիկ քարայրին առջեւ, ուր Աստուա-
ծամայրը երեւցած էր Պերնատէթին: Անցաւ Իտալիա, Գերմանիա,
Աւստրիա, բարձրացաւ Աթոս լեռան վրայ, ուր հանդիպեցաւ հա-
րիւրամեայ վանականներու: Անկէ՛ Սերպիա, Հունգարիա, Ռուսա-
նիա, Ռուսիա: Ու վերջապէս, Ուրալ լեռներու քարայրներէն
մէկուն մէջ գտաւ իր փնտոածը՝ ալեհեր ու կոյր ճգնաւոր մը, որ
հոն կ'ապրէր Նիքոլա Ա- կայսեր օրերէն ի վեր: Ծգնաւորը կը
կոչուէր Սերկէյ, եւ տարիքը մէկ ու կէս դար էր: Ծրջանի գիւղա-
ցիները անոր հաց ու կաթ կը բերէին»:

Մերունին ձեռքը դրաւ երիտասարդին գլխուն»:

«Եթէ ժամանակ ունենայի, միասին կը կատարէինք ուղեւո-
րութիւնը: Ես ալ կ'ուզեմ հեռանալ այս աշխարհէն, բայց մեկնումի
ժամս չէ՛ հնչած տակաւին: Բայց որովհետեւ անկեղծ սիրտ մը
ունիս եւ նպատակդ վեհ է եւ ճամբան երկար, քեզ պիտի չուշացնեմ:
Իմ կարողութիւնս սահմանափակ է, ես կրնամ միայն քեզ ուղղել
մինչեւ հոն, ուրկէ կը սկսի երկրորդ Հանգրուանը: Կը քալես
դէպի արեւելք, արեւը ունենալով իրբեւ ուղեցոյց: Եօթներորդ
օրը կը հասնիս բարձր լեռնաշղթայի մը առջեւ, որ քեզի անանցանելի
պիտի թուի: Լեռնաշղթային բարձրագիւր ու խորունկ քարայրնե-
րէն մէկուն մէջ կը բնակի ճգնաւոր մը, որ իմ երկու տարիքս
ունի: Երբ հասկնայ, որ իմ կողմէս կու գաս, ան քեզի կը բացատրէ
Անդենականին ճամբան»:



Եօթը օր եւ եօթը գիշեր քալելէ ետք, երիտասարդը հասաւ լեռնաշղթայի մը առջեւ, որուն գագաթները կը գերազանցէին Հիմայալաններու բարձրութիւնը: Բարձրագոյն լեռան ցից կողին վրայ կը բացուէր քարայրին մութ երախտ: Հոն հասնելու համար ո՛չ ելարան կար եւ ոչ պարան: Ուրիշէլ, կառչելով ձեռքերու եւ ոտքերու եղունգներուն, թիզ առ թիզ բարձրացաւ ժայռի այդ անտաշ պատը, որուն վրայէն մողէզներն իսկ չէին կրնար մագըղցիլ, եւ հասաւ քարայրին սեմին երկարող ժայռին ցցուածքին վրայ:

Բարձրահասակ, սպիտակահեր եւ սպիտակամօրուք ծերունի մը կանգնած էր բարձրագիւր քարայրի մուտքին:

—Ես շա՛տ հեռուններէն կու գամ,— ըսաւ երիտասարդը,— եւ ճամբայ ելլելէ առաջ լրացուցի յաջող ուղեւորութեան մը բոլոր պայմանները: Հանգրուանը տաժանակիր եւ յուսահատեցուցիչ եղաւ, բայց որովհետեւ հաւատք ունէի, չընկրկեցայ եւ աճա՛ հոս եմ:

Ծերունին շարունակեց սեւեռել հեռունները: Իր երկար մօրուքով եւ մագիւրով, կմախացած մարմնով եւ անհունին չափ խորունկ աչքերով, ան կը նմանէր այն նուիրական մայրիներուն, որոնք հազարամեակներէ ի վեր կը զարդարեն Լիբանանի անառիկ լեռները:

—Ըսիր, որ հաւատքդ մեծ է, բայց ի՞նչն է, որ քեզ մղեց ձեռնարկելու այս ուղեւորութեան, որ կը պահանջէ գերմարդկային կարողութիւն եւ ուժ:

—Մէ՛րը, որ հաւատքին անբաժան քոյրն է: Ճամբուս վրայ հանդիպեցայ շոգիացած գիւղերու, փոշիացած քաղաքներու, հիւլեացած եկեղեցիներու եւ վանքերու: Ձգացի, որ անոնք ամայի չեն, որովհետեւ հոն կ'ապրին մեր նախնիներուն տառապած հոգիները: Գիշերուան լուսնեան մէջ, այդ փլատակներու տակէն կը լսէի արձագանգը դարեր առաջ երգուած շարականներուն:

- Ի՛նչ կ'ուզես ինձմէ՛:
- Կ'ուզեմ, որ ինձի ցոյց տաս անցեալիս ճամբան:
- Անցեալի ճամբան կը սկսի Անդենականէն:
- Անցեալ կամ Անդենական ինձի համար նոյն բաներն են:
- Բայց անոնց հասնելու ճամբաները տարբեր են. անցեալի ճամբան երազի դաշտերէն կ'անցնի, իսկ Անդենականի ճամբան հաւատքի բարձունքներէն:

—Երազի ճամբով ընթանալու համար պէտք չունէի հոս գալու: Հաւատքի ճամբան այստեղէն կը սկսի, բայց շատ քիչերու տրուած է անոր վրայէն քալել: Հաւատքը անհրաժեշտ է, բայց նպատակն ալ նոյնքան կարեւոր է: Ըսիր, որ ճամբայ ելած ես սէր փնտռելու, ի՞նչ տեսակ սէր:

—Մայրական սէր: Կ'ուզեմ անգամ մը տեսնել մայրս, որ մեռաւ ինձի կեանք տուած օրը: Ուրեմն՝ ես եղայ անոր դահլիճը եւ ինք միայն կրնայ ներել յանցանքս: Ան քան տարեկան էր, ես ալ հիմա նոյն տարիքը ունիմ: Մօրս դէմքը անգամ մը տեսնելը իմ անժամանցելի իրաւունքս է:

—Այդ իրաւունքը ո՛չ ոքի տրուած է: Երկու աշխարհներուն միջեւ կը ցցուի Անդենականին Պատը, որ աներեւոյթ է, բայց անանցանելի:

—Գիրքին մէջ գրուած է՝ «Հաւատքը կը տեղափոխէ լեռները»: Այն ատեն ո՛ւր մնաց հողիներու անմահութիւնը:

—Սո Տիրոջ համեստ ծառաներէն մէկն եմ եւ պաշտօնս է ուղիղ ճամբան ցոյց տալ մորորած ուղեւորներուն:

—Շա մոլորած ուղեւոր մը չեմ: Գիտեմ ուրկէ՛ կու գամ եւ ո՛ւր կ'ուզեմ երթալ: Իմ նպատակս է անգամ մը տեսնել մանկամարդ մայրս, անոր յայտնել անհուն սէրս եւ իրմէ ներողութիւն խնդրել, որովհետեւ ես եղայ իր մահուան պատճառը:

Մերունի ճգնաւորը նայեցաւ երիտասարդին աչքերուն մէջ եւ հոն տեսաւ անծայրածիր սէր, անմեղութիւն ու նաեւ տառապանք:

—Շատեր քեզի պէս եկան մինչեւ հոս՝ յոյսով եւ հաւատքով գինուած. հայրեր՝ որոնք արկածով կորսնցուցած էին իրենց մէկ հատիկ զաւակը. մայրեր՝ որոնց որդիները ինկած էին կուռի դաշտերուն վրայ. քոյրեր՝ օրօրոցի մէջ մեռած իրենց եղբայրները կը փնտռէին, եւ զաւակներ՝ իրենց մայրերը: Անոնց պէտք եղած ուղղութիւնը առի, բայց չեմ կարծեր, որ անոնցմէ ոեւէ մէկը հասած ըլլայ իր նպատակին, որովհետեւ կա՛մ այն է, որ անոնց բան մը կը պակասէր եւ կամ սխալ մեկնաբանած են ցուցմունքներս: Բայց դուն անոնցմէ տարբեր ես եւ կրնաս յաջողիլ:

—Ի՞նչ ըսել կ'ուզէք:

—Ըսել կ'ուզեմ, որ դուն Ազամի սերունդէն ես, այսինքն՝ ընտրեալ մը:

—Ի՞նչոր մարդ արարածները Ազամի սերունդէն են:

—Մէ: Ստեղծագործութիւնը պահ մը չէ, այլ հոլովոյթ մը, որ մեկնելով նախնական բլիթէն վերածուեցաւ բոյսի, միջատի, սողունի, թռչունի, չորքոտանիի, որ այլափոխուելով ծնունդ տուաւ երկոտանիի մը, զոր մենք սխալմամբ կը կոչենք մարդ, փոխանակ մարդակերպի: Անոնց բոլորը, այսինքն՝ բոյսերը, ձուկերը, սողունները, թռչունները, չորքոտանիները եւ մարդակերպերը, բոլորելէ ետք կեանքի հոլովոյթը, կը մեռնին եւ կը վերադառնան այն հողին, որմէ ծնած են: Անոնցմէ զատ, Աստուած ստեղծեց նաեւ կատարեալ էակներ՝ հրեշտակներ եւ անտրոկիներ: Առաջինները անտեսանելի հոգիներ են, երկրորդները ունին անթառամ մարմին ու անմահ հոգի եւ կ'ապրին ուրիշ աշխարհի մը մէջ:

—Անտրոկիներու մասին լսած եմ, բայց գիտնականները զանոնք կը նկատեն առասպելական էակներ:

—Անտրոկիները կատարեալ եւ անմահ էակներ են, բայց չեն կրնար ծննդաբերել, որովհետեւ արուն եւ հգը կը կազմեն մէկ մարմին: Ոմանց մէջ կը տիրապետէ առնականութիւնը, ուրիշներու մէջ՝ իգականութիւնը: Առաջիններու դասակարգին կը պատկանէր Ազամ, երկրորդին՝ Լիլիթ: Մարդակերպերը զարգացնելու համար, Աստուած աշխարհ զրկեց Ազամը եւ Լիլիթը: Հակառակ իրենց կատարի գիրկընդխառնումներուն, Լիլիթ, որ էգ անտրոկին մըն էր, կը մնար ամուլ: Այն ատեն Ազամ Աստուծմէ խնդրեց, որ իրեն տայ ուրիշ ընկերուհի մը, որ կարենայ ծննդաբերել շուրջի:

մարդակերպ կիներուն պէս Աստուած, Աղամբ անէացնելէ ետք խոր քունի մէջ, անոր մարմնէն բաժնեց իգական մասը եւ կազմեց Եւան: Երբ Աղամ տեսաւ Եւան, զարմացաւ եւ ուրախացաւ. «Վերջապէ՛ս այս մէկը իմ միսէս միս է, եւ արիւնէս՝ արիւնն»: Աղամ ճանչցաւ իր կինը՝ Եւան եւ անկէ ունեցաւ բազմաթիւ զաւակներ: Սակայն, ժամանակի ընթացքին, Աղամի որդիները, որ Աստուծոյ զաւակներն էին, իրենց կին ընտրեցին մարդակերպերու գեղեցիկ աղջիկներէն եւ կորսնցուցին իրենց անմեղութիւնը եւ անմահութիւնը: Չանոնք վերջնական կորուստէ փրկելու համար, Աստուած աշխարհ ղրկեց «Նոր Աղամ» մը, որ իր Որդին՝ Յիսուս Քրիստոսն էր: Ան խաչուեցաւ եւ մեռաւ անոնց համար եւ ոչ թէ անասնածին մարդակերպերուն համար: Հասարակ մահկանացուի մը համար դժուար է զանազանել Աղամի որդիները մարդակերպերէն: Բայց ես ունիմ այդ գիտութիւնը եւ կրնամ ըսել, որ դուն Աղամի սերունդէն ես եւ կրնաս յաջողիլ հոն՝ ուր ուրիշներ ձախողած են:

—Եթէ այդպէս է, այդ մեկնողներէն ոմանք մինչեւ հիմա պէտք է վերադարձած ըլլային:

—Իմ մատնանշած ճամբաս ներկայէն ապագայ կը տանի, հետեւաբար ետդարձ չկայ: Ժամանակը կ'ընթանայ մէկ ուղղութեամբ, եւ ան՝ որ կը բռնէ անցեալի ճամբան, չի կրնար վերադառնալ:

—Վերադառնալը կարեւոր չէ: Ինծի ցոյց տուէք ուղին:
—Ես այդ կարողութիւնը չունիմ: Պէտք է գտնես այն մէկը, որ անկէ անցաւ եւ վերադարձաւ: Անոր անունը գրուած է Գիրքին մէջ:

—Հասկցայ: Բայց ո՛ւր կրնամ գտնել զայն:
—Հոն՝ ուր ապրեցաւ ու մեռաւ:

—Ե՛րբ կրնամ տեսնել զինք:
—Աւագ Եարթուան վերջին օրը ան կ'ելլէ իր գերեզմանէն:

Այն ատեն կը մօտենաս իրեն ու կը ներկայացնես խնդրանքդ: Գերեզմանը կը գտնուի Երուսաղէմէն Բեթանիա տանող ճամբուն աջ կողմը՝ գիւղ չհասած: Բայց մինչեւ հոն ճամբան երկար է եւ դժնդակ եւ քեզմէ պիտի պահանջէ մեծ զոհողութիւններ:

—Ի՞նչ տեսակ զոհողութիւն:

—Վերջին հանգրուանին, պիտի անցնիս շատ մը երկիրներէ, քաղաքներէ եւ գիւղերէ, ուր կը տիրէ տառապանք եւ թշուառութիւն: Պիտի հանդիպիս չքաւորներու, մուրացկաններու եւ հիւանդներու: Կը տեսնեմ նաեւ, որ խոհեմ ես ու նախատեսող: Վարը ունիս առոյգ ձի մը եւ ուտեստեղէնով եւ այլ պիտանի առարկաներով ծանրաբեռնուած ջորիներ: Մի մոռնար, որ պիտի անցնիս անապատներէ, ուր տարիներէ ի վեր կաթիլ մը անձրեւ չէ ինկած: Աղբիւրին քով պարապ տիկեր կան, զանոնք լիցուր ջուրով, որպէսզի կարենաս ճամբուդ վրայ անմեղ մանուկներ փրկել: Եթէ մէկը վերարկուդ ուզէ, անոր տուր նաեւ շապիկդ, եթէ մէկ դահեկան մը ուզէ, անոր տուր հարիւր, եթէ ջորիներէդ մէկը ուզէ, անոր տուր երկու հատ, որպէսզի երբ հասնիս Ղազարոսին՝ թեթեւցած ըլլաս երկրաւոր ստացուածքներէն եւ ծանրաբեռնուած ըլլաս միայն ու միայն բարի արարքներովդ եւ

վրադ ունենաս մեռելներու ճերմակ պարեգօտրու եւ միշտ ի մտի ունեցիր Տիրոջ հետեւեալ խօսքերը: «Վասնզի անօթի էի, եւ ինծի ուտելիք տուիք, ծարաւ էի եւ ինծի խմցուցիք, օտարական էի, զիս ներս առիք: Մերկ էի, եւ զիս հագցուցիք, հիւանդ էի, եւ զիս տեսնելու եկաք, բանտի մէջ էի, եւ ինծի այցելեցիք»:

*
* *

Անապատը անծայրածիր էր: Ուրիշլ ուրախացաւ, երբ տեսաւ դաշտեր եւ գիւղեր: Բայց դաշտերը անմշակ էին, եւ գիւղերը անբնակ: Զամբուն եղբորը, տեղ-տեղ կուտակուած էին մարմիններ, որոնք կեր կը ծառայէին երկրի բորենիներուն եւ երկնքի արծիւներուն, անդդերուն եւ բազէներուն: Ուրիշլ հասկցաւ, որ պատերազմ տեղի ունեցած էր այս կողմերը եւ ճամբան կրնար վտանգաւոր ըլլալ: Պահ մը մտադրեց շեղիլ եւ անցնիլ աւելի ապահով վայրերէ, բայց յիշեց ճգնաւորին խօսքերը: Եթէ անցնէր անմարդաբնակ վայրերէ, որո՞ւն բարիք պիտի ընէր:

Որքան կը մօտենար մայրաքաղաքին, այնքան կը շեշտուէր աւերը եւ թշուառութիւնը:

Մայրաքաղաքը պաշտպանող պարիսպին դարպասները բաց էին, բայց Ուրիշլ նախընտրեց մնալ անկէ դուրս: Բլուրի մը վրայ նշմարեց համայն մը, որուն շէնքերէն մէկուն գմբէթը պսակուած էր խաչով մը: Երբ անցաւ դարպասը, ծեր վանական մը զինք դիմաւորեց:

—Քիտէի, որ պիտի գաս,— ըսաւ,— որովհետեւ մեր ցաւը մեծ է եւ պէտք ունինք սիրտփարարի մը: Թշնամի բանակը թէեւ քաշուեցաւ կարեւոր քաղաքներէն եւ անցաւ բլուրներէն անդին, բայց իրեն հետը տարած է մեծ թիւով գերիներ եւ պատանդներ, թուրքերուն հետը: Չրհորները եւ պարպած է քաղաքին շտեմարանները: Գերիները ազատ ձգելու համար կը պահանջէ թանկագին մետաղէ եւ գոհարեղէն փրկագին: Դժբախտաբար ժողովուրդը ոչ թէ թանկագին մետաղ, այլ նոյնիսկ ուտելիք եւ հագնելիք չունի: Երկրին ղեկավարները, գուշակելով պատահելիքը, չըջափակուելէ առաջ փախուստ տուին եւ իրենց հետը տարին պետութեան ամբողջ դանձր:

—Ես ունիմ գերիները եւ պատանդները ազատելու միջոցը: Թող վաղն իսկ անոնց հարազատները եւ ծնողները այցելին այս վանքը, որպէսզի դիմաւորեն իրենց ազատագրուած սիրելիները:

—Դուք յոգնած ըլլալու էք, մտէ՛ք սա խուցը եւ հանդիցէ՛ք, գերիները ազատելու վաղը առտու կ'երթանք:

—Ես պէտք չունիմ հանգիստի, անմիջապէս երթանք թշնամիին բանակատեղին եւ ազատենք գերիները: Եթէ կ'ուզէք ինծի ընկերացէ՛ք:

—Շուտ ընենք,— ըսաւ վանականը,— նկատեցի, որ անոնք կը պատրաստուէին մեկնելու: Եւ գերիները, եւ պատանդները կրնան տանիլ իրենց հետը: Թուրքիստանի շուկաներուն վրայ վաճառելու համար:

—Երթանք,— ըսաւ Ուրիէլ, նետուելով իր ձիուն վրայ։
Վանականը, վանքին գետնայարկը իջեցնելէ ետք ջորիները,
նետուեցաւ անոնցմէ մէկուն վրայ ու հետեւեցաւ Ուրիէլին։

—Արդեօք մեր ըրածը արկածախնդրութիւն մը չէ,— ըսաւ վանա-
կանը,— չե՞ս կարծեր, որ մենք ալ կրնանք գերի իյնալ անոնց ձեռքը։
—Բարի եղէք աղանիներու պէս, եւ զգոյշ եղէք օձերու պէս»,
ըսաւ Տէրը։

Իրիկուան դէմ, վանականը եւ Ուրիէլ ժամանեցին թշնամի-
ներու բանակատեղին, որ վրաններու համալիր մըն էր։

Պահակները զիրենք շրջապատեցին եւ անոնցմէ մէկը փորձեց
Ուրիէլը ձիէն վար առնել։

—Քացէ՛ք եւ ձեր մեծաւորին ըսէ՛ք— Ան, որ ճամբայ ելած է
դէպի Անդենականը, կ'ուզէ ձեզ տեսնել։ Անունս Ուրիէլ է»։

Հրամանատարը, որ կանգնած էր մեծ վրանին առջեւ, զայրացած
անծանօթին խօսքերէն, սուրը քաշեց եւ խուժեց պահակներուն
կողմը։

—Դուն ո՞վ ես եւ ի՞նչ երեսով եկած ես հոս։

—Ես կը կոչուիմ Ուրիէլ եւ ճամբայ ելած եմ քսան տարեկանին
մեռած մայրս տեսնելու։ Իմացայ, որ մեծ թիւով գերի բռնած
ես, հարիւրի չափ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ, սուգի
մատնելով անոնց մայրերը։ Նախ՝ սուրդ պատեանին մէջը դիր,
որովհետեւ հոս եկած եմ բարի գործ մը կատարելու եւ ոչ թէ
կուռելու։ Եթէ կուռիլ պէտք է, յետոյ կը կուռինք։

—Կուռի՛լ, ապա ո՛ւր են զէնքերդ։

—Չէնքերս անտեսանելի են։ Իմ թիկնապահներս ալ անտեսանելի
են, որովհետեւ անոնք պարզ մահկանացուներ չեն, այլ հրեշտակներ։
Իմ եղբայրներս կը կոչուին Փարրիէլ, Միքայէլ եւ Ռաֆայէլ։

—Իուն ուրի՛չ՝ կու գաս եւ ո՛ւր կ'երթաս։

—Ես կու գամ հօրս տունէն եւ կ'երթամ տեսնելու մայրս,
որուն հոգին կ'ապրի Անդենականի Պատէն անդին։ Հիմա խօսքը
չերկարենք, որովհետեւ Ղազարոս ինծի կը սպասէ իր շիրիմին
առջեւ։

Հրամանատարը շատ բան չհասկցաւ Ուրիէլի խօսքերէն, բայց
անդրադարձաւ, որ անծանօթը սովորական մահկանացու մը չէր։

—Ի՞նչ է ուզածդ։

—Նախ գերիները ազատ կ'արձակես, յետոյ կը վերադարձնես
գողցած աւարիդ մէկ մասը։ Թէեւ չեմ ուզեր քաջալերել
մարդասպանները եւ աւարառուները, բայց պատրաստ եմ փրկազին
վճարելու։ Երկու ոսկեղբամ իւրաքանչիւր պատանդին համար,
եւ մէկական ոսկի իւրաքանչիւր պարկ ցորենի համար։ Այն ատեն
կ'արժանանաս երիտասարդներու մայրերուն երախտադիտութեան։

—Զիս ո՛չ միայն համոզեցիր, այլեւ՝ զարմացուցիր։ Եթէ ուրիշ
մէկը դէմս ըլլար, անոր գլուխը արդէն թոցուցած կ'ըլլայի, բայց
այնքան լաւ խօսեցար, որ կ'ընդունիմ առաջարկդ։ Հիմա կրնամ
ձեզի յանձնել պատանդները։ Իսկ վաղը կը ստանաք հարիւր պարկ
ցորեն։

Ուրիէլ ձիուն կաշիէ նուրջինէն հանեց տոպրակ մը եւ
հրամանատարի ափին մէջ համրեց երեք հարիւր ոսկեղբամ։

—Այս գումարը փրկազին չէ, այլ՝ նուէր մը իմ կողմէս։ Հիմա
կանչէ այն զինուորները, որոնք զաւակներու տէր են եւ անոնց

իւրաքանչիւրին տուր մէկական ոսկի:

Այս բարի գործը կատարելէ ետք, Ուրիէլ շարունակեց ճամբան: Մայրաքաղաքէն անդին կը տիրէր նոյն թշուառութիւնը: Ուրիէլ արդէն բաւական թեթեւցած էր իր ոսկիներէն: Զորիներէն երկուքը տուաւ գիւղի մը բնակիչներուն, որոնց եղները ուսելիք ծառայած էին զինուորներուն:

Օր մը, երբ կանցնէր ամառի վայրէ մը, լսեց լացի ձայներ եւ ողբեր: Ապառաժներով շրջապատուած փոսի մը մէջ, որ չորցած լճակի մը հունը ըլլալու էր, ցնցոտիներ հագած մարդիկ հողին մէջ ուսելիք կը փնտռէին: Կիներ եւ մանուկներ, չորցած լճակին յատակը մնացած պղտոր ջրակոյտերէն ջուր կը խմէին:

Երբ անոնք տեսան Ուրիէլը կանգնած փոսին եզիրքը, վազեցին անոր կողմը: Ուրիէլ նկատեց, որ անոնցմէ ոմանք դիմակ կը կրէին, իսկ ուրիշներուն դէմքին մորթը չորցած ու կնճռոտած էր, ոմանց քիթը եւ շրթները թափած էին: Ուրիէլ հասկցաւ, որ այս փոսը բնակարան կը ծառայէր բորոտներուն եւ անոնց արգիլուած էր անկէ դուրս ելլել եւ մուրալ ճամբաներուն վրայ: Կիսամերկ մանուկներ ջուր եւ հաց կը պոռային:

Ուրիէլ իջաւ ձիէն: Իր եւ վարիներուն միջեւ երեք մարդու հասակի միջոց կար:

—Քանի՞ հաս էք,— հարցուց:
—Հինգ տղամարդ, եօթը կին, չորս երիտասարդ եւ ինը մանուկ:
—Ուրիէ՞ կարելի է վար իջնել:
—Եթէ վար իջնես, դուն ալ մեզի պէս կ'ըլլաս:
—Ես եկած եմ ամօքելու մարդոց ցաւերը եւ բուժելու հիւանդները: Ուրիէլ տեսաւ արահետ մը, որ վար կը տանէր: Զինուն ցանցը բռնելով՝ գզուշաւորութեամբ իջաւ վար: Զորիները, որոնք կապուած էին ձիուն, հետեւեցան անոր:
—Իմ ուղեւորութիւնս վերջանալու վրայ է, անոր համար մեծ պաշար չունիմ: Առէ՛ք ինչ որ կայ ջորիներուն վրայ: Ես անմիջապէս կ'երթամ մօտակայ քաղաքը եւ ձեզի ուսելիք եւ հագուստ կը բերեմ:

Բորոտները ախորժակով խմեցին տիկերուն պարունակած մաքուր ջուրէն եւ կերան Ուրիէլի ճամբու պաշարը:

Ուրիէլ ձի հեծաւ դնաց մօտակայ քաղաքը, որ շատ հեռու չէր: Քաղաքապետին խօսեցաւ բորոտներու մասին եւ անկէ պահանջեց, որ զանոնք չձգէ առանց խնամքի եւ սնունդի:

—Գիտե՛մ,— ըսաւ Ուրիէլ,— թշնամին անցած է այս տեղէն, եւ դուք հաւանաբար միջոցը չունինք բան մը ընելու: Ուստի՛ ես պիտի վճարեմ բոլոր ծախքերը իմ խուրջինիս մէջ մնացած երկու հարիւր ոսկին պիտի յանձնեմ քահանային, որպէսզի բոլոր բորոտներուն զանձապահը Ամէն շարաթ բժիշկ մը պէտք է երթայ եւ զիրենք դարմանէ, եւ երկու հոգի, որ իրենց մատակարարէ թարմ ուտեստեղէն եւ աղբիւրի ջուր:

Այս կարգադրութիւնը ընելէ ետք Ուրիէլ վերադարձաւ բորոտներուն, անոնց ձգեց ինչ որ ունէր: Մերկացաւ փարթամ հագուստներէն եւ հազնելով անոնցմէ մէկուն ազոտոտ շապիկը՝ ճամբայ ելաւ:

Կ'երթար հետտան, ոտքերը կ'արիւնէին ճամբուն խիճերէն եւ փուշերէն, բայց արամադրութիւնը բարձր էր եւ հոպին թեթեւ

145-2001



եւ ուրախ:

Արահետի մը դարձուածքին, սարահարթի մը վրայ, տեսաւ պարսպուած քաղաք մը, որուն շէնքերը բարձր էին եւ գմբէթաւոր: Անձ մը, որ կը քայլէր նոյն ուղղութեամբ, ծունկի եկաւ դաշտի մը մէջ եւ սկսաւ կանչել:

-Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ:

*

**

Երբ Ուրիէլ անցաւ մեռելատան սեմը, Ղազարոս իրեն կը սպասէր գերեզմանին մուտքին: Ուրիէլ շատ աւելի տարիքոտ կը կարծէր յարուցեալը, բայց դէմը եղողը գրեթէ իր տարիքը ունէր: Ղազարոս նայեցաւ երիտասարդին աչքերուն մէջ եւ անոր ձեռքէն բռնելով:

-Երթա՛նք,- ըսաւ,- այսօր Աւագ Ուրբաթ է, մինչեւ կիրակի լուսադէմին Անդենականին Դարպասը բաց կ'ըլլայ, պէտք է ածապարենք:

Քալեցին Ուրբաթ իրիկունէն մինչեւ Շաբաթ օրուան լուսադէմը եւ հասան անծայրածիր դձուտավայր մը, որուն կեդրոնը կանգնած էր բարձունք մը, որ կոնաձեւ աշտարակի մը կառուցը ունէր: Անոր գագաթին վրայ պլպլացող լոյսը ուղղութիւն կու տար իրենց քայլերուն:

Նեղ ճամբայ մը կը մագլցէր բարձունքին շուրջ՝ ոլորապտոյտ ցցուածք մը ապառաժի մակերեսին վրայ:

-Արեւը պիտի ըլլայ մեր ժամանակացոյցը,- ըսած էր Ղազարոս,- կը սկսինք մագլցիլ երբ անոր սկաւառակին ծայրը կը յայտնուի հորիզոնին ետեւէն եւ պէտք է հասած ըլլանք վերը, անոր մարը մտնելէն առաջ: Եթէ ուշանանք, պէտք է սպասենք ամբողջ տարի մը կրկին փորձելու համար:

Անոնք կը քայլէին համաշփ եւ արագ քայլերով, այնպէս որ, հասան իրենց նպատակին, երբ արեւին սկաւառակին կէսը կը մնար հորիզոնին վերը:

Աշտարակաձեւ լեռան գագաթը կը կորսուէր ամպերէն անդին, եւ այնքան ընդարձակ էր, որ կը կազմէր նոր աշխարհ մը, որ ո՛չ սկիզբ ունէր եւ ո՛չ ալ վերջ:

-Անդենականին Դարպասը տակաւին բաց է, ճիշդ ժամանակին հասանք,- ըսաւ Ղազարոս,- ես պէտք է անցնիմ միւս կողմը, դուն սպասէ հոս: Անդենականին պատը ճիշդ դէմդ է: Հրեշտակապետին կ'ըսեմ, որ Ուրիէլ անունով երիտասարդ մը կ'ուզէ մայրը տեսնել: Այդ շնորհքը շատ քիչերուն տրուած է, միայն անոնց, որոնք ունին անկեղծ սիրտ ու մաքուր հոգի: Ես կը վկայեմ ի նպաստ քեզի:

Ղազարոս հրաժեշտ առաւ ուղեկիցէն եւ անցաւ Անդենականի Պատին միւս կողմը: Ուրիէլ հետեւեցաւ անոր եւ բախեցաւ անտեսանելի արգելքի մը:

Ուրիէլ եղած տեղը սպասեց, բայց որքան սպասեց՝ ինք ալ չէր գիտեր: Վերջապէս դիմացէն, Անդենականի խորերէն յայտնուեցաւ մարդկային կերպարանք մը: Փեղեցիկ, երիտասարդ, աննիւթական կին մըն էր: Անոր ընկերացող հրեշտակապետը

—Ուրիշ էլ, —պոռաց, —աճա՛ մայրդ։
Դէմի տեսարանը անհուն էր եւ ողորուած կաթնաթոր լոյսով
մը, որ կը ծնէր օդին հիւլէններէն։ Հոն լոյսի աղբւրներ չկային
ինչպէս նիւթական աշխարհի լուսատուները՝ արեւ, լուսին կամ
աստղ։

Եւ աճա, այս տարաշխարհիկ տեսարանին մէջ, ուր գետին եւ
երկինք գոյութիւն չունէին, Ուրիշը տեսաւ մայրը, որ կը մօտենար
Անդենականի անտեսանելի Պատին։ Որովհետեւ ան կը պահէր իր
մեռած օրուան երիտասարդութիւնը, իր գաւկին տարիքը։

Մայրը, թեւերը բացած՝ կը մօտենար իր գաւկին, որ հիացած
կը սպասէր Անդենականի Պատին միւս կողմը։ Մակայն եթէ անոնք
զիրար կը տեսնէին, զիրար չէին լսեր, եւ Ուրիշը մօր ուղղած
կարօտի եւ սիրոյ խօսքերը չէին հասներ անոր ականջին, ոչ ալ
մօր արտասանած գուրգուրանքի եւ սիրոյ խօսքերը՝ գաւկի ական-
ջին։ Եւ հակառակ այդ անպատեհութեան, անոնք կը մնային իրենց
տեղը ու չէին ուզեր իրարմէ բաժնուիլ։

Այսպէս մնացին երկար, հաւանաբար ամիսներ ու տարիներ,
որովհետեւ Անդենականին մէջ ժամանակ գոյութիւն չունի։

Ուրիշը սկսաւ գանգատիլ ու ողբալ, մինչեւ որ հրեշտակապե-
տը կանգնեցաւ քովը։

—Ի՞նչ կայ Ուրիշը, ի՞նչ ունիս։

—Ի՞նչ ուզեմ մօրս հետ խօսիլ, անոր հետ ողջագուրուիլ։
—Երբ Ղազարոսին հետ ճամբայ ելար, անոր ըսիր, որ կ'ու-
զէիր միայն տեսնել մայրդ եւ զայն տեսար։ Այս շնորհը շատ
քիչերու տրուած է, միայն անոնց, որոնց սէրը անկեղծ է, եւ
սիրտը՝ մաքուր, գարնան երկինքին պէս։ Դուն պէտք է այսքանով
գոհանաս։

—Բայց ես Ղազարոսին ամէն բան չրսի։ Ես կը կարծէի, որ ա-
նոր պէս մահականացու մը ըլլալով պիտի վայելէի նոյն իրաւունք-
ները։ Կ'երեւի ես անոր չափ ալ չկամ։ Ան առանց արգելքի անցաւ
Անդենականին Պատը։ Ես ալ կը պահանջեմ նոյն շնորհը, կ'ուզեմ
լսել մօրս ձայնը, կ'ուզեմ ապրիլ անոր շունչին տակ։ Եւ ի՞նչ
մը անկորնչելի իրաւունքն է։

—Եթէ անցնիս Անդենականին Պատը, կը մտնես Յաւիտենակա-
նութեան Աշխարհին մէջ, որ է հողիներու աշխարհը։ Անդենականին
Դարպասին բանային կը կոչուի Մահ։ Մահը սիրոյ մեծագոյն գրա-
ւականն է եւ Քրիստոսին մէջ գրուած է. «Մեծագոյն սէրը իր կեանքը
զոհել է իր սիրելիներուն համար»։

—Ես պատրաստ եմ զոհելու ամէն բան մօրս միանալու համար։
Հիմա՞ որ գտայ մայրս, աշխարհը ո՞չ մէկ հրապոյր ունի ինծի համար։

—Բայց պէտք է սպասել Տիրոջ կողմէ որոշուած ժամուն։ Մահը
մեր կամքէն անկախ է։

—Ըսել կ'ուզես, որ պէտք է աշխարհ վերադառնամ, համտեսեմ
կեանքի ապականութիւնը եւ կորսնցնեմ անմեղութիւնս եւ հաւատ-
քըս։ Այն ատեն ի՞նչ պիտի ըլլայ ճակատագիրս։ Արդեօք Աստուած
այնքան զգուած է մարդկութենէն, որ կը մերժէ նոյնիսկ խոնարհ
ու տառապած հոգիի մը աղերսանքը։

Հրեշտակապետը նայեցաւ Ուրիշը աչքերուն մէջ եւ հիացաւ

անոնց անապականութեան վրայ եւ զգաց, որ իր դէմը ունէր եղբայր մը, մարդ-հրեշտակ մը, որուն բնակարանը չէր կրնար ըլլալ մեղաւորներու աշխարհը:

—Ուրեմն պատրաստ ես զոհելու ամէն բան, նոյնիսկ կեանքդ, մօրդ հետ ըլլալու համար:

—Այո՛, ամէն բան:

—Այն ատեն եկո՛ւր, — ըսաւ Հերշտակապետը, — եւ բռնելով անոր ձեռքէն անցուց Անդենականի Պատին միւս կողմը:

Երբ Ուրիշլ անցաւ Անդենականին Պատը, թեթեւութիւն մը զգաց, իրմէ մաս մը մնացած էր Պատին միւս կողմը: Կը նմանէր մէկու մը, որ ցնցոտիները կը նետէ վրայէն, մտնելու համար անմահութեան աւազանին մէջ:

Ու մայրը, «Ուրիշլ՝ զաւակ», ըսելով, զայն առաւ թեւերուն մէջ:

Փաստունճա,
4 Սեպտեմբեր 1995

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Վ. ԹԵՔԵԱՆ

ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ

Ծառը պոկել տունը դնել վրան զարդարել
 նախ անկիւն մը ընտրել որ պատուհանէն կ'երևայ
 լոյսերը ոլորել ճիւղերուն մէջէն
 տարիներու երկայնքին հաւաքուած զարդերը կախել
 աչքառունները առջեւ
 ոչ հետաքրքրականները ետեւ պատին կողմը

Ծառը թարմ ըլլալու է ջուր գետեղել որ չծարանայ
 վրան հրեշտակներ կախել քիչ մըն ալ փիթ
 այնքան կը թռչկոտին որ շուտ կ'անօթենան
 Արդէն առանց հրեշտակի՝ բան մը երկար չի դիմանար

Երբեմն աչքի պոչով դիտել Ծառը կը խօսի
 իր ճակատագրի այն պահն է
 երբ վառուելով վառուելով պիտի չորնայ
 այնու պիտի չսարսուայ
 անտառային եղանակներու գիւժութենէն
 Մարդ չհարցուց իրեն՝ կ'ուզէ՞ր պոկուիլ իր հողէն
 անուրջի եւ գգուանքի պահանջ ունինք
 ի՞նչ ուրախութեամբ մտցուցինք զայն տուն
 ուր իսկական աքսորի մէջ
 իրեն տրուած փառահեղ ընդունելութեան ընթացքին
 ճառագայթներ սփռել պիտի
 մոգական թելեր յիշողութեան թափշ
 ի՞նչ կ'արժէ տօն մը եթէ չունի լուսապսակ

Ամէն տարի կաղանդ չենք տօներ
 սով կ'ըլլայ հեռատրութիւն կ'ըլլայ
 անհամութիւն կ'ըլլայ
 եթէ երեխաներ կան՝ տօնելու է կախարդը

Ինչո՞ւ
 Էհ ամէնուն պէս մենք ալ կ'ուրախանանք
 Այս օրուան մէջ պէտք է տեղադրել
 Կաղանդ Պսպային ծանր հասցէներու կապոցը
 եւ մեր անկշռելի յոյսը
 Առաջ Մասիս Աարէն կու գար
 հիմա՝ բոլոր թաղերուն բոլոր անկիւններէն

Եւ պատանեկան փափկութիւնը որմով կ'աբօնենան օրերը
 Կաղանդի Ծառին տակ կը դնեն

մէկ տուփ քաղցրութիւն
 երկու տուփ զսպում բարկութիւն
 Մէկ տուփ յայտնի բաներ
 երեք տուփ գաղտնիք
 Տուփ մը՝ համով հոտով բարեկամութիւն
 երկու տուփ ազգականական անհամութիւն
 Տուփ մը համբոյր
 երկու տուփ կեղծիք
 Անգոյն յոյսեր որոնց վրայ գոյներ փաթեցուած են
 եւ սիրազել քարտեր տեղադրուած
 Թափանցիկ տրտմութիւններ որոնց եթէ ճիշդ պէթորին գործածես
 մահ շնչելով կը շրջին
 Աստուծոյ բոլորը վաճառքէ գնուած են
 վերջին գինէն տաս առ հարիւր զեղչով
 Տուփ մը ժողովրդավարութիւն
 երեք տուփ բռնատիրութիւն
 ասոնց համար արեան գին վճարուած է
 Թարմ է Ծառը դեռ ջուր աւելցնել որ շուտ չչորնայ
 Տուփ մը լուծումներ
 վեց տուփ հրատապ հարցեր
 Կաղանդ Պապան այս բոլորը Բարիի Չարի կը վերագրէ
 գլուխը կ'առնէ կ'երթայ
 Կաղանդ սօսելուն վերջը ի՛նչ պիտի ըլլայ
 Է՛հ ամէնուն պէս մենք ալ կ'ուրախանանք
 Աստուած սիրես թափէ սա կեղծ ծաղիկները
 որ որոշած են չթառամիլ
 Արդէն կեանքին մեծ մասը անցանք
 Մեր անձկութիւն դարմանը արդարութիւնը չէ
 անհրաժեշտ է արդարութիւնը
 բայց չի դարմաներ վերքը
 եւ ժամանակը՝ խամաճիկի պէս
 քիթ բերանը ծեփած կեցեր է մեր դիմաց
 կը սպասէ հաստափոր Կաղանդ Պապային որուն քարակ աչքերը
 ուղղութիւն կու տան Նոր Տարուան
 անոր գուարթ կու գին դիմաց
 իրենց ամբողջ կեանքը շիփշիտակ կայնած մոմերը
 լոկկմնջիկ կը հալին
 Մենք միասին՝ ձեռի գոյնի
 տուփ բանալու խաղեր կը խաղանք
 եւ կը խաբուինք՝ երբեմն լաւ երբեմն գէշ
 որովհետեւ տուփին մէջ մեր տեսածը՝ ուրի՛շ
 Նոր Տարուան մտադրածը՝ ուրի՛շ
 Կաղանդի յատուկ սպասներ զեւտելը ենք
 պաստել ընկոյզ անուշապտիկի հովանոց
 խնձորներ որ եղեմական հեքիաթներ կը վերապրին
 կանկառ որ գործը աւարտած տանտիկիկի պէս
 քովիններուն հետ գրոյցի նստեր է

Ուտքերը երկինք տնկած հասիկներ
 ճարինջ ուր արեւի շունչը կը թրթռայ
 շամփայնի կարճատեւ հրաքուխը
 մինչ օրուան թերթը կը պատմէ
 թէ հին հայոց մէջ ինչպէ՛ս կը տօնէին կաղանդը
 եւ խաշած ճակղնդեղը գինեմոյի նայուածքով կը դիտէ բոլորը
 Բայց կեդրոնը Ծառն է Կաղանդի Ծառը
 որուն շուրջ կը դառնան մանուկները
 վառեր է հագարումէկ լոյսերը
 ուր ձմրան փաթիլներն անգամ փափուկ առագաստներ են
 Գոհ են չափահասները
 ի վերջոյ փրկեր են Ծառը օգօնի թղնէն
 իր հողին վրայ ծերանալու ողբերգութենէն
 մեծ ընտանիքի մը մաս կազմելու անտեսուելու բարոյոյթէն

Փողոցը չարագուշակ համբերութեամբ
 սպասէր էր այս օրուան
 երբ աւարտած է կախարդանքը
 եւ պաշտօնը անթերի կատարած Ծառը
 շարտուեր է դո՛ւրս
 իր նախնիներուն նման
 հիմա աղբահասաքներ պիտի հաւաքեն իր յոգնած թեւերը
 եւ իր հրեղէն ծառութենէն
 ափ մը փայտ պիտի մնայ
 Ծպրտուեր է մայթին
 ճիշդ այն պատճառով որ իր սեփական արմատներէն
 կտրուելէ ետք՝ տակաւին լոյս ու հրճուանք հագաւ
 Աստղի ոսկին ասփերուն մէջ
 մութ անցեալին օրհնութիւն
 իսկ ներկային խորհուրդ տուաւ
 Անէութիւն տեսած չէր
 ամէն շիւղին՝ կապոյտ յոտուք մեղեդիներ կախեր էր
 Իր անցեալէն եւ՞ իր փառքէն մերկացած
 աքսորուեր է Ծառը քանհերոդդ անգամ
 լքուեր է ճիշդ այն պատճառով
 որ բոլոր լամբերու պաղած դէմքերէն իր կրակը անցուց
 եւ քերթողի իր էութեամբ
 ձմրան լոյսէն մոխիր աստղերը վերցուց
 Նոր անդրադարձած՝ մարդկային դաժանութեան
 պատկած է Ծառը մայթին վրայ
 իր երակներուն մէջ ամէն յոյզէ յիշատակէ պարպուած՝
 լուսեան հոսքը միայն

Դեկտեմբեր, 1995

ՎԵՀԱՆՈՏՑ ԹԵՔԵԱՆ

Վ. ՕՇԱԿԱՆ

ՆՈՐ ԱՐՄԱՏ

ՏԵՍԱՐԱՆ 16

Հիմնադրված է 14 Փետրուար 1895

Փարիզեան ուսանողի մը սենեակը: Նեղ անկողին մը, ցած բազմոց մը, քանի մը աթոռ, աշխատանքի սեղան մը դիրքերով ծանրաբեռն: Պատին պատկերներ, Հայաստանի քարտէսը ու գիրքերու դարակներ: Ընդհանուր անդուլթութիւն մը:

Աշխատանքի սեղանին շուրջ երկու ուսանող նստեր են, Տիգրան եւ Հայկ: 20էն 25 տարեկան կան, երեւոյթով: Հայկ թերթ կը կարդայ, մինչ Տիգրան գիրք մը կը թղթատէ:

ՀԱՅԿ (առանց թերթը վար առնելու).—Դուն աւ Նշանը Փարիզ չեկած կը ֆանջնայի՞ր:

ՏԻԳ.—Օհ, Պէյրուսէն, միասին Lycée Française կ'երթայինք: Ինքը շատ վայում էր մաթեմատիկի մէջ: Ազգային հարցերով շատ հետաքրքրուած էր, տեւական Սփիւտ կը հոլովէր եւ Գաղտնի Բանակ: Բայց որեւէ կազմակերպութեան մէջ չմտաւ, շատ անկայ մտածող ըլլալուն: Կրճտ, աղբիկնի տղայ մը: Յետոյ աստե՛ք Լոս Անճելըս գացին, կարծեմ 1989ին: Ասոր պապան ազգային կարեւոր դեմք էր, կը յիշեմ անգամ մը...

ՀԱՅԿ (ընդմիջելով).—Շատ ուզած եմ Ղարաբաղ գացող կամաւորներէն մէկը գտնել տեսնել: Մե՛նք Պոլսոյ մէջ այդ մարդիկը կ'աստուածացընենք, իտէլացուցած ենք: Պատանի էի նե՛՛ Ասալայի տղաքը մեր այ աչքին հերոսներ էին:

ՏԻԳ.—Սփիւտի մէջ էի մը ամէն տեղ ատանկ է, հէջ հոգ մի ըններ: Աս ժողովուրդը միշտ ասանկ խակ պիտի մնայ, կուտօբորու, հերոսներու կապուած: Այսքան ջարդ ու չարչարանք՝ դեռ բան մը չստրվեցա՞ւ...: (Տիգրան ոտքի կ'ելլէ): Սուրն մը կ'ուզե՞ս:

ՀԱՅԿ.—Ձե, շնորհակալ եմ, շատ վարժութիւն չունիմ: Ի՞նչ չստրվեցաւ:

ՏԻԳ.—Խելք գործածել, տրամաբանութիւն, լոծիք: Միայն սիրել կամ ասել կայ մեզի համար: Ափիւտքը վերէն վար այդ է: Պոլիսն ալ, ըստ երեւոյթին, հակառակ որ Ափիւտք ալ չէ:

ՀԱՅԿ.—Կէս-Ափիւտք ըսենք:
Դուռը կը գարնուի

ՏԻԳ.—Օսի. (*Դուռը կը բացուի ու Նշան կ'երեւի Ուրբի կ'ելլէ Հայկ, անորոշ կը նայի*): Ե՛, Նշան, եկար ի վերջոյ: Եկուր քեզի ներկայացնեմ քարեկամս, Հայկ Սարաֆեան, Պոլսէն, բժշկական ուսանող, երկրորդ տարի: (*Կը դառնայ Նշանին*): Աս ալ նշանաւոր Նշանն է, Նշան Տէրունեան, հին քարեկամս, Պէյրութէն, համակարգիչի մասնագէտ, Լոս Անճելըսէն, հիմա՝ en route pour l'Arménie: (*Կը ձեռնուի*): Նստեցէք, խնդրեմ: (*Կը նստին, Նշանը անկողնին վրայ, Հայկը իր հին տեղը*): Նշան, սուրմ մը կ'առնե՞ս:

ՆՇԱՆ.—Հա, լաւ կ'ըլլայ:

ՏԻԳ.—շա՛հա՞րը:

ՆՇԱՆ.—Ուսասաթ:

ՏԻԳ.—Հայկ, եկուր դուրս ալ հատ մը առ: Սուրմը մշակոյթի գործիչ է: ՀԱՅԿ (*երկվայրկեան մը կը վարանի*).—Լաւ, հատ մըն ալ ինձի:

ՏԻԳ.—Ես սուրմը շինեմ, դուք ալ զիրար նանչցէք: Հա, Նշան, սա ալ ըսեմ, Հայկը քացառիկ յարգանք ունի Լարաբաղ գացող կամաւոր-ներուն համար, մասնաւոր քեզ տեսնելու համար եկաւ ինձ այսօր, չէ՞նէ՛ չէր գար հա, պոլսեցի պուրժուային մէկն է:

Կը խնդան: Տիգրան կ'երթայ սուրճ պատրաստելու: Հայկ սիկարէթ մը կը հրամցնէ Նշանին:

ՆՇԱՆ.—Շնորհակալ եմ, չեմ ծխեր:

ՀԱՅԿ.—Կ'ըսեն թէ Հայաստան ամէն մարդ կը ծխէ, օրը 24 ժամ, դուք ալ չվարժուի՞ք:

ՆՇԱՆ.—Ձէ, վախ չկայ, դիւրին-դիւրին չեմ ազդուի մարդոցմէ:

ՀԱՅԿ.—Փարիզ շատ այցելա՞ծ ե՞ք:

ՆՇԱՆ.—Դժբախտաբար ոչ, երկու անգամ միայն: Շատ կը սիրեմ Փարիզը, մարդկային քաղաք է, մաշակի եւ սիրոյ մայրաքաղաքը:

ՀԱՅԿ.—Կամաց-կամաց կը փոխուի կոր:

Կարճ լուսնիւն մը:

ՆՇԱՆ.—Պոլիսը ինչպէս տեղ է:

ՀԱՅԿ.—Ծայրայեղութիւններու քաղաք է. մէկ կողմէ բնագոյային ահաւոր ախորժակները, միւս կողմէ՛ շատ մուրր քաներու զգացումը: Եւ անշուշտ, թուրքը, կամ՝ թրքութիւնը: Միայն հայը կրնայ թուրքը հասկնալ:

ՆՇԱՆ.— Եւ ատել:

ՀԱՅԿ.— Այո, առաջին վայրկեանէն, որ կը զգայ անոր մերկայութիւնը:
 ՆՇԱՆ.— Նայեցէ՛ք, Պարոն Հայկ: *(Կը լուէ կարճ պահ մը):* Ես թուրքը
 չեմ ատեր, իրականութեամ մէջ ոչ ոք կ'ատեմ: Եւ կարծեմ թէ ըս-
 փիւռքը քանոզ ուժը այդ ժխտական զգացումն է, որ վերջը հայը
 հայուն դէմ ալ կը հանէ:

ՀԱՅԿ.— Մեր մօտ ատանկ քան չկայ սակայն:

ՆՇԱՆ.— Որովհետեւ դուք Սփիւռք չէք:

ՀԱՅԿ.— Բայց այդ պարագային *(Այդ վայրկեանին Տիգրան Ներս կը
 մտնէ սուրճերով):*

ՏԻԳ.— Կար ու չկար՝ սուրմը կար... տեղ բացէ՛ք արեայ սուրճիմ:

Կը տեղաւորէ սուրճերը անոնց առջեւ ու կը նստի իր տեղը:

ՀԱՅԿ.— ...այդ պարագային ի՞նչն է, որ ձեզ Ղարաբաղ կը քաշէ:

ՆՇԱՆ.— Շատ պատճառներ կան:

ՏԻԳ.— Ես գոնէ մէկ հատը գիտեմ:

ՆՇԱՆ.— Իրա՞ւ, ո՞րն է:

ՏԻԳ.— Adventure, արկածախնդրութիւնը: Քեզի Պէյրութէն գիտեմ, այդ
 պատերազմի տարիներուն, քանի՛-քանի՛ անգամ պզտիկ Ֆիաթը
 կ'առնէր փողոց կ'ընար, լեռ կ'երթար, ծով կ'ընար, վտանգի հետ
 խաղալ կը սիրէր, շիտակ չե՞մ:

ՆՇԱՆ.— Մարգամբ էր ատիկա:

ՏԻԳ.— Ինչի՞ս մարգամբը:

ՆՇԱՆ.— Մահէն չվախճալու մարգամբը, ան ալ պիտի սորվիս, քաջութեան
 պէս քան մըն է: Գիտնաս ազատութեան ինչքա՞ն մեծ զգացում կու
 տայ:

ՏԻԳ.— Այո, շատ անկախ էր դպրոցը, ոչ մէկ օրէնք կը յարգէր: *(Կը խը-
 մեն սուրճը Տիգրան սիկարէթ մը կը վառէ):* Ինչպէ՞ս է սուր-
 մըս:

ՀԱՅԿ.— Սքանչելի: Ես կը խորհիմ, թէ հայրենասիրութիւնը, հողիմ սէ-
 րը անելի կարեւոր պատճառ է, չէ՞:

ՆՇԱՆ.— Այո եւ ոչ: *(Լուռ է):* Ես հայրենիքը չեմ ապրած, Սփիւռքի պը-
 տուղ եմ, հողը-մողը չեմ գիտեր ինչ է, օտար է ինձի համար:
 Գիւղիմ հետ կապուած է հողիմ սէրը, ես հողագործ չեմ: Ես գաղա-
 փարը միայն կրնամ սիրել, հայրենիքի, Հայաստանի գաղափարը:

ՀԱՅԿ.— Նոյն քանը չէ՞:

ՆՇԱՆ.— Այն իմաստով, որ Սփիւռքի հողը ամբողջ աշխարհն է: Կարելի՞
 է ամբողջ աշխարհը սիրել, չեմ գիտեր:

ՏԻԳ.— Ուրի՞շ, ուրի՞շ պատճառ չկա՞յ, անելի հոգեբանական:

ՆՇԱՆ *(կատակի վերածելով)*.— Նորէն հոգեբանութեան մասնագէտը խօ-
 սեցաւ...

Տիպրան կը խնայար

ՏԻԳ—Ի՞նչ ընենք...

ՆՇԱՆ *(երկար ըռախում, տեսնոյ երեսը կը նայի, յետոյ՝ ձեռքերուն, ու Հանդարտաբէն կը խօսի)*—Հարկաւ կայ, Ափիւտքի գաղափարին կատուած է: Երկու սերունդ կայ Ափիւտքի մէջ, իրար դէմ կ'աժ ինք, պապայիսը, եւ ճորը՝ իմս: *(Հուռ է հարկէն)*: Հինը մահուամ սերունդն է: Ամբողջ իտիպոթիմ մահուամ կը մայի. Ափիւտքը ժա- մանակաւոր է, Եղեռնի ծնունդ է, թուրքին յանախամէր դեռ կը տիրէ, ամբողջ մշակոյթը պարապ մը կ'ուզէ գոցել, մահուամ վա- խեն կը փախի, Եանուրեան պարտաւորակամ ճահանջի խունակին արդիւնքն է: Ամէնէն գէշը այդ կարօտն է, գիտե՞ս, կոկորդի սեղ- մայ, արցունք բերող, եին մարդոց կարօտը, մարդիկ, որոնք կեանք- քէն ա՛յ բան չեն սպասել: Ու կը կաշիմ կարօտին, որովհետեւ եա- ճայք կ'առնեն ատկէ, մագոշիսը հաճայք մը, փոխանակ փրկութիմ հաւաքելու ու Հայաստան երթալու եւ հոն աւանդելու իր տառա- պած հոգիք: Եւ վերջին վայրը՝ անկախ Հայաստանի վայրն է:

ՏԻԳ—Հայաստանի վա՞խը, ա՞տ աւրկէ բուսաւ:

ՆՇԱՆ—Նայէ բացատրեմ. եինքը այն զգացումը ունին, թէ աս ձեռ ապ- րելուն վարժուեցանք, մահուամ եետ հաշտուեցանք, ճեւղ մը եր- ջանիկ եմք՝ ալ հիմա ինտո՞ր կեանքի մոր, անձամօք իրականու- թեան վտանգին դէմ պիտի կենանք: Աս է պապայիս սերունդին հոգեբանութիւնը: Նորութեան, երիտասարդութեան ու երիտա- սարդներէն, արկածախնդրութեան կը սուկայ: Անկախ Հայաստանը այդ վտանգն է, անձամօքին սարսափը պահպանողական սերունդին համար: Անկախ Հայաստանը յեղափոխական իրականութիւն է: Եւ Ափիւտքը, կը ցաւիմ ըսելու, պահպանողական է, Դաշնակցութիւնն ալ մէջը: Եւ այս ամբողջին վրայ *(ձայնը կը թարձրանայ ու հոն կանգ կ'առնէ երկվայրկեան մը, յետոյ յանկարծ կ'իջնայ)* պա- տանութեան, ստախօս Միեռանին պատմութիւնը կը պատմէին մե- զի- աս ալ անանկ բան մըն է: Բառերով կարկարա ըրինք բոլորս, թէ՛ պապաս եւ թէ՛ ես, այո... հայրենիք, Հայաստան երազեցինք եւ հիմա բառերը մեզի կարկարա կ'ընեն... երեսակայութեամբ կմիկ շուլիելու կը մամնի ասիկա, ատեն մը կու գայ, որ ա՛յ չես կրնար շուլիել...: Ամէն ինչ հոս է *(ձեռքը ճակատին կը զարնէ)*:

Հռուբիւն կը տիրէ: Հայկ կը շտկուի, խորունկ շունչ մը կ'առնէ:

ՀԱՅԿ—Նոր սերունդը ինչո՞վ տարբեր է անանկ է Ո՛է:
ՆՇԱՆ—Խորքին մէջ, երեսակայութեամբ կամ հաւատքի հարց է ասիկա: Ինձի պէս մարդիկ կեանքի ուժին եւ յաղթանակին կը հաւատան: Մեզի համար Հայաստանը մարտահրաւէր է, դէպի մոր իրականու-

թիւն մը քայլ է: Ափիւռը ապրելի եւ դրական միջավայր է, կը հասկնա՞ս: Վախ չունիմք Հայաստանէն, ինչպէս վախ չունիմք ըն-
փիւռէն: Բայց... *(Յանկարծ լուեց Նշան, նայուածքը տարտամ,
պատուհանէն դուրս: Յետոյ դարձաւ Հայկին):* Պատասխանելու
համար թու հարցումիդ, ես մէկ մեծ սխալ գործեցի կեանքիս մէջ,
որուն մասին պիտի չխօսիմ անշուշտ, որ ազատութիւնս պահելու
համար՝ մէկ վայրկեան տեղի տուի մահուան հմայքին: Կեանքի տեղ
մահը ընտրեցի — գրեթէ:

ՏԻՓ.— Ի՞նչ ըսել է «գրեթէ»:

ՆՇԱՆ.— Հոգ չէ հիմա: Ատկէ ի վեր ամէն ինչ ըրի, որ քանի, գոնէ
սրբագրեմ յանցանքս՝ չկրցայ: Ճակատագիրը միշտ դէմս ելաւ եւ
արգիլեց: Եւ հիմա կ'երթամ Ղարաբաղ պատիժիմ գինը վճարելու:
Ինչ ալ ըլլայ արդիւնքը, մեռնիմ թէ ողջ մնամ՝ ես վճարած կ'ըլլամ
գինը: Ղարաբաղը իմ փրկութիւնս է:

ՏԻՓ.— Ուխտաւորի պէս բան մըն ես, չըսե՞ս:

Կը խնդայ Նշան:

ՆՇԱՆ.— Ատոր պէս բան մը:

Հուռ են բոլորը: Հայկ ոտքի կ'ելլէ:

ՏԻՓ.— Նշան, դուն ինձի արմատի մասին կը խօսէիր անցեալ օր:

ՆՇԱՆ.— Այո: Ես չեմ գիտեր արմատ ըսուածը ինչ է, պատմութիւնը,
անցեալը, հողը ի՞նչ են ստոնք: Երթամ, Հայաստան եւ Ղարաբաղ,
նայիմ ինչ ըսել է արմատը: Ո՞ր է մարդոց այժերո՞ւն մէջ, խօս-
քի՞նք մէջ, ապրելու ձեւի՞նք մէջ, մշակոյթի՞նք մէջ, հողին ու ջուրի՞նք
մէջ: Ձեմ գիտեր:

ՀԱՅԿ.— Հաւանաբար բոլորը միասին:

ՆՇԱՆ.— Կրնայ ըլլալ: Վերադարձիս կը պատմեմ ինչ գտած եմ: Եթէ ողջ
մնամ անշուշտ:

ՏԻՓ.— Հարկաւ ողջ կը մնաս, դուն որ կեանքին կողմն ես:

ՀԱՅԿ.— Կրնամ հարցում մը հարցնել, քիչ մը անձնական:

ՆՇԱՆ *(կարճ պահ մը լուռ է, Հայկին կը նայի)*.— Կրնամ հարցնել,
բայց պատասխանը՝ ուրիշ հարց է:

ՀԱՅԿ.— Ամուսնացած է՞ք, գաւակ ունի՞ք, կը խորհի՞ք անոր ապագային
մասին:

ՆՇԱՆ *(լուռ է նորէն, աչքերը գետին: Հիմա գլուխը կամաց մը
կը վերցնէ ու հանդարտ է ձայնը)*.— Պատասխանը՝ այո է, գաւակ
մը ունիմ, որուն ապագան իմ կեանքս պիտի շարունակէ: Ձեմ գի-
տեր ուր է — ամէն տեղ է եւ ոչ մէկ տեղ, ամէն անուն կրնայ
ունենալ, ամէն լեզու կրնայ խօսիլ — բայց ես շատ լաւ կրնամ
Յանգնալ գաւակս, հասկնալ գինքը:

Հուռ են բոլորը, բանի մը կը սպասեն:

ՏԻԳ. *(ցած ձայնով)*—Շնորհի՛նով հանելուկ եղաւ ասիկա: *(կը խնդան):*
Ասոր մէջ տեղ մը հորդ պատկերը ըլլալու է, եթէ ես հոգեբանութեան
նէ բան մը կը հասկնամ: Ասկայն անցնիմք, մեր միւթէն դուրս է:
Կը ներես, Նշան:
ՆՇԱՆ.—Ներուած է:

Հուռ թիւն է նորէն:

ՀԱՅԿ.—Ե՞րբ կը մեկնիմք:
ՆՇԱՆ.—Վաղը, Հիմզաբքի, կեսօրէ ետք: Վերադառնալու ատաջ Տիգրան
նիմ իմաց կու տամ, եկե՛ք մորէն, կը խօսիմք:
ՀԱՅԿ.—Շատ շնորհակալ եմ: Որքա՞ն կը մնաք:
ՏԻԳ.—Ատիկա, mon vieux, մարդ չի գիտեր...
ՆՇԱՆ.—Այո: Եկե՛ք որ սփիւռեան թերի մը խորհիմք: Փարիզը լաւա-
գոյն տեղն է ատոր համար: Հա՞, ի՞նչ կ'ըսես, Տիգրան:
ՏԻԳ.—D'accord: Դուն պե՛ս եկուր, մէկ կտոր:

*Ոտքի կ'ելլեն Տիգրան ու Նշան: Հայկ ու Նշան կ'ողջագուր-
ւին, լուռ ու ջերմ: Հայկ կը մեկնի:
Վարագոյրը պիտի գոցուի՝ երբ Բեմադրիչը բեմ կու դալ,
թեւիս տակը հաստ տետրակ մը:*

ԲՆՄ.—Մարտիրոս, մի գոցեր վարագոյրը: *(կը դառնայ սրահին):* Ասի-
կա *(վեր կը վերցնէ հաստ տետրակը)* թատերախաղին բնագիրն
է եւ Հեղինակը տեսարանէն ետք հետեւեալը գրած է, որ ձեզի կար-
դամ: Լաւ մտիկ ըրե՛ք, լրջութեամբ:
«Եթէ այս քաղաքեան մէջ կայ ոեւէ մէկը, այր թէ կին, մանչ
թէ աղջիկ, որ կը կարծէ, թէ ինք Նշանին գաւակը կրնայ ըլլալ՝
թող ռտփի կայնի եւ ըսէ մեզի, թէ շիտա՞կ ըրաւ իր հայրը, թէ
ոչ»:

Հուռ թիւն, պղտոր ձայներ հոսկէ-հոնկէ: «Մարդը» կը կայնի:

ՄԱՐՏ.—Մեզի ըսե՛ք ինչպէս կը վերջանայ թատերախաղը, որ գիտնամք:
ԲՆՄ.—Ոչ ոք գիտէ ատիկա այս վայրկեանիս, ոչ իսկ Հեղինակը: Կը խոր-
հիմ, թէ ատիկա չգիտնալը առաջին պայմանն է սփիւռեան ինք-
նութեան, պատմութիւնը կոչու է մեր թեւերուն մէջ, մեր ապագան
անմեղ է, մեր յիշողութիւնը՝ անմերող, բայց բարի է, մի՞շտ եմ,
Պարոն Հեղինակ:
ՀԵՂ. *(կէս մը ոտքի կ'ելլէ)*.—Այո:

ԲԵՄ. (չուրջը կը նայի) — Այս բազմութեան մէջ չկա՞յ մէկը, որ նշանը իբր իր հայրը Յանցնայ:

Պղտոր լուսթիւն մը: Ոչ ոք կը շարժի:

ԿԻՆ (կին մը ոտքի կ'ելլէ) — Ես կրնամ Արմիմէիմ աղջիկը ըլլալ:

Մրահին մէջ պզտիկ աղմուկ մը... Աջէն-ձախէն գլուխները կը դառնան ձայնին կողմը:

ԲԵՄ. — Կը ներքս հորոյ ըրածը:

ԿԻՆ. — Ներքիս հարց չկայ, պարոն: Հայրս սխալ բան չըրաւ: Միակ սխալը՝ տղայ ուզել էր, եւ ես աղջիկ ծնայ:

Ընդհանուր քրքիջի նման աղմուկ մը:

ՀԵՂ. — Ես գոհացած եմ:

ԲԵՄ. — Մարտիրոս, վարագոյրը:

Բեմադրիչը հտ քուլիս կ'երթայ:

Վարագոյրը կը գոցուի:

ՏԵԱԼՐԱՆ 17

Հիմզաքթի 2 Մարտ 1995

Վարագոյրը կը բացուի բացարձակապէս ամայի վայրի մը կոտրած ծառ մը եւ ժայռի կտոր մը կան:

Աջէն ներս կը մտնէ Բեմադրիչը, կը կայնի բեմին կեղրոնը, առջեւօք:

Հուսարձակ մը վրան կը շողայ:

ԲԵՄ. — Սիրելի հանդիսատեսներ, հասած այս կէտին, թատերախաղը պահ մը կ'ընդհատուի: Ծառ կարեւոր որոշում մը պէտք է առնուի:

Նախ՝ երկու հիմնական սկզբումքներ պիտի յայտնեն: Առաջին՝ կեանքի մէջ ամէն արարք արտօնուած է, կ'ըսէ Տոսթոեւսկի եւ իրաւունք ունի, բայց ոչինչ կարելի է: Սակայն եթէ թատերական արուեստը միջամտէ՝ արարքը կարելի կը դառնայ: Բայց իր գիմը ունի: Եթէ յանցանք է՝ գիմը պատիժ է:

Երկրորդ սկզբունք՝ բոլորս յամցաւոր ենք եւ պատիժի արժանի, եւ այդ պատիժը այս աշխարհիս մէջ կը տրուի մեզի: Ո՞վ կ'որոշէ, ո՞վ կու տայ՝ ոչինչ գիտենք այդ մասին: Սա ալ աւելցնեմ, որ գերբնական պատիժը մեզ չի շահագրգռեր, որովհետեւ երկինքը շատ հաւանաբար պարտաւ է: (Լուսթիւն): Պատիժը հոս կը տրուի:

Հիմա բեմ կը հրահարեմ Հեղինակը, որ մեզի ըսելիք մը ունի Պարոն Հեղինակ, ո՞ւր էք:

ՀԵՂ. (սրահին մթութեան մէջէն) — Հոս եմ, կու գամ կոր: (Հեղինակը սրահէն դէպի բեմ կը քայլէ, գանգատելով): Եղբայր, համզիստ ձգած չունիմ մեզ, սա ի՞նչ պատմութիւն է:

ԲԵՄ. — Բայց դուն գրած ես ձեռագրին մէջ, թէ այս կէտիմ հասած...

ՀԵՂ. (ընդմիջելով) — Ընելիքս դուն ալ կրնաս ընել...

ԲԵՄ. — Ինչպէ՞ս թէ...

ՀԵՂ. — Լաւ, լաւ: (Հեղինակը բեմ հասած է: Լուսարձակ մը կը վառուի վայրկեան մը կը կենայ, շունչը կ'առնէ, յետոյ կը դառնայ Բեմադրիչին): Հոս բերե՛ք բոլոր կարեւոր դերասանները:

ԲԵՄ. (ձայնը ուղղելով բեմին հետեւը) — Հէ՛յ, դերասաններ, հոս եկե՛ք վայրկեան մը բոլորդ, խնդրեմ, Կարապետ, Մանուշակ, Արմինէ, Նշան, Շաղիկ:

Ներս կը մտնեն, քանի մը վայրկեանէն, հինգ դերասանները, զրուած, շուրթած կը կենան բեմին առջին:

ՀԵՂ. (դառնալով ժողովուրդին) — Կը տեսնե՞ք այս հինգ անձերը, իւրաքանչիւրը յամցամբ մը գործած է այս քատերախաղին մէջ ու կեանքին մէջ, որուն համար պէտք է որ պատժուի: Փախուստ չկայ:

Կարապետը ուրիշին ազատութիւնը գողցած, իւրացուցած եւ անով ապրած է:

Նշանը զրուած կեանքի եւ մահուան միջեւ՝ մահը ընտրած է: Մանուշակը՝ մեղաւոր է իր ամուսինին կողոպուտին, որուն օգնած է իր լուսթեամբ, Արմինէն՝ ծախած է իր ազատութիւնը: Եւ Շաղիկը...

ՇԱՂ. (քայլ մը կ'առնէ դէպի Բեմադրիչը) — Ես ի՞նչ ըրած եմ որ: Զնչիմ դեր մը տուած ես ինձի: (Բարձրաձայն)՝ Ես չեմ ապրած:

ՀԵՂ. — Զիշո՞ք այդ է յամցամբդ: Ես քեզ Գանի-Գանի՝ անգամ փնտռելու ելած եմ, բայց չկա՛ս: Փախած ու պահուրտած ես բոլոր սեմեակդ, մէջտեղ չկաս, որ դերդ, պատասխանատուութիւնդ ստանձնես:

ՇԱՂ. — Բայց, Պարոն Հեղինակ, դո՛ւմ դերս պիտի ստեղծես ու տաս ինձի, ես միայն դերասան մըմ եմ, ուրիշ ոչինչ:

ՀԵՂ.—Ոչ, ոչ, դու՛ն դերասան չես միայն, դու՛ն իրական, ապրող անձ մըն ես... ի՞նչ է անու՛նդ:

ՇԱՂ.—Անահիտ:

ՀԵՂ.—Անահիտ ի՞նչ:

ՇԱՂ.—Անահիտ Աւետեան:

ՀԵՂ.—Շատ լաւ, Օրիորդ Աւետեան, դու՛ն ուզած ես կեանքի՛ն չմասնակցիլ, առանձնութեանդ կամ թու գոց մտերմութեանդ մէջ ապաստանիլ: Քու գիրքերդ, երգերդ, ինքնաբաւ երջանկութիւնդ: Անանկ որ, դեր չունիս: Քու յանգամե՛ր՝ կեանքէ՛ն փախիլն է, Օրիորդ Շաղիկ:

Կը դառնայ սրահին: Կարճ լուսթիւն մը:

ԲԵՄ. (*մտնելով*).—Օգնութեան պէտք ունի՞ս:

ՀԵՂ.—Ձէ, մերսի: Հիմա, այս կէտէն անդին, թատերախաղը կրնայ առնուզմ երկու ճեղով զարգանայ, մանաւանդ Կարապետին ու Նշանին համար: (*Հուռ է*): Առաջինը՝ Նշանը, կը մեռնի Ղարաբաղի լեռներուն վրայ, առանց տեսնելու ո՛չ գաւակը, ո՛չ Արմինէն եւ ո՛չ այլ, է՛ն կարեւորը՝ իր մայրը: (*Արագ մը կը դառնայ Մանուշակին*): Տիկին Մանուշակ, գիտէ՞ր այս մանրամասնութիւնը տըղուդ մասին: Ես այլ չէի գիտեր մինչեւ այդ Յունուար 1ի առտուն, կարծեմ Երկուշաբթի էր, տեսայ ձեզ քեմին վրայ, մայր ու տղայ առանձին, իրարու գիրկ...: (*Մանուշակ չի պատասխաներ*): Ազգային գիծ է ասիկա: Բայց ինչ որ է, անցմինք: (*Հուռ է*):

Կարապետը դու՛ն կ'երթայ օթոյի արկածի, գիշեր ատեն, տեղատարափի մը ընթացքին, Սան Տիեկոյի ճամբուն վրայ, երբ կ'երթար թողը եւ Արմինէն տեսնելու:

Արմինէն գաւակը գիրկը, վաթսուն տարեկան նախկին գինուորականի մը հետ կ'ամուսնանայ, տարիէ մը կը բաժնուի անկէ ու կը հաստատուի Սան Տիեկո, պանքայի պաշտօնեայ...

Մանուշակը, Կարապետին մահէն քիչ մը ատեն ետք՝ Գանատա կ'երթայ, Մոնրէյալ, եւ այրի քրոջը քով կը հաստատուի:

Շաղիկը մօրմէն չի բաժնուիր, կ'աւարտէ ուսումը Գանատական համալսարան մը ու կը կարգուի պաղտասցի երիտասարդի մը հետ:

(Կը լուէ Հեղինակը, շուրջը կը քննէ: Գոհ է ինքզինքէն: Ոտը լուսթիւն):

ԲԵՄ.—Եւ կա՞մ...

ՀԵՂ.—Եւ կամ... (*Հուռ է երկվայրկեան մը*): Նշան ետ պիտի դառնայ Ղարաբաղէն՝ անթացուպերու վրայ, մինչեւ կեանքին վերջ, պիտի փնտռէ, բայց չգտնէ իր գաւակը եւ անոր կարօտով պիտի մեռնի:

Հայրը՝ Կարապետը, պիտի պայտարի քանակներն զեւ ու յաղթէ, բայց պիտի քաշուի հանրային կեանքէն, իր ծաղրանկարին վերածուած: Ու սպասէ ծերութեան: (Լուս է): Մանուշակ, Արմինէ, Շաղիկ դուք ալ կը պատժուիք: Մանուշակը աշխարհի պատուհանները մէկ-մէկ կը գոցէ ու կը կծկուի ամուսնին պաղ մարմնին կուշտին, թռնիկին հոտին կարօտը սրտին: Արմինէ, գաւակը շալկած, պիտի կորսուի Ամերիկայի անիմֆնութիւն զանգուածին մէջ: Շաղիկը, փայլուն ուսանող՝ պիտի յաջողի կեանքի մէջ, բայց մնայ ոչմընթիւն մը իրրեւ խառնուածք եւ շահեկանութիւն:

Խոր լուսնին մը, ամէն կողմ:

ՄԱՌԴ (յանկարծ ոտքի կ'ելլէ բազմութեան մէջէն ու պոռալով կը խօսի Հեղինակին) — Ձաւակը, գաւակը, ա՛ն է կարեւորը:

ԲԵՄ — Կեցե՛ք եսօ, մարդը շունչ մը քաշէ:

ՀԵՂ — Այո, ա՛ն է կարեւորը:

ՄԱՌԴ — Անո՞ր ինչ կ'ըլլայ, ո՞ր է ան հիմա, գոյութիւն ունի՞, ունեցած է բնաւ:

ՀԵՂ — Այո, այո... (Կը պոռայ): Մտիկ ըրէ՛ք բոլորդ:

ԲԵՄ — Մտիկ ըրէ՛ք պէ:

ՀԵՂ (լուս է պահ մը) — Է՛ն դժուարն է... գաւակը... յուսամ, որ առողջ ու կայտաւ կը մեծնայ, խելքը, սիրտը իրենց տեղը, Կարապետին հաստատած Trust Fund-ին շնորհիւ:

ՄԱՌԴ — Ի՞նչու, չե՞ս գիտեր ան ինչ պիտի ըլլայ:

ՀԵՂ — Ձէ, անիկա իր օրէնքը ինքը պիտի դնէ, նոր հայութիւն մըն է... չէ, ես մարգարէ չեմ, նոր արմատը...

Լուսնին կը տիրէ սրահին մէջ:

ԲԵՄ — Վե՛րջը:

ՀԵՂ (երազէ արթնցածի մը պէս) — Այս երկու սենարիտները, երկուսն ալ գրուած են: Պատրաստ են ու գերասանները փորձերը ըրած-ըմընցած են: Կը մնայ որոշել ո՞ր մէկով պիտի աւարտի այս թատերախաղը, առաջի՞նը, թէ երկրորդը:

ՄԱՌԴ — Ո՞վ պիտի որոշէ:

ՀԵՂ — Դերասանները հոս կայներ են, հինգ հոգի, բուէի պիտի դնեմ:

ՄԱՌԴ — Մե՞նք, մենք մարդ չե՞նք, մեր կարծիքը ինչու՞ չէ՛ք առնել:

ԲԵՄ — Որովհետեւ ամոնք է, որ պիտի պատիժը կրեն, ամոնց կեանքն է, որ պիտի փրկուի կամ քանդուի:

ՄԱՌԴ — Բայց մենք ալ դերասան ենք, մեր կեանքերն ալ իրական չեն:

ԲԵՄ (կը խորհի վայրկեան մը) — Լաւ: (Դառնալով գերասաններուն, որոնք կը խորհրդակցին գլուխ գլխի): Ի՞նչ է ձեր ըմտրութիւնը:

ԿԱՐ — Այո, մենք համաձայնեցանք:

ԲԵՄ.—Ո՞րն է ձեր ըմտրածը:

ԿԱՐ.—Արահը թող որոշէ: Մեր կեանքերը արդէն քայքայուած են:

Լուսնին նորէն: Սրահին լոյսերը յանկարծ կը վառին ու բեմինը կը մարի Աղմուկ՝ սրահին մէջ, Խօսակցութիւն, աթոռի ձայն: Մարդը յանկարծ դուրս կ'ելլէ իր շարքէն ու կը ցատկէ բեմին վրայ:

ՄԱՐԻ.—Ժողովուրդ, առաջիմ լուծումիմ համաձայն եղողները թող ոտքի կայնին: (Մարդը կը համրէ գրուիները): Լաւ, մտտեցէ՛ք, Հիմա անոնք՝ որոնք երկրորդ ելքը կ'ուզեն, թող ոտքի ելլեն: (Նորէն կը համրէ: Յետոյ դառնալով գերասաններուն): Առաջիմը (կամ երկրորդ) սենարիոն պիտի խաղաւ: Պարո՛ն Բեմադրիչ, գործի անցիկ, ժողովուրդը իր ըսելիքը ըսաւ:

ԲԵՄ.—Մարտիրո՛ս, քաշէ վարագոյրը:

Դերասանները վարագոյրին ետին կ'անցնին, Հեղինակն ու Մարդը ետ իրենց տեղերը կ'երթան:

Վարագոյրը կը գոցուի:

Հասած այս կէտին, կարելի է տասը վայրկեաննոց կարճ դադար մը առնել, միջնարարի մը նման:

Դադարի սկիզբը սակայն պէտք է յիշեցնել հանդիսատեսներուն, թէ ո՞ր տարբերակը պիտի բեմադրուի:

Ա. Տարբերակը՝ ուր հերոսները քսան տարուայ ընթացքին կը քաւեն իրենց մեղքերը, թէ՛

Բ. Տարբերակը՝ ուր պատիժը անմիջական է:

ՏԵՍԱՐԱՆ 18

Շարաք, 18 Ապրիլ 1995

Վարագոյրը կը բացուի Փարիզի ուսանողին սենեակին մէջ: Երեք երիտասարդներ նստեր են հոս-հոն — Տիգրան, Նշան եւ աղջիկ մը, Սիլան: Կցկտուր խօսակցութիւն: Նշանին քով, պատին կռթնած՝ երկու անթացուպ:

Դուռը կը գարնուէր

ՏԻԳ.—Օւի. (Ներս կը մտնէ Հայկ): Բարի եկար, Հայկ:
 ՀԱՅԿ.—Ներեցե՛ք, որ ինչ մը ուշացայ:
 ՏԻԳ.—Եկուր նստէ, բեզի կը սպասե՛իմք կոր:
 ՀԱՅԿ (կը նշմարէ Նշանը)—Օ՛հ, Պարոն Նշան, բարի է՛ք եկեր: Լսեցի ձեր վիրաւորուելու մասին: Ծառ...
 ՏԻԳ. (ընդմիջելով)—Նստէ, Հայկ:
 ՀԱՅԿ (կը նստի)—Հիմա լա՛ւ է՛ք:
 ՆՇԱՆ.—Այո: Դե՛ռք ինչպէս է՛ք, դասերը, բնութիւնները...
 ՀԱՅԿ.—Ատոնք լաւ են, բայց ի՛նչ կ'արժեն ձեր ըրածին ինչ... ո՞վ գիտէ ի՞նչ...
 ՏԻԳ. (ընդմիջելով)—Նշանը շատ համեստ է, չի խօսիր կոր ատոր մասին:
 ՆՇԱՆ.—Համեստութեան հարց չէ, բայց սովորական բան է մակատի կեանքը: Արդէն ամիսներ է ի վեր գինադար կայ, գիտե՛ք... միայն երբեմն պատիկ patrouille-ները, կռիւ: (Լռութիւն: Բողոքի ուշադրութիւնը վրան է): Մարտունիի շրջանն էի:
 ՏԻԳ.—Նշան, պատմէ, պատմէ, ես ալ չեմ լսած, ինչ կ'ըլլաս:
 ՆՇԱՆ.—Բան մը չկայ պատմելիք, ծօ: (Լռութիւն): Այդ շրջանը, Խոնաշէն գետակ մը կայ, հիւսիս-արեւել կ'երթայ, ամառը ցամաք կ'ըլլայ: Գիշեր մը մեզի, հինգ հոգիով patrouille ղրկեցին Խոնաշէնի հունն ի վար: Խաւար գիշեր էր, չոր-ցամաք ամէն կողմ: Ծահնագ խմբապետը չորս զինուորով առաջ անցաւ, խուզարկելու եւ գերի բռնելու: Ես ետ մնացի, որ կողմը պաշտպանեմ: Գիտե՛ք, գիշերը լռութիւն գոյութիւն չուէր, հագար ձայն կայ ամայի բուրմերում մէջ: Հունին եզերքը, բարձր կէտի մը վրայ պահուրտեցայ: Քսան վայրկեան չանցած, ճշմարեցի որ մօտ տասը ազերի դիմացեա գետ իջան ու դիրք բռնեցին՝ տղոց վերադարձի մամբան կտրելու համար: Կամաց մը, առանց ձայնի, վար իջայ ու ես ալ անոնց ետեւը անցայ ու սպասեցի: Կը լսէի անոնց խօսակցութիւնը, սիկարէք վառելը, խնդալը...

Կը լռէ ու սիկարէք մը կը վառէ, դանդաղօրէն:

ՀԱՅԿ.—Օհօ՛... տեսնեմ ձխել սկսեր է՛ք, Պարոն Նշան:
 ՆՇԱՆ (պզտիկ խնդուք մը)—Այո...: (Լռութիւն): Դաշտէն հով մը սկսաւ փչել, զգացի որ մեր տղաքը ետ կու գային կոր: Ազերիներն ալ լսեցին, մէկէն ամէն ձայն լռեց, ճարտուններէն գատ: Սպասեցի...: Յետոյ երկու անգամ կրակեցի, մեր ճշմաններուն համաձայն: Ազերիները անմիջապէս սկսան իմ կողմը գարնել ու շարժեցան՝ կրոնակա առնելու համար: Մէկէն մութին մէջէն մէկը տնկուեցաւ աջիս, զէնքը ինձի ուղղած: Նիհար, կարճուկ զինուոր մըն էր, պա-

տանի գրեթէ: Ուսին կրակեցի, վար ինկաւ, առջիս, գէնքը առի՝ «ճայն չհանես, կը սպաննեմ հա՞» ըսի:

Կը լռէ նորէն, սիկարէթ մը կը վառէ:

ՏԻԳ.—Յետո՞յ:

ՆՇԱՆ.—Կարն կապեմ: Երկու կրակի մէջ բռնուած, աս ազերիները վախան: Այն ատեն հրետանին սկսաւ ուժեղանալ: Ստիպուած տղեկը շալկեցի, չէ մէ՛ կը մեռնէր, կռնակա առի, մեր սոգոց հետ ճամբայ ինկանք: Այն ատեն էր, որ շրափնէլը ծունկս ջախջախեց: Ինչ է մէ՛ ձեռով մը հասանք Մարտակերտ: Ամիս մը հոն մնացի, վերջը...

ՀԱՅԿ.—Ազերի՞ն ի՞նչ եղաւ:

ՆՇԱՆ.—Այի՛մ, հետերմիս տարիմք, հիմա Ասկերանի հիւանդանոցը կ'աշխատի: Բարեկամացանք, ուսանող է եղեր: Հայերէն սորվեցաւ, կ'երեւակայե՞ս:

Նշան կը լռէ, ետ կը կռթնի:

ՀԱՅԿ.—Պատերազմի մէջ ալ բարոյական կայ եղեր, չըսե՞ս:

ՏԻԳ.—Հարկաւ:

ՍԻՐԱՆ.—Բայց անո՞ք, ազերիները, ունի՞նք բարոյական զգացում:

ՆՇԱՆ.—Երբեմն...: Բայց այդ զգացումը երկրի սրտին մէջ կ'ըլլայ, ժողովուրդի մակարդակին, մարդուն մէջ ըլլալէ առաջ, հոն է ակը, աղբիւրը: Պիտի սիրես երկիրը եւ անոր կենդանիները, ծառերը, ջուրերը, ի՛նչ գիտնամ: (Հռ.ռ. է), Կարծես թէ... (աչքը Սիրանիս ուղղած)՝ սիրելը եւ սիրուիլը կ'ազնուացնէ մարդս, ըլլա՛յ ատիկա կին թէ Աստուած կամ երկիր մը... կ'ուժովցնէ թեզ:

ՀԱՅԿ.—Երկիրը ինչպէ՞ս կրնայ թեզ սիրել, Նշան:

ՆՇԱՆ.—Ես ալ այդ հարցումը հարցուցեր եմ տեսական: Քարը կրնա՞յ թեզ սիրել: Մի խնդրով վրաս, բայց կարծես թէ այո, կրնայ սիրել, այսինքն՝ ատիկա կը զգաս իր մէջ, եթէ ինչ սերդ մաքուր է, դուն մաքուր ես: Եթէ չըլլայ անոր սերը՝ ինչպէ՞ կը մարի, շատ շուտ, չի դիմանար:

ՏԻԳ.—Եթէ դուն մաքուր չես՝ չես զգար անոր սերը, անանկ չէ՞:

ՍԻՐԱՆ.—Բայց չե՞ս կրնար սիրել մէկը, եթէ ան թեզ չի սիրեր, չի ճանչնար անգամ:

ՏԻԳ.—Թէ՛ք կոյ խաղալու պէս բան մըն է ատիկա:

Կը խնդան:

ՍԻՐԱՆ.—Ի՞նչ է թէ՛ք կոյ ըսուածը:

ՏԻԳ.—Տղայ էիմք, մէկ կոյով կը խաղայինք ֆուտբոլը:

ՆՇԱՆ.—Ձեմ գիտեր, բայց ես կը զգամ, որ արմատը այն է, որուն հետ

հաղորդակցութիւն կայ երկու կողմէն... հողը, երկիրը մարդկայն էակներ են կարծես... Քեզի բան կ'ուզեն հասկցնել:

ՀԱՅԿ—Ի՞նչ:

Նշանին ակնարկը կը սառնի Լուս է սենեակը

ՆՇԱՆ.—Թէ հոս, այս երկրին մէջ պատասխաններ կան եթէ գիտես հարցնել, կը գգաս թէ օրէնքի կամ սկզբունքի պէս բան մը կայ, որ կը միացնէ մարդիկ, բնութիւնը եւ ինչ, թէ ժամանակ ըսուածը ո՛չ կը փախի, ոչ ալ կը հատնի, այլ հոն է, տեսակ մը մահը ջնջուած է ու կեանքը կը շարունակուի շուրջը, կը գգաս թէ դերասան չես կեանքի բեմին վրայ եւ ամէն ինչ լուրջ է, եղբրական նոյնիսկ, տեսակ մը... ծիսակատարութիւն է եղածը, այո, պատգամ մը կայ եւ այդ արմատը պատգամն է...

ՀԱՅԿ.—Եւ ի՞նչ կ'ըսէ պատգամը:

ՆՇԱՆ (*լուս է հրկար վայրկեան մը*).—Չեմ գիտեր...

ՀԱՅԿ.—Այսինքն՝ եթէ արմատը զգայիր՝ պատգամն ալ կ'առնէիր, ա՞ն է:

ՆՇԱՆ.—Կրնայ ըլլալ, չեմ գիտեր:

ՍԻՐԱՆ.—Քիչ մը շատ գրականութիւն կայ ասոր մէջը:

ՀԱՅԿ.—Եւ այդ երկու ամիսը, որ Հայաստան ու Դարաբաղ անցուցիք, ի՞նչ իմաստ ունին հիմա:

ՆՇԱՆ.—Ի՞նչ կանուխ է գիտնալու համար:

ՍԻՐԱՆ.—Այսինքն՝ նորէն պիտի երթաք:

ՆՇԱՆ.—Ա՛ս ոտքով, չէ: Բայց Սփիւռքի մէջ պիտի փորձեմ գտնել արմատ ըսուածը: Ուրիշ ելք չունիմ, ո՛չ ես, ոչ ալ դուք: Եթէ կայ պատգամ մը՝ այդ ալ հոս է, Սփիւռքի մէջ:

ՀԱՅԿ.—Ըսել կ'ուզե՞ք, թէ ձեր այս նշանաւոր Սփիւռքին հայկականութեան նկարագիրը, այդ չէ՞ պատգամը:

ՏԻՊ.—Անշուշտ՝ եթէ կայ պատգամ մը: Ես աս բոլորը քիչ մը շատ intellectualise կը գտնեմ:

ՆՇԱՆ.—Օհ, ինձի կը թուի, թէ պատգամ մը ըլլալու է, կայ, կայ...

ՏԻՊ.—Ըսելով ըլլայ նե՛՛ս ալ ըսեմ...

Կը խնդան. Նշան նորէն սիկարէթ մը կը վառէ:

ՆՇԱՆ.—Նայեցե՛ք, սապէս մտածեցի: Հայաստան կամ Դարաբաղ պիտի ապրիս նախ՝ զգալու համար, թէ կեանք ըսուածը արմատ ունի: Եւ այդ արմատը՝ պատգամի պէս բան մըն է: Լուս: Յետոյ պիտի թափառիս Սփիւռքի մէջ հոս-հոն կամ որեւէ մէկ տեղ՝ որ գգաս ինչ է արմատը:

ՍԻՐԱՆ.—Աս անբացուպերը ատո՞ր համար են, որ դիմանաս:

ՆՇԱՆ (*կէս-կատակի ձեւով*).—Ատոնք գիմն է, որ պիտի վերես, հա-

լամարար, Օրիորդ Սիրան:
 ՍԻՐԱՆ.—Պատիժի պէս բամ մը...
 ՆՇԱՆ.—Կրնայ ըլլալ:

Լուսին:

ՍԻՐԱՆ.—Աս պատգամի հարցը... (*պզտիկ խնդուք մը*) զիս շիտոնոց...
 ասիկա ձեր գլխուն մէջը կայ, ուրիշ տեղ չկայ: Քիչ մը շատ ար-
 ւեստակամ կը թուի ինձի:
 ՏԻԳ.—Համաճայն եմ ես քեզի, Սիրան, իմ ալ յեղիս չի պակիր: Պատ-
 գամ-մատգամ չկայ, ի՞նչ կը խորհիս, Հայկ:
 ՀԱՅԿ (*կը վարանի պահ մը*).—Սա ալ...
 ՍԻՐԱՆ (*ընդհատելով*).—Ի՞նչ...
 ՀԱՅԿ.—Ո՞ր դարուն մէջ կ'ապրինք կոր, մանրմ, Աստուած մի խոնկեմ
 մարդոց գործերուն:
 ՍԻՐԱՆ.—Իսկ արմատը, ասիկա՞:
 ՏԻԳ. (*ընդմիջելով*).—Պոչ խօսէ: (*կը խնդայ...*): Կը մերես, Նշան, բայց
 Փարիզի պէս տեղ մը, 1995ին, Քիչ մը դժուար է... եթէ մէկ հաստ
 իսկ օրէնք գտնեմ տիեզերքի մէջ՝ ես կը գոհանամ: Պատգամը, ար-
 մատը չեմ անցնիր իմ վրաս, կատարեալ անիշխանութիւն է եոս:
 ՆՇԱՆ.—Գիտեմ...: Բայց այդ է ըսածս, հոն երթաս նէ՛ ամէն ինչ կը
 փոխուի կոր, ծօ':
 ՏԻԳ.—Ինչպէ՞ս, ինչո՞ւ:
 ՆՇԱՆ.—Սա գիտեմ մը, եսօ, օրէնքի, հաւատի հետ կայ ալ չունի:
 ՏԻԳ.—Հապա՞:
 ՍԻՐԱՆ (*չատ հանդարտ ձայնով*).—Սիրոյ հետ:
 ՏԻԳ.—Հապը կլիցիմք, տղա՛:

*Հայկ ու Տիգրան կը խնդան: Սիրան, լուրջ Նշանին խօսելուն
 կը սպասէ:*

ՆՇԱՆ (*կը դառնայ Սիրանին*).—Կարծեմ թէ այո...

Նորէն լուսին:

ՏԻԳ.—Կրնամ քիչ մը անձնական հարցում հարցնել քեզի: Տղուդ մասին
 է: Ո՞րք է ան սա ամբողջին մէջ:
 ՆՇԱՆ.—Ի՞նչ ըսել կ'ուզես:
 ՏԻԳ.—Աս Սփիւռքը, սերունդէ սերունդ արմատ պիտի փոխուի, պատ-
 գամ պիտի ստեղծուի, ի՞նչ պիտի ըլլայ, mon vieux:
 ՆՇԱՆ.—Օրիորդ Սիրանը ըսաւ, պիտի սիրես որ ապրի, մորոզէ իմօգիմ-
 քը, Աստրալիայէն մինչեւ Արժանօթիմ, Հայաստանէն ուժ արմելով,

ուր որ հայ կայ, արմատ կայ՝ հոնկէ ուժ առնելով: Իմ տղաս ար-
դէն ինձմէ մէկ քայլ առաջ է եւ գիտէ ինչ պիտի ընէ:

Նորէն լուսթիւն, ամէնքը սուղուած իրենց մէջ:

ՀԱՅԿ.— Հոյակապ... ես հիմա կ'երթամ: (Ոտքի կ'ելլէ, կը պրկուի),
բայց նորէն կը հանդիպիմք:

ՆՇԱՆ.— Հարկաւ:

ՏԻԳ.— Մնաք բարով քուրիդ (Գուրս կ'ելլէ):

ՄԻՐԱՆ.— Ես ալ ելլեմ: (Ոտքի կ'ելլէ, կը դառնայ Նշանին)՝ Ես ձեզի
կը գրեմ, հասցէն Տիգրանէն կ'առնեմ, աս նիւթը սրտիս շատ մօտ
է: Մնաք բարով:

Նշան ոտքի կ'ելլէ, ձեռքը կը թօթուէ, Սիրան մեկնած ատեն՝

վարագոյլը կամաց-կամաց կը գոցուի:

ՏԵՍԱՐԱՆ 19

Կիրակի, 23 Ապրիլ 1995

*Բենը կը ներկայացնէ Տէրունեանենց Հիւրասենեակը: Կէսօր
է ու Տիկին Մանուշակ հեռաձայնով կը խօսի:*

ՄԱՆ.—...Տիկին ժէմիա, ամուսինս ատանկ դպրոցական հարցերով չի
գրադիր այլեւս, խնամակալութեան մէջ չէ մէկ ամիսէ ի վեր, ա-
նանկ որ...

—...
ՄԱՆ.—...անանկ որ ձեր տղուն խնդիրը պարոն Տնօրէնին հետ կարգադ-
րեցէք, ամուսինս...

—...
ՄԱՆ.—Ձէ, հիմա հոս չէ արդէն, գործի է... այո, պանքան:

—...
ՄԱՆ.—Ձեմ գիտեր, Տիկին ժէմիա, անկեղծ... որքան գիտեմ՝ դպրոցը
երբեք աշակերտ մը դուրս չէ դրած ատանկ պատճառներով: Պէտք
է Պարոն Տնօրէնին հետ խօսիմ, ան է որ...

—...
ՄԱՆ.—Տեսէք, ես կը հեռաձայնեմ Պարոն Տնօրէնին, որ ձեր խնդիրը...

—...
ՄԱՆ.—Բան մը չէ: Տեսնուիմ:

Վար կը դնէ գործիքը, պահ մը անշարժ է, աչքերը պաղած, յետոյ կը վերցնէ ընկալուչը ու կը պատրաստուի թիւը կազմել՝ երբ Նշանին ձայնը կու գայ դուրսէն, բարձր եւ գուարթ:

ՆՇԱՆ.—Մամա՛... պապա՛.... ո՞վ կայ տունը...
ՄԱՆ.—Նշա՞ն...

Վար կը նետէ գործիքը ու թեւերը բացած կը վազէ դէպի դուռ: Դրան մէջ կը հանդիպին ու կը փաթթուին իրարու, տաք ու առատ կը համբուրուին՝ Քիչ հոք կը քակուին ու Մանուշակ յանկարծ կը նշմարէ Նշանին անթացուպը:

ՄԱՆ.—Նշա՞ն, ա՞ն ինչ է: (Ձայնը ահաբեկ, հագիւ լսելի, կը սառի բերնին շուրջ: Կ'առնէ անթացուպին մէկը, կը նայի, յետոյ աչքը կ'երթայ տղուն ոտքին... ու կրկին կը փաթթուի անոր): Ա՛յ, Նշան, ա ս ի՞նչ եղեր է քեզի: (Ու նորէն կը գրկէ իր տղուն մարմինը, կը սեղմէ կուրծքին):

ՆՇԱՆ (կէս մը ազատուելով անոր թեւերէն).—Աչ ոտքս է, ջարդուփըշուր եղաւ:

ՄԱՆ. (Դժու չհաւատարով աչքերուն).—Բայց... ասա՞նկ պիտի մնայ մինչեւ վերջը:

Նշան գլուխը կը շարժէ, հաստատական, լուռ կը մնայ:

ՆՇԱՆ.—Դու ինչպե՞ս ես, մամա:

ՄԱՆ.—Ինչպե՞ս եղաւ, ո՞ւր եղաւ, ո՞վ ըրաւ ասիկա քեզի... ինչո՞ւ, ինչո՞ւ... չեմ հաւատար... վախ եմ ըսեր, տղա...

Նորէն կը փաթթուի իր տղուն:

ՆՇԱՆ.—Լա՞ն ես դում, պապա՞ն ինչպէս է, Ծաղի՞կը:

ՄԱՆ.—Հա, հա, ամենքս ալ լաւ ենք... հեյլեկուր ցատէ սա տեղը, յոգեանծ ըլլալու ես, ինչո՞ւ լուր չտուիր չեկած, օղակայանէն կու գա- յինք-կ'առնէինք քեզ, մա՛նաւանդ ա ս վիճակով, ծամր ալ պայուսակ...

ՆՇԱՆ (ընդմիջելով).—Հէ՛ պէտք չկայ, ես շատ դիրիմ կը մամբորդեմ:

Կը նստին բազմոցին, քով քովի, տղուն ձեռքը բռնած: Մանուշակ աչքերը կը սրբէ:

ՆՇԱՆ.—Լաւ կ'երեւիս կոր, մամա:

ՄԱՆ.—Պատմէ մայիմք ինչպե՞ս եղաւ, որ...

ՆՇԱՆ (ընդմիջելով) — Հիմա չէ, մամա, վերջը, ժամանակ կայ:
 ՄԱՆ — Տղաս, գիտնաս, ինչքան մտահոգուեցայ, ատանկ մէկէն գլուխդ առիր—գացիր... մարդ քաղք մը կը դրկէ, թէլէֆոն մը կ'ընէ...
 ՆՇԱՆ (մէկէն լրջացած) — Ի՞նչ լուր ունիս, մամա:
 ՄԱՆ — Որսէ՞:
 ՆՇԱՆ — Արմինէն:
 ՄԱՆ (ուրախ է յանկարծ արտայայտութիւնը) — Չի՞ղ ատենին եկար:
 ՆՇԱՆ — Իրա՞ւ: (Աչքերը կը փայլին, մօրը կը մօտենայ): Ե՞րբ խօսեցար հետը:
 ՄԱՆ — Երէկ կէսօրին, այս ատենները:
 ՆՇԱՆ — Ո՞ր է, գիտե՞ս, ըսա՞ւ:
 ՄԱՆ — Ձէ, տղաս, բան մը չ'ըսեր կոր այդ մասին: Ինչքան խնդրեցի, աղաչեցի՝ բան մը չ'ըսաւ:
 ՆՇԱՆ — Իմ մասին եարցո՞ւց:
 ՄԱՆ — Այո, ըսաւ ուր ես, ինչ կ'ընես կոր:
 ՆՇԱՆ — Նորէն պիտի խօսի՞:
 ՄԱՆ — Այո, պէպէ՞ք ծնելն ետք:
 ՆՇԱՆ — Բայց ինչո՞վ կ'ապրի կոր, կ'աշխատի՞ կոր, առո՞ղջ է: Պատի՞կը ինչպէս է:
 ՄԱՆ — Հա, լաւ են:
 ՆՇԱՆ — Տեսկամ միտնա է երիտան:
 ՄԱՆ (մեղմ ձայնով) — Անուշիկա...

Լուռ են պահ մը, տարուած երկխոսին երազէն:

ՆՇԱՆ — Պապա՞ն: Պապա՞ն ինչպէս է:
 ՄԱՆ — Բան չէ փոխուած, բայց ամէն ինչէ կը քաշուի կոր, ա՛յ շատ չի խօսիր, չի խնդար...
 ՆՇԱՆ — Շաղի՞կը ուր է:
 ՄԱՆ — Ամբողջ օրը համալսարանն է, տեսած չունիմ: Գիշերները այլուս ուշ տուն կու գայ կոր, բան մըն ալ ըսես՝ կը ջղայնանայ... պապա— յի՞գ վիճակը շատ գէշ ազգած է վրան:
 ՆՇԱՆ — Իսկ դո՞ւն, հոգիդ, սիրտդ, առողջութիւնդ...
 ՄԱՆ — Հայրդ կը խնամեմ կոր հիմա: Օ՛, ձգէ ինձի:
 ՆՇԱՆ — Ձէ, չէ, չեմ ձգեր... (Կը փաթթուի մօրը նորէն) — Օր չտեսար պէ, մամաս:
 ՄԱՆ — Ատիկա բան մը չէ, տղաս, ընտանիքի կսկիծ չտեսնեմ՝ ուրիշ բան չեմ ուզեր:
 ՆՇԱՆ — Է, ի՞նչ պիտի ըլլայ կեանքդ, ասանկ օրէ օր պիտի խամրիս, կեանք պիտի չտեսնե՞ս դուն:
 ՄԱՆ — Տղաս, հայրդ կը խնամեմ, պատի՞կ գործ է:
 ՆՇԱՆ — Մեղք ես պէ, մամա:

ՄԱՆ. *(յանկարծ խիստ թոնոյ)*—Ատանկ խօսքեր անգամ մըն ալ չըսես ինձի, Նշան, կը մեղուիմ: Ես հաճոյքով հօրդ հոգ կը տանիմ, կը յարգեմ, կը սիրեմ:

ՆՇԱՆ *(կատակի ձայնով)*—Ինձի՞ ալ հոգ պիտի տանիս:

ՄԱՆ.—Հարկաւ, եկուր հոս քնակէ մորէն, բու տունդ է ասիկա, գոճէ կարօտս կ'առնեմ, թոռնիկ չտեսնա՞մք, գոճէ զաւակ վայելեմք...

ՆՇԱՆ.—Ես թոռնիկդ թեզի պիտի քերեմ, մամա, վստահ եղիր:

ՄԱՆ.—Ինչպէ՞ս, մարդ չի գիտեր ուր եմ մայր ու տղայ:

ՆՇԱՆ *(յանկարծ մօրը երկու ձեռքերը կը բռնէ)*—Մամա, ես կը խոստանամ, երդում կ'ընեմ, թոռնիկդ կարօտը պիտի առնես, դուն ի՞նչ կ'ուզես: Ձե՞ս վստահիր խօսքիս:

ՄԱՆ.—Տղաս, կը վստահիմ, հարկաւ, քայց դուն բու կեանքդ ունիս, հիմա արդէն ծայրէն պիտի սկսիս: Աս թոռնիկը կորաւ-գնաց...

ՆՇԱՆ.—Ձէ, չէ, բան մը չէ կորսուած, հոս է, հոն է, դուրսը...: *(Ձեռքին շարժումը ցոյց կու տայ աշխարհի տարածութիւնը)*: Ի՞նչ զաւակս ալ է, ես պիտի գտնեմ, ի՞նչ ալ ըլլայ գիմը:

ՄԱՆ.—Ես բու քարիքդ կ'ուզեմ միայն, պապայիդ ալ երջանկութիւնը:

Լուռ են պահ մը:

ՆՇԱՆ.—Փարիզ շատ լաւ անցաւ:

ՄԱՆ.—Հա, իրաւ, Տիգրանին իջար, չէ՞, ի՞նչ ըրիք հետաքրքրական:

ՆՇԱՆ.—Տիգրանին ընկերները եկան եւ վիճաբանեցանք: Փարիզ ուրիշ է, ուրիշ...

ՄԱՆ.—Ինչի՞ մասին:

ՆՇԱՆ.—Արմատի մասին, Հայաստանի մասին, Ափիւնի մասին...

ՄԱՆ.—Ի՞նչ արմատ է ասիկա, որո՞ւն արմատը:

ՆՇԱՆ.—Հէջ, ճանրմ, փիլիսոփայական խնդիրներ են: *(Լուռ է վայրկեան մը)*: Արմատը, մամա, այսինքն՝ ուրկէ կու գանք, մեր նախահայրը, հայուն ուժը դիմանալու աշխարհի մէջ, ասանկ բաներ...

ՄԱՆ. *(վայրկեան մը կը մտածէ)*—Ես որքան կը հասկնամ, արմատը մարդ ինքը կը շինէ, իր ուժին աղբիւրը ինքն է, ինքը պիտի տնկէ արմատը, չէ՞նէ՞ տոկուն չ'ըլլար:

ՆՇԱՆ *(յանկարծ հետաքրքրուած, անոր դառնալով)*—Ինչպէ՞ս այսինքն:

ՄԱՆ.—Ինչ որ կը ստեղծես՝ քեզ կեանքին կը կապէ, չէ՞, աշխարհին կը կապէ: Ձաւակն է մարդուն արմատը կեանքին հետ, ես ամանկ կը զգամ:

ՆՇԱՆ *(խանդավառ շեշտով)*—Մամա, գիտե՞ս, շատ իմաստալից բան մը ըսիր հիմա:

ՄԱՆ.—Ձէ, չէի գիտեր:

ՆՇԱՆ.—Հարկաւ... ուրեմն ես եմ բու արմատդ, ատանկ կը զգաս դուն... ես ալ ճիշդ հակառակը կը կարծէի:

ՄԱՆ. (խնդալով)—Կրնամ սխալիլ, չեմ գիտեր:
 ՆՇԱՆ.—Ձե, չե, սխալ չես:
 ՄԱՆ.—Ձեմ գիտեր, ես կը գգամ, որ դուք էք, դուք ու Շադիկը, որ
 մեզ երկուքս կեանքիմ կը կապէք, ոչ թէ հայրս ու մայրս, որոնք
 մեռած են... Ինչպէ՞ս մեռած բան մը բեզ կ'ապրեցնէ...
 ՆՇԱՆ.—Եւ հիմա բռնմիկդ...
 ՄԱՆ.—Այո:
 ՆՇԱՆ (չուս է պահ մը)—Կարծեմ քանի մը օր կը մնամ հոս:
 ՄԱՆ.—Պապադ շատ սիրտի ուրախամայ: Գիչ հոմ քէլէֆոմ ընեմ իրեմ՝
 տամ լուրը: Քոյրդ այ:
 ՆՇԱՆ.—Յետոյ մամբայ կ'իյնամ:
 ՄԱՆ.—Նշան, յոգնած ըլլալու ես: Երբամ սննեակդ պատրաստեմ, որ
 հանգչիս: (Նուս է): Վերջը դեռ շատ կը խօսիմք: Բարեմի՛ք կ'ուզե՞ս
 առնել:
 ՆՇԱՆ.—Գէշ չ'ըլլար:

*Մանուշակ ոտքի կ'ելլէ: Կը սպասէ որ Նշանն ալ անթացուպը
 առնէ պատէն ու կայնի: Յետոյ, մէկ թեւը իր մօր ուսին նետած,
 անոր կռթնած՝ Նշան մօրը հետ դուրս կ'ելլէ:*

Վարագոյրը կը գոցուի:

(Ծար. 4 եւ վերջը յաջորդով) ՎԱՀԷ ԾՇԱԿԱՆ

Հէնց նոյն արմատին,
 Մենք այնուհետեւ
 Դարձանք երկու յուշ՝
 Օրերի ճակատին,
 Հեռացանք կարգին,
 Հեռացանք այնքան,
 Որ չըջանցեցինք
 Գլուխը գետնի՝
 Միքն մոլորակի,
 Ու հասանք... իրար,
 Երբ արդէն դու մայր,
 Իսկ ես հայր էի՝
 Ունէինք որդի...
 Ու հասանք իրար,
 Երբ ես արդէն այր,
 Իսկ դու կին էիր,
 Եւ այնքան օտար,
 Որ չթողեցիր
 ասպաւորութիւն
 Նոյնիսկ ծանօթի,
 Արդէն այլ էիր,
 Բայց այնքան արդար,
 Որ տուիր հասցէն՝
 Մէր յուշը փակած,
 Կարօտը կապտած,
 Մէրը կաշկանդած,
 Իսկ ինքը կորած,
 Աւերակ բերդի...

Հիմա լիշտ՛ւմ ես, յիշո՛ւմ ես, իմ սէր,
 Մենք հանդիպել ենք
 Միայն մի դիշեր,
 Այն էլ լուկ երկու վառ կէտի միջեւ...
 Ինչպէ՛ս կ'ուզէի՝ լանջօղ հրաշէկ
 Հիմա ոչ թէ լուկ հրդեհի հանդոյն
 շողար ու շիջէր,
 բարձրանար, իջնէր,
 Այլ իմ անկրակ,
 Այլ իմ անհրակ
 Մըտի եւ հոգու

բաց ու անքանակ,
 թաց ու բազմաոռակ
 վերքերը բուժէր.
 Դրա՛ համար եմ
 Հիմա քեզ յիշել,
 Դրա՛ համար եմ սրտիս տակն իջել,
 Դրա՛ համար եմ
 Գլուխս առել,
 Յուշիս արիւնով
 Այդ բերդին դրել—
 Մի լաւ գիշերը
 Թող յաւերժ մնի,
 Յաւերժութիւնը չդառնա՛յ գիշեր...

15-16. 9. 1995
 Թեհրան

ՎԱՐԱՆԴ

—Հա՛... Հա՛... իմացա՛յ... իմացա՛յ... այո՛՛... կորսուէ՛ գնա՛... օր մըն ալ Հեռաձայնէի՛ր ու լաւ լուր մը տայիր... ի՛նչ կ'ըլլար:

Ընկալուէ՛ր չըսա՛յ... Հարուածելով ետ իր տեղը դնելէ ետք, անմիջապէս լուրերու կայանը բացաւ: Յետոյ՝ մտածկոտ երեւոյթով մը դարձաւ իր ընկերոջը, որ դրան սեմին կայնած՝ իրեն կը նայէր:

—Եկուր, հա՛յիկ... հէլէ նստէ՛... սուրճին ջուրը դրէ,— մըմնջաց ան քթին տակէն, աղօթող ձայնով մը:

Ու երկու հարեւաններ, պատկերասփիւռին առջեւ, քով քովի նստան կծկուած, բաժնելով կակիճն ու դառնութիւնը այս ողբերգութեան՝ շանթահար ու ափ ի բերան դիտեցին փլատակները... Լացող-ողբացող աղէտեալներուն ախն ու վախը...

Ու յետոյ մէկէն, տարբեր տեսարան մը պարզուեցաւ, ուր որբացած քանի մը երեխաներու անձայն Հեծկտանքներն ու անկենդան-մեկամաղձոտ հայեացքները... զարմանալի... կարծես ուղղակի միացեր էին Գէւոյի հայեացքին, ու Գէւոն շատ ցնցուեցաւ ու ափերը ծունկերուն վրայ զարնելով:

—Վա՛ս'յ... ձիւն ձմեռ է՝ ու Նոր Տարին մօտալուտ,— հառաչեց ինքն իրեն...

Չես դիտեր ինչու այդ սրտածմլիկ տեսարանը քանի մը անգամ եկաւ-այեցելից Գէւոյին ու անհանգստութիւն պատճառեց: Անցան քանի մը օրեր, եւ Գէւոյին այնպէս թուաց, թէ արդէն իսկ մոռցած էր եղբորութիւնը... արդէն իսկ, ամէն ինչ ջնջուած ու անհետացեր էին յիշողութենէն...

Այն օրուընէն երկու շաբաթ անցած էր ու, տարօրինակ երեւոյթ, Գէւոն սկսեց էր երազ մը տեսնել: Գէւոյին երազելը արտասովոր երեւոյթ էր. երազ մը, որ զրեթէ ամէն օր կէս-գիշերին զինք տազնապով կ'արթնցնէր: Եւ իրօք, Գէւոն շատ կը զարմանար... մանաւանդ ինչ որ կ'երազէր՝ պատահած էր իր մանկութեան ընթացքին՝ մօտ վաթսուսուն տարիներ առաջ...

Եւ այսպէս, օր մը, կէս գիշերին, երբ Գէւոն անկողնին մէջ տապալակելով կը փորձէր ձերբազատուիլ անցեալէն, կ'ընէ՝ Սաթենիկ, կիսաքուն աչքերով փսփսաց.

- Այ մարդ, կէս գիշեր է, մտի՛ր պառկիր:
- Նորէն եկան, Սաթենիկ... նորէն եկան երազիս մէջ...
- Փորդ... բաց պարկեր ես: Մածկուէ՛:
- Բայց Գէւոյի աչքերուն մէջ ա՛լ քուն չկար:
- Ե՛լ... սուրճ մը եփէ ու խմենք:
- Սաթենիկ սուրճը եփեց, ու լուռ-մունջ ամուսնոյն քով դրաւ:
- Խմէ՛, — ըսաւ, — խմէ՛ որ լեզուդ բացուի:
- Ու նստաւ անոր կողքին:

Գէւոն ուժպ մը առաւ ու փորձեց մտաբերել իր երազը, որ շա՛տ-շա՛տ տարիներ առաջ պատահած դրուագի մը մշուշոտ պատկերացումն էր: Դէպքը պատահած էր որբանոցին մէջ, երբ Ամանորի

երեկոյ մը կը տօնէին, ուր «կաղանդ պապուկը», ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իր նուէրները պիտի բաժնէր բոլոր աշակերտներուն՝ իւրաքանչիւրին մասին քաջալերական քանի մը խօսք ըսելով:

Եւ իսկպէս, ճիշդ կէս-գիշերին «կաղանդ պապուկը» հասած ու ելած էր բեմին վրայ, եւ ամէն մէկուն յանձնած իր նուէրը:

Ու Գէւոն նկատեց էր, որ բոլոր աշակերտները ստացեր էին իրենց նուէրները ու միայն ինքն էր մնացեր՝ վերջինը:

Եւ երբ կարգը հասեր էր իրեն, «կաղանդ պապուկը», իր պատկառելի փորը շփելով՝

— Հիմա ամենամեծ նուէրը պիտի տամ մեր լաւագոյն աշակերտին,— ըսեր էր ու Գէւոն կանչեր էր մօտը:

Ու Գէւոն նկատած էր, թէ իրօք, իրը նուէրներուն ամենամեծն էր: Եւ Գէւոն շատ ուրախացաւ, որովհետեւ կեանքին մէջ առաջին անգամ էր, որ նման պարգևի մը կ'արժանանար:

Ու «կաղանդ պապուկը» սկսաւ տոպրակը բանալ, իսկ սրահէն ներս աշակերտներուն միջեւ նախանձախնդիր հետաքրքրութիւն մը արթնցած էր: «Արդեօք ի՞նչ կար այդ հսկայ տոպրակին մէջ?»

Ու յանկարծ տոպրակին մէջէն Գէւոյի հասակին շափ հսկայ... հսկայ դրոմ մը ելաւ՝ ու բոլորը քահ-քահով սկսան խնդալ, եւ Գէւոյին այնպէս թուաց... թէ բոլոր սրահը սկսեր էր իր վրայ խնդալ: Գրուածին ուժեղ կից մը տալէն ետք, ան, գլուխը կախ, սրահը ձգելով վազեր էր ննջարան:

Այս էր բոլոր պատահածը: Ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Բայց այսքան տարի ետք նման դէպք մը յիշելու ի՞նչ պէտքը կար: Եւ ինչո՞ւ համար այդ մանկութեան օրերու դողն ու ցաւը տակաւին կը զգար, երբ կը խոկար պատահածին վրայ:

*
* *

Երկուշաբթի օր մը, միջօրէին, երբ Սաթենիկ շուկայէն վերադարձաւ, տունը պարապ գտաւ:

— Գէւօ՛, — կանչեց ան՝ թխսամէլը հաւու նման չորս դին վազվզելով:

Գէւոյին ձայնը տեղէ մը կու գար, բայց ինքը մէջտեղ չկար:

— Ո՛ւր ես...

— Հոս... վերը...

— Վերը ո՞ւր...

— Առաստաղը...

Սաթենիկ պահ մը ապշած մնաց տեղը:

— Ա՛յ մարդ, առաստաղը ի՞նչ գործ ունի...

— Հէ՛՛, ըսի պոյ մը ելլեմ-տեսնեմ որքան տեղ կայ, քիչ մը աւելցի ու մաքրեցի...

—Այ մարդ, սա հսկայ տունը չէր բաւեր՝ մէյ մ'ալ առաստաղ
կլար...

Փէւոն կնոջը հետ էւել-պակաս չխօսեցաւ:

Իսկ Սաթենիկ իր շունը դրացիին՝ Խաչիկին տունը առաւ:

—Խաչիկ աղբար... հեյէ մէյ մը գայիր ու Փէւոյին երկու խօսք
ընէիր...

—Ինչո՞ւ... Ի՞նչ կայ... Ի՞նչ է պատահեր:

—Խաչիկ աղբար, այս մարդը առտունէ մինչեւ իրիկուն առաս-
տաղէն վար չ'իջնէր. չեմ գիտեր, թէ Ի՞նչ կ'ընէ հոն... բայց գլխու
չի պառկիր... մէյ մը դաս ու երկու խօսք ըսես... տեսնես տէրտը Ի՞նչ
է:

Փէւոն Խաչիկին հետ ալ էւել-պակաս չխօսեցաւ:

Ձեռ գիտեր ո՞ր մէկ հովը փչեց... քանի մը օր հոք քաղաք իջաւ
ու սկսաւ խաղալիքի բոլոր խանութները պտտիլ: Իւրաքանչիւր խա-
նութ օր կը մտնէր, մանկական ներքին ցնծութեամբ ու երանգով մը
կը դիտէր չորս դին, շոյելով ու շօշափելով բուրդէ պուպրիկները...
գոյնզգոյն գնդակները... ինքնաշարժները... հեծիկները...

Ա՛խ, որքա՞ն ճոխ ու հմայիչ տեսք մը ունէին այդ բոլորը...

Ու Փէւոն առանց վարանելու, թողակ մանրելով գանոնք կը զը-
նէր, տուն կու գար, մատներուն վրայ մազցելով առաստաղ կ'ելէր,
ու բոլորը հոգածութեամբ հոն կը տեղաւորէր:

Դուռ-դրացի հետաքրքրութեամբ կը հետեւէին Փէւոյին այս խոր-
հըրդաւոր երթուղարձին, մա՛նաւանդ՝ երբ ան գրեթէ ամէն օր ձեռ-
քերը տոպրակներով լեցուն, իրենց առջեւէն անցնելով տուն կը վերա-
դառնար:

—Եօթնասունէն հոք մարդը խեցաւ,— կը մտածէին բոլորը ու
զաղտնօրէն վրան կը խնդային:

Օր մը կինը դէմը ելաւ-

—Այ մարդ, տուն-տեղ խաղալիքով լեցուցիր... սառնարանը չոր-
ցաւ... ուտելիք, դրամ չմնաց: Մինչեւ ե՛րբ պիտի շարունակես այս
կեցուածքդ,— մըմնջեց յուսահատ:

—Շատ չմնաց, Սաթենիկ, շատ չմնաց,— պատասխանեց Փէւոն,
սակայն գիտցածէն մատ մը չչեղեցաւ:

Օր մը, այսպէս, բազուկներուն մէջ նորէն հսկայ նապաստակ մը
եւ արջուկ մը գետեղած՝ շուկայէն կը վերադառնար, երբ տեղացի զը-
բացիներէն մէկը համարձակութիւնը ունեցաւ իրեն մօտենալու:

—Օ՛հ՝ միւսըր Գէւօ... այս որքա՞ն գեղեցիկ են այս խաղալիքները,
պէտք է շա՛տ սուղ ըլլան:

—Ձախխա՛լ... գործի՞դ գնայ,— պատասխանեց Փէւոն եւ, առանց
նոյնիսկ անոր կողմը դառնալու՝ շարունակեց իր ճամբան:

Փէւոն իր այս գրացիին վրայ բնաւ վստահութիւն չունէր:

Եւ իրաւունք ունէր վերապահ ըլլալու...

Երեսուներկու տարի առաջ, երբ ան իր հօրենական օճախը ձգելով Սիսիի գաղթած էր, իր առաջին գործը եղած էր՝ գնել տուն մը եւ տան ճակտին՝ բարձրացնել Հայկական դրօշը:

Իսկ այս դրացին՝ Խոռըրտը, տակաւին ժամ մը շանցած, եկած ու, Գէւորին դուռը դառնելով՝ իրմէ պահանջած էր, որ դրօշակը վար առնէր:

— Հոս Աւստրալիա է, բարեկամ, աւստրալիական դրօշակը կա- խէ:

— Իմ տունս իմ հայրենիքս է,— պատասխանած էր Գէւորն չոր ու ցամաք ձայնով,— իմ դրօշակը կը կախեմ հոն... կորսուէ՛ ու զիս ան- դամ մըն ալ անհանգիստ մի ընեմ,— ու դուռը կրկին գոցած:

Սակայն հարցը հոս չէր փակուած: Փողոցին լակոտները սկսե- ր էին Գէւորին տունը քարկոծել: Եւ իրօք, Գէւորն սկիզբը շատ մեղմ էր գտնուել անոնց հանդէպ: «Երեխայ են» ըսելով՝ փորձեր էր նայուած- քով սաստել:

Բայց երբ օր մը դրօշակը պարտէզին մէջ բզկտուած ու դեռին նետուած գտաւ, այն ատեն՝ Գէւորին չարխը դարձաւ ու որոշեց հար- ցը տարբեր ձեւով լուծել:

Շարաթ մը տեւած պահակութենէն ետք, լակոտներէն երկուքը յանցանքի վրայ ձեռք ձգեց: Ոսկրոտ մատներովը անոնց օճիքէն բըռ- նեց-բարձրացուց նապաստակի պէս եւ սարսափահար նայուածքով մը որոտաց...

— Մ՛՛՛՛՛, շան ձագեր... գաղէ՛ք... գաղէ՛ք ու այս իմ խօսքերը ձեր հօր-մօր փոխանցեցէք: Ըսէք, որ ա՛լ այնթապցի Գէւորին հետ թող չի- նան-չչափուին, որովհետեւ Գէւորին համբերութիւնը հատած է: Ու Աստուած մի արասցէ... եթէ պատահի, որ ձեզ անգամ մը եւս իմ տան առջեւ տեսնեմ, նախ ձեզ ու յետոյ ձեր բոլորը կը սպաննեմ:

Շիտակը, այն օրէն ի վեր Խոռըրտ քանի մը անգամ փորձեր էր Գէւորին հետ բարեկամութիւն հաստատել, բայց Գէւորին սիրտը չէր տաքցեր:

Եւ ան աւելի իր սրտին մտիկ կ'ընէր, քան մտքին: Գէւորն իրաւունք ունէր վերապահ ըլլալու...

Ու այնթապցին իր անսովոր գործընթացը շարունակեց, մինչեւ որ առաստաղը ամբողջութեամբ խաղալիքներով լեցուեցան:

Կիներ ի զուր կը գանգատէր:

— Մի՛ մտահոգուի՛ր, բնական երեւոյթ է,— կ'ըսէին դուռ-դրա- ցիք,— մարդ երբեմն եօթանասունէն ետք կը շուարի:

Եթէ պատահէր, որ օր մը Գէւորին տան առջեւէն անցնէիք, փո- ղոցէն՝ խաղալիքներուն միապաղաղ զնգզնգոցը անպայման կ'իմանա- լինք:

Եւ Գէւորն շատ գոհ էր իր կեանքէն: Մանուկի նման առաստա- ղէն բաժնուիլ չէր ուզեր: Ինքն ու իր խաղալիքները՝ իրարու հետ կը

խօսակցէին, կ'երգէին, կը խոկային, տեսակ-տեսակ ծրագիրներ կը պատրաստէին...

Օր մըն ալ որոշեց բոլորը անունով օժտել: Սա Պետրոսը... սա Օհանը... սա Ջեփիւռը... այս մէկը կիրակոսը... եւ իւրաքանչիւրին անունը թուղթի մը վրայ գրելով վրան կ'պցուց:

Հիմա բոլորը իրենց անունով կրնար կանչել:

Շարաթ մը ետք, առտուան դէմ էր, երբ Գէւոն հայտնելով արթնացաւ: Մէկը տան դուռը ուժգին կը հարուածէր:

—Մ'ի՛նչ էս... սատկէ՛ր ու պառկէ՛ր... առտու կանուխ ի՞նչ կ'ուզես... քու շնորհքդ ու...

—Ոստիկանութի՛ւն... դուռը բացէ՛ք, ապա թէ՛ ոչ՝ կը կոտորենք ու ներս կը մտնենք...

Գէւոն անմիջապէս ետ սենեակը վազեց ու պահարանին մէջէն հանեց յախմախիւն...

—Տոճանի ձագեր,— պատասխանեց ան ներսէն կարճ ու կըտրուկ,— թէ՛ որ դուռնս կոտորէք... ճակտէն դուրշունը կ'ուտէք...

—Ոստիկանութի՛ւն... դուռը բացէ՛ք,— կանչը աւելի շեշտակի էր: Կինը արթնցած ու ետեւի դուռնէն փախուստ տալով՝ հարեան նայիկին քով հասած էր:

—Պայիկ աղբար... օգնութեան հասիր... մարդս տանելու եկեր են... մարդս մեղաւոր չէ... ոստիկանութիւնը եկեր է մարդս տանելու... մեր տունը ամբողջ շրջապատուած է:

Իսկապէս փոխադրական եւ բեռնատար երեք ինքնաշարժ ու տասնեակ մը ոստիկաններ Գէւոյին տան շուրջ դիրք էին բռնած:

—Եկա՛յ... քուրս... հիմա եկա՛յ,— պատասխանեց Պայիկը՝ պարտէզէն բահը յափշտակելով,— լաւ է, շատոնց է չեմ կուտեր,— մըրթ-մըրթաց ինքն իրեն զոհոնակութեամբ, երբ Գէւոյին ցանկապատէն վար կը ցատկէր:

Ինչպէ՛ս կը փութար օգնութեան. եկեր էին իր ընկերը տանելու... Ծօ՛, ո՛վ, որո՞ւ... ո՞ւր կը տանէր... վայ էօրճեկսիզներ... կարծես ոչխար կը տանէին...

Երբ Պայիկը հասաւ, ոստիկանները արդէն իսկ տան ետեւի դուռնէն ներս մտեր՝ կը փորձէին Գէւոն ձերբակալել:

Ու Պայիկն ու Գէւոն, մէկը բահով, միւսը զէնքի կոթով, կողք կողքի, յամառօրէն դիմադրեցին աժդահայի նման վեց ոստիկաններուն, որոնք արիւն-քրտինք եղած՝ հազիւ կրցան գլուխ ելլել այս երկու տարեկից հայորդիներուն հետ:

Յաջորդաբար, քանի մը ոստիկաններ, առաստաղ մագլցելով բոլոր խաղալիքները պարպեցին ու բեռնատարի մէջ տեղաւորեցին:

Գէւոն ու Սաթենիկը ձերբակալուած՝ գողութեամբ ամբաստանուած էին:

Լոյսը մութին խառնուած՝ Գէւոն սենեակ մը տարին հարցուփորով ձերբակալուած էր:

Քննիչ ոստիկանը, կազմուածքով ջղուտ, պինդ նայուածքով ու
ինքնավստահ շարժումներով երիտասարդ մըն էր: Ոտքի կանգնած՝
տեւաբար Գէւորյին շուրջը կը դառնար: Իսկ Գէւորն, սեղանին առջեւ
նստած՝ անտարբերութեամբ ձեղունը կը դիտէր:

— Հրամէ՛, — ըսաւ ան ու ծխախոտի տուփը Գէւորյին երկարեց՝
խօսակցելու առիթ ստեղծելու միտումով:

— Քեզի՛ պահէ, — պատասխանեց Գէւորն համապատասխան կարծե-
րութեամբ մը: — պէտք չունիմ:

Երիտասարդը իր ասպարէզին մէջ տարիներու փորձառութիւն
ունեցող պաղ ու անհաղորդ աչքերով պաշտօնեայ մըն էր: Առաջին
վայրկեանէն իսկ անդրադարձած էր, թէ իր դիմացը արտասովոր
մարդ մը կար: Խրոխտ ու երկաթեայ կամքով մարդ մը, որուն աչքե-
րուն մէջ թէեւ կային շփոթութեան որոշ նշոյններ, սակայն անոնք
զերծ էին մեղապարտի մը անընկալն ու յարաշարժ աչքի թարթումնե-
րէն:

Այնուամենայնիւ, չէր կրնար անտեսել եւ ստիպուած էր իրեն
հասած պաշտօնական տեղեկութիւններուն հիման վրայ շարժիլ:

Հանդարտօրէն՝ գրասեղանին դարակէն էլ մը թուղթ հանեց ու
Գէւորյին առջեւ դրաւ:

— Այս էլ մը թուղթին վրայ կողոպտած խանութներու հասցե-
ները եւ թուականները կը գրես: Մի մոռնար, որ բոլոր խոստովանու-
թիւններդ, գատաժարութեան ընթացքին, քեզի դէմ պիտի ներկայացը-
նեմ: Հիմա դուրս կ'ելլեմ, տասը վայրկեանէն պիտի վերադառնամ...

Գէւորն ապշահար քննիչին կը նայէր: Ամբաստանութիւնը այդքան
անհաւատալի ու անմարսելի էր, որ չէր դիտեր, թէ ի՞նչ կամ ինչ-
պէ՞ս պատասխանէր:

Ոստիկանին բացակայութեան բաճկոնին ներքին գրպանէն ծխա-
խոտը հանեց ու սկսաւ ծխել:

Ու այդ հոգեկան ճիշդ մթնոլորտին մէջ, նայուածքը երկաթեայ
պատուհանէն դուրս յառած, շարժումներով տարած աշխատանքը միշտ:

Որքա՛ն բծախնդրութեամբ ու գուրգուրանքով զատած էր խա-
ղալիքները: Իսկ հիմա, այս մարդիկը եկեր՝ բոլորը գողցեր էին իր-
մէ: Եւ յանկարծ... թասաա՛խ... բռունցքի հարուած մը իջեցուց սեղա-
նին վրայ Գէւորն. «Գող աւազակներ...» — պոռաց, — գողը դուք էք...
ու ելեր գիս գո՛ղ կ'անուանէք... վա՛յր:

Հարուածին ձայնէն քննիչ ոստիկանը ներս խուժեց:
Ու Գէւորն, բռունցքները սեղմած, երիտասարդին վրան քալեց:

— Ես գող չեմ, — որոտաց ան պարզ ու վճռական շեշտով մը: —
այդ բոլորը ես իմ դրամովս գնեցի, — ու կռուազան հայեացքը սեւե-
ռելով ոստիկանին՝ սպառնաց, — եւ չըլլա՛յ որ զիս անգամ մը եւս գող
կոչես:

Ոստիկանը կեղրոնացումով կը դիտէր ու մտիկ կ'ընէր այս թան-
ճըր ու անտաշ մարդը, որուն աչքերուն խորքին գաւառացիի մը ան-

մեղութիւնը նշմարելի էր:

—Ուրեմն զիս կը փորձես համոզել, թէ այդ բոլոր ապրանքները, որոնք քու տունէդ հանեցինք, գնած ես եւ չե՞ս գողցած:

—Այո՛:

—Այս գնումներդ... որքա՞ն ժամանակ տեւեցին:

—Չեմ գիտեր: Երկու ամիս ըլլալու է:

—Լաւ, ինծի կրնա՞ս բացատրել, թէ ինչո՞ւ համար չբաւարարուեցար քանի մը խաղալիքով: Ինչո՞ւ ամբողջ առաստաղդ անոնցմով լեցընելու կարիքը զգացիր: Եթէ չէիր գողցած, ուրեմն որո՞ւ համար կը պահէիր այդ բոլորը:

Յանկարծ Գէւորդն լեզուն ու միտքը իրար խառնուեցան ու...

—Թոռներուս համար,— պատասխանեց ան՝ առանց երկար-բարակ մտածելու:

Երիտասարդ ոստիկանին ուշադրութիւնը կրկնապատկուած՝ դէմքին վրայ թեթեւ ժպիտ մը սկսաւ պարզուել:

—Պարոն Գէւօ,— շարունակեց ան,— ըստ իմ ուսումնասիրութիւններու՝ դուք տակաւին թոռնիկ անգամ չունիք:

Շուարած էր Գէւորդն լեզուն հագիւ բերնին մէջ կը դառնար:

—Ունի՞մ,— պատասխանեց ան համոզմունքով,— ունի՞մ... ես շատ թոռներ ունիմ...

—Լա՛ւ, ո՛ւր են այդ թոռներդ... տեսնե՞ք,— շարունակեց ոստիկանը, աչքերուն մէջ խաղցող ժպիտով մը:

—Հոս... չեն...— մոմռաց Գէւորդն քթին տակէն, գլխակախ:

—Հապա ո՛ւր են...

Ու այնթապցին, իրօք, ինքն ալ... կարծես... պահ մը զարմացաւ... թէ որտեղէ՞ն միտքը ինկաւ...

—Հայաստան են,— ըսաւ սրտագող,— բոլորը Հայաստան են...

Կ. ՀԵՔԻՄԵԱՆ

Կարպիս Հեքիմեան առաջին անգամն է որ կ'երեւի «Բագին» ի մէջ, քայց առաջին անգամը չէ որ կ'ընէ մուսանիրու դարպասը: Մեր պարբերական մամուլին մէջ ան ստորագրած է շարք մը բանաստեղծութիւններ, ինչպէս նաեւ աշխատակցած է անգլերէն թերթերու: Հեքիմեան մեր փրամադրութեան փակ դրած է շարք մը անփոփոխ բանաստեղծութիւններ որոնցմէ երեքը կը ներկայացնենք ստորեւ:

ՆԻԱԿԱՐԱՍ

Դպրոցական տարիներէս
Պատկերդ ջինջ պարզ ու յստակ
Ջիւ առինքնած՝ գրաւած էր-
Գրուած էր որ
Բախտս օր մը զիս հասցնէր
Հրաշատես, հրաշալուր
Քու հրաշքին:

Դեռ հեռուէն ժխորիդ հետ ախորժալուր
Ջրափոշիդ կը զգամ դէմքիս-
Կը ցնցողութիս՝ երջանկաբեր
Եղեամի պէս, կը տարածուիս,
Քաղաքն ամբողջ
Վերածելով
Յնձերգութեան:

Պատկեր, բառեր կը թօթափին
Անգօր, անպէտ,
Երբ վերջապէս ես շնչաւապտ,
Ջմալահար
Կանգնած լին եւ երկիւղած՝
Կը դիտեմ քեզ եւ կը լսեմ,
Էութեամբդ կը լիանամ:
—Ես եմ, կ'ըսեն, ջուրերդ անեղ,
Այն իրական, յանրժական
Նիակարան անբաւելի,
Որ բառերու, պատկերներու

Չի վերածուիր. եւ նման չեմ
Իմ պատկերիս ամենեւին:
Քու իրական խոսվքդ արդ,
Ես կը կրեմ մորթիս վրայ,
Կը սարսամ, եւ կը լսեմ
Եւ կը շնչեմ քեզ լիաթոք:

Քու վիթխարի խելագարի
Լոյծ մարմինդ կը թաւալի,
Կը վերածուի նորք շղարշի
Եւ յարուցած սիւքերուդ հետ՝
Կը ծածանի ծիածանի երանգներով:
Լուսակարկաչ արարչութեան
Ահագնագոռ հրճուանքի կանչ
Ըլլայ կարծես աղաղակը
Ջուրերուդ. երկնի երկրի
Ջուգորդութեան օրկազմ ահեղ:
Փառքդ անսպառ, ուժդ անվախճան
Թող ըլլան:

Ջիւ ընդունելուդ այն օրէն ադին,
Անցած է արդէն տարի մը լման,
Անցեալ գարնան էր. ջուրերդ սակայն
Դեռ կը թաւալին մտքիս ծայքերուն
Եւ փշրուելով, եւ ցնցողուելով
Կը ծիածանուին եւ կը վերածուին
Այս մունջ բառերուն:

*

Բայց դուն հոս, թաւալէ միշտ
Տարերային մեծ երածիշտ,
Մեր սրտերէն վանէ ընդմիշտ
Կսկիծ ու վիշտ.
Բիրեղացուր եւ մեզ դարձեալ,
Մեր իսկական ակունքներուն
Վերադարցուր:
Ջօրացուր մեզ քու անսպառ
Ուժերովդ տարերային,
Ջգաստացուր, կազդուրէ մեզ
Ցանրծական քու ջուրերուդ
Թաւալումով ահագնալուր,
Եւ բխեցուր մեր սրտերէն՝
Հանգած, տրտում՝
Սիրոյ, յոյսի շատրուաններ:

ՅԱՐԴԱԳՈՂԻ

ՃԱՆՍՊԱՐՀՈՎ



Մունակներս ամուր կապած,
 Արեւարգել գլխարկս իմ հին՝
 Ճամբայ կ'ելլեմ կէս գիշերին,
 Կայնած՝ մտքիս անհունաթել
 Ելուղիին՝ որ կը հոսի
 Արագութեամբը լոյսի...
 Արդէն հասած եմ կարծես
 Պայծառ ու լայն
 Արուարձան մը
 Միջաստեղեան:
 Շուրջս աստղեր, աստղահոյներ,
 Կալագթիկա,
 Անունները չեն որոշուած
 Որոնց դեռ:

Ելարանը մտքիս հիմա
 Զիս առաջուան արագութեամբ
 Հայերէնի թեւերուն վրայ
 Կը հասցնէ եւ կը նետէ
 Սատոյցներուն սահմանամերձ
 Տիեզերքին, հո՛ն՝ որ արդէն
 Չքացած են առաւօտներ, իրիկուններ
 Եւ կան միայն շարունակուող
 Անվերջ խաւար, անծայրածիր
 Արշալոյսներ:
 Նոր պատուհան մը կը բանայ
 Միտքս ինձի,
 Որմէ անդին երբ կը նայիմ՝
 Տիեզերքը գլխու պտոյտ
 Արագութեամբ թաւալումով
 Ինքն իր վրայ ծալուելով՝
 Լուղորդի պէս ետ դարձ կ'ընէ:

ՄԱՀԱՊԱՏԻԺ

ԵՒ

ԹՈՂՈՒԹԻԻՆ

○

Ի թողութիւն
Քու մեղքերուդ համար հազար՝
Քեզ խաչեցին, խոշտանգեցին,
Պատմունանդ արքայական
Բզկտեցին պատառ-պատառ:

Ի թողութիւն
Յանցանքներուդ համար հազար՝
Քեզ ցկեանս բանտարկեցին
Խաւարին մէջ խորհրդատր
Մակատագրիդ:

Ի թողութիւն
Սխալներուդ համար հազար՝
Յօշոտեցին եւ փշոնցին
Մարմինդ պերճ՝ տարածեցին
Անապատի տաք ասագին:

Գիտութիւններ եւ արունստներ
Ճառագայթող մտքիդ համար՝
Քեզ կախողան բարձրացուցին,
Կայծքարերով զանկդ աղուոր
Տրեխ-ցրեխ խոշտանգեցին՝
Ի թողութիւն, ի քաւութիւն
Քու մեղքերուդ:


Դաւարագեղ, աշնանայորդ
Բերքիդ համար՝
Աւերեցին եւ այրեցին
Անդաստաններդ անհրապոյր:

Փառքիդ համար եւ հանճարիդ՝
Կոթողներդ երկնագմբէթ
Կործանեցին կրկին անգամ:

Բայց յորդեցար, ըմբոստացար
Օր մը աղուոր, դուն ալ երբոր՝
Դառնութեան սեւ բաժակը հուր
Քամեր էիր մինչեւ մրուր,
Եւ քանդելով պատ ու պատուար
Բաշխուեցար՝ աշխարհակալ՝
Աշխարհասփիռ չորս ծագերուն
Մոլորակին այս մոլորած:

ԿԱՐՊԻՍ ՀԷՔԻՄԵԱՆ

Գ. ԱՔԷԼԵԱՆ



ՊԷՅՐՈՒԹ

1959ի աշնան, Պէյրութ կ'իջնէի, որպէս Հայկազեանի ուսանող Հայկազեանը նորահաստա հաստատութիւն մըն էր, հիմնուած՝ 1955ին: Առաջին հունձքը պիտի տար 1960ին:

Պիշերթիկ ուսանող էի, ընկերներու հետ: Այդ երանելի օրերուն, համեմատաբար շատ դիւրին էր Հայկազեանի ուսանող դառնալը ինք՝ հաստատութիւնը, պէտք ունէր ուսանողներու: Այնճարի ընկերներս կ'արձանագրուէին պարզապէս քոյր Հետուիկին անունը տարով: Տակաւին կը խոստանային օր մը վճարել, երբ որ խնձոր կամ լոլիկի ջուր ծախէին: Այդ շնաշխարհիկ խոստումներուն դիմաց, առաջին տարին գէթ, կարելի եղած էր արձանագրուիլ: Իսկ ես չէի կրնար այդ խոստումները տալ, բայց աւելի մեծ բան ունէի խոստանալիք: Հայրս, հազար ու մէկ գոհողութիւններով եւ դժուարութիւններով՝ Ամերիկա մեկնած էր, հօրը կտակը հետապնդելու համար: Եւ ես այդ կտակէն լայն խոստումներ տուած էի...: Ամէն անգամ որ հարցուէի, թէ ե՞րբ պիտի գար հայրս, «չուտով պիտի գայ» կ'ըսէի: Երբ եկաւ, այնքան ալ գոհացուցիչ արդիւնք չկար գրպանին մէջ: Տնօրէնը, ժամ Մարգարեան, թելադրեց, որ ես ալ կրթանպաստի համար դիմում լեցնէի:

Առաջին տարին, ինչ մեղքս պահեմ, ես զիս իսկապէս մեծցած կը զգայի: Քիչ բան էր գոյճական ըլլալը...: Հիմա հին-հին տարիներու յուշ դարձած էր փինկփոնկի «ռաքէթ» նմանոյ «բասա-գիրք», որուն մէկ երեսին վրայ այբուբեն, իսկ միւսին վրայ մէկ-երկուն գրուած էր...

Պոլէճին ուսանողութիւնը, հակառակ իր սահմանափակ թիւին, բաւական խայտաբղէտ էր: Հայերու եւ լիբանանցիներուն կողքին, կային եմէնցի, յորդանանցի, պարսիկ, յոյն եւ սուրիացի ուսանողներ: Ծմէնցիները իրենց կրկրի թագաւորին սաներն էին, բայց բոլորն ալ թունդ հակաթագաւորականներ: Իսկ յորդանանցիները կը նմանցընէինք իրենց Հիւսէյն թագաւորին:

Տարիներին, տնօրէնը ուզեց խմբական լուսանկար մը նկարուիլ ուսանողութեան հետ: Բոլորս հաւաքուեցանք Ուէպ շէնքին դուրսի աստիճաններուն վրայ: Ըլիւ ուսանողութիւնը ամփոփուեցաւ քանի մը սանդղամատերուն վրայ:

Հայկազեանի ուսանող դարձած էի, գիտական ճիւղին հետեւելու համար: Առաջին տարուան վերջաւորութեան, արձանագրութեանց պատասխանատուն թելադրեց, որ ճիւղս փոխէի: Տեղի չտուի: Տարի մը եւս պէտք եղաւ, որ մարդուն թելադրութիւնը գործադրէի: Մինչ այդ, արդէն իսկ մեղացած էի հօրս երազը: մարդը երազած էր ըլլալ տղեթոր ձորճին հայրը...: Մեր գերդաստանին մէջ մեծ եղած է թիւը բժիշկներուն եւ դեղագործներուն: Նաեւ դեղագործութիւնը հասանելի չեղաւ ինձի: Սոսկալի անհամ. բան էր արդէն սա ուսողութիւն կոչուած նիւթը, որ գիտական ամէն ճիւղի մէջ քիթը խոթած էր: Վերջ ի վերջոյ ստիպուեցայ ուսողութեան դասախօսին յայտնել, թէ գլուխս «մաթ-փրոլֆ» է, այսինքն՝ հոն չի կրնար թափանցել ուսողութիւնը՝ իր բարդ ու անհամ Փորմիւլներով...:

Փոլէճին գիշերօթիկը մասնաւոր շէնք չունէր առաջին երկու տարիներուն: Գիշերօթիկ սաները բաժնուած էին արեւմտեան Պէյրութի քանի մը յարկարաժիններուն մէջ: Ճաշարանը կը գանդէր գոլէճի ներքնասարահին մէջ: Հոն էր, որ բոլորը մէկտեղուելու առիթ կ'ունենային: Ես այդ երկու տարիները անցուցի Համրայի սկիզբը, հայ ընտանիքի մը բնակած յարկարաժինէն վարձուած սենեակի մը մէջ: Քանի մը տղաք էինք: Մեր գլխաւոր զբաղումը, նաեւ հպարտութեան առարկան՝ տան թութակն էր, որ բաւական խօսիլ գիտէր, նաեւ երգել, այլեւզիմը արտասանել մինչեւ ժի գիրը: Նաեւ լաւ հայհոյի գիտէր: Տան բարեկամ վարդապետը իր արդար բաժինը կը ստանար թուշային հայհոյանքներ:

Համրան, համեմատաբար, նոր թաղամաս մըն էր: Սակայն անիկա իր հռչակը արդէն իսկ տարածած էր Լիբանանէն դուրս, ամբողջ Միջին Արեւելքի մէջ: Նշանաւոր էին անոր գիշերային գրօսաւարները, վաճառատուները, շարժապատկերի սրահները: Եւ այդ թաղամասին բնակիչ ըլլալը այնքան ալ դիւրին բան չէր՝ առանձնաշնորհում էր: Միակ մանրամասնութիւն մը կը պակսէր մեզի՝ փող: Գրեթէ ծակ գրպանով Համրայի բնակիչ ըլլալը տառապանք էր: Բարեբախտաբար մեր վարը գտնուող սիւրհանի նպարավաճառ Սեյիմը կը հասկնար մեր կացութիւնը: Մէնտուիչ եւ գովազուցիչ կու տար մեզի ապառիկ: Նոյնիսկ օգնեց ինձի լուսացարարին մօտ միջամտելով...:

Իսկ երբ փողը քիչ մը ջերմացնէր մեր գրպանները, կը ծախսէինք առանց երկար-բարակ մտածելու:

Համրայի ժողովականներէն կարելի եղաւ ձերբազատուիլ, երբ գոլէճի շրջափակէն ներս կառուցուեցաւ գիշերօթիկի բաժին...:

Հետզհետէ գոլէճը պիտի զարգանար՝ ուսանողութեան թիւը պիտի հասնէր քանի մը հարիւրի: Ճիւղերը պիտի բազմանային: Պիտի վերածուէր, հայկական առումով, կարեւոր օճախի մը, թէ՛ որպէս ուսումնական կեդրոն եւ թէ՛ որպէս մշակութային օճախ մը:

Փոլէճին հայկական ամպիոնն ու ուսանողական հայկական ակումբը կը սարքէին դասախօսութիւններ, շաբաթական հերթականութեամբ: Փաղութիւն մտաւորական խօսք կը փութար Հայկազեան, ամէն Հինգշաբթի երեկոյ: Այդ օրերուն կուսակցական անհասկացո-

դուժիններն ու վեճերը շատ խորն էին: Տակաւին Լիբանան նոր դուրս եկած էր 1969ի քաղաքացիական պատերազմէն, որուն ընթացքին Հայութիւնը շատ ծանր տուրք վճարած էր: Հայկազեանը կը հանդիսանար այն գետինը, ուր տարբեր կուսակցութեանց մարդիկ կրնային իրարու քով դառնալ:

Ներկաներուն թիւը կախում կ'ունենար դասախօսէն եւ նիւթէն: Յաճախ սրահը բերնէ բերան լեցուն կ'ըլլար, իսկ երբեմն աթոռները պարագ կը մնային: Պատահած է, որ այդպիսի պարագաներու խնդրէին գիշերօթիկի արար մեր ընկերներէն, որ սրահ իջնէին, պարագութիւնը որոշ չափով լեցնելու համար: Խեղճ տղաքը կ'իջնէին ամբողջ մէկ, մէկուկէս ժամ իրենք զիրենք կը պատժէին, հայերէն դասախօսութիւն մտիկ ընելով...

Այդ դասախօսութեանց շարքին, անմոռանալի պիտի մնան Փրանսացի հայագէտ՝ Փրոֆ. Ֆրէտէրիք Ֆէյտիի դասախօսութիւնները, հայերէնի կառոյցին եւ քերականութեան նուիրուած: Արահը միշտ բերնէ բերան լեցունեցաւ:

Իսկ երկու կողմներ բաւական կլիկտրականացած մթնոլորտ ստեղծեցին: Առաջինը, երբ քաղաքին մէջ բանաստեղծի հռչակ վայելող անհատ մը իր աւարտածաւր ներկայացուց: Նիւթը կը վերաբերէր Հայաստանի անկախութեան: Բաւական մանրագին կերպով ներկայացուց օրուան կացութիւնը, եւ յետոյ, առանց բառերը ծածմելու, յայտարարեց, որ այդ օրուան անկախութիւնը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ թուրքին նուէրը հայութեան... Խօսք չկար Սարգսրապատի եւ միւս ճակատամարտներուն մասին: Ներկաները թէեւ լռութեամբ հետեւեցան, բայց երբ սկսաւ հարց-պատասխանի բաժինը, խեղճ մարդը շատ աննախանձելի կացութեան մը մատնուեցաւ: Ետտ մեծ դժուարութիւն ունեցաւ հայկական ամպիոնի վարիչ վեր: Տիգրան Խրոթեան, կացութիւնը հանդարտեցնելու համար:

Երկրորդ կողմը տուողն էր գոլէճի դասախօսներէն՝ Գարրիէլ Ինճէճիկեան: Սա բնիկ քեսապցի, Ամերիկա ուսանած էր, եւ քանի մը տարուան համար Պէյրութ եկած էր, որպէս Հայկազեանի դասախօս: 1962ի ամրան այցելած էր Հայաստան: Այդ օրերուն այնքան ալ դիւրին բան չէր Հայաստան այցելել: Ստալինեան մղձաւանաջային տարիներէն ետք, նոր կը բացուէին հայրենիքին դուռները սփրութեան հայութեան առջեւ: Հայկական ակումբին կարողութեամբ, Պարոն Ինճէճիկեան թժարեցաւ իր ասպետութիւնները փոխանցել հանրութեան: Արահը կը յորդէր: Բոլոր մտայնութեանց տէր մարդիկ փութացած էին, հայրենիքէն «խապրիկ» լսելու...

Ձեռնարկին բացումն ու փակումը ինծի վստահուած էին: Բացումին՝ ներկաներուն աչքերուն մէջ յստակօրէն կը կարդայի անհամբերութիւնն ու հեռաքրքրութիւնը:

Բանախօսը մանրագին վիճակագրութիւններով եւ թիւերով ներկայացուց երկրին կացութիւնը: Բաւական ծանրացաւ յոռի բարբերէն «Փափախին վրայ Օրինակներով բացատրեց «Փափախ»ը»

Այդ օրերուն հոս՝ արտասահմանի մէջ, գրեթէ լուռած չէր այդ նորամուտ բառը...

Փակումի ընթացքին, ներկաներէն ոմանց աչքերուն մէջ կրնայի կարդալ թէ՛ հիասթափութիւն եւ թէ՛, մանաւանդ՝ զայրոյթ: Ամբողջ ժողովուրդը դող հանեց», կը գանգատէր մին: Չափազանց լարուած կացութիւն մըն էր ստեղծուածը: Շատ դժգոհ տրամադրութեամբ մեկնեցան «Հայաստանաւէր»ները:

Յաջորդող օրերուն, հակադաշնակցական մամուլին կողմէ շատ բուռն յարձակումի թիրախ հանդիսացաւ Պարոն Գաբրիէլ Ինճէճիկեան: Բաւական ժամանակ հարկ եղաւ կիրքերը հանդարտեցնելու համար, մինչ հայրենիքին մէջ, «փափախ»ը գլուխն առած կը զարգանար...

Համալիրանանեան առումով, Հայկազեան գոլէճը նշանաւոր դարձաւ շնորհիւ իր հրթիռներուն...: Արդարեւ, գոլէճին գիտական ակումբը, ամերիկայէն ժամանած իր պատասխանատուին՝ Մանուկեանին, ղեկավարութեամբ, ձեռնարկեց հրթիռներու փորձերու շարանի մը: Շատ համեստ սկիզբէ մը ետք, այդ փորձերը սկսան ուշադրութիւն գրաւել: Կամաց-կամաց այդ փորձերուն տարողութիւնը մեծցաւ: Օրուան Ռաֆիք Հարիրին, մեծ գործատէր, «Քաթ» ընկերութեան տէր, Էմիլ Պուսթանի, իր կողմէ Հայկազեանի հրթիռներուն տրամադրեց 6000 Լ. ոսկի, որ հսկայ գումար էր այդ օրերուն: Փորձերը մեծ թափ ստացան: Նոյնիսկ լիբանանեան բանակը իր կողմէ ներկայացուցիչ սպայ մը նշանակեց, փորձերուն համակարգումը կատարելու համար: Լիբանանեան մամուլը, իր առաջին էջին վրայ, կ'անդրադառնար այդ փորձերուն: Հրթիռները կ'արձակուէին բանակի Տպայայի զօրանոցէն...

Հայրենակից մը խոստացած էր իր ձրի մասնակցութիւնը բերել այդ աշխատանքներուն: Իր Մար Միխայէլի գործատեղիին մէջ շինեց հրթիռի կմախքը: Ես յանձն առած էի այդ կմախքը Հայկազեան տանիւ: Օ, որքան հպարտ կը զգայի ինքզինքաւ: «Հայտա սարուխ, սարուխ» կը գոչէին հետաքրքիրներ եւ ես շատ շոյուած կը զգայի: Սերվիսը, որ տեղափոխեց զիս մինչեւ Հայկազեան, նուազ շոյուած չէր զգար ինքզինքաւ: Բաւական գովեց Հայկազեանն ու հայութիւնը: «Ընդուն' արման, դէյր շի» (դուք հայերդ ուրիշ բան էք), կը կրկնէր շարժավարը: Ո՛վ կրնար իր մտքէն անցընել, որ շուրջ մէկ ու կէս տասնեակ տարիներ ետք, Լիբանան պիտի ապրէր իր «սարուխ»ներու ոսկեդարը: Ոսկեդար մը, որ շատ երկար պիտի տեւէր եւ զանազան ու զարմանազան «սարուխ»ներ պիտի հնձէին հազարաւորներու կեանքեր եւ Պէյրութի կարգ մը թաղերը պիտի վերածէին աւերակի...



Հայկազեանի սերտարանը մեծ տեղ ունէր մեր կեանքին մէջ: Սա գոլէճին բուն սերտարանը չէր, այլ՝ անէք պառն էր, որ գիշերով

մեր տրամադրութեան տակ կը գտնուէր Յերեկով հոն կը փութային բախտաւորները, անոնք՝ որոնք խմբիչ մը կամ սէնատուի մը գնելու չափ «չնորհք» ունէին. կամ իրենց գրպանին մէջ դրամ ունէին եւ կամ գիտէին սա կամ նա բարեկամին հաշուոյն գնում ընելու իսկ ոմանք գոլէճ կը յաճախէին, առաւելաբար «անէջ պառչին» մէջ ժամանակ անցընելու համար կարծէք: Կային սուրիացի քաղաքաքէտներու զաւակները կամ ազգականները, որոնք շատ մեծ «եռանդ» կը ցուցաբերէին «անէջ պառչին» ներս:

Իսկ մենք, հոն կը տիրապետէինք գիշերով: Սերտողութիւնը յաճախ կը տեւէր մինչեւ յոյս Առաջին տարուան ընթացքին, մեզի աւանդուած էր «արեւելում» (Orientation) կոչուած նիւթը, որ կը ձգտէր ուսանողին սորվեցնել սերտելու կերպեր եւ միջոցներ: Ի միջի այլոց, սորված էինք, որ ուսանող մը, որքան ալ ուշիմ ըլլայ, մէկ ժամուան սերտողութենէն ետք, հարկ է որ գէթ տասը վայրկեան հանգիստ ընէ, այսպէս կը կորսնցնէ կեդրոնանալու իր կարողութիւնը: Այդ դասընթացքէն ուրիշ բան չէինք սորված: Կը սկըսէինք սերտողութեան, առանց կարենալ մեր աչքերը հեռացնելու ժամացոյցէն: Երբ մէկ ժամը ամբողջանար, ուրախութեամբ կը զոցէինք գիրքերը եւ կը ձեռնարկէինք հանգիստի, որ յաճախ կը վերածուէր փոքր ճաշկերոյթի...: Այնճարի լոլիկի ջուր, մեղր, «սուրբի», նաեւ շուկայէն բերուած ստեպլին, կսկուծ, հաց եւ կը սկսէր սերտողութեան բուն աշխատանքը...

Երբեմն յաւելեալ արթնութեան կամ հանգիստի համար կը դիմէինք նարտին. մէկ ձեռք նարտը բաւական կը «կազդուրէր» մեզ:

Տարի մը, թաղին գիշերապահները բարեկամացան մեզի հետ: Կէս գիշերէն ետք կու գային մեր մօտ դաւաթ մը թէյով տաքնալու, նաեւ ձեռք մը նարտ խաղալու: Հերթով կու գային: Հարկ եղած պարագային, դուրսի գիշերապահը յատուկ սուրոցով կը կանչէր մեր մօտ հանգստացող իր ընկերը:

Փոլէճին ուսանողութիւնը բաժնուած էր ակումբներու, ինչպէս հայկական, արաբական, անգլիական, դիտական, արուեստի, եւայլն: Պէտք է ըսել, որ այս ակումբները յաճախ սուր մրցակցութեան մէջ էին: Կը ձգտէին առաւելագոյն հետեւորդներ որսալ: Ասոնց ամենագործունեաներէն մէկն էր հայկական ակումբը:

Հայկական ակումբը զանազան ձեռնարկներ կը կազմակերպէր: Փորձօն մասնակցութիւն կը բերէր, շաբաթական հերթակաւորութեամբ, դասախօսութեանց: Պառլամենտ կը կազմակերպէր, նաեւ՝ տարեկան քերմէս պազարը: Այս քերմէսները բաւական երկար ծրագրում եւ աշխատանք կ'ենթադրէին: Այդ ծրագրումին մեծ մասը կը կատարուէր մեր սերտարանին մէջ:

Այդ սերտարանին մէջ ունէինք թէյաման մը, որ կը ծառայէր տաք խմիչքներ պատրաստելու համար: Ժամանակի ընթացքին այնքան սեւցած էր, որ իր նախկին գոյնը բոլորովին անճանաչելի դարձած էր: Կը գուրգուրայինք անոր վրայ, որովհետեւ առանց անոր անկարելի պիտի ըլլար տաք բան պատրաստելը:

Անոր մէջ ստամոքսի ցաւէ տառապող ուսանող մը, որ գիշերօթիկի խոհանոցը ազատ ելեւմուտ ապահոված էր, յաճախ հաւկիթ կը խաչէր: Սա 7-8 հաւկիթ կը խաչէր եւ մէկ անգամէն կ'ուտէր, մեր բոլորին զարմացական աչքերուն առջեւ: Մենք՝ որ ստամոքսի հարց բնաւ չունէինք, ոչ մէկ ատեն 2 կամ 3 հաւկիթէ աւելի ճաշակելու սովորութիւն ունէինք:

Մեր գիշերային անկիւնին միւս կարեւոր գոյքը չափազանց հինցած փիքափ մըն էր: Չէինք գիտեր, թէ ինչպէ՞ս հասած էր հող: Այնքան խալխաւած էր, որ առանց լաթի կտորի մը չէինք կրնար ձեռնել դայն, այլապէս բաց ձեռքով անոր դպչողը ելեկտրական ցնցումի կ'ենթարկուէր: Հակառակ այդ վիճակին, կը բաւարարէր մեր հրաժշտական կարիքները: Սկաւառակ չունէինք. կը բերէինք ասկէ-անկէ, բարեկամներէ: Երբեմն սկաւառակները կու գային մինչեւ իսկ Անթիլիասի մայրավանքէն. հոն ունէի հայրենակից միաբան ընկեր մը, որ սիրով փոխ կու տար իր քով գտնուող սկաւառակները: Այդ խալխաւած փիքափին միջոցաւ ո՛չ միայն Պատարեան եւ այլ հայ երգիչ-երգչուհիներու երգերով երկար գիշերները լուսցուցած ենք, այլեւ ծանօթացած Չայքովսկիին, Վակնէրիին, Խաչատրեանին եւ Պեթճովէնին:

Անթիլով մը, անիկա ծառայած է մեզի նաեւ մեր օդի բաժակները թաքցնելու: Արդարեւ, հրեկոյ մը մեր ընկերներէն անոնք՝ որոնք հսկիչի դեր ունէին, ապահոված էին քիչ մը օդի եւ պիտտակ: Ուշ ատեն մէկական փոքր բաժակ լեցուցած կը խմէինք: Բնաւ չէինք կարծեր, որ դուրսը գիշերօթիկ սան մնացած կրնար ըլլալ: Մեր չար բախտէն, շատ ուշ, չէնք վերադարձաւ սան մը: Սա յորդանանցի էր եւ եղբայրն էր այդ օրերու Յորդանանի ներքին ուժերու ընդհանուր հրամանատարին, հայազգի Քերիմ Օհանին: Մինչեւ ասոր մուտքը, բաժակները շարեցինք փիքափին մէջ եւ կափարիչը գոցեցինք: Բայց ո՛ւր կարելի էր թաքցնել օդին բոյրը:

—Անուշ ըլլալ,—բասաւ:
Այլ բան չէր կրնար ըսել, ինք եւս յանցանքի վրայ էր. այնքան ուշացած էր «տուն» դառնալու...

Գիշերները կը վիճէինք, կը խորհրդակցէինք եւ աշխատանքն ու յայտագիրը ձեւի կը բերէինք: Ակումբի վարչութեան շատ բան չէր մնար ծրագրելիք: Այդ բոլորէն ետք, քերմէսի աւարտին, մենք զմեզ կը վարձատրէինք «նապաստակի խաղ»էն մնացած երկու-երեք նապաստակներուն ճաշակումովը, զորս յատկապէս մեզի համար կ'եփէր խոհարարուհին: Բնականաբար քանի մը բաժակ օդի եւս կը պարպուէր այդ համեղ ուտելիքին հետ:

Հայկական սկումբին հիմնական աշխատանքը «Նաւասարդ» ուսանողական պարբերաթերթին հրատարակութիւնն էր: Որքան ժամանակ կը խլէր այդ պարբերաթերթին սրբագրութիւնը մեր խմբակէն: Յօդուածներու ապահովումը, ասոնց սրբագրութիւնը, ապա տպագրութիւնը դասերուն չափ ժամանակ կը խլէին մեզմէ: Տակաւին, «Նաւասարդ»ը պայքարի առանցքն էր նաեւ Հոն,

Հայ ուսանողութեան մէջ, բնականօրէն, զգալի էր դաշնակցական-հակադաշնակցական երկուութիւնը Համախոհութեան գծով, որքան ալ աշխատանք տարուէր, վէճերն ու տարակարծութիւնները սակայն անպակաս կը մնային: Ձերք ունեցող տղաք երբեմն հեռու կը մնային իրենց մասնակցութիւնը բերելէ, գաղափարական այս տարակարծութեանց պատճառով: Իսկ մենք, մեր կարգին, կը ջանայինք առաւելագոյն աշխատակիցներ բերել պարբերականին շուրջ:

Այդ ակումբը կը ձգտէր ընդհանուր ուսանողական մարմինն արտայայտիչը դառնալ, հրապարակային ձեռնարկներու ընթացքին: Այդ կ'ընէինք, առաւելաբար Հայկազեանի հայկական դիմագիծը շեշտելու մտահոգութեամբ: ՅՅի գարնան, ուսանողական ընդհանուր քայլերի մը տեղի պիտի ունենար, որ պիտի անցնէր Պէյրութի կեդրոնական հրապարակէն, Պուրճէն, դէպի Ամերիկեան համալսարան: Արարական ակումբը կը ջանար ինք գլխաւորել երթը: Իսկ մեր սերտարանի անկիւնին, լարուած միջնորդութիւն մէջ, կը ծրագրէինք մենք գլխաւորել այդ քայլերը: Կէս դիշերին, կը անկարելի էր պատահովն համար կտաւ ճարել, մեր ընկերներէն մէկը իր սաւանը իջեցուց եւ մինչեւ առաւօտ պատահար պատրաստ էր արդէն:

Այդ շրջանին, կարեւոր դէպք մը հանդիսացաւ Ջարեհ կաթողիկոսին անժամանակ մահը: Անակնկալ լուրը շանթի ազդեցութիւն ունեցաւ բոլորիս վրայ: Յնցումը շատ մեծ էր: Արդարեւ, 1963ի ձմեռն, կը վախճանէր Մեծի Տանն կիլիկիոյ երիտասարդ Վեհափառը: Դժուարին տարիներ էին. կուսակցական պայքարը, առաւելաբար, կը դառնար կաթողիկոսական աթոռին շուրջ: Անհաւատալիօրէն կրօնա պայքար էր սա: Իսկ Վեհափառին մահը, որ այդ պայքարներուն հետեւանքն էր, կը տագնապեցնէր բոլորս: Հայկական ակումբին կազմակերպութեամբ, գոյէճին Հայ ուսանողութիւնը կը մասնակցէր յուղարկաւորութեան թափօրին: Ս. Նշան մայր եկեղեցիէն մինչեւ Անթիլիաս, հետիոտն ժողովուրդը քալեց Վեհափառին դագաղին հտեւէն, հակառակ անձրեւի ահաւոր տեղատարափին:



Հայկազեանի մէջ, ունեցած եմ շատ դասախօսներ, որոնք բնականաբար իրենց ազդեցութիւնը ձգած են վրաս: Առաջին հերթին՝ վերապատուելի Տիգրան Խրիզեանը: Հայ Աւետարանական համայնքին մէջ ակնառու մտաւորական մարդ էր վերապատուելին: Հայկազեանի հիմնադրութեան մէջ որոշ աշխատանք եւ դեր ունեցած էր: Կը վարէր հայագիտական ամպիոնը Խոր սէր ունէր Հայ գրականութեան, մանաւանդ մատենագրութեան եւ Հայոց պատմութեան հանդէպ: Կը ջանար այդ սէրը փոխանցել նաեւ մեզի: Նաեւ անգիջող Հայ էր: Ամերիկացի դասախօս մը համարձակած էր յայտարարել, որ Հայոց ջարդին պատասխանատուութեան մէկ կարեւոր բաժինը կը ծանրանար Հայոց վրայ: Պատուելին՝ եղած էր պնդողներէն:

մէկը, որ այդ արտայայտութեան համար, դասախօսը դուրս դրուէր գոլէճէն: Ենթական, հակառակ իր ժողովրդականութեան եւ կարողութեանց, դուրս դրուեցաւ Հայկազեանէն:

Կային այլ պատասխանատուներ, որոնք առաւելաբար Հայկազեանին մէջ կ'ուզէին տեսնել միմիայն բարձրագոյն ուսման կեդրոն մը: Հայկականը այնքան ալ կարեւոր չէր իրենց համար: Այդպիսիներուն դէմ կուրծք պարզողներէն մէկը դարձեալ այդ ալեհեր մարդն էր:

Ինք եղաւ հիմնադիրը հայագիտական գրադարանին: Պէտք եղածէն աւելի կը գուրգուրար հայ գիրքերուն վրայ: Այդ գուրգուրանքը ջղայնութիւն կը պատճառէր մեզի, որովհետեւ ուսումնասիրելու համար կարելի չէր գիրք դուրս հանել գրադարանէն:

Լիբանանահայ նշանաւոր դրամագէտ՝ Ասպետ Տօնապետեան, իր ճոխ հաւաքածոյէն, կարգ մը դրամներ տրամագրած էր հայագիտական գրադարանին: Յատուկ ցուցափեղկերու մէջ կը տեղադրէր այդ հայկական դրամները: Մանուկի մը պէս կը հրճուէր ինչորեքան պատուելին:

Յաճախ հետը կը վիճէինք: Ինք իր նիւթերը կը թելադրէր մեզի եւ մենք կը նոթագրէինք: Թէ՛ յոգնեցուցիչ եւ թէ՛ ժամանակի կորուստ կը համարէինք այդ ձեւը: Կ'առաջարկէինք, որ բազմազրէր իր դասախօսութիւնները: Այդ կէտին վրայ ես շատ յամառօրէն կը պնդէի, որովհետեւ ձեռագիրս այնքան խեղճ ու կրակ բան էր, որ իմ արձանագրած նոթերս չէի կրնար կարդալ յաճախատիւս: Ընկերներուս նոթատետրերը փոխ կ'առնէի: Պատուելին անդրդուելի մնաց. իր հասկցած ձեւով շարունակեց թելադրել իր նիւթերը:

Յաճախ նոթագրութեան ընթացքը քիչ մը դանդաղեցնելու համար, մեզմէ մէկն ու մէկը վէճի առիթ կը ստեղծէր: Կ'առնէինք, կու տայինք պատուելիին հետ: Բնականաբար ազգային հրատապ հարցեր կը ծեծուէին, հակառակ անոր որ դասապահը յատկացուցած կ'ըլլար մատենագրութեան:

Երբ բաւական յառաջանայինք վիճարանութեան մէջ, կը ջանար կարճի կապել հարցը, ըսելով.

—Գիտե՛մ, գիտե՛մ, տղա՛ս, դուն շարքային դաշնակցական ես. ի՞նչ ըսեմ:

Հաւանաբար այդ մէկը կ'ըսէր, որովհետեւ չէր կրնար համոզել զիս:

Ընկերներս կը խնդային այդ արտայայտութեան համար: Որովհետեւ անոնցմէ շատեր, որպէս Զաւարեան Ուսանողական Միութեան անդամներ, արդէն իսկ շարքային դաշնակցականներ էին, իսկ ես տակաւին ոչ իսկ անդամակցած էի սոյն միութեան: Պատուելին բուն շարքայինները չէր կրնար զանազանել ոչ-շարքայինէն: Բնականաբար իր յանցանքը չէր ատիկա. ես պէտք եղածէն աւելի տաք գլուխ էի...

(Շարունակելի)

ԳԷՈՐԳ ԱՔԷԼԵԱՆ

ՉԷՆՔԻՆ ԱՌԸՆԹԵՐ՝ ԳԻՐՔԸ . . .

Ինքն իր ուժին ու առաքելութեան հանդէպ վստահութիւն ունեցող ժողովուրդներուն համար ստեղծագործական բնագոյր միշտ արթուն եղած է ու լարած անոնց կանքը կեանքի բոլոր ելեւէջներուն, նոյնիսկ արիւնոս գուպարներու ընթացքին:

Մշակութային մեր պատմութիւնը այս մասին ունի բազում ու բազմազան վկայութիւններ: Երեսօրը, սակայն, մեզի յատուկ չէ, թշնամիներով շքրապատուած բոլոր ժողովուրդները ունին լայն փորձառութիւններ այդ մարզին մէջ, վկայ դիպացներգութիւնները, որոնց զգալի բաժինները, ըստ բանաստեղծներուն, գրուցուած կամ երգուած են երկու ուժերու մահասփիտ ընդհարման պահերուն:

Աւելի մօտիկ ժամանակներէն առնելով օրինակները, յիշենք պատերազմներուն ամենէն անեղին օրօք գրուած միայն երկու գործ, արձակ մը եւ չափածոյ մը, առաջինը՝ ֆրանսական գրականութենէն, մացի արիւնկալներուն դէմ շղթայագերծած ֆրանսացիներուն դիմադրութեան բուն տարիներուն գրուած Ալպէր Քամիի «Օլբարականը», երկրորդը՝ հայ գրականութենէն, Համօ Մահեանի մէկ շողշողուն բանաստեղծութիւնը, զոր հիսեց ինկած ռուսերէն մօտը տապալող ծառի մը ի տես՝ «Նայիրեան դալար բարդի»:

Ստեղծագործական նոյն բնագոյր չէր կրնար կանգ առնել ու կանգ չառաւ մաւր Արցախեան գոյապայքարի եօթը-ութ տարիներուն, ու արդէն ծանօթ դէմքերը, ինչպէս մաւր նորահասերը, զենքին հետ գործածեցին մաւր գրիչը, ստորագրելով արձակ թէ չափածոյ առանձին գրութիւններ ու մեծ ու փոքր չափի հատորներ, որոնց նըսազ պէտք չունի ժողովուրդ մը, երբ ան մանաւանդ ներքնապէս զինուելու մնայուն հրամայականի մը տակ կը գտնուի:

Հետագայ շջերուն կը ներկայացնենք ուղղակի «Բագին»ին տրամադրուած արցախցի գրողներէ շարք մը գործեր, որոնք իրենց բարձրութեամբ ու հմայքով վստահաբար յատուկ տեղ պիտի գրանեն ընթերցողին մտքին:

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

Ծնունդ է 1901 թ. Արցախի Մարտունու շրջանի Սոս գիւղում: Երեւանում ստացել է տեխնիկական բարձրագույն կրթութիւն: 1983-88 թթ. աշխատել է Լ.Ղ.Հ. ռազիո-հեռուստատեսային հաղորդումների պետական վարչութիւնում, վարել գրական-գեղարուեստական հաղորդումների բաժինը: Ծառայել է ԼՂՀ պաշտպանութեան բանակում:

Բանաստեղծական շորս գրքի հեղինակ է: «Վեցնադաշտ» (Երեւան, 1989թ.), «Ամառն Ամարասում» (Մանկական, Երեւան, 1990 թ.), «Խրախճանք» (Մտեփանակերտ, 1992 թ.) եւ «Վարդի խրոպութիւն» (Մտեփանակերտ, 1994 թ.): Բանաստեղծի գործերը թարգմանաբար ընդ են տեսել Երեւանի եւ Մոսկուայի ուսուսանողական կենտրոններում:

Հր. Ալեքսանեանը աշխատում է Նաեւ գեղարուեստական հրատարակատեսութեան ապագայի համար: Հեղինակել է անթիւն հանրային բանաստեղծական հիմնադրույթների արձարձամբ:



ՅՈՒՆԻՍԸ ԱՍԵՂԻ ԾԱՅՐԻՆ

Մարդը բացեց 7րդ յարկում գտնուող բնակարանի միակ պատուհանը եւ տեսաւ թաղամասի շէնքերը՝ գլխներին կարմիր շղարշներ, դանդաղ ու վեճօրէն բարձրանում են երկինք: Մարդը կեանքում չէր տեսներ այդպիսի շղարշներ...

Սաւառնող լուսաբացի ուսը փռուեց,-

նրա պոչից կախ զննում էի լուրթ անկման ծապաւեցը,
ուր գօտետրուել էր ուրախութիւնը եւ արծաթափարների փնտտուքը կաւ,-

թիւր մահապատիժ ու դատաստան ունեւ նրանց վճռարեկ մատնաներում, երբ ընդամենը կրծքանշան եւ անհետացողների եւ խփուածի համար:

Անկուսից իմ փշրում է ուսը լուսաբացի,
իմ դառնութեամբ յիանում է քամին,

ամենաանշան մոնչիւններս էլի
մի կայծակէ մտրակ են իսկոյն գծագրում
քնկոտ երկնակամարում...
եւ յախտեանս լքուածն եմ կրկին,
եւ մոլորուածն եմ դասադրուած:

Փշրուած ուսով լուսաբացը
քուծում է կալանիցում,-
նրա խնամարկուն եմ ու վերակացուն,
նրա քարտուղարն եմ, հետամտողը եւ
երգող սահասանքը:

Գեղանկարիչ Արնոլտ Մելիքսէթեանը մտնում է կալանատուն,
որ ծանօթանայ այնտեղ գզվտող գոյների հետ: Նրան, որպէս
ամենաանկասկածելի մեղաորի, փակում են մի խոնարհ խցիկում,
որ գեղանկարիչը ստիպուած կերտում է իր ամենակատարեալ
ինքնանկարը:

Բառերի շարժանկարից յանձնօրէն դիւթում են
անմահները եւ մահապատիժները,-
բառերը միակ ծովն են, ուր Աստուած
կամենում է լողալ,
ու երբ պահը իր վայրի երախն է բացում,
կարմիր անդունդն այդ
փակում է ալմաստ քանաստեղծութեամբ:

«Շակատագիրը բեղմնափում է
մանուշակագոյն ծաղկանցի մէջ»:

«Եղնիկների դողը չափագրում է
անկման ամրոցն ու ինձ,
որ երգիչը չտրորի երանգի զգացողութիւնը»:

«Ու նկարիցս ելնում է դիթերի ծամը,-
ո՞ւմ անդորրն է զարդարելու այն,
ո՞վ է ծննդաբերելու նրա հպման ներքոյ...»:

«Առեղծուածը մոխրանում է սիրահարի մտքում,
մեղուի խայթ է փափաքում հոգին»:

«Ակացիան ճամբեզրին չէ,-
իմ տխրութեան թաւտում է ածում,
նրա ծաղկաթափը
երեկոս ընդարձակում է մինչեւ Մեծ Արջ»:

Իրար վրայ ծալ-ծալ նստում այսպէս,
իրար հիւթը խմում ու ուկորին հպուած՝

հաշիշի տակառները գլորում են հերթով
լոյսի տանիքներից ներքե-ներքե...

Նեղիկ զօրանցի նախասենեակում գիշերուպ ժամը Յին
վառում է լոյսը: Փորագրիչ Ռոպերթ Ասկարեանը մնչալով թա-
փահարում է հատիչը եւ սկսում փորագրել գիշերուպ վառաշոտ
մարմինը: Այդ պահին նա անզգուշաբար տրորում է բանաստեղծի
նորածին տղերը, եւ վերջինս վեր թոնելով յարաբերական
քնից, ողջ աշխարհով մէկ գոռում է. «Ռոպերթ, ես քու տատի
անձրեւան՝ ցը...»:

Հալածեալների թրթուրն հետքերով
սլանում է աստղակիրների անանուն միաբանութիւնը...
հալածեալները կույ եկած ասույներ են
հորիզոնների մթամած պաստառներին,-
նրանց շողարձակումից
այլակերպում է պատկերը տեղանքի...
ցիներուն վառում են փառքի նշանաձողերը,
Սօսեաց անտառը յստակ է շշնջում
դաւադիրների բիւր հասցէները,
ոչ մի գոյն ոչինչ չի թաքցնում խոփ
իբրեւ անակնկալ ժանտ ու մահացու,
կայծոռիկների երամը որպէս ծիծեռնակներ,
յուշում են հեղեղումները,
սպանութիւնները եւ,-
տեղանքում գաղտնիքը անկեղան հնչիւն է,-
կեղծ լումայի պէս ընկած գետնին:

Արեւածաղկի պսակի տակ պատուպարուել է վերջին հազար-
ամեակի մութը կուլ տուած արկածախնդիրների մի ջոկատ,
բայց կրկին թրջում են անմեղ հայեացքների հեղեղից: Մէկը
ջոկատից պոկում-չքում է, իր անունը նետելով հետում
մտացրիւ կանգնած Հայեցողին:

Ստրուկ գանահարողն զագրելի է,-
որքան արքայասպանը,
խաւարի ծուէնը նոյնքան սիրելի է,
որքան մայր ցամաքի բերրիութիւնը:
Ոչ մի խաչ գերծ չէ արցունքի ծովից,-
եւ տեղատարափները նրանից են յորդում
իբրեւ դիւային յուսահատութիւն:
Օ՛, չքնաղ հալածեալներ,
ձեր թրթուրն հետքերով ու խոյանքի վրայ
սլանում են կրկին անանուն միաբանութիւններ
եւ տիեզերքի աճող մանուկները:

Լուսինը վարժահրապարակում ուտոստում է շարային
քայլքի ուրիշով, որ գոլորշու պէս բարձրանում է երկաթ սալե-

րից: Ջահել ժամապահները լուսնի վրայ բարկանալով, կանչում են նրան իրենց մօտ, որ պատմի երկնքում կատարած իր շնութիւնների մասին: Լուսինը նախավճար է պահանջում մի «կալաշնիկով» ինքնաձիգ...

Ահա գայիտնով եկա տիրակալը,
 նրա դարչնագոյն մարմնին,-
 չկայացած գերեվարութեան
 համարն անտեսանելի,-
 նա որոնում է իր խոշտանգման ժամը
 եւ անձեռնմխելիութեան հնարը վսեմ:
 Տիրակալը սոսկում է իր յաջորդ գոհից,
 նրա աչքերը հեռադիտակներ են
 կառասինարաններ եւ ճիշ յայտնագործող,-
 հրճուանքի խաղահրապարակում:-
 Ջոհի մարմինը սուելի վառվում է,
 տիրակալինը քան,-
 Ջոհի ձայնը սուելի մարգարէական է,
 տիրակալինը քան,-
 եւ չեն ջարդում յաւերժ սարսափի ձուերը,
 որոնց կշռի տակ են
 մոլորակները տրոււմ պտոյտի
 եւ արգասանդ հոգու ոտնձգութեանը:

Ջուարթ մանկան պէս
 ինձ երկինք է քաշում տիրակալը՝
 մեղուշ օդապարան-կանչով:
 Իսկ ես տիրակալ չե՞մ,-
 հարցնում-խոյս եմ տալիս
 դէպի հրճուանքի խաղահրապարակը:

Կաղ ձախողակը անվերջ կամենում է գտնել մի Մտածող եւ երկրի անունից նրա մէջքին գրել իր մաղձի պատմութիւնը: Երբ թուաց, թէ գտաւ պղպիսին՝ նրա գլխին ծրտել էին զուգաորոտող ծիծեռնակները, եւ ձախողակի ձեռքերը լախտենական դողով բռնուեցին: Երկրի աչքերում խենթ լոյսը շատացաւ:

Եւնում եմ, որովհետեւ յուշի ու խենթութեան
 այլ եղանակ չկայ,
 շնչող ստարկաների երկար շարքում
 թափուր տեղեր կան
 եւ դիւահարների հսկայ երգչախումբը,-
 սա կոյր աղիքի պէս կտրում-նետում է
 ընծայուած ժամանակի մասը երգեցիկ:
 «Բաղաձայնի վրայ
 աքսորուած համր ես,-
 գոչում է երգաչախումբը,-
 արգելուած ձայնաորի

Աշան ես ցինկէ՛ս:-
 Ե՛նում եմ, որովհետեւ
 արգելքի քաղցրութիւնը ամենատիրականն է:

...Քո օրը երկնքում կորած բոյն է հաւքի,-
 դու ծնունդ ես, որ ես
 նուրբ պատկերներ գտնեմ
 մեռեալ քառսի եռանկիւններում,-
 քեզ հաւքն է այցելում,-
 աննիւթ, անշշուկ,-
 քո ծննդեան օրը, սոսկ նա՛ հաւքը վերին,
 երբ ձայնատրներից
 մի կղզի եմ սարքում
 ամենաաղմկոտ եռանկիւնու խորքում:

Ինձ չլքողը ամենաանշան օրուայ բոյրն է:

Հիսուսային հորիզոնում պայթած արկի պարկուճը գորրուելով
 հասնում է խնճոյքի նստած գերդաստանի սեղանին: Ամենա-
 կրտսերը պարկուճը լցնում է գինով ու քաշում գլխին, միսները
 ծափահարում են ու երգում:

Աշխարհը —մի կլոր հիանդանոց,
 ուր մէկը միսին բժշկում են փութով:-
 Յրտահարուած են ոտքերը Յունիսի,
 նրա աչքերը արցունքոտուում են
 առանց տխրութեան ու ծիծաղի,
 եւ Յունիսի կոկորդը ահա լցնում են
 հերոյինի ճերմակ պարկիկներով:
 Բանաստեղծի ներսում քարերի կղզեակներ են,
 նրա վրայ հագուստ չէ,
 այլ հայեցումի կանաչ համազգեստ,-
 եւ Յունիսը նրա ներսն է խցկում
 մտերիմների լուծեան հաքեր:
 Փողոցը ուռել է մեկակութիւնից,
 նրա սեւաթոյր պարանոցն ի վար
 յորդանում է դառնութեան գետը
 եւ քշում-տանում է թրեւոյ սիրահարներին,-
 փողոցի վրայ անզգայութեան խիճ են թափում
 եւ գծում հողի երկար վանդակներ,-
 նրանցից մէկում սայթաքում-ընկնում են
 Յունիս, բանաստեղծը, եւ նրանց ետեւից
 գլորուող աստղակերպերը...

Աշխարհը —մի կլոր հիանդանոց,
 ուր մէկը միսին գրանցում են փութով
 մահուան ցուցակներում:

Վիրահատուած ամուրին ժամերով անհետանում է գաղտնիքի մացառուտներում եւ միշտ վերադառնում սոսկալի հարբած: Մի ատուօտ հիւանդասեւեակի պատերին անյայտ մի ձեռք գրեց, որ վիրահատուած ամուրի հարբեցողին դարձի են բերելու Ս. Յակոբ եկեղեցում:

Անգղերի երամը քաղցած իջնում է
ազատութեան ճաղաշարերին,
նրանցից մէկին ամուր ցցուած է
յայտնութիւնների զանգատուփը,-
գալիքս վերձանող տողեր չկան այնտեղ,
մարմինս անխոցելի դարձնող իողեր չկան,
ամբոյսների դէմ սրակիչներ են,
նոր աղէտների սկզբնաղբիւններ
ու կեղծ հրճուանքի հաբեր անգոյն,-
զանգատուփի մէջ-իբրեւ յուռութք:

Ո՞վ է տառապում յայտնութեան ախտով,-
նրա ժամանակը մաքուր սկսատակ է,
որի վրայ պիտի
սերտած ողբերգութիւններ ձայնագրուեն:-
Անգոյի հետ մենամարտը
ճերմակեցնում է մեր արիւնն ու ոսկին,
երդուեալ երազի հետ է
ամենաբուռն մտերմութիւնը,-
ցնծութեան օղակարիկները դարձեալ իջնում են
այնտեղ, ուր վախճանի հետ ողջագորւում ենք:-

...Մի անընթեռնելի յատակագիծ կայ ձեռքիս,
որով շարժում են Խաբկանքից դէպի
վերին վերացարկում,-
ի՞նչ ամայութիւն է իմ ուղու վրայ,
չի նշմարում անգամ ուրուն Յայտնութեան:

Մարդը բացեց 7րդ յարկում գտնուող բնակարանի միակ պատուհանը եւ տեսաւ, որ քաղաքի շէնքերը՝ գլխերին կարմիր շղարշներ, դանդաղ ու վեհօրէն բարձրանում են երկինք: Մարդը կեանքում չէր տեսել այդպիսի շղարշներ: Ու երբեւէ պատուհան չէր բացել...

Արցախ,
Օգոստոս, 1994 թ.

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՈՒՆ

Կենսագրութիւն. պատմելու
 սէր չունեմ: Պարզապէս ծնունդ,
 ապրում եմ... Եւ ապրածս կեանքի
 իմաստը փորձում եմ դունել գը-
 ղելու, նաեւ թատրոնում դերեր
 խաղալու մէջ: Հրատարակել եմ
 պատմուածքների ընդամէնը 2 ժո-
 դովածու: մինչդեռ խաղացածս դե-
 րերը տասնեակ անգամ շատ են:
 Գրելով եմ ապրում, գրում եմ հա-
 լատալով, որ այս աշխարհում իմ
 գերը դեռ պիտի խաղամ եւ այս
 էլ ինչպէ՛ս...



ՊԱՍԵԱՆՍ՝ ԾԱՂԿԵՓՆՁՈՎ



Անձրեւը էլ չի շփշփում, ժամուկէս առաջ է փէշը հաւաքել, իրենից
 յետոյ թողնելով համատարած ցեխ ու ջրսփոսեր: Հիմա քաշաթոխայն է
 թառել էլեկտրասիւնների վրայ, որոնք երկու կողմերից շարունակ են
 ջերմոցների երկայնքով: Ջերմոցներում ծաղիկներ են աճեցում քաղաքի
 ծաղիկի խանութների համար: Անկեղծ աւած, իմ քախտը քերել է: Ար-
 դէն մի ամիս է, այստեղ գիշերապահակ եմ աշխատում: Մեր այս թանկ
 ու կրակ աշխարհում մի աշխատավարձով մարդ չի ապրի, առտել ես,
 եթէ ուսանող ես, ոնց որ ես: Միշտ է, անտէրը հսկայ տերիտորիա է, պատ-
 կերացրու ուս ուսի տուած յիսուներեք ջերմոց, մինչեւ մի հատ պտտում
 ես, թէյնիկը պահականցում ետ է գալիս: Էլ չեմ ասում որ եսամանի
 թփեր ու նարգիզի մարգագետիններ էլ կան, որոնք նոյնպէս պիտի
 աչքաթող չանես, թէպէտ այդ բոլորը երկաթանաղ ցանկապատով է
 շրջափակուած: Փոխարէնը, սակայն, ծաղկանցի պահակներս անագին
 էլ առանելութիւններ ունենք: Ուրիշ բան որ չլինի, գոնէ այստեղ անդորր
 է, օդն էլ մաքուր, որովհետեւ գտնում է քաղաքի ծաղրամասում: Իսկ
 ականջիդ ասեմ, մուշտարի միշտ ենք ունենում: Կը գան՝ արպեր, ծաղիկ
 է պէտք, փրկիր: Թէ փրկում ես, բոլոր մէջ տասանոց ես գտնում: Իսկ
 ծաղկանցի վարիչը շատ հասկացող ու քարի կին է: Գիտի, որ տասանոցը
 տասը փակի տակից էլ, միեւնոյն է, ծաղիկ է տանելու: Եւ որպէսզի մթան
 մէջ քաղուածը կոկոն չլինի, ամէն օր գործի վերջում, պահականցի դոյլի
 մէջ հինգից-եօթը ծաղիկ է թողնում՝ փողաշուշան, մեխակ:

Հա, հեռուտացոյց չունենք, փոխարէնը մեր պահականցի դիմաց մի
 տասնհինգ մետրի վրայ, ցանկապատի երկայնքով խճուղի է ձգում մինչեւ
 հարեան հիմնարկութիւնը՝ քաղաքի սանէպիդկաանը: Միշտ էլ, մութն

հարեւան հիմնարկութիւնը՝ քաղաքի սանձակոյկայանը: Միշտ էլ, մութն ընկնելուն պէս, ծիգուլիները հերթով գալիս-գնում են, ինչպէս նոյն ֆիլմի տարբեր սերիաներ: Ու մինչեւ առաւօտ, թէ հաւես ունես, լոյսդ հանգցրու, պատուհանից թափաշա արա, թէ էլեկտրասուեան տակ տաս պրած հերթական մեքենայում ոնց է կինը տկտրանում, ինչեր են անում եւ ինչ ձեւերով...: Այնպիսի բաներ կը տեսնես, տղայ ես, աչքդ ճպիր:

Բայց ծաղկանոցի պահակներին հիմնական առաւելութիւնն այն է, որ ղեկավարութիւնը երբեք չի գալիս մեր հերթապահութիւնը ստուգելու: Այսինքն՝ դու ես քո Եղեմը: Ու թէ հեռախօսահամարներով ծոցատետր պահող ես, զանգիր քո Կառա-Մառա-Ջատային, թող զան պահակա-նոց-բուրաստանդ՝ գիշերդ վալեյքներով ու բերկրանքով լցնելու:

Հերթապահութեան գալիս ենք ցերեկուայ ժամը չորսին, այդ ժամանակ ծաղկանոցի աշխատողները՝ կանայք, տուն են գնում, մինչդեռ սա-նձակոյկայանի փերիները երկու ժամից են անց կենալու խճուղով: Դրանք միշտ էլ խմբով են գնում: Ու թէ եւ մէկը մէկից սիրուն է, բայց պահա-կանոցի շնմին նստած, աչքդ գտնում է հէնց նրան, որին զեփիւն է զըզ-ում, գոռելուց բարակ շրջագետտը խտտում է ազդրեղը, փորն ու կրծքերը, ու ջանդ մի տեսակ է լինում: Մանաւանդ որ նրանք անց կենալիս, չնկատելով քո ներկայութիւնը, երբեմն այնպիսի բաներից են խօսում, այն էլ ազատ, բարձրաձայն: Եւ քանի որ իմացածդ քաների մասին լսում ես կնոջ քերանից, ներսդ հաճելի խուտուտ է գալիս, ու կամայ-ակամայ շտկում ես շալվարիդ փոթ ընկած առաջնամասը: Բայց ես պահականոցի շնմբին նստում եմ, մէջերին մի հրեշտակ կայ, նրա համար, թէ եւ ա-մէն անգամ էլ թաքնում եմ, նրա երեսալուն պէս: Իմանայ պահակ եմ, ունիս չի նայի: Չէ, հրեշտակը այն խօսքը չէ: Տեսած կա՞ս, Քամիլ Կորոն մի կտառ ունի «Դիանայի լոգանքը»: Իսկը նկարից դուրս եկած Դիանան է: Ամսագրից պոկուած այդ էջը մեր պահականոցում պատից կախուած էր: Հիմա մեր աման-չամանի պահարանի դրան ներսի երեսին ենք կպցրել, որովհետեւ ծաղկանոցի կանայք վարիչին բողոքեցին, թէ՛

—Էս սենեակում մենք հանգստանում, հաց ենք ուտում, իսկ էդ պահակները, որտեղ մի փչացածի նկար կայ, բերել պատիցը կախ են արել: Վարիչն էլ ինձ կարգադրեց պոկել, չնայած նկարը Երեմ քերին էր կախել:

Իմ Դիանա հրեշտակին պատահաբար մի քանի անգամ հանդիպել եմ երթուղային ատորուսում: Միշտ էլ, թէ եւ ուղեորները սովորականի պէս իրար շալակ էին ելել, անհասկանալի մի ուժ ինձ առաջ էր մղում՝ դէպի նա: Եւ նրա համար, պարզ բան է, եղած-չեղած, մտածում եմ, տեսնես որ շինովնիկի կին է, բայց մօտենում եմ, որ գոնէ մօտիկից զգամ նրա զգլխի ընդ, հմայքն անկրկնելի, գոնէ մարմնի ջերմութիւնը զգամ թէկուզ զգեստի տակից՝ ոտքս ոտքին հպելով: Բայց ամէն անգամ էլ հագի մօտեցած, նա անսպասելի շրջուել է իմ կողմը, աչքերը յարել աչքերիս՝ ակնոցիս ապակիների միջով զննելով ամենաթաթուն խորքէս նոյնիսկ: Ու միշտ էլ հայեացքս փախցրել եմ ճարահատ...

Հիմա, երբ անձրեւը փէշը հաւաքել եւ քաշաթուխալը թատել է է լեկտրասալիներին, ջերմոցների շուրջը մի պտոյտ արած, հագիս եմ մտել պահականոց, որ դարպասի զանգը տուին: Մեր պահականոցը դարպասի մօտ չէ, ինչպէս լինում է սովորաբար, այլ ութերորդ ջերմոցին կից, ու

Վինչե դարպասը մի ութսուն ոտնաչափ կայ: Ջանգի վրայ դուրս եմ գալիս, բայց չեմ մտածում, որ աստու եկած լինի. այս ժամին ծաղիկ չեն տանում, ոչ էլ մուշտարու մասին եմ մտածում. դրանք գալիս են, երբ խանութները փակ են լինում: Ուրեմն ասֆալտով գնում եմ դեպի դարպասը, երբ մեկ էլ յանկարծ ճաղերի յետև տեսնում եմ... Դիանա հրեշտակին: Ակնոցս ետեք քթիցս թոցնում, խոթում եմ գրպանս: Ակնոցով էլ մի կարգին պատկեր չուզեմ, իսկ այսպես աստանայի երթօրն եմ նման: Ու որպեսզի ինձ շուլալուած յուզումներից պրծնեմ, ընթացքում սիկարէթ եմ վառում: Մինչդեռ հրեշտակը, մի ձեռքով դարպասի ճաղը բռնած, դիտում է մօտենալը:

—Ի՞նչ կայ,—ասում եմ ինքս իմ խօսքից զարմացած, երբ հասնում եմ: Իսկ նա, ճաղերի միւս կողմից նախ քննախոյզ ինձ է նայում, ասպս ժպտում է մեղրահամ ու նազանքով ծոր տալիս:

—Պահակը դո՞ւ ես:
—Հա, ի՞նչ կայ:

—Մենա՞կ ես,—անսպասելի ասում է շշուկով, մտերմիկ, ու ամօթխած կծում շուրթը: Անակնկալ այդ ամէնից մարմնովս ետեք մի տաք հոսանք է անցում հաճելի գլխաստոյտ առաջացնելով:

Լեզուս փաթ է ընկնում, գլխով եմ անում: Իսկ նրա ձեռքը այդ պահին սահում է ցած, նույն ճաղը բռնած իմ ձեռքի վրայ: Ու կրկին ծանօթ հոսանքը շամփրում է ինձ, ինչից էլ ոտքս սկսում է դողալ:

—Մենակ տխուր չի՞:
—Է՛ն էլ ո՞նց,—ձայնս յուզմունքից թրթռում է:
—Գուցէ ներս գամ նոր գրոցներ, հր՞, ասպետ,—ու այնպես է ժպտում, ամբողջովին գգուանք է, սպաստող վայելք ու քերկրանք:

—Հա, ի հարկէ,—ասում եմ, անցնում դոնակը բաց անում:
Նա ներս է մտնում նկատելի ամօթխած, կողքովս անցնելիս ծանօթ գզլիփչ բոյրն եմ զգում, ինչից էլ ոտքիս դողը սաստկանում է: Անց-կենցալիս յուշում է.

—Լաւ փակիր:
—Անհոգ կաց,—ասում եմ, բայց գրողի տարած լինզը, որ միշտ լայնակի հագցնում եմ դրան յետև, հիմա չի ստացւում, իսկ ուզում եմ պահ առաջ մտնենք պահականոց-ապարանքս:

Ասֆալտը կտկտացնելով, նա սկսում է գնալ պահականոցիս կողմը: Գործս պրծնելով, գնում եմ յետեփց: Հագին կաշուէ բանկրնակ է, որի փէշը խտտել է կտր կոճերը, իսկ դարչնագույն, բարակ շրջագետտը կիսա նստելով, ատիլ է ընդգծում բարձր ու ձիգ յետոյքը:

Նրա անսպասելի ներկայութիւնը ինձ շարունակում է անհասանկան թուալ, ինչպէս ցնորք, յատկապէս ու շրջակայքում էլ մարդ-մուրդ չկայ, մենք ենք, իմ թագադրութիւնը: Ու քանի որ ոչ ոք չկայ, մինչ նրա յետեփց կը հասնեմ՝ հայեացքս խաղացկուն կոճերին, արդէն պատկերացնում եմ նրան պահականոցիս թախտին պատկած: Ու երեսակապածս գեղեցիկ մերկութիւնից սիրտս ծուլ է լինում, ոտքերս փաթ ընկնում:

Հասնելուս այէս ասում է.
—Լա՞ւ փակեցիր:
—Անհոգ կաց, վարպետն իր գործը գիտի,—ասում եմ կեանք տեսածի յանգով:

- Օհո, այսինքն՝ կանանցից գլուխ ես հանում:
 - Մի արոֆեսորի չափ,
 - Մեղրահամ ժպտում է:
 - Անկեղծ ասա, արոֆեսոր, ի՞նչ ես մտածում իմ մասին:
 - Պարզ է, միայն լսող:
 - Իսկ առեղի անկեղծ:
 - Շուտ հասնենք ապարանքս՝ տիրանամ:
 - Զանգակ ծիծաղում է:
 - Հէնց այդպէս՝ միանգամի՞ց:
 - Ի՞նչ արած, տնկնիկայի դար է:
 - Գո՞նէ ինձ համար բացառութիւն արա: Մի՞թէ արծառի չեմ:
 - Այսինքն:
 - Ես նախարանով եմ սիրում:
 - Որե՞մն նախարան էլ կը լինի: Կարամ թէլ բիրասիրել՝ հնդկական:
- Սուրճ:
- Սուրճն էլ՝ ի հարկէ, բրազիլական: Իսկ կոնեա՞կ:
 - Այդ մէկը յաջորդ սենսահն...: Ահա իմ ապարանքը: Բո՞նն է, ապահով ներս մտիր:
 - Չէ, ապետս, միտքս փոխեցի: Չեմ կարող:
 - Ընդունեցի նազանքդ: Համեցիր:
 - Չէ, չեմ կարող:
 - Ինչո՞ւ,--անկեղծ զարմանում եմ:
 - Եթէ կոնեակ չկայ...: Այն էլ վասպուրական...
 - Ես քեզ այնպիսի՝ ջերմութիւն կը հաղորդեմ...
 - Չէ, ջանա, մի նեղացիր, սիրում եմ, երբ ամէն ինչ տեղը տեղին է լինում:
- Նրա ասած ջանա-ը լուցկի հասկացիր, արիւնս՝ քենզին: Պայթում եմ յուսախար լինելուց: Եւ եթէ ես չլինէի, այդ հրեշտակին գոռով կը մտցնէ ի պահականոցս: Ու դեռ զարմանում եմ, թէ ինչպէս է լանցանքը ծնում...: Բայց ես բռնաբարել չեմ կարող, դրա համար էլ դէմը կանգնած տնքում եմ միայն:
- Գրողը տանի, դու ինձ, հաստատ, կը խենթացնես...
 - Դէ լա, քան չկայ,--ասում է,--քեզ հատաքի, տղամարդ ես, չէ՞, ինքդ էլ՝ ասպետ: Փոխանակ ինձ օգնես այստեղից դուրս գամ, խենթանալու մասին ես խօսում...: Ասում ես, այս մասերում որտե՞ղ է միւս ելքը:
 - Խնդրում նայող ցանկապատի կողմն է ցոյց տալիս:-- Գիտեմ, որ կայ:
 - Դա ինչի՞դ է պէտք, չեմ հասկանում:
 - Հիմնարկ պիտի գնամ,--ասում է հանգիստ ու մտերիմ ժպտում:
 - Կը գնաս, էլի, հիմնարկի հէրն անիծած: Գո՞նէ հինգ րոպէով ներս մտիր: Խնդրում եմ:
 - Դարձեալ ծիծաղում է զանգակ:
 - Հինգ րոպէն շատ չէ՞ քիչ:
 - Դէ: Ինչքան որ ուզում ես, միայն ներս մտիր:
 - Չեմ ուզում, ջանա:
 - Սատանան տանի, բա ինչո՞ւ եկար,--համբերութիւնից դուրս եմ գալիս:

—Էյ, պրոֆեսոր... բա՞ չեմ ասում՝ հիմնարկ պիտի գնամ:
Աչքերս ակամայ ասում են նրա գեղեցիկ ոտքերն է վար, նկատում
եմ հագի ամառնային ծակուկեն կօշիկները, իսկ խճուղու քանդուած
մասում գոյացած անանցանելի ջրափուն ու ցեխը:

—Հօ չե՞ս բարկանում,—ասում է յանկարծ:
—Որ բարկացայ, ի՞նչ պիտի անեմ,—փնթփնթում եմ, թեաթափ առաջ
ընկնում:

Յանկապատի՝ սանէպիդիոլոգիայի մօտիկ հաստուածում, իրօք, ելումուտի
տեղ կայ. մերոնք են ճաղը պոկել. հարեան հիմնարկ գնալու դէպքում
ճամբան կարճելու համար:

Պահականոցիս եւ ցանկապատի միջեւ կանաչապատ թեքութիւն է,
հիմա թաց, լպրծուն:

Ջգուշօրէն սկսում ենք իջնել:
—Հօ չե՞ս թողնի, որ ընկնեմ, ասպետ:
—Դէ, ի հարկէ, չեմ թողնի,—ասում եմ խռովկան, ետ չնայելով:
—Իսկ կարծում էի արդէն ինձ ուշադրութիւն չես դարձնի:
—Այսպէս էիր կարծում:
—Ձեռքդ տուր հա՞,—ասում է յանկարծ,—այսպէս անիլի ասպետով եմ
զգում:

Շրջում, բռնում եմ ձեռքը. նուրբ է, տաք, եւ արիւնս կրկին բռնկում
է՝ փոթթելով ինձ: Ու ես, մինչ կը հասնենք ցանկապատին, մտովի նորից
եմ նրան պատկերնում պահականոցիս թախտին, նորից հաճելի գլխապտույտ
զգում, երեսակայածս չքնաղ մերկութիւնից...

Մաղերի արանքից դուրս եմ գալիս, ցատկում խճուղի: Յանկապատի
քնտոնէ հիմնապատը մետրաչափ բարձր է: Նա պատի վրայ կանգնել,
յամառում է: Վերջապէս պայզում է իմ դիմաց, պագելիս մի կարճ պահ
ինձ պարզելում է իր թաց եղած ազդրերի թաշնայ ճեղմակութիւնը: Ձեռ
քերով յենում է ուսերիս, իսկ ես բռնում եմ նրա թեւատակերից ու
ցատկում է: Չէ, ճախրում է: Ռոդիլ ինձ վրայ: Իջնում է այնքան մօտիկ,
որ նոյնիսկ մի ակնթարթ փարթամ կրծքերով քսում է ինձ, այդ
ակնթարթին էլ դէմքս է շոյում նրա տաք շունչը ու մարմնի ծանօթ, զգլխիչ
թոյրն եմ զգում:

Ինձնից անկախ գրկում եմ: Չէ, փորձ եմ անում: Նա շատ գեղեցիկ
դուրս է արձնում, ասելով.

—Իսկապէս, չթողնեցիր ընկնեմ: Ծնորհակալ եմ, ասպետ: Լաւ է, ոչ ոք
չտեսաւ: Դէ, ես գնացի: Յաջողութիւն քեզ,—ու շրջում սկսկում է հեռ
անալ:

Յեխն ու ջրափունը շրջանցած, նորից ասֆալտը կտկտացնելով գնում
է հպարտ ու գոհ: Իսկ ես էլի նայում եմ նրա խաղացկուն յետքին:

—Էյ,—կանչում եմ յետեւից: Կանգ է առնում, ուսի վրայից նայում:—Մի
րոպէ...խնդրում եմ...: Միայն միրոպէ:—Ասում ու արագ ցատկում եմ
պատի վրայ, վազելով հասնում պահականոց, ճանկում եմ դոյլում եղած
թուր ծաղիկները ու դուրս արձնում: Բայց, գրողը տանի, այն հաստուածով
ուր քիչ առաջ անվնաս հրեշտակ անց կացրի, հիմա ինքս...: Ըտապելուց
ուրջս պլստում է ու սահնակորդի պէս՝ մէջքի վրայ սղղում եմ մինչեւ
ցանկապատը: Դէմ առնելով ճաղերին, չեմ փորձում եւեթ վեր կենալ:

Ընդհակառակը, ուզում եմ գետնի տակն անցնել ամօթից: Մարդ էլ այսքան ձախորդ կը լինի՞: Հիմա նա պնդեց և ծիծաղում, մտածում եմ: Ակամօք եմ դնում: Չէ, շուրջս առաջուպ լռութիւնն է:

Բռայե անց, յայտնուելով խնուղում, ծաղիկները ձեռքիս, որ անվնաս է ի պահել, գնում եմ դէպի հրեշտակը, որն արդէն ընդատաջ էր գալիս երեւի թրմիւսը տեսնելով:

- Ոչ մի տեղդ չցատա՞ց,-հարազատի պէս՝ մտահոգ ասում է նա:
- Չէ, բան չկայ:
- Իսկապէ՞ս: Հասաւ շրջուիր:
- Հարկաւոր չի:
- Շրջուիր, ասում եմ,-ենթարկում եմ,-Օ, լեա՞, լեա՞... Լրիւ ցեխոտուել ես:

-Ոչինչ:
-Ո՞րք թէ ոչինչ: Շորերդ լրիւ թաց են: Կարող է հիւանդանոցս: Գո՞՞՞ մօտդ փոխնորդ ունե՞ս:

- Մի բան կը ճարեմ,-ու մեկնում եմ ծաղիկները:-Վերցրու:
- Աչքերիս է նայում:
- Ուրեմն տղամարդիկ դեռ չե՞ն մոտացել ծաղիկ նուիրելը:
- Ուրիշները չգիտեմ, ես՝ ոչ:
- Ես թողորհ՞ն ես նուիրում:
- Միայն նրանց, ում համար սայթաքում եմ:

Նորից ծպտում է մեղրահամ ու յանկարծ պիջակիս գրասենցից ակնոցս հանելով, դնում է քթիս՝ ինչպէս ինքս եմ դնում:

-Այսպէս լաւ է, ասում է,-ծաղիկները վերցնում. վերցնելիս անսպասելի այտոս համբուրում թեթեւակի ու արագ-արագ հեռանում:

Ես, ոչ այնքան կատարածից շշմած, որքան ինքս իմ առաջ մինչ այդ վայրկեանն ունեցած բոլոր մտքերիս համար ամօթահար, մնում եմ ցանկապատի մօտ կանգնած:

-Է՞լ,-սթափելով, վերջապէս կանչում եմ, երբ նա արդէն բաւական հեռացել էր:

- Էլ չի,-շրջուելով ասում է,-այլ՝ Դիանա:
- Դիանա՞,-հիմա արդէն շշմում եմ: Բայց, պահ անց, ասում եմ:-Ջանա, էլի կը գա՞ս:
- Խորամանկ ծպտում է:
- Եթէ անձրեւ եղա՞՞՞ անպայման:
- Է՞ի,-հատաչում եմ,-Լևուտած գիտե՞, մէկ էլ երբ անձրեւ կը գալ:
- Ինքդ անելի լաւ պիտի իմանանս, պրոֆեսոր,-ասում է, բարեկամաբար ծպտում ու վայրկեան անց անհետանում ոլորանի լեռեւ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՌԵՆ


ՆՈՐԵՎ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Մտուել եմ 1959
թուականին Արցախ
աշխարհի Սարուշէն
գիւղում: Բայց միշտ
էլ ինձ թուում է իմ
ծննդեան թիւը յայտ-
նի չէ, պարզապէս ես
այն չեմ կարողանում
միշտ չեմ միշտ ժա-
մերը հեռասպառ, որ
աւելի շատ բանող
եզներ էին միեմում...

Հետուտալլազրող
եմ: Պատրաստել եմ
բազում հետուտալա-
զրողումներ էւ հրա-
տարակել բանաստեղ-
ծութիւնների ընդա-
մէնը մէկ ժողովածու
«Հաւատ Արցախի»,
բայց ունեմ չհրատա-
րակուած երկու գիրք
եւս:

Յաճախ թուում է
ոչինչ չեմ արել: Պար-
զապէս այս ամէնը
կրկնութիւնն է հա-
զար տարի առաջ կա-
տարուածի, կրկնու-
թիւնն է խեղճ ու
ծիծաղելի խեղճ, խեղճ
ու ծիծաղելի...

Փուցէ նաեւ կրկ-
նութիւնը չէ: Չգիտեմ:
Պարզապէս չկայ ա-
ռիթ ցնծութեան ու
աւետիսի...



ՅՆՈՐՔ

Ես ինչ որ ժամանակ արդէն
մահացել եմ
եւ իմ թաղմանը մասնակցում էին
աշխարհի բոլոր թոչունները,
յիշում եմ,
նրանք նստտել էին դագաղիս
կողքին ու պատմում էին
բոլորի համար անհասկանալի
պատմութիւններ:
Եկել էին եւ հալածուած շներ
եւ որք հայեացքով շարժում էին
սենեակում հեղձուկ,
եւ ոչ ոք, ոչ ոք չէր փորձում
նրանց դուրս հրաւիրել:
Ժամանել էին եւ բոլոր նրանք,
ուրբեր ինձանից յետ էին ընկել մի
հազար տարով,
եւ աչքերի մէջ դեռ չէր մոխրացել
մաղձը վրէժի:
Մի վերջին անգամ դէմքիս նայելու
անհոգ ցանկութեամբ
այցելում էին իշխաններ դժխեմ,
ինձ շնորհ էին բերում շոթայուած
ու պարտուած մարդիկ,
եւ ամէն մէկը յիշում էր մի դէպք
իմ չապրած կեանքից,

եւ ամէն մէկը յիշում էր մի դէպք մեր հանդիպումից:
 Ես լսում էի անծանօթ ձայներ, բարբառներ օտար,
 մի թէժ ժխոր էր շնչահեղձ լինում իմ կացարանում,
 ե՛ւ վիճում էին, ե՛ւ կուում էին, ե՛ւ խօսում էին
 բոլորը մէկտեղ
 չէին կարենում սակայն որոշել թէ ինչ անեն իմ
 խեղճ աճիւնի հետ
 տանե՞ն երկնքի տարածքներն ի վեր,
 թէ յանձնեն հողին...

.....
 Իմ հոգեհացի սեղանը վերջում փոխուել էր քեֆի...

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾՆԵՐԸ

1.

Եկել գինավառ կանգնել ես երկրիդ դարպասների դիմաց
 եւ ներս մտնելուց առաջ յիշում ես գործած քաջութիւններդ,
 յիշում ես զոհերիդ աղաղակը կարմիր,
 յիշում ես ընկերներիդ աչքերը հրճուանքով լեցուն
 եւ քայլուածքդ դառնում է հպարտ,
 եւ չես նկատում մարդկանց զարմացած հայեացքները,
 որ մանուկները քեզ չեն ճանաչում,
 որ աղջնակները վախից փակում են պատուհանները,
 իսկ շները փորձում են հաջել:

Եւ դու չես ասում, որ պատերազմը եղել է դաժան,
 որ կողքիդ զոհուել են ընկերներդ,
 որ մեռելների շշուկն ես լսում դու ամէն վայրկեան,
 որ դազադների շարքերում խառը
 բզկտուել է քո մարմինը ջահել,
 ոչինչ չես ասում,
 դու քայլում ես խիտ, շէկ փողոցներով,
 եւ քո հայեացքը ողջագործում է ամէն մէկի հետ,

հագի եւ զսպում կանանց գրկելու ցանկութիւնդ տաք,
 եւ մոլտալուդ փառքի շողերը ներկում են ճանապարհիդ,
 եւ հոգիդ հեղեղում են ապագայի պայծառ պատկերները,
 եւ թում է քեզ պիտի ողջունեն այրերն իմաստուն,
 եւ կանայք համբուրեն քո ձեռքերը,
 քեզ պիտի դիմաւորեն երկրիդ տէրերը
 ու մտմտան երկնային բառեր:

Բայց հեռու մի տեղ, քո երկրից էլ դուրս
 ինչ որ մէկը դանդաղ կարդում է քո մահուան
 դատավճիռը...

2.

Ինչ որ մէկը հիմա դանդաղ մահանում է երկրիս գունատ
 հայեացքում
 եւ աչքերից հոսում են զարմանալի կիսատ երազներ,
 եւ ուղեղը նրա դանդաղ պաշարում են
 անցած օրերի պատկերները թարմ,
 եւ աչքերը ճշում են վերջին անգամ քրքջալու
 ցանկութիւնից:

Մանաչում եմ եւ քեզ,
 դու չես հասցրել հաւաքել քո այգու առատ բերքը,
 քո տան պատերը մնացել են կիսատ,
 եւ ճանապարհիդ ընդվզող վէրքը
 դեռ լաւ է յիշում քո խոստումների ձեւերը հաստատ:

Դու բնակուել ես հնի ու նորի հոգեվարքի մէջ,
 յաճախ նիրհել ես ունայն օրերի զոգերին փոշոտ,
 քեզ օրօրել են մեծ ապագայի նուագները իսկ,
 բայց չես համբուրել հզօր տէրերի քղանցքները կոշտ:

Բարձրացի՞ր մի քիչ,
 աչքերդ յատիր երկրիդ լեռներին
 եւ կը տեսնես այն, ինչ որ չես տեսել դու մինչեւ հիմա,
 կը լսես ձայներ միայն այդ պահին քեզ հասկանալի,
 կը տեսնես դէմքեր, որ ծանօթ չէին քեզ հազար տարի,
 եւ քո շրթերը կը տիրեն բառեր,
 որ դեռ չի ասել ոչ մի երկրային:

Բարձրացի՞ր մի քիչ
 եւ փորձիր նայել կանգնածի յոգնած աչքերին,

փորձիր ճանաչել եւ նրանց, ովքեր
 ուր որ է պիտի ժամանեն շուքով
 ովքեր գալիս են քեզ ողջունելու,
 գալիս են դանդաղ, խօսում են կամաց,
 ովքեր չեն յիշում եւ անունը քո...

Բարձրացիր մի քիչ
 եւ մահից առաջ բարեւիր նրանց...

ՇՓՈԹ ՕՐԵՐ

Պարոնայք, այս երբ այսքան ծերացանք,
 այս երբ սկսեցինք մեզ այսպէս յիշել,
 եւ շքախոմբը մեր տենչ ու խոհի
 ինչո՞ւ է կրկին այսքան խեղճացել:

Պարոնայք, լքէք մենախուցը ձեր,
 թափ տուէք փռշին ձեր հին շորերից,
 եւ գիշերային հարճերին փորձէք
 դուրս հրաւիրել անդէմ օրերից:

Օրերի ճապաղ երթը խափանէք,
 շնորհէք ներում ձեզ լքածներին,
 ե՛ւ ցնծութիւնը, ե՛ւ շնորհը սուրբ
 վերադարձրէք նախնական տեսքին:

Ինչ որ տարել են տարիները պաղ
 ետ բերէք առանց արեան ու զոհի
 եւ վերջին անգամ ձեր կեղեի տակ
 ծիծաղէք եւ այն մատնեցէք հրի:

Ձեր հանդերձները հագէք տօնական,
 կրկնէք հին դարեր սերտած դեռ մանկուց,
 դէ՛, շտապեցէք հասնել, պարոնայք,
 ներկայացումը սկսուել է վաղուց...

ԻՆՔՍ ԻՆՉ

«Ես, որ ամեն օր յեղ Հեղ էի քաճարոմբը,
 յե-՛ն շնորհիկ ինչ վրայ- Բայց ու յեղ ժամն է
 է- խա-արի իշխանութի-նը»:

ՅՈՒՈՒՅ ԲԻՒՅՈՍՍ

Ասա,
 հիմա ինչպէս ես սպրեղու այդքանից յետոյ,
 մի՞թէ շարունակելու ես քո տառապանքստես ճանապարհը,
 մի՞թէ չեմ հրաժարուելու քեզ ընծայուած ցաւամերձ ոգուց
 եւ ուր ես այդպէս տանելու քո երկրի կարմիր շրթաները:

Դու հիմա չես զարմանում
 երբ հասկի դեղին հատիկների խորքում
 եզան

մոնչոցն եւ յայտնաբերում,
 եւ յուշերը դառնում են ջարդուած խաղալիքներ:
 Իսկ հիմա

դու գոնէ մէկ անգամ նայիր քո ետեւից եկողների աչքերին
 կամ բռնիր երբեմնի ընկերներիդ ձեռքը,
 բռնիր եւ կը տեսնես քո սպրած օրերի ոսկորները խղճուկ
 եւ կը լինես առաջին անգամ ինքդ քեզնից խելօք,
 եւ առաջին անգամ դու քարձրածայն կը ծիծաղես քո

ստեղծածի վրայ,
 եւ առաջին անգամ կը նախանձես բոլոր խելագարներին,
 կը նախանձես

ու կ'ունենաս մի քիչ էլ գալի նման սպրեղու ցանկութիւն:

Իսկ հիմա ժամանակն է քո անցած օրերին հրաժեշտ
 տալու,
 ժամանակն է մասնակցելու անճարակների աղքատիկ
 գինարբութիւն:

Դու պարզապէս քո այդ արարքից առաջ
 ոգիդ ազատիր տարիների կարմիր մառախուղից,
 քեզանից վանիր ճանապարհիդ կծծահոտ հոտերից,
 մտքերդ փրկիր տառապանքի փարթամ կծծահոտ
 հոտերից,

վերջին անգամ այցելիր Աստծոյ տաճարը միակ կենդանի
 եւ հանգիստ լքիր ցեղակիցներիդ աշխարհամասը...

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՈՒԿԱՅ

Ա.

Քրտնած մարմիններն իրենց տիրակալ են կարգում
 ավարկոտ ժամերի վրայ
 եւ օրն ի վեր ձգում իրենց մեղկութիւնը,
 ոչ ոք չի նայում,
 չեն ուզում տեսնել նրանց աչքերում
 մուգ գիշերների գոլ պատկերները,
 պարզապէս մօտենում են նրանց
 ու հրաւիրում ինչ որ ծանօթ պատառի տուն...

Բ.

Վաւաշոտ տապից փրկուելու համար
 փերեզակ կանաչք իրենց մարմինը ծածկում են
 բազում շորերի խորքում՝
 անցնող այրերին նայելով անկիրք, անտարբեր
 ու չոր:
 Նրանց աչքերում մի ձեւ են ստանում ծեր ու երեխայ,
 նրանց աչքերում ետում է միայն մոլուցքը փողի,
 իսկ երբ յայտնում է թեւաբաց մի կին,
 շուկան լցում է մի խեղճ ոռնոցով...

Գ.

Խեղճ մանուկները
 կաշում են մարդկանց ձեռ ու ոտքերից,
 մաքրում են փոշին նրանց շորերի,
 կանչում են՝
 եկէ՛ք,
 եկէ՛ք ու տարէք ձմերուկ ու դեղձ,
 եկէ՛ք ու տարէք չամիչ ու խնձոր:
 Իսկ աչքերի մէջ նրանց ամայի
 մի մոլլա անհոգ նստում է քեֆի...

ՆՈՐԵԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐԵԱՆ

Ժաննա Բեգլարեանը պարբերական մամուլում բանաստեղծութիւններով եւ բանաստեղծական շարքերով տպագրուել սկսել է 70ական թուականների սկզբներից: Ունի բանասիրական կրթութիւն: Հրատարակել է «Երկիր-Քարէ տուն» բանաստեղծութիւնների ժողովածուն: Տպագրութեան է յանձնուած նրա բանաստեղծութիւնների «Փակագծեր» ժողովածուն: Նրա բանաստեղծութեանը յատուկ է ներքին հակադրամիասնութիւնը, որը բանաստեղծուելին կարողանում է գնել բանաստեղծական ինքնատիպ ձեւի մէջ:

Ժաննա Բեգլարեանը աշխատում է Լ.Ն.Հ. ռադիոպեպագրութիւնում որպէս գրական հաղորդումների խմբագիր:



Իրերի վրայ՝ անթափանց հայեացք, իրերի վրայ՝ անշարժացած քայլ, վազվզող միջատ՝ դատարկութեան մէջ, հին շքերթների նորացրած փորձի որոտների մէջ՝ արճիճէ կարկուտ:

Ժամանակի մէջ՝ մեռեալ ընդվզում, հաստատունութեան փակուած օդանցքներ, հանուրն ամբոխ՝ անշարժութեան մէջ, հին պալատի նոր կահաւորանքում իրենց մարմնի հնահոտութեամբ նոր-նոր արքաներ՝ ամբոխից սերտած մնշախաղերով:

Յնորուածների անհաշիւ քանակ, տօնահանդէսը ցնցոտու վաճառք, մուրացիկների մեկնուած ձեռքերի պս թամաշայում որերո՞րդն էմ, որ պիտի նայեմ, ու չշարժուի ոչ մի մկանս, որպէս անարձան պատուանդանի մաս:

Որերո՞րդն էմ, որ պիտի ուզեմ, թափ տալ իմ աջը՝ չկարողանամ, բոունցքիս միջից ելած գոլորշին, կրկին դառնալ թոց, լեռներն առնի
 հրդեհների մէջ
 Եւ իմ կոկորդը սեղմող հեղձուկը
 հողերը ցնցող ահեղ մի ունոց...

1993 թ.

*
* *

ՍԳԵՐԳ

Ինձ համար միշտ կենդանի
ՍԱՐՕ ՍԱՐԴԱՐԵԱՆԻՆ

Պիտի էլենս դու իր գոյնն ու ուժը կորցրած օրումս
 ճգնապահերին,
 Որպէս մի տեսիլք, որպէս ուրուական փաթաթուես
 մտքիս փշաքաղտածքին,
 Կամենամ հրել գաղափարը քո, կամենամ վանել
 իրապատկերդ,
 Չկարողանամ: Քանզի չլինելդ՝ յարարերական,
 ինձ համար սուտ է,
 Ու մեծ գաղտնիք է՝ հաստ ու անթափանց
 սգաշորի մէջ...
 Կանգնած տիղմերում ասանդ շուրջը սփռուած
 ճահճի,
 Յանկանամ տեսնել լուսաճեղքերը չբացայայտուած
 քո մեծ գաղտնիքի,
 Զառակներ խաչող մեր ժամանակի ակնաքիթերում
 որոնեմ հաւատ,
 Չգտնեմ, քանզի խառնածխորում վեհանիստերի
 Կեղծ արքաները անուտ են հատում ստուած
 մտքերին քիչ ընթացք տալու...
 Ու որքս պիտի անէ ծքներ հագնի, սզերգս
 դառնայ վայրի կոնչոց,
 Եւ չգտնելով հանգրուան մարմնի՝ փնտրտութեան
 քարասաններում թափառականի
 Տիեզերական արդարութիւնը որոնեմ արդէն
 օտար ափերում,
 Չգտնեմ: Ռարձեալ բեկեալ քայլես, ինձ բերեն քեզ մօտ
 Ու... քեզ մօտ միայն քիչ հանգստանան անդարձ
 ցանցուտուած միտք ու մարմինս

1993 թ.

Վերջակէտ արդէն: Այս անգամ արդէն
շատ կարեւոր է՝ ով է դնողը...
Համոզմունքները պտույտ են գործում
ստանցքների շուրջ,
չեն գծում սակայն ոչ մի ուղեծիր...
Հաստը գրում լոկ փոքրատառով՝
խրում է հողի հատիկների մէջ,
որը կազմուած է միայն արիւնից...
Ժամանակները որձաքարերից
տներ են քանդում մինչ հիմքերի հիմք
փնտռելով արմատ,
որ առանց դատի հանեն կախաղան...

...Մի տուն ծուարել իմ արցունքի մէջ,
լողում է փոած առագաստը սև
ու չի կնում ափ.
որքան էլ բզիկ-բզիկ է արուած
մարմինը նրա աջ ու ձախ կողմից
կանգնած է մնում՝
սաստիկ կորացած եզրագծերը
դարձնելով զիկզակ
որպէս հողմերում թրծուած ժպտեր,
որ չեն ենթարկում միջանցիկ քամու...

1993 թ.

Լքեալների չու: Ես մասնիկ նրա:
Չի էլ երեսում սահմանը եզրագծերի:
Ես ժամանակի այլասէր մասնիկ,
դասափետումի պահերի մէջ իմ չարդարացուած...
Ես որքան էլ ինձ առաջ են մղում,
ԼՈՏՍԸ վանում է ինձնից ետ ու ետ,
Այնպէս է թում, թէ իմ հետքերով
միշտ դեզերում է
գոցուած ՄԵՄ ԴՌԱՆ գաղտնիքը խարդախ,
ու վախենում եմ,
թէ մի օր ինձնից առաջ կ'ընկնի
ու խարոյկներին կը հանի արդէն
մտնեալ մարմինս իր էութեան մէջ
նրան նետելով մութ անյայտութիւն՝
այնպէս էլ ԼՈՏՍԻՍ համը տեսնելու:

1993 թ.

Չեմ գալու,
քո տաք օրերի հնոցների մէջ
չի փոխուելու ոչինչ,
հանդիսութիւններիդ շքանքներում
չես մտաբերելու
ո՛չ հարցերի հեղեղներից
տամկացած աչքերս,
ո՛չ սիրոյ վառքերից շիկացած թառերս...


Պատուհանիդ քսուող անձրևի կաթիլների
վնգատոցի մէջ
ինձ յիշեցնող ոչինչ չես յայտնաբերելու,
անցած եւ մոռացման օրէնքներին
չենթարկուող քոյոր սէրներիդ մէջ
չեմ փայլատակելու երբեւէ,
դու սահելու ես իմ անուան կողքով
որպէս նրա հետ երբեւէ
շփման եզր շունչեցած մէկը...

Ռեղնած տերեւների եւ հանգած կրքերի
հասասարակչութեան մէջ
Կարկասիելու է մէկը՝
շարունակելով կիսատ մնացած
արձանիդ կերտումը՝
այն հասցնելով անիրական կատարելիութեան:
Ուշ աշնան կիսամերկ ծառերի սվաւոցը
որպէս մեղեդի է դրուելու շքեղ արձանիդ շուրթերին,
եւ նա երջանիկ խաբուածութեան մէջ
պարելու է իր վերջին տանգոն
արձանիդ հետ...

Չեմ գալու,
եւ... որերորդն եմ լինելու ես
իմ այս երջանիկ խաբուածութեան մէջ:

1994 թ.

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐԵԱՆ



ԸՆԴԳԾՈՒՄՆԵՐ...

Վազգէն Ծուլանեանի այնքան սպասուած ձեռագիրներուն տպագրութիւնը կրնանք մեծ մասամբ իրագործուած համարել այսօր: Ձեռագիր միւս ծրարներուն մէջ կան էջեր, որոնք գրականութեան հետ շատ աղերս չունին, իսկ գրականօրէն ամէնէն երկարաշունչն ու շահեկանը «Օրագիր 11» անունով կեցրուած տետրակին վերջին բաժինն է, որուն ակնարկելով հեղինակը կը գրէ 14 Մարտ 1939 թուակիր յառաջաբանին մէջ.

«Յունուար քսանինը թուակիր էջին յաջորդող ընդարձակ գրութիւնը՝ Շահունուրի գրականութեան շուրջ՝ վերածշակուած ձեւի մը տակ գոյութիւն ունի Մարտ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը անունով ու կը կազմէ 144 էջոց տետրակ մը, տասնինը գլուխներու բաժնուած: Այս վերջին աշխատանքը պիտի ջանամ որեւէ ձեւով հրատարակել»:

144 էջ հաշուող եւ տասնինը գլուխներու բաժնուած այդ վերամշակուած աշխատանքը, զոր որեւէ ձեւով կ'ուզէր հրատարակել տարաբախտ հեղինակը, ողջուցը մնաց ձեռագիր վիճակին մէջ եւ, ինչպէս ըսուեցաւ անգամ մը, հրատարակուեցաւ իր ձեւակերպած բաղձաճքէն ուղիղ կէս դար ետք, 1989ին, Երեսանի «Նորք» ամսագիրի էջերուն, «Ամսագրային տարբերակ»ով, այսինքն՝ բառ մը, տող մը, պարբերութիւն մը, հատուած մը, էջ մը, էջերու ամբողջ գումար մը յապատելու պայմաններուն մէջ:

«Ամսագրային տարբերակ»ը լաւ պատրուակ մըն է հարկաւ պատասխանատուութեան խուսափելու համար, բայց այդ չքմեղանքը կրնար թերեւս ընդունելի ըլլալ ողջ հեղինակի մը պարագային, «լռուած» բաժինները յաւելուածական լրացումներու ու բիրտեղացումներու նպատակադրումով, մինչ այդ հնարաորութիւններէն ընդմիջտ գրկուած հեղինակի մը պարագային խուսափողական որեւէ վերաբերում չի կրնար մեղմացուցիչ դէպք յանցանած հանդիսանալ: Կէս դար ու անելի ժամանակ արաջ մտած գրագէտի մը գործին հանդէպ տարբերակային այս կեցրուածքը արդար կեցրուածք չէ բնաւ:

«Բազին» մերժելով կը մերժէ մօտեցումի այդ եղանակը, ի նկատի ունենալով մանատանդ այն հանգամանքը, որ երկի մը ամբողջին տեղ տալէ ետք գրական ոչ մէկ սահմանադրութիւնը կ'արգիլէ անընդունելի համարուած կարծիքներուն դէմ հանել մեր կարծիքը, առանկագոյն խստութեամբ դատելով մինչեւ անգամ թող տրուած արտայայտչական անբարեկիրք եղանակները:

Օրինակ, գրական բարոյականը այսօր թոյլ չի տար մերկայարանոց որակումներով վարուիլ դիմացի անձին ու գաղափարներուն հետ եւ կիրքի մթնոլորտին մէջ ջանալ հաստատել մեր ճշմարտութիւնը: Երեսնական թուականներուն հրապարակ եկած Ծահնորները, Շուշանեանները եւ ասոնց սերնդակիցները անպատշաճ այդ տարրերով վիրատրեցին իրենց հրապարակագրական լեզուն, որ հագիւ թէ հետեորդներ ունեցաւ հետագայ տասնամեակներուն:

Ցաւ է հաստատել, որ ընելիքներու իր հարստութեան վստահելու փոխարէն, Շուշանեան իր դատած հերոսը գերազանցող չափով մը «շաղ տուած» է անբարեկիրք որակումներ, «որոնք կիրքը կ'արտայայտեն, բայց մտածումը չեն զօրացներ», ինչպէս պիտի ըսէր Օշական:

Գրականութեան պատմութեան համար յիշեցնել պէտք է, որ Ծահնորի անձին ու գրականութեան ուսումնասիրութեան նուիրուած Շուշանեանի էջերը հոս օգտագործուած խորագիրը չունին, այլ, ինչպէս ըսուեցաւ վերը, պարզապէս մաս կը կազմեն «Օրագիր 11» անուն տետրակի մը եւ իբրեւ թուական ունին «Յունուար քսանհինգ»: Բայց որովհետեւ երկու տարբերակները ըստ էութեան կատուցուած են նոյն հենքին վրայ, անպատեհ չհամարուեցաւ երկրորդին խորագիրով ներկայացնել նաեւ առաջին տարբերակը:

Ընդգծել պէտք է միայն, որ խնդրոյ արարկայ գրութեան առանցքային բաժինները այնքան Ծահնորին չեն վերաբերիր, որքան կը վերաբերին Ծահնորի առիթով յուզուած հարցերուն լուսաբանման...

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՄԱՐԴ ՄԸ, ՈՐ ԱՐԱՐԱՏ ՉՈՒՆԻ ԻՐ
ՀՈԳԻՈՅՆ ԻՈՐԸ

Յունուար քսանը ինը

Մի է մեղաւոր, եթէ այժմ, այս որոտընդոտ օրերուն, հեղգ եւ իր ցոփութեան ու յղփանքին խորը լեղապատառ քաղքենիութիւնը ստիպուած է բարեւի կենալ սակաւատիրական իշխանութեանց առջեւ, որ չեն վարանիր անողոք ցրտութեամբ մը կարգ մը դասեր նետել անոր գունատ երեսին:

Այդ դասերէն մէկուն քաջ ծանօթ ենք մենք,— մենք՝ որ յեղափոխութիւնը սիրեցինք եւ որ զայն այժմ կարմիր դրօշակի մը պէս կ'ուզենք բարձրացնել քաղաքներուն ու անոնց աշտարակներուն վրայ, մայր-եկեղեցիներուն ու անոնց շուրջ փորուած խրրամներուն վրայ, որ զայն կը շարունակենք սիրել, ճիշդ այն պատճառաւ, որ զէջ է ժամանակը Ու հոգւոյ արութեան հետ՝ նաեւ արու հաւատարմութիւն մը հարկ է, որպէսզի մեր մարմիններուն խորն իսկ իր սեւ իշխանութիւնը չհաստատէ բռնութիւն մը, որ գործիքը չէ ազատութեան, այլ՝ կռուանը յետադիմութեան: Մենք՝ որ երիտասարդութեամբ կը քայլենք դեռ կեանքի ճամբաներէն, հակառակ վհատութեան տիղմին, որ մեր ծունկերուն կը բարձրանայ, հակառակ վատութեան, որ ոռւտ քաղցրութեամբ մը խաղաղութեան կը հրաւիրէ մեզ: Այո՛, այդ դասերէն մէկուն քաջ ծանօթ ենք մենք,— ամէնէն հարազատ կարգախօսներէն մէկը հայ յեղափոխութեան,— խանդավառութիւնն ու անքիւն կրակը եւս, ի խնդիր գաղափարական ճուաճումներու, իրականութիւն եւս, ո՛չ միայն անհատական, այլեւ՝ հաւաքական կեանքի մէջ: Ու ազգ մը՝ որ կը կորսնցնէ հաւաքարար իր մոլեկան խանդավառութիւնը, ազգ մը՝ որուն զաւակները, սերունդ առ սերունդ չեն ելլեր պատմութեան այլքներէն, մերկ աստուածներու պէս, բարձրացնելու համար իրենց ինքնութեան ու էութեան ջահը կեանքի ամբարտակներուն ու պատնէշներուն վրայ, ազգ մը՝ որուն զաւակները կը պառկին հաճոյքին ու դիւրին ուրախութեանց մարմանդներուն մէջ՝ մէկդի վանելով բարձրաթաւ կեանքը, որ խոյանք է ու պրկում, որ յանդգնութիւն է ու սրացում, ազգ մը՝ որուն զաւակներուն Հայաստանը նիւթ է ամօթի ու ստրկանքի, ազգ չէ, այլ՝ եղկելի երամակ ու խուժան:

Արդարեւ, չկայ աւելի զօրեղ ու պայթուցիկ ուժ մը, որուն աղբիւրը չըլի, գէթ մասամբ, խանդավառութեան ենթահողերէն: Ինչ որքալի ուրացում ու ինչ փոքր, ինչ չնչին յտակատեւութիւն սա սուտ պաշտամունքը արքեանի խմաստութեան Շահնուր կոչուած հախոյազրին: Վասնզի գիտենք, թէ պատմութեան ուրիշ դատան ժամերու, ամէն անգամ որ մեր հոգիներուն պալատը, հիւսիսէն ու հարաւէն, սկսած է փուլ գալ, ուրիշ սրիկաներ, որ երբեք լիաթոք չեն շնչած շէկ հովը մեր լեռներուն, ամպերու պայթումէն յետոյ, ժպրհած են իրենց քսութիւնը սուլել անկիւններէն: Հարկ է որ մէկը բրտութեամբ պինդ բռնէ անոնց օձիքներէն ու առաջին դարձան առտուան հետ, զանոնք դուրս քաշէ իրենց որջերէն՝ ցոյց տալու համար արտոյտը, որ կը ցնցէ իր պզտիկ մարմինը, իր թաց ու նուրբ մարմինը ու վերստին սլաքի մը պէս կը խրի դէպի կապոյտն ու դէպի արեւը: Հարկ է որ մէկը լիւցնէ իրենց՝ Նազովրեցիին արի բառերը, Նազովրեցիին՝ որուն խարազանը հարկ է որ շաչ օր մը այս տխուր պարտնեւորուն հինցած մարմիններուն վրայ ու դուրս վանէ զանոնք Տիրոջը տունէն, որ մեր պանդուխտ գրականութիւնն է, որ մեր Հայաստանն է, — ոչ ապաքէն մասանեխի հատիկի չափ դոյզն հաւատքը կը բաւէ խախտելու համար լեռները:

Եթէ վայրկեան մը ձգեմ սեղանը, ուր ուղտի ռխակալ համբերութենէ մը յետոյ ահա՛ ռխակալ ուրախութեամբ մը կը գրեմ այս տողերը ու բանամ պատուհանը նորմանտական այս վեհափառ ու խրոխտ քաղաքին վրայ, հակառակ այս գիշերային ժամուն, որ կ'օծէ երկիրը, — կը տեսնեմ բարձր աշտարակներն ու սլաքները այս ժողովրդին մայր-եկեղեցիներուն: Ո՛վ որ երբեւիցէ, երկրի վրայ ապրած ժամանակը, Աստուծոյ մը գահոյքը չէ ունեցած իր հողայն խորը, ո՛վ որ իր ներքին աչքերովը չէ յաջողած տեսնել մայր-եկեղեցիի մը ոսկեդրուագ ու մեծաշառալ սլաքը, կը զգա՞՞ միթէ ինչ որ, հպարտութենէ դողալով, կը գրեմ այժմ: Քանի՛ դարեր ու քանի՛ դարեր ապառաժուտ ու խտամբեր լեռներէ, սառնակոծեալ տարածութիւններէ, անտառներու խորունկէն ու մոնկոյեան տափերէ մարդկային բազմութիւններ, իրենց աշխարհակալ ցանկութիւններուն, անթութիւններուն ու անսանձելի ախորժակներուն եւ իրենց որոտագոտ երիտասարդութեան հետ սուրբալով արշաւած են՝ յանդերու համար հոս, այս պարբրտ ու յղի դաշտերուն մէջ: Ու ինչն է, որ իրենց կամշոտ, խոպան, արիւնարբու հոգիներուն խորունկէն կրցած է խլել այսուհանդերձ վէժ առ վէժ ու խոյակ առ խոյակ այս գրեթէ ժանկազարդ, ապակեայ, նրբօրէն դարեւոր ու անխմանալի տեսիլը, — այս մայր-եկեղեցին: Աղտեղի հեզութիւնը գուցէ, այլեւս անկարող ու պակուցեալ ծերերու, որ իրենց խշտիկին վրայ կ'ընեն, թուլութեան ժամուն, այլ որ սողուն գարշանքով մը կը յանդերին ծաղրի առնել ինչ

որ կը խոյանայ ու ինչ որ կ'աշտարակուի, ինչ որ մեծաշունդ աղմուկներով կը թաւալի ու ինչ որ խրոխտութեամբ բաշ կը թօթուէ, — կեանքի պզտիկ ու մեծ դաւերուն, շնչին մարդոց լարծուն ժպտներուն ու բոլոր վհատութեանց դէմ:

Հարկ է որ վերջապէս մէկը՝ իրենց մէջքի թոյլ գօտիներէն ցնցելով այս թզուկները, որոնց ակնարկը երբեք պիտի կարենայ մատչիլ դազաթներու կայծակներուն, որոնց հեզութիւնը՝ երբ կը հնչէ ժամը մեծ որոտներուն ու մեծ փոթորիկներուն, կը նմանի տանը մուկին եւ կոյուղիի առնէտին եւ անոնց պէս կը պահուրտի աղտոտ ծակի մը մէջ, — բերէ այս թզուկները հոս, մարդոց զարմանալի հաւատքին ու խանդավառութեան այս երկնակարկառ պատուանդաններուն առջեւ, որպէսզի զգան ամբողջ կայերելի ու նողկալի անզօրութիւնը իրենց իգացեալ ծաղրին:

Երբ իրիկունը կը պազնէ իր ծիրանի համբոյրով այս դերազանց կոթողը մարդուն յաւերժական խոյանքին ու երբ ակնարկս կը ջանամ պարսատիկի քարի մը պէս նետել իր ճոյլ սլաքներուն, որ կը բողբոջին ու պողպատեայ ծաղիկներ, որ կը բոցավառին՝ ինչպէս թանկագին քարեր, կրնամ չյիշել միթէ միջնադարեան այն զմայելի բանուոր-արուեստագէտները, որ ուրիշ մեծութիւն չէին գիտեր, բացի իրենց ներքին մայր-եկեղեցիէն, որ ամէն օր քիչ մը աւելի կը սլանար երկինք: Հեզութիւն ու ծաղր, այդ հինաւուրց փողոցներուն մէջ, իրիկունը, խոնջ երթը այս մարդուն, որ օրն ի բուն յիկեց ու տաշեց քարը, որ քանի մը տարի յետոյ պիտի աւարտէ ինչ որ չէր կրցած իր արարչական լրումին տանիլ իր հայրը, ինչ որ չէր կրցած պայծառացնել իր հօրը հայրը: Անիխանական ու օրինամերժ, այլ խանդավառութեամբ հրկիզեալ արու մարդիկ տեսած եմ այս մայր-եկեղեցիին միտամանակ վիթ-խարի ու սրսփուն, սարսուռն պատերուն առջեւ: Մարդուն ներքին խոյանքին, մարդուն ներքին արարչութեան, մարդուն ներքին պայծառութեան առջեւ գլխարկ կը հանէ փարիպան էն ծաղրածու եւ էն եօթը պորտով հաւատուրաց ստահակն իսկ: Այսպէս է մարդուն քաղաքակրթութիւնը հոս, համակ կրակ ու համակ արարչական խանդավառութիւն: Ու այսպէս էր նաեւ մեր սրբատաշ բարձրաւանդակին, մեր մեղմածիծաղ այգիներուն, մեր շէններուն, մեր աւաններուն, մեր ապալեր ճամբաներուն եզերքը՝ հրաշալի ցայտաղբիւրներու պէս, ապերախտ ժամանակներէ բարձրացող Զուարթնոցներու, Ապուղամբնց Ս. Գրիգորներու շուքերուն տակ: Վասնզի ինչ որ խանդավառութիւնը իր լափիզող բոցերով կը մաքրէ, կը լուայ կեանքի աղտերէն՝ կը տոկայ ժամանակին ու քանի՞ն Շահնուրներու լարծուն ծաղրերուն:

Ո՛ւր է այդ Լուսաւորչի, ո՛ւր է զօրեղ թաթը սեւէ դափան, այլ արուեստամեծար սպարապետի, որ այս վաղաժամ թօշնած լակոտներուն ճիտէն բռնէ ու նետէ մեր երկնամերձ լեռներուն

առջև, որպէսզի գէթ ըրպէ մը շնչեն հովը Հայոց Աշխարհին, որ դարեր առաջ կը համբուրէր խոսքի գէտերը Սիւնեաց, Գուգարաց, Բագրատունեաց իշխաններուն, որ այժմ կը շարունակէ գուցէ պազնել ծոծրակները մեր նորատի աղջիկներուն: Այլապէս կարելի՞ է միթէ, որ մաքրուին իրենց թոքերը դարերու դիզած աղտերէն: Այլապէս կարելի՞ է միթէ, որ իրենց նեղ կուրծքերուն վանդակները ուռին խորին շունչովը ազատութեան:

Քանի՞ դարեր, քանի՞ դարեր Քսենոփոնեան գիւղերու խորունկէն, Արցախի կիրճերու մթին ճեղքերէն, Արարատի այրեցեալ փէշերէն մինչեւ առաւելագոյն հարաւ, ուր արքայական Եփրատը կը թրջէր երկիրը՝ շինականներ ելան առտուն, հերկելու համար երկիրը, զօրականներ արիւն թափեցին՝ խափանելու համար յորդակոհակ ու բարբարոս էջըր ասիական վոհմակներուն: Քանի՞ դարեր, քանի՞ դարեր արհեստաւորներ ու ճարտարապետներ իրենց հոգիներուն խորը տուայտանքով որոնեցին ոսկի հանքերը սրբացեալ քարերուն, — ու ողջ ազգը Հայոց միթին խանդավառութեամբ մը քանաց այդ ապերախտ երկրին ընդերքներէն իր գեղեցկութիւնը խլել, որպէսզի օր մը, պատմութեան գիշերէն ելլէր վերջապէս, ինչպէս հրեղէն սիւնը կ'ելլէ՝ մոլոր ժողովրդի մը ճակատագրին առջև, ելլէր ինչպէս մեր մեծ Լեռը կ'ելլէ Շիրակի բեղուն կուրծքէն ու կը խրի երկինք, ելլէր՝ ինչպէս մեծ երգերը միայն կ'ելլեն՝ մեծ որոտումներով, հազազումներով, մեր զայրոյթէ մռնչելով ու մերթ քաղցր սոյլի մը պէս վազելով, սարերու չփակներն ի վար, ելլէր, ինչպէս մեծ երգերը միայն կ'ելլեն՝ հաւաքելով ուշուք առ ուշուք ողջ աստղերը լուրթ երկնքին, կապելով շար ի շար բոլոր ծաղիկները ողջ Աշխարհին Հայոց՝ հովտաց շուշաններէն մինչեւ Աղբրանց արիւնը, կաթիլ առ կաթիլ ըմպելով ցօղը այգուն, որ շամանդազ կը կապէ կապոյտ ծործորներուն մէջ, հոսկէ սոյլ մը սրինդի ու անդիէն կոհակ մը անդունքի, մազադաթեայ մատեաններէ ծածուկ ու անբանածեւելի գիտութիւնը յաւերժական բանին Աշխարհին Հայոց ու ժիր գեղջուկի մը շրթներէն՝ ամանակն ու ընիկ առգանութիւնը թորգոմեան լեզուին, — որպէսզի ելլէր կ'ըսեմ, ինչպէս մեծ երգերը միայն կ'ելլեն անմահ քաղցրութեամբ ու մեծ տուայտանքով, բեւեռելով ինչ որ սահուն է ու վազանցիկ, քանդակելով ինչ որ հարկ է քամահրէ ժամանակը, մատչելով յաւիտենութեան ու ընդգոգելով տիեզերական տառապանքը, որ մարդունը պիտի ըլլայ միշտ, ելլէր՝ ինչպէս մայր-եկեղեցի, քաղաքի մը հրապարակին վրայ, լուսացնցուղ գմբէթներով ու յաւերժ լուսաւորեալ Արդ, այսպէս է Նարեկացին, մեր մայր-եկեղեցին, — Հայոց Աշխարհին կոծկոծեալ հորիզոններուն գէտ:

— Ընդ սկզբան բերմանս Լուսոյ զողորմութիւն զո ծագեա, ընդ ելից արեւուն արդարութեան արեգակնդ ի յանձկութիւնս սրտիս մտցէ. ճառագայթ զո փառացդ ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի-

Մի լիցի ինձ երկնել եւ ոչ ծնանել, ընթանալ եւ ոչ հասանել, ինձ ձայնել եւ քեզ ոչ լսել, գոհել եւ ոչ ճենճերել:

Ու հոս է, որ կը սկսի առաջին սրբապղծութիւնը այս լիցի ու տխրի՞ց պարոնին: Այս Սկիւտարի աղտոտ ողբին՝ որ մեծաւ դժուարութեամբ կը մագցի վերջապէս մեր գլուխը, ծծելու համար մեր քաղցր արիւնը: Ու ներքինի իր շփացած ձայնովը կը սկսի խօսիլ, ինչպէս ողբիները միայն կրնան խօսիլ, լռելու համար, թէ մեծ ու չնայխարհիկ ողբի մըն է, շաղակրասա ու գիտուն ողբի մը Զարգացած ու տրամարանող միջատ մը:

Եզակի ողբի մը վերջապէս...

Ինչպէ՛ս եղաւ, որ լռեցինք այն ատեն, ինչպէ՛ս եղաւ, որ մեզմէ մէկը չճգմեց այս աղտոտի միջատը անմիջապէս: Ըսեմ պիտի ձեզի պատճառը Ո՛չ, մեր արիւնը այնքան աժան չէր, ո՛չ, մեր վեհանձնութիւնը այնքան անմիտ չէր լռութիւնը գէնք համարելու համար: Այլ իրապէս դաժան էին ժամանակները ու դաժան են ժամանակները միշտ: Ու միշտ երիտասարդ ու շէն էր մեր խանգալառութիւնը: Կեանքի արարչագործ քուրային մէջ կը մաքրուի, կ'ըսէ՛ր դուն. զաւակը հօրը հեղինակութիւնը կասկածի տակ դնելով է, որ կ'որոնէ ինքզինքը, կ'ըսէ՛ի ես, կը բողբօղի, կը պաճառանայ. տառապանքը կը գեղեցկացնէ՛ գայն, կ'ըսէ՛ր ուրիշ մը: Աղուոր տաղանդ մը ունի, կ'ըսէ՛ին իր առտնին բարեկամները: Մեր արիւնէն է, մեր սերունդէն, ի վերջոյ մեր արդարութիւնը կը լուսաւորէ՛ գայն, — կ'ըսէ՛ի ես, ես՝ որ պզտիկ հպարտութիւն մը ունիմ, առաջին օրէն իսկ զգացած ըլլալու, իր տգեղ ճակատին ետեւ ուրացողի գեղին իմացականութիւնը, — գոհի՛ր հիւժախտաւոր լոյս մը:

Այլ հոս է, որ կը սկսի իր առաջին սրբապղծութիւնը ու մեր առաջին յանցաւոր մեղսակցութիւնը: Ի՛նչ փոյթ, թէ հանդիսաւոր պարոններ պիտի փսփային, թէ նախանձը կը սպրդի կեղծաւորութեամբ մեր տողերուն միջեւ: Ի՛նչ փոյթ, թէ ինք քիչ մը կանուխ պիտի սկսէր գոհի այն գարշելի կատակերգութիւնը, որ տասը տարիէ ի վեր կը խաղայ, անօրինակ աներեսութեամբ մը: Հարկ էր ընտրել Նարեկացիին ու այս ողբին միջեւ: Հարկ էր ընտրել:

Ու ինչ կը նշանակէ վերջապէս այս անտանելի խեղկատակութիւնը: Նստած, նո՛յն սեղանին առջեւ նո՛յն գիշերուան խորը, ուսերս ազատ կը գգամ սուտ համբաւի ու կեղծ փառքերու ամբողջ բեռէն, երբ ժամը գայ հաշուետուութեան, հոգւոյս խորին պարզութեամբ կը գրեմ այս տողերը, կրնամ ելի է՛ն խստակնճիւր գրադատին առջեւ կամ ժպտիլ է՛ն բարի հայ մարդուն ու ըսել, — ահա ինչ որ կրցայ խել հոգիէս, հանոյ թուի քեզի կամ ոչ, այս է ամբողջ ունեցածս: Եթէ չկրցայ աւելի գեղեցկութեամբ արտայայտել, ինչ որ արիւնս հաւատարմութեամբ կը կրէր, ինչ որ կը շողար աչքերուս խորը, ինչ որ կը թնդար քունքերուս մէջ, — առաջին

վիրաւորը եւ եմ: Ուրիշները պիտի գան, ուրիշները պիտի ելլեն՝ աւելի արագ ու աւելի պայծառ: Կարեւորը այն է, որ յաղթանակի փողերը չլռեն, կարեւորը այն է, որ մեծ երգը շարունակէ գո- ուալ պանդխտութեան այս գէշ տարիներուն: Առաջինը ան է, թէ ասիկա, փոյթն չէ: Կ'ուզեմ որ հաւատաս միայն, թէ խոյանքս արդար էր ու խանդավառութիւնս բոքր: Ու կեցցէ՛ մեր երգը:

Այլ տեսէք կլափը այս ազտոտ պարոնին: Տասը տարիէ ի վեր ռամկավար բոլոր տանիքներէն շուրջաօրէն կը սուլէ, թէ ինք է առաջինը: Ու ահա հայելին մարդուն: Ու ահա իր մեղքը: Մարդ մը՝ որ կ'ամչնայ իր դրօշակէն, մարդ մը՝ որ չ'ուզեր թեւանցուկ անցնիլ՝ իր մօրը հետ կեանքի ճամբաներէն: Մարդ մը՝ որ կը կե- նայ հրապարակին վրայ, արեւելեան մունետիկի պազշոտ շարժում- ներով, — մայրս սգեղ էր, — կ'ըսէ գարշ ծիծաղով մը, — մայրս գիշերը հիւր կ'ընդունէր իր մահճակային մէջ, — կ'ըսէ նրբացնելով հեգնու- թիւնը, — մայրս անմիտ ալ էր, — կը յարէ ծռելով ակնարկը: Այլ ես գեղեցիկ եմ, ես առաջին եմ ու ես իմաստութիւնն իսկ եմ:

Ո՛հ, լոկ ողիւ մըն ես: Ու այսքան միայն: Ու եթէ ցարդ ո՛չ ոք վերջնական զայրոյթով մը չէ՛ ճգմած աղտեղի գոյութիւնդ, որովհետեւ գէշ կը հոտիս: Կը միշտ թրակիոյ մեր շէն քաղաքին իրիկունները: Մէյտանին վրայ, ամէն կիրակմուտքի, սինլքոր պզտիկ լակոտ մը, ձեռքերը գրպանները կը կենար, վերամբարձ ակնարկ մը կը ձգէր վրանիս ու երեք կանգուն հեռուէն կոլոզ մը թուք, արուեստով ու ճարտարութեամբ՝ կը նետէր մեր երեսներուն: Այդ ալ իր գուարճութիւնն էր, իր հոգւով աղքատ տղու ուրախութիւնը:

— Ի՛նչ կ'ընաս նէ դուն ալ թուք...

Կ'ըսէր գէշ քմծիծաղով մը կոլոզ մը տրամաբանական, ճարտար, արագարարութ թուք, նշանաու թուք: Այլ ո՛չ ոք չէր վիջեր այդ- պէս թքնել՝ վանագի մեր պզտիկ հանրապետութեան մէջ, ուր հա- րուստ կայուածատէրին եւ երկրարգործական բանուորին զաւակ- ները կ'ընդունէին նոյն օրէնքները, մեր կոխները իրենց արդար գէնքերն ու իրենց հպարտութիւնը ունէին, արու հարուածին դէմ արու հարուած ու բարեկամութեան փոխան եղբայրութիւն, այս էր կարգը: Այդ արչաւաստը թուքը մեր օրէնքը չէր: Օր մը սակայն, երբ լակոտը ստուգապէս չափը անցուցած էր, մեզմէ մէկը խոյացաւ վրան, ճիտէն բռնեց, արքայական կլոց մը տուաւ յետոյքին ու ընդմիջտ վանեց զայն մեր շրջանակէն: Յայնժամ միայն իրապէս զգացինք այդ խեղճ էակին ամբողջ տգեղութիւնը: Փոշիին մէջ նստաւ ու մեծածայն սկսաւ հեկեկալ: Ու կը խօսէր ճիշդ քու լիզուդ: Թո՛ղ դուք եւս թքնէիք, կ'ըսէր, եթէ կրնաիք դուք ալ չորս կանգուն հեռուէն թող լորճուք արձակէիք, կ'ըսէր: Իր տրամա- բանութիւնը թուքի տրամաբանութիւն մըն էր: Իր թուքի արդա- րութիւնը չէր ըմբռներ բարերար ու վրէժխնդիր կլոցը: Ո՛վ էր մեղաւոր, եթէ լկտի, գէշ, ապերասան տղայ մըն էր ու եթէ ո՛չ

ոք կը հասկնար թուքի այդ լեզուն: Այլ իր սպականեալ ու հիւանդ ուղեղը կը հպատակէր տրամաբանութեան մը: Ու չէր ուզեր ըմբռնել, թէ անոնք՝ որ առողջ էին, անոնք՝ որոնց արիւնը կը թնդար կեանքին ուրախութեամբ, անոնք՝ որ երբեմն բարձր խանդավառութեան պահերու կրնային գլխիվայր քալել, շրջելու համար կարգն ու օրէնքը իրենց քաղցրին հայրերուն, չէին ուզեր ու չէին գիշեր ընդունիլ իր ողբայի թղուկի կեանքի փիլիսոփայութիւնը, չէին ուզեր ու չէին գիշեր ընդունիլ կուռի նոյն եղանակներն ու նոյն նողկալի գէնքերը:

Այդպէս է նաեւ այս պարոնը իր ամբարտաւան թշուառութեան խորէն, հաւաքելով իր բունոցի, պարսպ ու վարձու սենեակներու եւ թրիքի պատմութիւնները, կը հասնի հրապարակ, մեր մայր-եկեղեցիին առջեւ: Ու յանդգնութեամբ մը, որ ախտաւոր սպիտակութեամբ լոկ կը բացատրուի, շողոմ ձայնով մը կ'ըսէ,— թքեր եմ: Ու երբ ո՛չ ոք կը գիշի պատասխանել իրեն,— ու տասը տարի է, որ կը տեւէ այս պօզալի խեղկատակութիւնը, մեծ մտածողի ու նմանօրինակ արուեստագէտի հովեր կ'առնէ ու կողողովիզ անձնապատանութեամբ մը կ'ելլէ բոլոր ռամկավար տանիքներուն վրայ,— տեսէ՛ք կ'ըսէ, մարդ չի համարձակիր պատասխանել ինձ, Զաքարիայի պէս պապանձած են բոլորը: Ի՞նչ է արդէն այս ժողովուրդը որ, տակա՛նք: Ի՞նչ է արդէն իր արուեստ կոչուածը որ, երկնս ոչնչութիւն: Դեռ երջանիկ թո՛ղ համարի ինքզինքը, որ կը գիշիմ իր լեզուով գիշեր անարգել: Ու Փարիզէն իսկ, իրեն նման ուրիշ ո՞րի մը, Ասպազայ կոչուած թերթի մը մէջ, որ տասը տարիէ ի վեր չի յաջողիր գէթ հայերէնով խմբագրել իր յօդուածները, ուր մտքի սնանկութիւնը միշտ համազօր է եղած իմաստութեան, ուր իրական կեանքի եւ երիտասարդութեան բացակայութիւնը՝ խոհեմութեան, լրջութեան ու զգաստութեան պաշտօնական հանդերձներուն կ'ապաւինի, կեղծ գայթակղութեամբ մը կ'ըսէ.— Ձեռն կրնար պատասխանել Շահնուրի յօդուածներուն ու կը հայտնեն:

Ներողութիւն, հէ՛ք, խաղամոլ քարեկամ, ներողութիւն, բանկալի ո՞րի,— եթէ իրաւ է պնդումդ, եթէ իրաւ է՝ որ այս ժողովրդին երգը, որ դարերէ ի վեր տրամութեամբ կը վազէ լեռնէ լեռ ու կ'իջնէ մինչեւ մեր պանդխտութեան կայքերը, արժանի չէ պաշտպանութեան, եթէ իրաւ է՝ որ այլեւ ո՛չ ոք կայ կարենալ արդարութեամբ ճգմելու համար հիւանդ ցալլեօրջի մը, եթէ իրաւ է՝ որ այլեւ Շահնուրն է միայն մեր արուեստին ու իմաստութեան սահմանը, Շահնուրն է մեր հայրենիքը ու մեր գրականութեան Հայաստանը,— ո՛ր սեւ օրին կը սպասես փակելու համար այս աղքատ կրպակդ: Եթէ իրապէս կը հաւատաս, թէ այս ժողովուրդը ուրիշ արդարութիւն եւ ուրիշ մեծութիւն չունի իր հոգւոյն խորը, ուրիշ երգ չունի իր շրթներուն վրայ եւ ոչ ալ ուրիշ իմաստութիւն, ուրիշ բարձունք, ուրիշ բանաստեղծութիւն, ո՛ր սեւ օրին կը սպա-

սես քուրճ հազնեիու եւ սգալու համար, երիցս հոսպիտ ու պոռնկատան բարազան: Միթէ իրապէ՞ս այդ աստիճան մերկ ու աղկաղկ է հայ ժողովրդի հոգին, որպէսզի Շահնուրը ըլլայ մեր փարոսը, մեր իմացականութիւնն ու մեր խիղճը:

Ի՞նչ ծաղր ու ի՞նչ հեզնութիւն: Հագիւ իր բարակ սրունքներուն վրայ ոտքի կենալու չափ մտաւոր սնունդ հաւաքած ասդի-էն-անդիէն, տղայ մը կ'ելլէ կեանքի դո՛կհերէն, դատելու համար գրականութեան հակայ մը Ու որովհետեւ ոչ ոք իրեն կը բացատրէ, թէ գազաթնի կան, որոնց կարելի է միայն նայի երկուդած ակնարկով մը, ոչ ոք խիստ ծայնով մը կարգի կը հրաւիրէ զինքը՝ այս պզտիկ պարոնը աստիճանաբար կը լրբանայ Վասնզի չի գիտեր, թէ յաճախ ժողովուրդները կը պրկուին տաժանելի ճիգերով, կը գալարուին ներքին ցաւերով, դարերո՛վ լոյսը կը պաղատին բարձունքներուն, կը ծառանան ազնիւ ըմբոստութիւններով, կը տքնին երկրի ապերախտ ակունքներուն վրայ, խորին գորովով մը կը սիրեն իրենց երգը՝ առանց կարենալ երգելու, երբեմն կը գլորին վհատութեան ու ստրկութեան վիճերուն խորն ու մերթ ալ բարձունքներու լոյսը կը խմեն, գերազանց հերոսութեամբ մը, կ'արտասուեն դարե՛ր ու դարե՛ր իրենց մատղաշ աղջիկներով ու խոնարհ սակապետութեամբ մը կը տանին դաժան բեռը զրկանքին ու երբ ժամը հասնի քաղցր ծնունդներուն, յանկարծ պատմութեան վարագոյրը կը պատուի ու կոհակներուն մէջէն կը բարձրանայ թագաւորը, կը ծնի նոր արքան, ու այդ արքան կը կոչուի Փրիգոր Նարեկացի, պայծառ մոնազն, աստուածարեալ ճգնաւոր, որոտուն պուես ու որդի աստուածներու: Ու այդ արքան կրնայ կոչուիլ դեռ Սողոմոն Կուսինացի, Կոմիտաս վարդապետ հայոց եկեղեցւոյ, ճարտարապետ հայոց նոր հողին ու սրբազան սոխակ:

Այս պզտիկ պարոնը աստիճանաբար կը լրբանայ ու իր գարշ ծիծաղը կը սկսի նեղել մեզ, վասնզի չի գիտեր նաեւ, թէ ամէն ոք արուեստի երկերուն կրնայ մօտենալ միայն իր կարողութեանց գումարով: Վասնզի չի գիտեր, թէ յաճախ դժուարին վերելք մըն է գլուխ-գործոցի մը իմացութիւնը: Գրադատ մը պարզութեամբ կ'ըսէր, թէ կարենալ իւրացնելու համար անմեկնելի գեղեցկութիւնը հարկ է հանձարակից ըլլալ բանաստեղծին հետ: Այլ որքա՛ն խորհրդաւոր է ու արարչական այս երեւոյթը, եթէ հոգիդ պայծառութիւն չունի բնաւ, եթէ մարմինդ բնակարան է աղտոյի կրքերու եւ լպիրշ գզայնութեանց՝ կրնա՞ս միթէ բարձրանալ արուեստագէտին հետ բարձունքը յաւերժական գեղեցկութեան լեռան: Եթէ նոյնիսկ կարենաս հասնիլ՝ սրբազան գաւթին, կը կարծե՞ս, որ կը բաւէ բախել դուռը, որպէսզի բացուին հրաշահմայ աչքերուդ առջև բոլոր արեւածաղները: Մեծ ստեղծագործութեանց կրնաս մերձենալ էութեանդ այն մասով միայն, որ իրապէս կը բացավառի մեծութեան հրեհներէն, մեծ ստեղծագործութեանց կրնաս

մատչելի միայն այն չափով, որչափով որ մեծ ես ինքզուրջս Ամէն ոք կեանքէն կը ստանայ ինչ որ կ'արտօնեն իր ներքին, ծածուկ, իր արարչական կարողութիւնները: Յաճախ քու մասներուդ կախարդանքէն կախում ունի գերագոյն ներդաշնակութիւնը, որ կրնաս խլել գաշնակի մը ստեղնաշարներէն Պեթհովենի կամ ժամն Սեպտեմբրէն Պախի լուսեղ արահետներով: Արուեստը քեզի կը պարզեւէ իմացական ու զգացական հրճուանքը, որուն արժանի ես միայն Քու կարճ կանգունովդ չէ միայն, որ կրնաս չափել հանճարը: Մեծ գազաթններու լոյսն է, որ կը լուայ ու կը տեղաւորէ քեզ ու ոչ թէ քու ակնարկդ, որ կարեւորութիւն կ'ընծայէ դազաթին: Փողոցի աղքատ, ծեր, հիւանդ մուրիկն ալ կը զգայ մայր-եկեղեցին, այլ իր կշիւը դրամի մանրութիւնն են յաճախ, որ կը ստանայ Հանճարը յաճախ կը չափէ քեզ, ցոյց կու տայ քու կշիւդ, այլ դուն գայն կրնաս զգալ միայն համաձայն քու յարաբերական պայծառութեանդ:

Ո՛վ է այս եղկելին, որ կը ժպտի ամբողջ ազգի մը դարեւոր գորովը հերքել: Ո՛վ է այս մամուկը, որ կը յանդգնի, յանուն իր բակի աղբակոյտին՝ բարձունքներու լոյսը հեզնել: Պիտի լաէ մեզի գուցէ, այս ապերասանը, թէ՛ պատասխան չէ ինչ որ գրի կ'առնեմ, թէ՛ ինք իրաւունք ունի իր իմացականութեան լոյսը ձգել է՛ն բարձր երեւոյթին վրայ իսկ: Իսկ ես կ'ընեմ իրեն, թէ թուքի տրամաբանութիւնը մերը չէ, թէ փողոցի ստահակին հետ, որուն երաժշտութիւնը պազշտ տոյն է միայն՝ Ինքնորոգ հասնանազի մասին չեն վիճիր: Փողոցի ստահակն է, որ պարտաւոր է նախ ցոյց տալ, թէ արժանի է արուեստին մկրտութիւնը ընդունելու: Թող նախ բացուի իր գէճը լոյսովը:

Դեռ պիտի լաէ մեզի գուցէ, այս ապերասանը, թէ մեր ոճը, յոյժ բարձրաթիւն է ու թէ ինք կը նախընտրէ պարզ ողջմտութիւնը: Վասնզի չի գիտիր, թէ երբ բանաստեղծութեան որոտընդոտ ուրականը կը թաւալի՝ ծաւերը կը ծռեն մեղմօրէն իրենց ծլարձակ գլուխները: Ողջմտութիւնն ու ճշգրիտ հայելը, տրամաբանութիւնն ու հասարակ իմաստութիւնը գնահատելի երեւոյթներ են Պոլսոյ շուկային մէջ: Այլ մայր-եկեղեցիները ունին իրենց ներքին գոռ տրամաբանութիւնը, ատոնք արարչագեղ սիւներն են, որ պազպաջուն կը բարձրանան լուսագոգ գմբէթներուն, ատոնք խորակներն են, որ կը քանդակուին, ինչպէս ադամանդեայ բառերը սրբազան երգի մը: Ու չկայ մեծ երգ մը, չկայ մայր-եկեղեցի մը, մարդոց կայքերուն ու պատմութեան ակօսներուն մէջ, որուն հիմերը չհանգչին խանդավառութեան ու հաւատքին լուսակերտ վէմերուն վրայ: Մարդուն ստեղծագործութեան բնական ցայտը խանդավառութիւնն է, բարձրաթաւալ քնարերգութիւնը:

Ահաւաստիկ այս է մեր պատասխանը Շահնուրի մը կարծիքը Նարեկացիին շուրջ, այնպէս՝ ինչպէս բանաձեւուած է ան, արժէք ունի միայն նոյն Շահնուրը դատելու տեսակէտէն: Իր առաջին սրբապղծութիւնը՝ իր առաջին դատաստանն էր, իր առաջին վճիռը՝ իր առաջին կշիռը: Մանրավէպ մը եւս: Գարնան օր մը, ամբարձիկ կադամախի մը տակ, տղայ մը ցոյց կու տար իր ընկերներուն Փրանսացի նկարչի մը Օտալիսքը: Նուրբ տղայ մըն էր ու իր անձին վրայ կը շողար գեղեցկութեան լոյսը աստուածային ճանաչի մը պէտ: Ու քանի՞ն մաքուր էր իր նայուածքը: Այլ իր ընկերներէն մէկը, որ կու գար անապատէն, իր խոշոր դրուիւր ծոնց նկարին վրայ ու շրթները կարծես ուռեցան քառասմբակ ցանկութենէն, — Պալտրուս պաք, պալտրուս... կ'ըսէր վաշկատուն թրքերէնով մը ու իր ծիծաղը կը թնդար: Այս ալ արուեստի երկը գնահատելու եղանակ մըն է: Ու վայել արդարեւ թրիքի պատճառով հեղինակին:

Ի՞նչ պիտի ըսէ մեզի գուցէ, այս ապերասանը, թէ իր կարծիքը եւս կրնայ անշահանդիւր ըլլալ, թէ՛ ողջ ազգի մը գորովը այսուհանդերձ բաւարար գրաւական մը չէ՛ արուեստի երկի մը մեծութեան: Թէ՛ ինք կը հաւատայ լոկ գեղեցկութեան ներգոյակ արժէքին ու իրաւունք ունի, մինակը, կենալ տիեզերքին դէմ-յանդիման ու երկիրը դիտել նոր ակնարկով մը, իսկ ես կ'ըսեմ իրեն ու ստուգել քննախնդիր ուրախութեամբ մը, թէ տունը անօթիտ մնացած հէք պարոն մըն է ինքը, իր անափ սնափառութեան հետ Տասը տարիէ ի վեր ինձ նման մէկը կը սպասէ, այս հասկատէն, որ կարենայ գէթ ուրուագիծը տալ իր կեանքի փիլիսոփայութեան, իր արուեստի քրիթորներուն, արդարացնել կարենալու համար իր վճռական, առարկութիւն չվերցնող, իր պապական կարծիքները Ո՛չ, ճշմարտութիւնը այլ է: Այս հիւանդ տղան մէկ յստակատեւութիւն միայն ունեցած է, — վստահութիւնը իր հոգւոյն արեւոյնութեան, իր ողբայի ու նողկալի ճակատագրին: Ու տասը տարիէ ի վեր ախտագին յամառութեամբ մը կը ճգնի ամէն ինչ ստորնացնել, ամէն ինչ նուաստացնել, ամէն ինչ գոհակացնել, որպէսզի քիչ մը խաղաղի իր գէշ հոգին: Վասնզի գէշ է իր աչքերուն լոյսը ու գէշ է իր ակնարկը:

Այլապէս գուցէ կեանքը ներէր իրեն ու չմերժէր իր վատը-ւէր աչքերուն՝ առաջին լոյսը անուշ խանդավառութեան: Յայնժամ հարկ պիտի չըլլար իսկ միշտնել, թէ հարիւրաւոր տարիներէ ի վեր մեր պանդուխտ ժողովուրդին զգացումները կը բարձրանան առ Նարեկացին, ինչպէս ծաղիկները կ'ելլեն ամէն գարնան փառաւորելու ու պսակելու համար յաւիտենութիւնը երկրին: Մեր կիրճերուն ու հովիտներուն խորը ինկած մենաստաններէն մինչեւ եւրոպական քաղաքներու մատուռներէն՝ ողջ ազգի մը գորովը կ'ելլէ որպէս խունկ ու բուրում դէպի Մեծ Սոնագնը: Նարեկացին

Հայրենիք մըն է, ուր Հայ մարդը յարողած է յանգիլ իր հոգւոյն մասնակի միութեան: Ապերասան, ապերասան, — միայն յեղափոխութեան անարժան զաւակները չեն, հրկիզեալ արդարութեան, ազատութեան ու գեղեցկութեան հրաշքէ կ'հովերէն, որ ընծայ բերած են իրենց Հաւատարմութիւնը Օ', անտարակոյս, ո՛վ է Չարենցը, Շահնուրի անճառահարաչ մեծութեան առջեւ, — ամբողջարութեան մունետիկ մը, ո՛վ է Վազգէն Շուշանեանը այս իմացականութեան զօրեղ արեգակին առջեւ, — յետին գրչակ մը Ու ինչ կ'արժէ այս երիտասարդ մարդոց գիտակից աղապատանքը՝ իր վեհաճեմ արհամարհանքին առջեւ: Այլ գրականութեան պատմութիւնը, այսինքն՝ վճիռը նոր սերունդներուն, որ մեր հրկրին լուսաւոր հողերէն պիտի ելլեն, ինչպէս Շիրակայ դաշտին ցորենները կ'ելլեն ուղէչ առ ուղէչ, Արարատեան աշխարհէն մինչեւ հարաւ պայծառացեալ գիշերներուն խորէն, — կրնայ այլ ըլլալ Արդարեւ, ի՞նչ կը պակսի այս խղճալի տղուն, — արիւն: Այն անգոյն ու որձեւէզ հեղուկը, որ կը հոսի իր հրակներէն, կրնայ փոխարինել միթէ ներքին կրակներէ բոցավառ արիւնը, որ կը թնդայ, որ կը դրողէ, որ երբեմն աւանդութեան կամուրջներն ու գեղապատական պատկերները քանդելով արշաւասոյր կը խուժէ, եռեռեքելու եւ զոռալու համար Չարենցի մը գրականութեան մէջ: Կրնայ ըլլալ, որ երբեմն ան քիչ մը տիղմ ու քիչ մը մրուր ձգէ իր խելայեղ անցքին վրայ, կրնայ ըլլալ, որ անոր յորդազեղ այիքները քիչ մը բարբարոսութիւն քշեն իրենց ոռոգած հողերուն մէջ, այլ երբ կը պոռթկայ ան, որպէս ցայտաղբիւր, կը ցատկէ խօլ փայլատակումներով, որպէս շատրուն, յետին տիրացուն իսկ կրնայ զգալ արեան սրբազան հանգիտութիւնը, որ կայ, որ կրնայ ըլլալ լուսապայծառ մոնազինն ու յեղափոխութեան ժամանակով վերջին երգիչներէն է՛ն չեղին միջեւ: Ու վերստին յետին տիրացուն իսկ կրնայ զգալ, թէ Շահնուր մը առաջին վանկերն իսկ չի կրնար հեզնել Նարեկացիի մեծ երգին, մինչդեռ միւսը ի ծնէ կը հագագէ գայն:

Օր մը պիտի գայ ու այդ օրը պիտի գայ, պիտի գայ, — ու այս յոյսին, այս արարչագեղ ու մեծահրաշ յոյսին կարեկիտութիւնն իսկ կը բաւէ, որպէսզի վաղը մեր ոսկորները խաղաղութեամբ հանգչին ու երբ երկոքին Մասեաց ոտքերուն տակ, Հայոց համարսարանն ու Հայոց կաճառը հրաշքի պէս տղաք պիտի ազատ արձակեն անցելոյն անկողն անտառներուն մէջ: Յայնժամ, Հակառակ այս ճշմամ պինջորներուն, այս երիտասարդ ասպետները, երիվար հեծած պիտի արշաւեն Հայ մշակոյթի կալուածներուն մէջ: Հակառակ այս սինյլքորներուն պիտի գրուին, պիտի գրուին աւարտական միաժամանակ լուրջ, պատկառելի ու միաժամանակ երիտասարդութեամբ շէն աշխատութիւններ: Ու յետին չորքոտանին իսկ պիտի զգայ Հագիւ թէ ծածուկ աղերսը, որ կայ Մեծ Մոնազինն ու Հեզահանճար ու քանքարաթաքոյց Ծղիշէ Դուրեան պատրիարքին միջեւ կա-

ընկր՞ է միթէ վայրկեան մը երեւակայիլ Ատոմ Եարճանեանի յորդակոհակ ու ամպրոպային լեզուն առանց Նարեկին: Այլ վստահ չեմ, թէ այս եղկելին չափով մը չի հերքեր նաեւ Նարեկը, որովհետեւ Սիւմանթօ Նարեկեան գոչիւններով հագագած է մեր զայրոյթներն ու մեր ընդվզումները Հայոց որոտագոտ լեզուին ճակատագիրն իսկ կրնար այլ ըլլալ առանց Նարեկեան հեղեղներուն, առանց Նարեկեան տեղատարափներուն եւ այս թշուառականին անարիւն շրթունքներուն վրայ եղած լեզուն՝ աղկաղկ ու խառնագնաց, աւելի աղկաղկ ու աւելի խառնագնաց բան մը պիտի ըլլար այժմ:

Քանի՛ սերունդներ ելիր են պատմութեան գիշերէն ու վերստին կորսուեր մարմնապէս, ճգնելէ, տուայտելէ, դատելէ յետոյ այդ լեզուին վրայ, որպէսզի այս ողորմելի հտպիտը, այսօր, այդ գմայլելի գործիքը ծառայեցնէ իր պատիկ անձին, իր գէշ հոգւոյն: Քանի՛ սերունդներ, իրենց գորովը շրթունքին, երգեր են փառքը Մեծն Նարեկեացոյն Հայոց լեզուն աւելի արուեստագէտ, աւելի նուրբ բանաստեղծ ունի՞ միթէ, քան Բինկեանի արեւածարաւ արտոյտը Միսաք Մեծարենց, որ բառերուն ներքին լոյսին ու ներքին ճառագայթաւորումին ծածուկ գիտութիւնը ունէր, որուն արարչական ու լուսեղէն մասներուն տակ Հայոց լեզուին բառերը կը կորսնցընէին իրենց թանձր կեղեւը՝ պրիսմակներու եւ բիւրեղներու նման հիւրընկալելով երկրին է՛ն նուրբ լոյսերն ու լոյսերուն է՛ն նուրբ երանգները: Ու կա՛յ մէկը, որ աւելի որդիական քաղցրութեամբ մը խօսած ըլլայ Մեծ Մոնագնի մասին, քան թէ այս ծիրանի ու սղուոր տղան: Ու դեռ չեմ ուզեր խօսիլ Հայոց եկեղեցւոյ Հայրերուն ու կաթողիկէ վարդապետներուն, մեր կաթողիկոսներուն եւ պատրիարքներուն ու մեր բոլոր քահանաներուն եւ ասոնց փաղանգին մասին, որ դարերէ ի վեր հասարակ սովորութենէ վեր եղող երկիւղածութեամբ մը կը հեզեն այս փառապանծ երգը: Ու ո՛չ իսկ օտար գիտունները կ'ուզեմ վկայութեան կանչել, վասնզի մեր հոգին դեռ բաւական հարուստ է՝ մեր բնիկ գեղեցկութիւնը զգալու հոգը ուրիշին ձգելու համար:

Այսպէս ուրեմն, դարերէ ի վեր, Հայոց հարան ու հիւսիսը մեծ երգ մը հեզեր են: Գիտուն վարդապետն ու հրաշագործ բանաստեղծը փոխ առեր են անոր վանկերը: Աւանդապաշտ քահանան ու երիտասարդ յեղափոխականը գորովով վերստեղծեր են զայն, վերստին մըմնջելով: Միւրեքեան Հայրերէն մինչեւ Արշակ Զօպանեան, Նիկողայոս Աղբայեաններէն մինչեւ Զարենց, — այս ժողովրդին բոլոր պաւակները խոնարհեր են իրենց ականջները այս քաղցր ու որոտայի ձայնին առջեւ: Ու միայն այս խեղդատակն է, որ կ'ելլէ յանկարծ եւ ուրիշ հտպիտի մը թերթին մէջ, գէշ ծամածռութեամբ մը իր անարիւն դէմքին վրայ կը փսփսայ, — թքեր եմ...

Ըստ արդէն, թէ հոս կը սկսի իր առաջին սրբապղծութիւնը Ու այս առաջին սրբապղծութիւնը կու տայ առաջին չափը, առաջին կշիռը մարդուն:

Առաջին կշիռը մարդուն: Պիտի խօսիմ իր մասին՝ այն բաներով, որոնց արժանի է, այն արհամարհանքով, որ անհրաժեշտ է կարգի հրահրելու համար գրականութեան այս յերուզակը Ու երբ խօսքս աւարտեմ աւարտած պիտի ըլլամ նաեւ իր հաշիւը, աւարտած պիտի ըլլամ նաեւ այս բանավէճը, վասնզի ինձ համար այլեւս կարեւորութենէ զուրկ է՝ ինչ որ կրնայ դեռ պատահանել: Գիտեմ թէ անսուղ շնագայլի մը պէս է, որ ամէն գիշեր կու գայ կողկանձել գիւղին պատերուն տակ: Ու մարդոց ստուերներուն ու անոնց թեզանիքներն ի վեր իր դեղին ոխը կը կողկողար Գիտեմ թէ չկայ հայ յեղափոխութեան ազնիւ ծառայութեան մէջ եղող մէկը, որուն վրայ հեռուէն ջանացած չըլլայ իր լորձունքը հեղուլ, չկայ ազնիւ սլացք մը, չկայ խոյանք մը, չկայ ազնիւ զգացում մը հայ կեանքին մէջ՝ որ իր զգուշի հեզութեան առարկայ եղած չըլլար Ու իր ողջ գրականութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ հերքում ու ստորին հեզութիւն: Եթէ ոչ ուրացում ու նողկալի գոհակութիւն: Խանդավառութեան ու քնարական շունչի բացարձակ բացակայութիւն եւ ատելութիւն դէպի առողջութիւնն ու իրական հերոսութիւնը: Ինչ որ կը գեղչէ ու կը խաթարէ իրեն տրուած ընդունակութիւնները, որ առանց ատոր արհամարհելի պիտի չըլլային բնաւ, — դիտողական խորագնին ճիրք մը, — ճարտարութեան դիպախաղեր գարգացնելու: Այլ այս ճիրքերն իսկ առանց յինարանի ու առանց իրական ներքին հարստութեան ուրիշ արդիւնքի չեն յանգիր՝ եթէ ոչ զարգացնելու իր յոխորտանքն ու համակրելի ընծայելու ընդոծին գոհակութիւն մը, որ յաճախ իր էութիւնն իսկ է, իր էութեան բուն հէնքը:

Վասնզի իրապէս ինչ կը պակսի այս տղուն: Վերստին կ'ըսեմ, — արեան ճայնը իր ժողովուրդին Սրբեք զգացած չըլլալով ողբերգական մեծութիւնը մեր մղած ստորերկրեայ պայքարին, մեր տաժանելի վերելքին՝ ստրկութեան սեւ հողերէն դէպի արեգակ ու դէպի գարուն, երբեք զգացած չըլլալով հրաշքը այն աներեւակայելի ճիգին, որ մեզմէ լաւագոյնները, դարերէ ի վեր դէմ-յանդիման դրած է բռնութեան, յետադիմութեան, բոլոր ծոյլ վատութիւններուն ու բոլոր շնչաբեկ վհատութիւններուն ու հետեւաբար չի կրնար նաեւ իրապէս սեւեռել գեղեցկութիւնը այս դարեւոր տառապանքին ու այս դարեւոր ճիգին արտայայտութեան, չի կրնար խելի ժամանակէն բուն տարողութիւնը մեր մատենագրութեան:

Եթէ մարդ վայրկեան մը չյաջողի խզուել իր ժամանակէն ու իր սեփական ողբերգութենէն, իր հոգւոյն խորն իսկ վերստեղծելու համար Մեծն Նարեկացւոյ ժամանակակից հայկական բարձրաւանդակը, եթէ մարդ չյաջողի զգալ զարհուրելի մտաւոր ու հոգեւոր գիշերը այդ երկրին, գիւղացիութեան խորունկ, անթափանցելի, անփարատելի սգիտութիւնը ու այսուհանդերձ այն մեծ ծարաւը, որ չէր կրնար չունենալ ան,— ծարաւը յաւերժական սիրոյ, ծարաւը բարձունքներու պայծառութեան, ազատութեան մը՝ որուն հական ձեւերն ու ուրուագծերը կրնան անհարազատ թուիլ այսօր մեզի եւ որ սակայն ազատութեան տենչն իսկ էր, վասնզի ծառայում մը կեանքի չարիքին դէմ, մարդուն բռնակալ բնագոյններուն ու հողին ահարկու ուժին դէմ: Նարեկացիի գոյութիւնն իսկ բաւական է ցոյց տալու համար, թէ այդ ժողովուրդը, որ պատմութեան թանձր գիշերին մէջ, կռուի մէջ էր իր ներքին չարաչուք խաւարին դէմ, չէր կրնար չունենալ այդ սրբագործող ծարաւը: Արդ, պատմական չնչին տեղեկութիւնները միայն բնաւ չեն բաւեր զօրութեամբ զգալու համար խորին աղաղակը այդ վեհափառ Նարեկեան գանգիւններուն, խորին աղաղակը այդ բարձրաթաւալ ու հոյաչէն երգին: Հարկ է նաեւ մեր արեան բարախիւնը, թնդիւնը մեր արեան, որ կը զգայ այդ համբարձումը, ինչպէս կը զգայ տեսակարար ծանրութիւնը դաւադիր խոնաւութեան:

Ու կարելի է յուզիչ ու յուզեալ էջերու մէջ եւ ընդհուպ, որոնք, գտնել ու հետեւիլ, դարերու մէջէն, այդ արեան ցայտօքին: Կարելի՞ է միթէ այլապէս բացատրել ուրիշ քաղցր տեսիլ մը, աւելի մերձ մեզի, Դանիէլ վարուժանը: Պատահած է յաճախ, որ հրեւիմ, հըրմըշտեկելով գինքը իր հոգւով խեղանդամ մարդու տրամաբանութեան լարիւրիներուն մէջ, ստիպեմ որ քաջութիւնը ունենայ իր ուրացողի կարծիքին: Ու հոս կը սկսի իր երկրորդ սրբապղծութիւնը, որ երկրորդ դատաւճիտն է: Ու հոս կը սկսի նաեւ իմ է՛ն եպիսկոպիտեանութիւններէս մէկը, որ վեհանձնութիւնէ կու գայ, այլ որ իրապէս արդարացում չունի: Երես առ երես վիճիլ ուրացողին հետ, զթալով վրան, նոյնիսկ երբ բարձրաձայն կ'ըսենք մեր գութը: Իր երկրորդ սրբապղծութիւնը, այն է՝ ախտաւոր, դարչելի յամառութեամբ մը իրենց նուազագոյն չափին վերածել հայ արժէքները, հուսկ ապա ուրանալու եւ յետ ուրացման անարգելու համար զանոնք: Այլ պիտի վերադառնամ իր անօրինակ գութի խաչագողութեան ու իմ տկարութեանս, պիտի վերադառնամ: Արդ, կարելի՞ է միթէ առանց վերստեղծելու մեր նախայնդափոխական ու ազատաբարկան պաշարի մթնոլորտը, առանց զգալու մեր եղկելի

Թշուառութիւնը բռնութեան գարշապարին տակ, երբ շնչահեղձ կ'ողորձէինք կեանքէն քիչ մը ազատութիւն ու քիչ մը արդարութեան լոյս՝ սարկութեան վարժուած մեր հոգիներուն համար, երբ Իկոնիոյ դաշտերէն մինչեւ Անտիտարոս ու Ալպիսթան մեր մանուկներն ու մեր հայրերը իրենց ցաւն ու ուրախութիւնը կ'երգէին աղկաղկ ու անմշակ տաճկերէնով մը, երբ մեր գաւակներուն դէմքերուն վրայ իսկ տաճիկը իր գարշ շուքը կը ձգէր, երբ Թրակիայէն, Յակոբ Պարոնեանի հայրենիքէն, Ալբրիանապոլիսէն, Տէտէ Աղաճէն մինչեւ Բերիա, մինչեւ անապատներուն եզերքը՝ մեր ստեղծագործ այլ ոլորտ Ժողովուրդը փոխ կ'առնէր տաճկին վատշուէր հոգին, տաճկին խոպան լեզուն՝ խեղդելու համար իր ներքին ձայնը, որ ազատութիւն կը գոռար մեր ընդերքներէն, — կարելի՞ է միթէ չյիշել այս բոլորը, կարելի՞ է միթէ մոռնալ այս բոլորը, երբ այս աստուածօրէն շիւ պարմանին, Բրգնիկի եզերքներէն եկող այս կաթոլիկ տղան, անըմբռնելի հրաշքով մը կարծես, հրաշք մը, որ կը բացատրուի սակայն, յանկարծուստ կը վերագտնէր կորուսեալ հեթանոս ու արու Հայաստան մը, պաղպաղուն ու գեղեցիկ, ինչպէս ողիմպոսեան մարմարներ, ասպետական, ինքնատիպ, արարչական ու կը գոռար.

Հանճարդ հայկեան, նաւասարդեան այս տօնարուն արեւափառ,
Ա՛լ վերածճէ փրատակներդ, ու փառագոյ թնարդդ ար...

Ու չէ՞ր գիտեր միթէ, որ կերտելու համար մեր նոր հոգին, քանդակելու համար մեր նոր գեղեցկութիւնը, ինչ որ ունէինք Պոլսոյ Շահնուրներն էին, ապականած մինչեւ իրենց գերի ոսկորներուն ծուծը, կտրանցուցած իրենց մայրենի բարձրահագագ լեզուին յետին արական գանգիւնը, — այս Շահնուրին երէցները՝ որ փոխ կ'առնէին կնոջ ժանեկաւոր անուններ, իզացեալ լեզուով մը մեզ բախու համար, թէ ներքին ճերմակեղէններու եւ Վարձու սննտակներու պատմութիւններ գիտեն, եղկելիները Արդ, այս շինւածանիւթերով էր սակայն, մաքրելով, գտելով զանոնք՝ որ Դանիէլ Զպուքեարեան բանաստեղծը պիտի կենար մեր նոր պատմութեան գիմաց ու ի վերջոյ նոր կշռոյթով մը ստեղծագործէր: Այլ կարելի՞ է զգալ ամանակն ու դրողիւնը իր լեզուին, առանց զգալու մեր գերութեան անմեկնելի ցաւը:

Մենք զաւակներդ օգոստափառ պիտի կերտենք նո՛ր արշալոյս...

Ու մինչդեռ նոյն պատիկ պարոնները կը շարունակէին իրենց ներքին բակերուն մէջ, հաւերու պէս կտկտալ, իրենց թաղային բանկայներուն շուրջ աղաւնիներու պէս մնջել, տաճկական պելախիլէներու եւ խօփուշներու շուրջ պաշ իսթիւնէ պէյի՛մ, մրմնջել ու ծը-

ուելով իրենց ողնաշարները, թօթուելով իրենց աղտեղի ֆէսերուն փրակիւնները իրենց հետզհետէ ուռող, կլորցող շարժումներով էվէթ Էֆէնտիմներ շտայլել երկիւղածութեամբ երկիր պագանելով ամէն վայրկեան, առօրեայ հանգիստներու եւ Մեծիւրիւններու սիրոյն՝ աղտոտելով ժողովրդին որք հոգին, բանաստեղծը նոր արեւածագներու գիմաց, ցոյց կու տար մեր հիագարհուր ակնարկին առջեւ հերոսը, որ կը ծառանար, արձանագործը, որ կը քանդակէր մեր նոր հրճուանքն ու մեր նոր դեղեցկութիւնը.

Ու քանդակեց, քանդակեց
Եւ քանդակեց, քանդակեց...

Կը կրկնեմ՝ կարելի՞ է զգալ մարմարեայ կշռոյթն ու բոցավառ շունչը բանաստեղծին, ոսկեայ տեւորութիւնն ու տազնապալի վազքը իր հոգեղէն արշաւին՝ առանց մեր քերձէ եւ վատութենէ դողացող ձեռքերուն վրայ զգայու մեր բարձրաւանդակին հաւատարիմ շինականներու արիւնը կաթիլ առ կաթիլ, ցօղ առ ցօղ՝ Օ, անցելոյն որոտագոռ ամպերուն մէջ կորուսեալ սպառազէն հայրեր, Օ, զինւորեալներ, որ խաչը դրկած, կ'երթայիք արիւն թափելու, պաշտպանելու համար բան մը, որուն կը հաւատայիք, կ'արժէ՞ր միթէ որ դարձր ու դարձր, ոսկեշառայլ կիրակի առաւօտներով, այս մարդիկը մօտենալին Տիրոջը խորանին, ընդունելու համար անարատ գառնուկին, որ բոլոր բռնութեանց ու բոլոր սրիկաններուն դէմ ազնիւ դրօշակ մը բարձրացուցած էր դարեր առաջ, արիւնն ու մարմինը, յետոյ ամէն ժամ զայն աղտոտելու համար ինչո՞վ շինւած էին ու ինչո՞վ շինուած են դեռ, ազատ երկիրներու մէջ իսկ շարունակել անարգելու համար ինչ որ հզօր է ու ինչ որ կը ծառանայ, ինչ որ անձուէր է ու ինչ որ կը բողբոջի ազատութեամբ։ Դեռ մինչեւ ե՞րբ պիտի հաջն մեր թեզանիքներուն, այս բոլոր շները, որովհետեւ մեր ժողովրդին համար կ'ուզենք քիչ մը ազատութիւն ու քիչ մը զարուն, որովհետեւ կը ջանանք վանել վեց դարերու ստրկութենէ ապականեալ մեր մարմիններէն ինչ որ վատութենէն կու գայ ու ինչ որ վատութեան կը դիմէ։ Որովհետեւ ազատութեան, արդարութեան ու դեղեցկութեան ըմբռնում մը ունինք, որ իրենց անանուանելի ու զարչելի հանգիստը կը խանգարէ։ Որովհետեւ զօրութեամբ կը զգանք անհրաժեշտութիւնը նոր ու արդար կեանքի մը, ուր մեր ազդը վերջապէս պիտի արթննայ չքնաղ երիտասարդութեամբ մը, ուր արիւնը՝ որ բանաստեղծը կ'երգէր, այլեւ պիտի չթափի ապարդիւն հլուքեամբ մը, այլ պիտի խայտայ զուարթութեամբ ու առնական դոփիւններով մեր զաւակներուն երակներուն մէջ։

Եղեգնեայ գրչով երգեցի արիւն...

Մ'ւր կը սկսի եւ ո՛ւր կը վերջանայ ի վերջոյ այս մարդոց կեանքի հորիզոնը: Ի՞նչ է իրենց փառքը, ի՞նչ է իրենց ազատութիւնը, ի՞նչ է իրենց արուեստը: Եթէ արուեստը գերազանց արտայայտութիւնը չէ ազգի մը ու անոր աստուածարեալ, ընտրեալ զաւակներուն հոգեկան բողբոջումին ու վերելքին, եթէ արուեստը պաթառացեալ կերպարանքը չէ անոր մնայուն ու կենդանի խոյանքին զէպի կեանքի բարձրագոյն ձեւերը ու եթէ այս ճիգն ու այս ինքնազսպումը, վասն գեղեցկութեան նոր ձեւերու, վասն մարդուն անհատականութեան լրումին ու զարգացման շին պայմանաւորուիր ազատութեամբ ու մարդկային արժանաւորութեամբ, ինչ է ուրեմն հազուստն ու պերճանքը իրենց երգին: Ուրքան աղարտեալ ու գեհնային պէտք է ըլլայ գրագէտի մը հոգին, որպէսզի չզգայ, թէ այն լուսեղինեալ բառերը, որ կը գործածէ, լոկ աստիճաններն են ոսկեայ սանդուխի մը, որ երկրէն մարդ էակը կը նետէ երկնքին ու յաւերժութեան ոլորտներուն՝ անընդատ բարձրանալու համար զէպի լոյսն ու զէպի ազատութիւնը: Ազատ արձակելու համար բանտարկեալ ուժեր ու գեղեցկութեան բանտարկեալ ձեւեր, կաղապար ու շնորհ պարգեւելու համար՝ լոյսի է՛ն յետին շողիւններուն, որ է՛ն անկեալ էակին թանձր մարմնին խորը երբեմն կը փայլատակեն:

Կ'երթամ աղբիւրը լոյսին...

Կ'ըսէր վերստին բանաստեղծը, վասնզի գիտէր, թէ հայ անհատն ու հայ ազգը կը խարխափէին բռնութեան նկուղներուն մէջ, թէ՛ օրակարգի առաջին խնդիրը ազատագրութեան պատմական գործողութիւնն էր, զանգուածներու զէպի լոյս աստիճանական բարձրացումը: Արդ, անհրաժեշտ չէ երկարորէն ու ուժգնօրէն ցնցել այս պարտնենքը, որպէսզի անասելի թեթեւութեամբ մը ու անմիջապէս ժխտեն հայ ժողովրդի քաղաքական, մշակութային ու հոգեկան ազատագրութեան սկզբունքն իսկ: Չկայ յեղափոխական զէմք մը, չկայ Հ.Յ. Դաշնակցութեան ազդեցութեան զօտիին ու մտաւորական կլիմային մէջ ընձիւղած ու հասակ նետած գրագէտ մը, որ արժանի ըլլայ մասնաւորապէս այս Շահան Շահնուր կոչուած բարձր անձնաւորութեան ո՛չ թէ գորովին, այլ գէթ բարեացակամ վերաբերումին: Այս բարձր, այս անօրինակ անձնաւորութեան՝ որուն յետին լրբութիւններն ու իշուքիւնները, Ռամկավար ըսուած մամուլը — ուրիշ հեղեղութիւն մըն ալ ասիկա — ամէն օր կ'արտատպէ: Թիկունքները բռնած՝ մարդ կը ցանկայ հոմերական խնդուք մը արձակել, եթէ երեւոյթը աւելի քան զգուշի չըլլայ: Շահնուր մը եւ իր նմանները կը մերժեն վարուժանի,

Ատոմ Եարճանեանի, Ռուբէն Զարդարեանի, Լեւոն Շանթի, այլեւ եթէ քիչ մը Նեղէք՝ Եղիշ Զարեանի, Յակոբ Օշականի, Համաստեղի ու այնքան ուրիշներու արուեստը, որովհետեւ այդ արուեստը բնական ու բնախօսական արտայայտութիւնն է, բարձրագոյն ու տարափոխիկ ձեւը հոգեկան գերազանց վայրկեանի մը՝ ժամանակին եւ միջոցին մէջ, քաղաքական գերութեան մէջ եղող ազգի մը ցաւատանջ երկունքին: Արդ, տասը տարիներէ ի վեր, որ զրիչ կը շարժէ այս մտաւորական պերճադիւրը, որ կը պատկի բոլոր յետաշրջական Շարլ Մորաններու եւ ծառուղիական յետին գրչակներու հետ, որ գոց կը սորվի, իր մտքի գիջութեան ժամերուն՝ մեծ քաղաքներու գոյհներէն խուճապահար կամ գաղտագողի սահող բոլոր ազատ մանրավէպերն ու աղիճներու բունոցի պատմութիւնները (*),— տասը տարիներէ ի վեր, որ զրիչ կը շարժէ ախտագին նահանջականութեամբ մը, որուն նմանը հայոց գրականութիւնը չէ արձանագրած բնաւ, այս թշուառականը՝ նախադասութիւն մը, բառ մը անգամ չէ կրցած խել իր հոգիէն երգելու համար իր ժողովրդին ալ ճիգը ազնուութեան, արդար աշխատանքի, ազատութեան:

(Շար. 1) ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

(*) Անշուշտ գիտեմ, թէ այս սինցորը կրնայ առարկն թէ պոռնկագիր չէ ինք, թէ՛ անմիտ ու սնամէջ բառ մըն է պոռնկագրութիւնը: Ներողութիւն, ասանակ մը շկայ, որ չգիտնայ, թէ ինք տիպարն իսկ է պոռնկագրի, վասնզի պոռնկագրութիւնը նախամտադրութեան մէջ է, յետին մտքին, թէ կարելի է երգել կնոջ գեղեցկութիւնն ու սէրը է՛ն յանդուգն քառերովը՝ առանց այդ կաստի արուեստին սահմաններուն մօտենալու, ինչպէս պարագան է Վարուժանի ու փոխարէնը պոռնկագրութիւն ընել ասպիւնելով է՛ն բարեպաշտ քառերուն ու ասիկա իր պարագան է: Եւ թէ խարամի պէս պիտի մնայ իր ուսին, այն երկու գարշելի նշանները, որ կը կոչուին *Պոլիտեքստեր* ու *Պարապ սենեակի մը համար*:

Գ. ՊՐԸՏԵԱՆ

ՎԷՊԻՆ ՅՂԱՅՔԸ



Շուրջ վեց հարիւր էջ հաշուող ու «Մարտ» խորագրուած հատորի մը մէկ հատուածն է «Վէպին յղացքը», գոր հեղինակը, Գրիգոր Պըլտեան, անծանր տըրամադրած է «Բագին»ին:

«Գէորգ Մելիտինեցի» գրական մրցանակի գնահատանքին արժանացած «Մարտ»ը ի մօտոյ կը յանձնուի մամուլին եւ լոյս կը տեսնէ յառաջիկայ գարնանամուտին:



Այս գլուխին մէջ քննութեան կ'ուզեմ ենթարկել Օշականի վէպը, նախ եւ առաջ վէպի յղացքը, ըմբռնումը կամ հասկացողութիւնը, որ Օշական կը տարագէ իր քանի մը գրութիւններուն մէջ: Մայրիններու շուքին տակէն մինչեւ Համապատկերին վերջին հատորի Վկայութիւն ինքնադատութիւնը՝ հիմնական մտահոգութիւններ եւ հաստատումներ կը կազմեն վէպի «տեսութիւն» մը: Այդ տեսութիւնը արժէքաւոր է ո՛չ միայն անոր համար, որ կը լուսարանէ Օշականի իսկ արտադրութիւնը, այլ եւ սեռին շրջափոխութեան համար կարեւոր նշումներ կը կատարէ՝ նպաստող անոր պատմութեան: Իրապաշտ վէպէն ելլող Օշականի վիպագրութիւնը «Ժամանակակից» է վէպի երկու «յեղափոխութեան», այսինքն՝ Փրուստի եւ ձոյսի փորձերուն, որոնց կը յարադրուի, աւելի քան կը հակադրուի կամ «կ'ազդուի» անոնցմէ:

Այդ տեսական բնոյթի գրութիւնները բոլորն ալ կ'ընկերակցին վիպային արտադրութեան, կը բխին անկէ, կը մեկնարանեն զայն՝: Աւելիմ կայ սակայն: Տեսական դիտողութիւններ կը

1) Չեմ փորձուած խնդրոյ առարկայ դարձնելու Քիւֆէճեանի «Մեր վիպասանները» քննադատական շարքը, որուն շահեկանութիւնը անկասկած ալ տեղ է:

յայտնուիմ վեպերու երկայնքին, մուտքի, վերջաբանի էջերում, երբ պատմողը կ'անդրադառնայ գրելու արարքին: Ասիկա կը նշանակէ անշուշտ, որ տեսութիւն /վիպում գոյգին յարաբերութիւնները շատ աւելի բարդ են, քան պարզ հակադրութիւն մը կամ պարզ փոխադարձ, մէկը միւսէն արտաքսում մը: Այդ բազմախառու բազմալար յարաբերութիւնները կրնան կազմել առանցքը ուրիշ աշխատանքի մը, որ գուցէ յանգէր պարականոն եզրակացութեան մը. վիպումը կը սնանի տեսութեան, ինչպէս տեսութիւնը վիպումէն: Հոս ընկիւն կը վերաբերի վեպի յղացքին առաջին ֆննութեան. ընթերցումը նկատի պիտի առնէ այստեղ թէ՛ մէկը, թէ՛ միւսը, միայն թէ նպատակս չէ անպայման Օշականի հաստատումները օրինակներով փաստելու, տրուած ըլլալով հարցին բարդութիւնն ու արտագրութեան ծաւալը:

ՇՐՋԱՆԱԿԸ

Օշականի արտադրութիւնը կը մտնէ վեպի կայունածին մէջ *Շահագործման* ետ: Առաջինը *Մակ-Պտուկ* է 1928ին, որմէ ետք կը սկսին ընդարձակ վեպերը. ետաբաժին *Հարիւր մէկ տարուանը* եւ *Մնացորդացը*: Այսինքն՝ կը գուգադիպին ճիշդ այն թուականին, երբ ֆրանսահայ գրականութեան առաջին վեպերը կը նետուին հրատարակ: Ասոնց հետ Օշականի վեպը մասնատր հանգիստութիւն մը չունի, Փարիզեան վեպերը յղացուած ըլլալով բոլորովին այլ միջավայրի մէջ, այլ ազդակներու իրրու հակադրութիւն կամ ծնունդ: Յայտնի ալ չէ, թէ անոնց հեղինակները օրը օրին կարդացած են իրենց նախկին ուսուցչին վեպերը: Օշական ինչ յանախ *Մնացորդացը* կը դնէ Համաստեղի *Սպիտակ ձիւորը* եւ *Ջարեանի Բանկօսպը* եւ *Մամուլի ոսկորներ*ին առընթեր, անտեսելով Շահնուրի եւ Որբունիի վիպաշարերու խնդիրը, քայց այս անտեսումը կրկնելու պարտադրանքին տակ չի գտնուիր ընթերցողը, գրականութեան պատմաբանը, որ շրջանն ու ասոր ձգտումները նկատի կ'առնէ:

Ըստ իս, իրարմէ անկախ՝ Օշականի վեպը եւ Փարիզեան վեպերը ունին հասարակաց եզր մը, որ միայն իրենց յետ-հետեան նկարագիրը չէ, այլև վեպի արեւմտահայ յղացքին յեղաշրջումն է: Ճիշդ է Օշականի յայտարարութիւնը, որ իր վեպով արեւմտահայ վեպը շրջան կը փոխէ, սակայն նոյնքան ալ ճիշդ է, որ անիկա միակը չէ: Շրջափոխումը ընդհանուր երեւոյթ մըն

Է հայ վեպին համար, որ տարօրինակ կերպով իր ամենէն քեզում շրջանը կը թելակոխէ երեսնական թուականներում սկիզբը: Վեպին «նորոյթը» յետ-պատերազմեան տարիներում միջագոյնն ցարկազար լինելի, բայց անիկա, Սփիտֆի պայմաններում մէջ՝ կը զգենու մասնատր ալ ցարկազար, քանի որ վեպին կը վերագրուի կորուստի ենթակայ գաղութներում կամ անցեալ աշխարհի մնացորդներում փրկութիւնը: Ինչպէս Սարաֆեան կը թելադրէ իր «Բանաստեղծութիւն ամէն րանէ առաջ» յօդուածին մէջ, ազգային պատմութեան սերը կամ կորստուղ Սփիտֆ մը պարփակելու ցանկութիւնը կը բացատրեն վեպին տրուած կարեւորութիւնը²: Որով վեպը կը գրաւէ նախկին պատմագրութեան տեղը եւ կը կատարէ անոր պաշտօնը: Տարբերութիւնը կը կայանայ սեւեռուած առարկային մէջ, Օշականի համար անցեալ կեանքը, ֆրանսահայ վիպասաններում համար ներկան, գործածելու համար այդ ժամանակուան հակադրութիւններու եզրերէն մինն³:

Մրջանակի բաղկացուցիչ մաս կը կազմեն նաեւ երոպական, ի մասնաւորի ֆրանսական գրականութեան եղած յղումները, որոնք Օշականի վեպի յղացքը, ինչպէս արտադրութիւնը կը գեղեցիկն շատ որոշ արդիականութեան մը մէջ: Օշական չի դադրիր յիշատակել սեռին գլխաւոր գրագէտները, Սթենտալէն մինչեւ Յոյս, անցնելով Պալգաֆէն, Ջոլայէն, Պուրժէէն, Տոստոնսկիէն, Թոլսթոյէն, հասնելու համար ժիւլ Ռոմէնին ու Փրուստին: Յատկանշականօրէն Օշական քիչ անգամ կը թաւ վեպին մեծ յօրինողը՝ Սերվանթէսը, լուռ կ'անցնի ժՐ դարու անգլիական եւ ֆրանսական վիպագրութեան վրայէն, իր ուշադրութեան կեդրոնին ունենալով գլխաւորաբար յիշածներս: Կայ անշուշտ ուրիշ մեծ բացակայ մը՝ Յ. Գաֆան, որուն երկերում սփռումը կը սկսի իսկապէս Երկրորդ աշխարհամարտէն ետք: Օշականի աւանդութիւնը արեւմտեան ժԹ դարու վեպն է եւ արեւմտահայ քանի մը փորձերը սեռին իրապաշտներու կողմէ:

2) «Ազգարար», 1960, Յօդուածը հրատարակուած է *Տեսարանները, մարդիկ եւ նա հատորին մէջ*, Երեւան, 1964, էջ 210-215:

3) Նորի եւ հինի հակադրութիւնը որ կը դեգերի քանական թուականներու վերջի գրական մամուլին մէջ, ամէնէն առաջ կը հիմնուի անցեալի ու ներկայի հակադրութեան վրայ, թածելով նախկին սերունդի գրողները նորերէն Մ. Պարսամեանի, Կ. Սատուիի, Նարդուկի, Ապաֆեանի յօդուածները Փարփի «Յուշերն», «Զուարթնոց»ին մէջ ատոր փաստն են:

Բոլորովին առանձին աշխատութեան մը նիւթը պիտի ըլլար քննութիւնը այս վիպասաններուն հետ Օշականի ունեցած յարաբերութեան, հարցը դիտելով ոչ թէ «ազդեցութեան» տեսանկիւնէն, այլ՝ ստեղծագործ հակազդեցութեան: Ի հարկէ Օշականին ծանօթութիւնը Փրուստին ու Ճոյսին, այսինքն՝ վէպին այդ ժամանակուան վերջին հնարաւորութիւններուն իմաստալից է ու թելադրական, նախ՝ անոր մտքին բացութեան որպէս նշան, երբ նկատի առնենք, որ Ջարեանէն եւ հետագային Ռոբուսիէն գատ ո՛չ մէկ հայ վիպասան ծանօթ կը թուի ըլլալ այդ վիպասաններով իրացուած արդիւնքին: Ապա՝ այդ ծանօթութիւնը իր կարեւորութիւն ունի Օշականի վիպային կիրառումին համար՝ գործողութեան դէմ որոշ արհամարհանք, շեղումներ, մտածումներու թաւալ, գիտակցական ու ենթագիտակցական մակարդակներու «նուաճումի» փորձեր, մէկ խօսքով՝ անհուն գրուածքի մը դիւրանքը կը բանի Փրուստին ալ մօտ, Ճոյսին ալ, մինչդեռ բարեբերու, ժամանակաշրջանի մը համապարփակ ներկայացումը հանգիստութեան եզրեր ունի Պալգաքի, Ջոյսի, Ռոսէնի ծրագիրներուն հետ: Ռոպ աւելի ճիշդ պիտի ըլլար նկատի առնել Օշականի վէպը ոչ իբրեւ սա կամ նա ճգտումին մէկ շարունակութիւնը, այլ՝ բազմաթիւ, երբեմն իրարու հակադիր ճգտումներու իբրեւ խառնարանը կամ միաւորման տեղը:

ՃԵՐՄԱԿ ԹՈՒՂԹԸ

Ինչպէ՞ս կը գրուի վէպը, ի՞նչ է վէպը Օշականի համար: *Համապատկեր*ին գրողը իր հակազդափարական սլաքներով կը զգուշացնէ ընթերցողը տեսական-գեղագիտական սկզբունքներուն դէմ, երբ կը յայտարարէ. «վէպը իրեն համար բաց թուղթ մըն էր: Ամիկա իրեն իրաւունք կու տար այդ բաց դաշտի վրայ նետելու ինչ որ կը նկատէր յարմար, գործողութիւն, կիրք, բարք, ապրում, յուզում, մտածում, ո՛րը որ ուզէր, հերիք է, որ նետուած տարրերը արժէքով մը ըլլային երաշխաւորուած եւ ո՛չ աւագի հատիկ» (ՀԺ 180): Իր կողմէ ընդգծուած նախադասութիւնը որոշ չափով մը կը յիշեցնէ *tabularasah* գաղափարը, այսինքն՝ Օշականի վէպը կը սկսի բոլոր օրէքներէն, գեղագիտական ու գաղափարական համակարգներու հերձումէն անդին: Ինքնադատութեան փորձին մէջ, վէպի «ճարտարապետութիւն» պարբերութեան մէջ, Օշական կը վերադառնայ այս նշումին, մանաւանդ որ «ճարտարապետութիւն» ըսելով կը հասկնայ

«վէպ մը կառուցելու պարզագոյն օրէնքները» եւ կ'աւելցնէ. «Զանց կ'ընեմ՝ վէպի տեսակներուն վրայ գիրքերուն պատգամները, գանձնէ մասնատրոյ ռնի (կառուցուածքէ) պարտքերը, թերեւս շահեկան, քայց որեւէ յուրջ գրականութեան պատմութեան մէջ լայնօրէն օգտագործելի: Զանց կ'ընեմ թերեւս անոր համար, որ Օշականի յայտարարութիւնը մէջտեղն է, *վէպը ճերմակ թուղթ մը դաւանող*: Այսինքն: Ա՛ն՝ որ այդ վէպին աշխատարը բոլոր ռններուն (միշտ իմացէ՛ք մարտարապետական երանգի մը մէջ այս բառը) հետ մտերմութիւն ունեցող մարդ մըն է ու շատ կանուխտէն դիտած է, որ բոլոր օրէնքները արուեստի գործերուն շուրջ, օրէնքներ են խառնուածքէ մը բխող: Ա՛մէն արուեստագէտ իր ռնը հետը կը բերէ: Կաղապարները օգտակար են անոնց համար, որոնք սահմանուած են միջին վերջը աշակերտ մնալու...» (ՀԺ 183): Վէպի «օրէնքները» եթէ հարկատու են խառնուածքին, ապա այն ատեն անոնք չեն կրնար ընդհանրացուիլ: Եւ սեռին յղացքը կը դառնայ անկարելի:

Նման յայտարարութեան մեկնելով կարելի է հետեւեցնել, որ Օշական վէպի տեսութիւն չունի, չունի ըմբռնում եւ վէպը կը սկսի տեսակ մը սանձարձակ ազատութեան մէջ. ներմակ թուղթը, բաց դաշտը օրէնքներու բացակայութիւն մը կը յուշեն, ինչպէս որ կը թելադրեն գալիք կեանքը: Սակայն սսիկա ռազմավարութիւն մըն է միայն: Մօտէն ընթերցում մը վերոյիշեալ հատուածէն կրնայ ի յայտ բերել ո՛չ թէ վէպի յղացք մը, այլեւ՝ այդ յղացքին ներկայութիւնը իրրու անհատական թիւում ու իրագործում: Օշականի համար չկան վէպի ընդհանուր օրէնքներ յատուկ բոլոր վէպերուն ու վիպասաններուն, ինչ որ չի նշանակեր, թէ չկան մասնատր օրէնքներ: Ընդհանուր պարտադիր օրէնքներու եւ մասնատր օրէնքներուն միջեւ, իրրու գանձնէ պարագրկող ծիր՝ կայ անշուշտ վէպի սեռը, որ գարմանալիօրէն Օշական ո՛չ մէկ անգամ խնդրոյ առարկայ կը դարձնէ: Ինքնադատութեան փորձին ամբողջ երկայնքին, ինչպէս արդէն ամբողջ *Համապատկեր*ին, ան կը սիրէ գործածել գրականութեան պատմութեան ընդհանուր եզրերը. բանաստեղծութիւն, վէպ, թատրոն, քննադատութիւն, եւ այլն: Այլ խօսքով՝ Օշականի պաճները վէպի օրէնքներուն դէմ չեն մղուիլ սեռին դէմ, այլ՝ անոր սա կամ մա ընդհանրացած, ինք կ'ըսէ, շեշտելով «ընթացիկ» կերպերուն. պատմական վէպ կամ հագեցեցեցական վէպ մը գրելու ընդունուած կաղապարներուն, որ պարտադիր ըլլային գրողին: Ինչ որ կը պատկանի գրականութիւնը «ազատագրելու» այն մեծ տեղին, գիրքերու, պատգամներու բռնութեանէն (ՀԺ 536): Այս հակօրինակներն ո՞ր չափով մոյմ ատեն եւ խորապէս չի պատկանիր ճիգի մը, ջանքի մը գրականութիւնը, վէպը ըսենք հոս, ազատագրելու *mimesis*ի, այսինքն՝

տուեալ ճնի մը, կերպի մը, կաղապարի մը կրկնութենէն, անոր հետ նոյնացումէն, յանուն թերեւս ուրիշ նոյնացումի մը, որ է նոյնացում կեանքի հեղեղին հետ:

Օշական շատ լաւ գիտէ, որ սեռը գրական սեռերէն թերեւս ամէնէն առաճակաւն է, ամէնէն նկունը՝ խախտումներ, շեղումներ, յանկարծակի նորոգումներ արտօնող ու ներառնող իր մէջ, ամէնէն մեծ հնարաւորութիւններ ընծայողը անհատական նախաձեռնութիւններու եւ փորձարկումի. կը թուէ Սթենտալը, Պալգաֆը, Թոլսթոյը, Տոսթոեւսկին, Փրուստն⁴ ու ձեռքը իրրեւ մեծ վէպերու ոչ միակ հեղինակներ, այլեւ՝ ըմբռնումներու յորինողներ: Ինքն է գրողը. «Ինծի համար վէպը արուեստի ճեւ մըն է, որ չունի կաղապարուած, անվերծանելի նարտարապետութիւն մը» (ՀԺ 16): Նշենք նախ՝ որ «նարտարապետութիւն» ըսելով Օշական էապէս վէպի կառուցուածք, բայց նաեւ ըմբռնում կը հասկնայ: Յամենայն դէպս՝ կայուն կաղապար, որ պիտի տեսնենք՝ կը հակադրուի կեանքի հեղեղին: Յետոյ՝ հաստատումը ոչինչ ունի տարօրինակ, երբ նկատի առնուի սեռին տեւական այլափոխումը մինչեւ մեր օրերը, այլափոխում՝ որ բան մը կ'ըսէ անոր կենսունակութենէն, անոր կարգանիշներու «բացութենէն» իրրեւ արուեստի գործ, ինչպէս պիտի ըսէր Ուփսթը Էգօ: Օրէնքներու դէմ Օշականի ըմբռնութիւնը ինքնին գեղարուեստական, վիպային արարք մըն է, որ իր կարգին կը հաստատէ վէպի նոր օրէնքներ, վէպի կառուցուածքի, տիպարի, գործողութեան, հոգեբանութեան այլ կանոններ: Աստի՜ փաստօրէն կան վիպասանի արտադրութեան երկայնքին *Մակ-Պտուկը* մինչեւ *Մահակ Պարգեւեան* եւ *Կեանքին պէս*: Եւ ի վերջոյ, նուազ քան թելադրուածը, Օշականի վէպը սեռին որոշ կաղապարներուն հանդէպ կ'որդեգրէ յարգալից կեցուածք մը, եթէ ոչ բոլորովին պահպանողական:

ՍՐԲԱԶԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Օշականի ներմակ բուրբի, բաց էջի փոխաբերութիւնը սեռին գորութեանկան հնարաւորութիւններուն կը յղուի, բայց

⁴ Օշական *Կրթուած ժամանակին փնտռութեան* գրողին հանդէպ ունի անհուն հիացում եւ կը գրէ. «Փրուստ կարդալու անկարող հայ գրագէտները անշուշտ չկործանեցին Փրուստ վիպագրին համբաւը, որ վէպին մէջ վերջին կարելիութիւն է այսօր», (ՀԺ 189) ճ. Ճոյսի անունը կը յիշատակուի ստեպ-ստեպ: Օշական նկատուի ունի ստեպարակ *Ողբերգութեան*:

մասն աճոր բուրնովին այլ որոշադրումին: Կը բաւէ կարգալ ուրիշ դիտողութիւն մը. «Ըսեր եմ այնքան անգամներ, որ վէպը ինծի համար ամեն հնարաւորութիւն ներկայացնող սրբազան ձեռնարկ մըն է, երբեք մեր քաղքեմին գուարնացնող հոսպիտի խաղարկութիւն մը... Վէպը, թատրոնէն աւելի անկախ, որով աւելի ընդունակ ստեղծողի մը ուժերը խայծելու, Օշականի մօտ գտած է բարձրագոյն իր նարտարապետութիւնը, գէթ իրր ձգտում» (ՀԺ 146): Անդրագոյն բնութիւն մը գուցէ պարզէ, թէ ինչո՞ւ վէպը «սրբազան ձեռնարկ մըն է», սակայն առայժմ կը նկատեմ, որ սեռին օշականեան ըմբռնումը կը գատորշուի ժամանց-գուարնութիւն հայթայթող գրականութենէ՝ իր ծանրութեամբ, լրջութեամբ, «առարկային», իր ատաղձին հանդէպ ունեցած տեսակ մը պաշտումով: Օշական բազմիցս կ'անդրադառնայ վէպին այս հանգամանքին եւ հետեւողականօրէն իր ըմբռնումը կը գատորշէ «քաղքեմին» ըմբռնումէն. «Արդի վէպը դադրած է քաղքեմի մարտողութեանց իրր օժանդակ թմրեցուցիչ մը միայն ըլլալէ... կամ անգործ ազնուաւիներու պարսպոյթ մը ընձեռնելու այլապէս ստորնացնող դերէն...» (ՄՇՏ 17): Ո՛չ մարտողական, ո՛չ պարսպոյթ, ոչ ալ խաղ, այսինքն՝ աշխարհիկ բաներ, վէպը կը դառնայ «սրբազան ձեռնարկ», որուն ատաղձը, նիւթը, հեռանկարն ու իմաստը «կեանքն» է:

Կարեւոր հատուածի մը մէջ, Օշական գիրքը այս պաշտումն է – սրբազանութիւնը որպէս ենթակայական կեցուածք՝ որ կը տարագէ, երբ կը գրէ. «Աւելի անդին... ես կը գրադիմ *կեանքի հանդէպ* Օշականին կատարի հաւատովը, վստահի այդ հաւատովը ո՛չ միայն իր վէպը կը նետէ ոտքի, այլեւ կը պայմանէ իր բննադատական, թատերական աշխարհները...» (ՀԺ 193): Կեանքը, ահա մոգական բառը, յղացքը կամ խորհուրդը, որ կ'իշխէ Օշականի աշխարհին մէջ, թարգմանող իր ձեռով անոր «կենսապաշտութիւնը»:

Վէպը Օշականի ենթակայ կը մնայ կեանքի եւ ոչ արուեստի օրէնքներուն: Կեանք /արուեստ ընթացիկ հակադրութիւն մը կայ, որուն կը հետեւի Օշականի գրութիւնը յաճախ, իսկ ուրիշ անգամներ կը խորտակէ գայն: Երբ Օշական կը յայտարարէ, որ «գրելը կը նշանակէ կեանք հիւսել (ՀԺ 209), բացորոշ կերպով արուեստ/կեանք հակադրութիւնը կը խորտակէ: Բայց երբ կը դատափետտ արուեստի օրէնքները յանուն կեանքի վաւերականութեան, յստակ է որ կը շարժի ընթացիկ հակադրութեան ծիրին մէջ (Օշականի մտածողական գրականութիւնը, որ ներկայ է թէ՛ գեղարուեստական, թէ՛ ալ բննադատական գրութիւններուն մէջ, միատարր չէ, այլ՝ խաւարուած): Կեանքը վկայակոչող, գայն չափանիշ, իմաստ ու վերջնագոյն հիմունք նկատող Օշականի յայտարարութիւնները բազմաթիւ են, թելադրող միշտ

նայնը. «Օշականին մարտարայնությունը կ'ազատանի կեանքին: Իրն է բառը՝ կենսապաշտությունը, որ հանգանակի միություն մը չէ» (ՀԺ 191): Անկի անդին, վերլուծողական նայն էջերուն մէջ, Օշական կը գրէ. «Օշական իր վէպին համար իրր խորհուրդ, իմաստ, ձգտում, հանգանակ միայն ու միայն *կեանք*ն է ունեցած: Միւսները, թող քննադատները գտնեն, ինքը կը հաւատայ կեանքին: Ճարտարապետութիւն, կեանքը այս եղանակով օգտագործել մը: Առաջարկեցե՛ք ձեր ուզած բառը, մերմակ թուղթը սա ձեռով լեցնելու արարքին...» (ՀԺ 192): Գրութեան մէջ Օշական ինք կը ստորագծէ «կեանք» բառը որ կայ ու կը մնայ իրրն միակ «հանգանակ», բայր օրէնքներէն, բայր կանոններէն, բայր գեղագիտութիւններէն անդին:

«Հանգանակ» բառին կրկնակ ներկայութիւնը յիշած տողերուս մէջ կը փաստէ արդէն ինքնին, որ եղածը հաւատոյ հանգանակ մըն է անշուշտ, ըլլալով հանդերձ նաեւ գրական հանգանակ մը, գրականութիւնն ըլլալով կրօնքին նմանակը: Օշական յայտուն կարճումով մը կը գրէ. «Բարձր մտքերու մէջ արդէն արուեստն ու կրօնքը գրեթէ կը նայնանան» (ՄՇՏ 28), անշուշտ խնդիրը փոխադրուած է հոս վէպէն արուեստին ընդհանրապէս, սակայն լոյսայն կը հասկցուի որ վէպը՝ իրրն արուեստի մէկ մասնաւոր կերպ՝ կը բաժնէ արուեստին այս ընդհանուր նայնութիւնը կրօնքին հետ: Վէպին սրբագնութիւնը գուցէ կը թիտ արուեստին ու կրօնքին նայնութենէն՝ միշտ բարձր մտքերու համար: Վէպին կրօնքին հետ այս նայնացումը անկասկած որոշ հանգիտութիւններ ունի *Մեհեանի* հանգանակին հետ՝ եւ վարուժանի բանաստեղծական մտածողութեան⁵: Սերունդը, որ կը մտածէ Յիսուսը «արուեստն է» մտածումը, եւ վիպասանը, որ վէպին կը վերագրէ ամբողջը սեւեռելու հեռանկարը, երբ այդ ամբողջը ենթակայ է կոտորակումի, արուեստին կը վստահի այլեւ ժողովուրդը կրելու, այսինքն՝ ժողովուրդը ժողովելու, ինչ որ նախապէս կոչեցի *ժողովուրդ մը յորինելու սրբազան* գործը:

⁵ Տե՛ս այս ուղղութեամբ Մ. Նշանեանի յօդուածը «Քննադատութիւնը եւ սրբազանութեան փորձը նկատմամբ», «Կայք», թիւ 3, 1968, մասնաւորաբար էջ 81-84:

⁶ Հարցին քննութիւնը փորձեր են Դ. Վարուժան կրակէ Շրջանակին մէջ, աշխատութեան մէջ (Անթիլիաս, 1968), որուն կը յղեմ ընթերցողը, առանց երբեք Վարուժան եւ Օշական նոյնացնելու:

ԲԱՂԱԴԻՉ ՄԱՍԵՐ

Վեպը կը ցարտարապետուի ներմակ բուդթին վրայ, հեռու տեսական օրէնքներէն (որոնք փաստօրէն, ի վերջոյ կան, քայց ասիկա ուրիշ հարց): Վիպային արտադրութեան իր ամէնէն աշխոյժ տարիներուն եղած հարցազրոյցին մէջ *Մայրիներու շուքին տակ*, «Ի՞նչ է վեպը» ենթարածմին մէջ, Օշական քիչ մը տարրեր սահմանում մը կու տայ. «Վեպը կեանքն է», կը յայտարարէ (ՄՇՏ 16): Հաստատումը բոլորովին դատարկ կրնայ նկատուիլ, եթէ նկատի չառնենք կեանքին տրուած օշականեան իմաստը: Յետ-օշականեան այն քննադատութիւնը, որ «կեանքը» դարձուցած է գրական ստորագութիւն, կ'իյնայ գոնեկութիւններու եւ անբովանդակ «նշմարտութիւններու» ծոցը, երբ չի մասնաւորեր իր ի գործ դրած գաղափարը, եւ «կեանքը» չափազանց շատ ընդհանուր գաղափար մըն է, որպէսզի մնայ միանշանակ: Ինչ որ սակայն շահեկան է, այն ալ «կեանք» յղացքին վերագրուած դերն է օշականեան համակարգին մէջ. ետ-մղել, երկրորդական դարձնել վեպին, աւանդական վեպին կառուցածքային մանրամասնութիւնները, քայց ոչ երբեք բոլորովին անտեսել: Սառը համար է, որ *Համապատկերին* մէջ, երբ կը խօսի իր վեպին մասին, յղացքին մէջ կը գետնդէ «Աշխարհ, տիպարներ, բարեք, գործողութեան զգայարանք, գաղափարագրութիւն, նարտարապետութիւն, հոգեբանութիւն, գրականութիւն, բանաստեղծութիւն, ճնի խնդիրներ, արուեստ, կշիռ» (ՀԺ 129):

Մայրիներու շուքին տակ կին մէջ, «Ի՞նչ է վեպը» պարբերութեան կը հետեւին ընդլայնումներ, որոնց խորագիրները բաւական են սահմանելու վեպի յղացքը. գործողութիւն, անհատներ ու հաւաքական ապրումներ, երեւակայութիւն եւ իրականութիւն, հարագատութիւնը տիպարներուն մէջ, արագութիւն եւ շարժում, եւ այլն:

Ներկայացման կերպը տարբեր է մէկ եւ միւս ցանկին մէջ. պէտք չէ մտնալ, որ երկրորդին մէջ Օշական կը սեւեռէ գլխաւորապէս *Մայրորդացը*, որուն առթիւ կ'ըլլայ հարցազրոյցը: Այս հանգամանքը սակայն կարելի է երկրորդական նկատել, ո'չ անոր համար, որ այդ վեպը կատարն է Օշականի արտադրութեան, այլ անոր համար, որ Օշական վեպի իր ըմբռնումը կը մատնէ պարբերութեանց դասաւորումով: Ուստի՝ դժուար չէ երկու ցանկերուն մէջ նշմարել վեպին հիմնական բաղկացուցիչ մասերը. գործողութիւնը, տիպարները, աշխարհ/իրականութիւն: Ինչ որ գործողութիւն կը կոչէ (նաեւ ՀԺ 161-169) կը վերաբերի եղելութիւններուն, իրագործութիւններուն,

արարքներուն «ընթացքին», անոնց շարժումին, եւ իբրեւ այդ կրնանք մտնել actionին, repelieին այսինքն՝ պատումով եկող դրուագներու շարայարումին, պայմանաւ որ անոր մէջ ներառենք Օշականի «ներքին գործողութիւն» կոչածն ալ» (ՀԺ 124): Արդէն արդի վեպին մէջ, որ այնքան կ'ախորժի ժամանակներու շփոթէն, յանալս անկարելի է անջատել ներքին գործողութիւնը պատումէն: Յամենայն դէպս, դժուար չէ նշմարել, որ վեպին այս յատկանիշները աւանդական թնոյթ մը ունին, չեն հակասեր դասական վեպին, նոյնիսկ եթէ անոնց կերպընկալումը (ինչ որ էական աշխատանքն է վիպասանին), Օշականի վեպերուն մէջ, մասնաշաղկատի մը կ'ենթարկուի անխուսափելիօրէն: Իսկական ինքնատպութիւնը կը գտնուի անշուշտ այդտեղ: Թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ մտահոգութիւններու բնուով վեպի յղացքին յատկանիշները, աւելին՝ այդ յղացքն իսկ կ'առանձնանան, պիտի տեսնենք աւելի անդին:

Օշական վեպը կը սահմանէ շատ ընդարձակ եզրով մը, որ կեանքն է, ըսի վերը: Այդ տարագը կը նշանակէ որ ամէն ինչ, որ կեանքին կը պատկանի, կը մտնէ վեպին մէջ, առանց թապուներու: Այսինքն՝ չկան կալուածներ, որոնք վրիպէին վիպասանի ուշադրութենէն կամ մնային արգիլուած: Ամէն ինչ կեանքէն վիպային է գորութեանսպէս, նոյնիսկ երկինքը, հրաշքը, երեւակայութիւնը, երազը, մահը, այսինքն՝ ո'չ միայն իրականը: Անսահման տարածք՝ որ կը կազմէ վեպին ու վիպասանին ազատութեան միջոցը:

Սակայն այս բոլորը պէտք է ներկայանան որոշ հանգամանքով մը: «Ի՞նչ է վեպ»ին մէջ վեպ/կեանք հաւասարումէն անմիջապէս վերջ Օշական կ'աւելցնէ. «Ու եթէ մեր տարիքը սահման մը ունի, սահման չունին մեր օրական ապրումները: Մէկը ժամուան մը մէջ տասն անգամ աւելի շատ, խոր, խիտ կ'ապրի, քան միւսը, որ ուրիշ տարիներ շալկած գերեզման շտկուելու ատեն

7) Միւլէյման էֆենդիի աստիճան, պատմողը կը յղուի բացայայտօրէն Արիստոտելին, երբ կը խօսի «միակեդրոն ընթանալու» կամ «միակեդրոն գործողութիւն»ի մասին, որ շատ հաւանաբար Արիստոտելի *Պոետիկային* praxisը նկատի ունի, իսկ միակեդրոն գործողութիւնը՝ թերեւս ուրիշ բան չէ՝ եթէ ոչ «*midia praxis*», միակ գործողութիւնը, որուն միակութիւնը կը բխի «առարկայի» միակութենէն, միակ դէպքէն, որուն վրայ Արիստոտել այնքան շեշտը կը դնէ. տե՛ս *La Poétique*, les belles Lettres, Paris, 1965, հատուած 1451 a: Դիտել կու տամ, որ այս պարագան բացայայտ լծողում մըն է, ընդմէջ տեսութեան ու վիպումին: Ունի ապրում մը ընթերցողին վրայ, զայն հեռացնել վիպումի կախարդանքէն, ինչ որ անպայման պատմողի ուզածը չէ:

ուրիշ ունի գինքը ետին դարձնող/Այսպես է նաև կեանքը վեպին մէջ» (ՀԺ 16-17): Քիչ մը կամայական կերպով կ'ընդմիջեմ մէջքերումը՝ ընդգծելու համար «կեանք»ին առաջին երկու բացառալուծումները իրրեւ «ապրում» եւ իրրեւ ժամանակ, որոնք Օշականէն անդին, խորքին մէջ, արդի վեպին, գոնէ Փրոստ-Ճոյս բեւեռներուն, հիմնական եզրերը կը կազմեն. կորսուած ժամանակին որոնումը, ներքին, հոգեբանական կամ գիտակցութեան ժամանակի հոսանքին, այսինքն՝ տեւորութեան նուաճումը, փորձուածին, զգացումսին, Erlebnisի արձանագրութիւնը: Օշականի ապրումը կը հետեւի այս նոր աւանդութեան, անկասկած: Իսկ ապրումին մէջ («Ն» սկզբանէ էր ապրում» ՀԺ 324) դժուար չէ տեսնել ժամանակը ենթակայօրէն ընկալելու կերպերէն մին՝ Օշական չ'անդրադառնար, որ «ապրում»ի յընդացքը որ կը գտնուի վեպի խորքին իր ծագումը ունի, այսինքն՝ կը սեռի իմաստասիրական ոլորտէ, Տիրքէի հոգեբանական աշխատութիւններէն:

ՎԱՅՐԿԵԱՆԸ

Ինչպէ՞ս կը գրուի կեանքը վեպին մէջ: Այսինքն՝ ինչպէ՞ս վեպը կը դառնայ վեպ, եթէ ընդունինք վեպ-կեանք հասարակումը: Ժամանակի եզրով մը՝ որ Օշական «վայրկեան» կը կոչէ. «Եթէ դուք հետեւած էք իմ նախկին գործերուս, պիտի տեսնէք որ անոնք հոգեբանական վայրկեաններ են առանկապէս, որոնք ժամանակին մէջ գետնորմին ու լուսաւորումին համար դրած եմ պահի յատակին կտոր մը բարձր (խոնարհեցրէ): Մակ-Պրոստիկըն մօտ 500 էջերը նուիրուած են լսանի չհասնող հիմնական վիճակներու ցուցադրումին, խորութեան dimensionին յատուկ ուշադրութեամբ մը» (ՄՄՏ 17): Նորա-վեպէն վեպ անցնումը կը թուի հիմնուիլ ուրեմն «վայրկեաններու» բազմապատկումին վրայ:

Իսկ վայրկեանը:

Համապատկերի ինքնադատութեան փորձին մէջ, որ ունի աւելի բացատրական, աւելի «վարժապետական» պիտի ըսէի

8) Այս հարցին վիլիստիական ոլորտները կ'ըրթան ի հարկէ Պերկունէն մինչեւ Օգոստինոս, այսինքն՝ մտածողներու այն հատուածին, որոնք ժամանակ յրացքը կը տանին Եսին, անոր տալով «ենթակայական» հիմունք, հիմնովին տարբեր արիւտտուլեան ժամանակի արտաքին եզրէն:

նկարագիր, քան Քաշնեանի հետ հարցազրոյցին, Օշական կը թուի հրաժարած ըլլալ: «վայրկեան»ի գաղափարէն եւ կը խօսի «վիճակներու», «պահերու» մասին, զանոնք առընչելով բացա-
 յայտօրէն հոգեբանական վերլուծումին: «Հոգեբանութիւնը, սա-
 էջերուն վրայ, կը ձգտի պատկերել վիճակ մը, ուր ներքին ապ-
 րումներուն համար որոշ նախասիրութիւն մը կը դառնայ
 զգալի» (ՀԺ 194): Կու տայ նմոյշներ այդ վիճակներէն, գլխա-
 ւորաբար *Մակ-Պտուկըն եւ Մահակ Պարգեւեան*էն եւ կ'ըզրակա-
 ցունէ: «Մանր վէպերէն իւրաքանչիւրը այսպէս ընտրուած վի-
 ճակներու եւ պահերու իրանցիկ շարք մըն է, շփոթութիւն
 տուող, բայց միշտ պատկանող իրականութեան փլանին» (ՀԺ
 198): Այդ տողերուն գրուելէն շատ առաջ, *Մնացորդացը*ի հրա-
 տարակութեան առթիւ Գուրգէն Մխիթարեանին տրուած հար-
 ցազրոյցի մը մէջ, Օշական նորէն վէպը կը սահմանէ իրրեւ «հա-
 ւաքանջ մը պահերու»: «Ինծի համար վէպը այսպէս տեսնուած
 պահերու հաւաքածոյ մըն է միայն»⁹: Յատկանշականօրէն
 «հաւաքածոյ»ին կապին մասին, ըսել կ'ուզեմ՝ գործողութեան
 մասին ո՛չ մէկ ակնարկութիւն կայ այստեղ: Դժուար է մտածել,
 որ պահերու որեւէ հաւաքածոյ վէպ դառնայ, առանց որոշ
 կարգաւորումի աշխատանքի:

Պէտք է նկատի առնել, որ «վիճակը» *Համապատկեր*ի երկայն-
 քին կը գործածուի նաեւ աւելի լայն առումով: «Մտտք»ին մէ-
 ջ Օշական իր գրականութեան պատմութեան, այսինքն՝ համա-
 պատկերին համար տարազներ կը թուէ, որոնցմէ մին է վի-
 ճակը. «ՎԻՃԱԿՆԵՐ, որոնք այս ժողովուրդին կեանքին վրայ
 բացուած լուսառատ, արիւնտ, թուխ կամ մեռելական համա-
 պատկերներ են, գրողը՝ ինչպէս հասարակ զանգուածը միան-
 գամայն իր առջին, տեսիլքին, ննջումին ու կիրքին մէջը ընդ-
 փարշոյ» (ՀԱ 11): Այս իմաստով՝ վիճակը տարրեր հանգամանք
 մը ունի, քան վայրկեանը: Սակայն եթէ իսկապէս լուրջի առնենք
 Օշականի թելադրանքը, *Համապատկեր*ը արեւմտահայ գրա-
 կանութեան վէպը սահմանող (ՀԱ 24), այն ատեն վիճակ ու վայր-
 կեան կը դառնան նոյնանման, հանգիտական յղացքներ: Եւ ար-
 դէն Օշականի թուած տարազները հանգիտութիւն ունին վէպի
 յղացքին յատկանիշներուն հետ. գործեր, դէմքեր, մտայնութիւն-
 ներ, հոգեբանական բարեխառնութիւններ, գաղափարագրու-
 թիւններ, վիճակներ: Այս ցանկը եթէ նոյնը չէ, նման է վէպի
 աշխարհին, տիպարներուն, գաղափարագրութեան, հոգեբանու-

⁹ Կ'ենթադրեմ որ այս բառը վիճակ մըն է եւ պէտք է կարդալ «իրերանցիկ»,
 մէջ-մէջի մտտող իմաստով:

¹⁰ «Յուսարեւոյ», 4 Դեկտեմբեր 1931.

թեան, եւայլն: Միակ պակասող, բայց հիմնական եզրը գործողութիւնն է, բայց գրականութեան պարագային ստիկա ուրիշ բան չէ՝ եթէ ոչ պատմութիւնն իսկ: Նմանողական կամ հանգիտական կապը, որ գոյութիւն ունի վեպի յղացքին ու գրականութեան պատմութեան յղացքին միջեւ, կ'արտօնէ անկասկած գրականութեան պատմութիւնը վեպ նկատելու տարագրը: Սակայն գրականութեան պատմութիւնը վեպ է նաեւ այն պատճառով, որ սկիզբ կ'առնէ ընդհանուր վիպումէ մը, որուն մասին կը խօսուի «Օշական Բնագրատ» գլուխին մէջ: Վիճակին երկդիմի օրինավիճակը կ'արտօնէ անհատէն ժողովուրդ, անհատական ապրումէն դէպի հասարակական ապրումներ անդրաբեռումները: Սեղմելով, թերեւս ալ պարզացնելով կարելի է ըսել, որ հասարակական վիճակը ժողովուրդի մը համար է այն՝ ինչ որ է վիճակը անհատի մը համար:

«Վայրկեան»էն «Վիճակ» ու «պահ» անցումը հիմնական յեղաշրջում մը չի բերեր վեպի յղացքին մէջ: Համապատկերին գրողը կը խուսափի տեսութենէն, օրինակներ տալով: Բայց անցումը կը թելադրէ մէկ բան. Օշական «Վայրկեան»ը, կը մտածէ իբրեւ վիճակ, հոգեբանական ներքին վիճակ, փաստ՝ որ չի վարանիր «պահ» աւելցնելու եւ ամբողջը գետնիցիւ «հոգեբանութիւն» տարագրին տակ: Հետեւաբար կը շարունակեմ «Վայրկեան»ի թելով: «Վայրկեան»ը ժամանակի հատուած մըն է, որ սակայն ժամացոյցներու ժամանակը չէ, ինչպէս օրինակ Վ. Վուլֆի «պահեր»ը ժամացուցային ժամանակին մէջ ընդլայնւող տեւողութիւնն են: Օշական երկու անգամ առնուազմ կ'անդրադառնայ այս հարցին: Նախ՝ Միխայիլ Բախտինի հետ գրողին մէջ, երբ վերջինին հարցումին՝ թէ վեպը ինչպէ՞ս կ'ըմբռնես, կը պատասխանէ սապէս. «Ինծի համար վեպը ընթացիկ ճարտարապետութեամբ կանգուն 400 էջոց հատորը չէ, ուր յարդարանքը, մկրատը, կանգունը մեծ չափով կը միջամտեն կեանքին, կերպար մարդուն հասակին յարմարցնելու: Ան որ կէս ժամ կը սպասէ ձեռքերը կապ, թուրքին դանակին, համբուով մէկիկ-մէկիկ ինկողները, այդ մարդը կ'ապրի հագար դար այդ կէս ժամու ընթացքին: Արուեստի գործը պարտաւոր է այդ տեւողութիւնը գտնէ հիւլեական չափով զգալի ընել, այլ խօսքով՝ 100 տարին մէկ վայրկեանի մէջ խտացնելու: Կը հասկցուի, թէ սովորական վիպումը, յեղումը անբաւարար պիտի գան...»¹¹ Յատկանշական է արուած օրինակը պահէն եւ անշուշտ երկու ժամանակներու հակադրութիւնը, ապրուած տեւողութեան ընդարձակութիւնը եւ ժամացուցային ժամանակին սահմանափակումը: Հատուածին մէջ կը բանի երկրորդ հակադրութիւն մը, որ է անհուն տեւողութիւնը եւ գրութեան խտութիւնը, գրութեան սահմանափակութիւնը: Այս երկրորդ հակադրութիւնը կը

¹¹Նշում յօդուած:

կազմե՛լ Օշականի վեպին ներքին գապանակը, այն՝ որ գրութիւնը կը գետնդէ ընդմէջ անհուն ապրումին ու հունաւոր խօսքին:

Երկրորդ հատուածով մը, տարի մը ետք գրեթէ, *Մայրենեզու շուքին տակ* ին մէջ, Օշական կը վերադառնայ խնդրին եւ կու տայ սահմանումը. «Շատ խորացած վայրկեաններ, որոնք սեւեռուին շատ մը մարմաներով միանգամայն: Շատ մանր դիտւած հեղուկ մը՝ արիւնի, հոգիի, ոգիի եւ մեղքի նոյնքան իրաւասակի մը վրայ: Տեսակ մը pointillisme: Տեսակ մը առընթերադրում փոքր ու մեծ վիճակներու, որոնք իրենց հանգիստութիւնները հայեցման ու խեղդեն ընդհանուր գործողութեան մը մէջ, բայց ցցեն իրենց մասնակին, անձնացած ու տարբեր» (ՀԺ 20): Հատուածին մէջ, Օշական երկու յաջորդական փոխաբերութիւններ կը գործածէ. նախ՝ հեղուկը՝ մօտէն դիտուած, կարծէ՛ք խոշորացոյցին աչքը, ռապիտակը ըլլար համայնատես ու շրջուն, եւ ուր կը յայտնուին անտեսանելի մասնիկները հեղուկին մէջ շարժող, անոր ծալքերը: Բայց հեղուկը շարժուն, անբունելի, հոսում ու գնայուն տարրն է. երեւակայութեան համար անկա ժամանակին ու ասոր մէջ անցնող քաններուն խոնորդն է, որուն տակ դժուար չէ տեսնել արեան իրաւասակը: Հոսող հեղուկի, ջուրի փոխաբերութիւնը աւանդական դարձած է Պերկանի *Les Donnees immediates de la conscience* հատորի վերլուծումներէն առին, ուր փիլիսոփան կը հակադրէ արտաքին, ժամացուցային ժամանակը, որ սուկապէս տարածային տուեալ կը նկատէ, եւ ներքին, հոսում, խուսափուկ տեսողութիւնը, ինչպէս վերը եղաւ արդէն նշում մը: Կեանքը հոսանք մըն է (ՄՄՏ 22), կամ հեղեղ մը արեան ու սերմի. կան «կեանքի ալիքները» (ՄՄՏ 18) եւ «Գործը հոսանքներու իրերակցում մըն է, իւրաքանչիւր ագոյց (boucle) տեսարանն է միայն, որ կը փոխուի: Դժուար է առաջին յարձակումով նուանել հոսանքը: Առաջին միջոցները ջուրին ամէնէն մօտի խաւերը միայն կրնան թափանցել: Ցաջորդական խորաչափումները անհրաժեշտ են, յատակին հասնելու համար» (ՀԺ 22-23): Օշականի կեանքը հոսում, տեսապէս փոփոխական, շարժուն էտտարը մըն է, որուն բնատիպ պատկերէն մին է «*Թիւրքմէնին աղջիկը*»-ին լնակն ու ասոր հոսումները: Եւ կը հասկցուի դժուարութիւնը պատումին՝ հետեւելու այս անդադար գնայուն, ուժական, ճեւ ու կերպ փոխող, այսինքն՝ անձեւ հեղուկին, գայն քառերով բռնելու համար: Վիպասանին ամբողջ վարպետութիւնը կը կայանայ գրելը վերածելու ամէնէն թեթեւ ու ամէնէն ծանր լինելութեան մը բխումին, անցքին: Օշականէն շատ ետք, Ժ. Տըլէօզ կը գըրէ, որ գրելը «հոլովոյթ մըն է, այսինքն՝ կեանքի անցք մը, որ կը հատէ-վանցնի ապրելին ու ապրումը»¹²:

¹²) G. Deleuze *Critique et clinique*, Paris, Minuit, 1993, էջ 11.

Ջուրի, հոսանքի փոխաբերությունը Պերկունի՝ ինչպես Օշականի մօտ կը հակադրուի անշուշտ մտքի, գիտակցութեան կատարած աշխատանքին: Ընթացիկ վէպը, ինչպես Պերկունի խելք կոչածը, կանգունի, չափի նարտարապետութիւն մըն է, յարդարուած, մկրատուած, մինչ իսկական տեւողութիւնը սահման, չափ ու կանգուն չի նանչնար: Կը խորհիմ, որ չափի, կանգունի կերպերէն միմ է գործողութիւնը: Ասոր համար է որ վիպասանը կարծէք կը սիրէ հակադրել գործողութիւնը եւ վայրկեանը՝ դէպքերն ու վիճակը: Կը գրէ. «Դէպքերը, ըսել կ'ուզեմ՝ իրարու ազուցուած շատ մը շարժում վիճակներ, որոնք մեկնակէտ կը կազմեն ամէն յուրջ կառուցումի, կ'ենթարկուին արագութեան եղծումի մը կը վերածուին միեւրոյն փրանով պատկերներու: Անոնք պարտաւոր են ազատագրուիլ մտմայի վիճակէն, եագմիլ կլորութիւն, յետոյ՝ խորք, եւ իբր այդպէս կազմակերպուած կեանք՝ քաղ մեր առջեւէն: Այդ արդիւնքին համար անբաւարար պիտի գար վէպին ընթացիկ գործողութիւնը: Ասիկա կարելի է նմանցնել ջուրին երեսը յուրջ շարժումի մը, որ քանի մը մեթր մարմինով կը պղտորէ առաջին փլանը, բայց անգոր է անկէ վար: Չի բաւեր մարդերը քարթափել տալ այդ խառնակ ջուրերուն երեսին: Արուստագէտը հարկին տակն է մեր կիրքերուն ամբողջ քանդութիւնը կտրել-անցնելու ամէն վայրկեան՝ երեսէն մինչեւ յատակը ու փոխադարձարար: Վասնզի ուրջ բան չէ ինքնին կեանքը: Ամէն վայրկեան՝ մէկ քարձուներէն միւս անդունդին համար պատրաստուած խորաշարժման մեթոտ մը, -սեւ՝ ինծի համար իմաստը նոր վէպին...» (ՄՇՏ 18): Ինչպէս կը տեսնուի վէպի ամբողջ յղացքը հիմնուած է վայրկեանին վրայ, որ այլեւս կ'որոշադրուի իբրեւ խորաքափանցման մեթոտ դէպի տեւողութեան սեւեռումը:

Վայրկեանը մօտէն դիտուած հեղուկն է, կեանքին հեղուկը ժամանակին մէջ. բայց նաեւ «կէտականութիւնը»¹³: Հեղուկի տեսարանումը բազմաթիւ նամբաներէ այդ հեղուկը կը վերածէ բազմաթիւ կէտերու: Շարժումը, հոսումը կը վերածուին նաեւ կէտերու իրարու մօտիկ ու պատկեր կազմող, կայուն: Կէտերը՝ ո՛չ տարածութիւն են, ո՛չ ալ գուտ տեւողութիւն: Կը կցուին իրարու միուդի գործողութեամբ մը, արարքներու ամբողջութեամբ մը, մինչ իրենք բազմուդի են ու համադրողական:

13) Այստեղ չեմ կրնար չմէջբերել Օշականի մէկ դիտողութիւնը *Մահակ Պարզեւեանի* մուտքին «Մարդու մը կեանքը տող մը բան է յաճախ: Բայց հազարաւոր կէտեր, որոնցմէ կազմուած է տողը... Գիրքերը քիչ պիտի գային այս խաղին իրագործումին: Կը փորձենք սակայն», *Մահակ Պարզեւեան*, Պէյրութ, 1986, էջ 10:

Անոնցմէ կը ժայթփեն արարքները. ասոր համար կը թուին միշտ սեմեր, սահմաններ, ծայրագոյն կէտեր, առանձնացուած, մասնակի ու գործողութեան մէջ անփոխարինելի:

Վայրկեանները բացառիկ պահեր են, փակագիծներ կարելի է ըսել, որոնց ընթացքին պատմողը կը դանդաղեցնէ արարքին ժամանակը (գործողութեանը) ու կը փորձ վայրկեանը, կ'երկարէ ընթերցումը: Հոն է որ կերպարի մը հոգեկան թնճուկը կը պարզուի, կը տեսարանուի, յետոյ կրկին հանգուցուելու համար: Հոգեկան թանձրութեան մէջ՝ պատուածք մը, որ շատ անգամ գիտակցութեան հոսանքի կերպը կ'առնէ: Վայրկեանը կեանքինն է, ասոր մէկ խտացումը կէտի մը վրայ: Թանձրութիւն ու երես, խորութիւն ու մակերես, հեղուկ ու կէտ՝ սեռաստիկ փոխարեութիւններու մասեր, որոնցմով Օշական կը թելադրէ վիպողական արարքին կրկնակ եզրը վէպին մէջ. երկու ժամանակներ, որոնցմէ մին գործողութեան ու դէպքերու արարքին ժամանակն է, պատմելին. եւ միւսը՝ որ կը յայտնուի ընդհատ-ընդհատ, կ'ընդլայնի բազմի մէջ, արեւան տեսողական ժամանակ, անհատական ու ցեղային, որուն վերլուծումը կը տարածուի էջերուն վրայ:

Եթէ վայրկեանները կը դանդաղեցնեն ներկայ գործողութիւնը, անցեալին իրենց յաճախակի յղումները կը կտրեն պատումին միտդի ընթացքը, եւ կեանքին վերարտադրութիւնը «կեանքը նայնիսկ մեռելներու աշխարհին մէջ» (ՀԱ 24)-, կը դարձնեն ուղղահայեաց էջ, Օշական կը կոչէր «խորաչափում»: Վայրկեանի տեսութեամբ Օշական կը փորձէ լուծել պատումի ու ժամանակի հարցը, ժամանակի ու պատճառականութեան թնճուկը. գործողութեան դանդաղեցում մինչեւ անշարժացում եւ դանդաղեցումով պատճառաբանում արարքին: Այս դանդաղեցումն է գործողութեան, որ Օշական կը կոչէ «հոսումէ գերծ»ութիւն (ՄՇՏ 22): Ներքին ապրումներուն խորաչափումը կ'արտադրէ որոշ խտութիւն կամ «գնացքի» առկայում: Ինչ որ կը նշանակէ, թէ կեանքի հոսանուտին արձանագրութիւնը կը ստեղծէ գործողութեան, ինչպէս պատումի, ինչպէս գրութեան գնացքի առկայում: Պատումը որոշ չափով արագացման, դանդաղեցման հակադիր աշխատանքներու ամբողջութիւն մըն է, նուրբ տնտեսում մը: Ասոր համար է, որ Օշական կը խօսէր «մէկ բարձունքէն միւս անդունդին համար պատրաստուած մեթոտ մը», որ «իմաստն (էր) նոր վէպին» եւ կ'անկցնէր. «Հասկընալի է, որ սովորական պատումը քիչ գայ այս իրերանցիկ, գիրար շարունակող, բայց ինքն իր մէջ միայն խորանալէն ախորժող կեանքի ալիքները ամբողջութեամբ պարագրկելու» (ՄՇՏ 18):

Վայրկեանները իրենց կարելիութիւնը կ'առնեն այն հիմնական երեւոյթէն, ըստ որուն, Օշականի մօտ, ներքին ժամանակի մէջ ոչինչ կը կորսուի: Հոգեբանական ժամանակը - պերկանեան տնտրութիւնը - յարանուն, նորոգուող հոսանք մըն է, որուն մէջ անցեալը կը մնայ, եւ կը մնան անոր մանրամասնութիւնները: Ասիկա ճիշդ է նաեւ ֆրեյտսեան տեսութեան ալ համար, ուր անցեալը մոռցուած, ետ-մղուած մշտապէս «ներկայ» է, այսինքն՝ կը սպասէ: Օշականի վէպի քեֆնիքը կը սնանի երկու տեսութիւններէն ալ հաւասարապէս, ինչպէս Փրոստ կ'ընէր արդէն Պերկսոնի բազդատմամբ: Մեծ ցնցում մը բաւական է, որպէսզի հոգիին կազմաւորուած համակարգը խախտի, բեկումները յայտնուին եւ անցեալը վերադառնայ: Հոգեբանական այս երեւոյթը, աւանդական հոգեբանութենէն անդին, ունի կրկնակ տարողութիւն մը. անցեալին մէջ նետուածը նախ՝ ետ-մղուած, ծածկուած արարք ու ցանկութիւն մըն է, գոր մարդուն գիտակցութիւնը կը «մոռանայ», կը փորձէ ջնջել: Ասիկա սակայն է նաեւ վիպական հնարք, ինչ որ կարելի է «չետադարձ ակնարկ» կոչել ու լուսաւորում, որ կ'առկա յետումը եւ կը դառնայ անցեալին: Անոր կատարեալ օրինակն է հոգեվարքին վայրկեանը *Մակ-Պտուկը*ի մէջ, օրինակ:

Հեղուկի պատկերը կը յղուի արեան, ինչ որ բնախօսական տարածք մը կու տայ Օշականի խօսքին, եւ կենսապաշտութիւնը կը գուրդողէ բնախօսականին: Սակայն արիւնը այնքան ալ պարզ գաղափար մը չէ, ընդհակառակն, քարոյ «յգացք» մըն է: Անիկա անուններէն մին է կիրքին ընդհանրապէս, որ կը կազմէ կեանքին հիմնատարը, կեանքին «շրջումը» (Հժ 202), գուցէ ըսել կ'ուզէ կեանքին շրջագայումը, մասնաւորումը, անոր հոսանքին ու հասանուտին այնքայնութիւնը: Օշական իր գրականութեան գլխաւոր նորութիւնը կը նկատէ այս կիրքը: Կը գրէ արդէն. «Արտաքին աշխարհին ու ասոր վրայ ճեւ հագնող բարեքրու խաւին համար Օշական գիտակից կեցածք մը չէ պաշտպանած: Բայց անոր վէպը ծանր, խորունկ, բացառիկ մեղքերու մոայլ կրկէս մըն է, իր բառովը՝ կիրքի խառնարան մը...: Մեր կեանքին մէջ ժամանակը -գիտակցօրէն սպառուածը- այդ մասնաւորումով չենք տրամադրեր կիրքին: Բայց կը մոռնանք մեր չգիտակցուած ժամանակը, որուն բոլոր հիւլէները -թէ կարելի է այդպէս բացատրել- թրթռում են անով...» (Հժ 199): Այլ խօսքով՝ կիրքը, որուն խառնարանն է Օշականի վէպը -ինչպէս նաեւ Քննադատութիւնը ի դէպ եւ գրականութիւնը ընդհանրապէս (Հժ 533, 644), կը կազմէ «չգիտցուած ժամանակը»:

ինչ որ կոչեցի տեսողութիւն, թէն Օշական այստեղ կարծէք կը յառի դէպի ֆրէտտեան կաղապարը:

Վեպը կիրքի խորաշափում մըն է: Էական էջի մը մէջ, Օշական կ'անդրադառնայ «կեանքի խորհուրդին» եւ կը գրէ. «Կեանքը շատ մը կերպարաններ փոխ կ'առնէ: Քանի հագար տարի կայ, իրարու յաջորդ քաղաքակրթութիւններ ջանացած են մեղմել, ամոքել այդ դաժան աստուածութիւնը, որ կը նստի մեր շիրերուն կեդրոնին ու մեզ կ'ընէ խաղալիքը իր խաղերուն: Արիւն: Սերմ: Կիրք: Մահ: Աստուծոյ յաճախ իրերահաղորդ ամաններ են, որոնց բոլորին մէջ ալ կը թրթռայ մէկ ու նոյն տարրը: Արուեստի գործը կը սնանի այդ աշխարհով... Կիրքերուն կիրքն է սեռը, ֆրէտտեն շատ առաջ...» (ՀԺ 533): Հատուածին մէջ մեկտեղուած են Օշականի մտածումին բոլոր տարրերը, բոլորն ալ կեդրոնացող մէկ ու միակ բառի մը շուրջ, որ սեռն է, կիրքերուն կիրքը կ'ըսէ բանաձեւը: Եւ արդէն մէջքերուած տողի մը մէջ, ըսուած է «ինձի համար արուեստը սեռն է» եւ Օշական կ'աւելցնէ ֆրանսերէն բառը՝ *sexer*: Վեպը ուրեմն՝ իրրեւ արուեստի գործ առընչուած է սեռին հետ: Սակայն սխալ պիտի ըլլար մտածել, որ Օշականի «սեռ» կոչածը բոլորիս յայտնի տունայն է: Ինչ որ կը գրէ կիրքին համար, լուսարանիչ է սեռին. «Գրական փառասիրութիւն մը, տրամին առօր, տեսին շլացքը, արեան ձգողութիւնը (գայն թափելու անասնական, քայց անհերքելի ախորժակները մարդոց, մանաւանդ ցեղերէ ժամաց մօտ) կիրքերու ձեւը կրնան հագնիլ» (ՀԺ 532): Գրական փառասիրութեան մը եւ անասնական ախորժակներուն միջեւ թերեւս ո'չ մէկ հասարակաց եզր, բացի այդ կիրքէն, որուն գերագանց տեսակն է սեռը: Որով սեռը ո'չ սեռային գործարանն է, ո'չ ալ ասոր ախորժակներուն նկարագրութիւնը: Հոգի-մարին էիջ մը խախտու հակադրութեան մէջ, սեռը էպէս «հոգեկան» նրեռյթ մըն է Օշականի մօտ, եւ գուցէ ասոր համար է, որ կիրքը կը մօտեցնէ *libido*ին (ՀԺ 199), իր կարգին առընչուած հոգեբանութեան: Հասկնալի է, թէ ինչո՞ւ Օշական կը նախընտրէ խուզարկել սեռին ու կիրքերուն ներքին աշխատանքը, անոնց խուլ ներկայութեան փաստերը կը վերբերէ եւ կը խուսափի սեռային արարներու նկարագրութենէն, նոյնիսկ *Սիւլէյման Էֆէնտի*ին մէջ, ուր ամենէն աւելի շատ էին առիթները նման նկարագրութեանց:

Կիրքերու հետախուզումը կը յօրինէ անսովոր «պատմում» մը, ինչպէս Օշական կ'ըսէր: Սակայն միայն պահերով կազմուած, առանց տարրական գործողութեան, առանց դէպքերու,

որոշ ընթացքի մը, վեպը կը մնայ սոսկապէս «հաւաքածոյ»։ Օշական կը գրէ, որ «գործողութեան զգայարանքի մը գոյութիւնը... հիմնական պայմանն էր գրողի մը» (Հժ 162)։ Նշեցի արդէն վերը, որ դժուար է վեպ մը մտածել առանց վայրկեաններու կամ վիճակներու կարգաւորման որոշ կանոնով մը, եւ «հաւաքածոյ» բառը կը դիւրեւ ընթերցողը։ Եւ արդէն Օշականի կիրառումը երբեք որեւէ հաւաքածոյ չէ, որ կ'արտադրէ։ Ո՞ւր կը գտնուի կարգաւորումին օրէնքը։ Նախ՝ Օշական կը սահմանէ դէպքերը սապէս. «Դեպքերը, ըսել կ'ուզեմ՝ իրարու ազուցուած շատ մը շարժում վիճակներ, որոնք մեկնակէտ կը կազմեն ամէն լուրջ կառուցումի...» (ՄՇՏ 17)։ Դեպքերը շարժում վիճակներ են արդէն, միայն թէ շարժումը կը դիմէ ի՞նչ ուղղութեամբ եւ ո՞ր աւարտին։

Հարցումին պատասխանը Օշական մեկին կերպով չի տար։ «Գործողութիւնը» պարբերութեան մէջ, Օշական կը խօսի արարքին ու մայրին մասին, մէկդի կը նետէ ռատիկանակալ կաղապարը, եւ աւարտին մօտիկ կը հաստատէ. «Երբ կը քայլենք իր արարքին ընթացքի մէջ, ապահով ենք, որ թերթօնական իրադարձութեանց կրկէս մը չէ, ուր կը քայլենք» (Հժ 169)։ Գրութիւնը կ'ընդգծէ արարքը, գայն գոչելով ընթացքին։ Ո՞չ մէկ խօսք գործողութեան կարգաւորումին մասին։ Սակայն կը խորհիմ, որ Օշական նկատի ունի այստեղ կիրքը։ Ան է, ասոր ներքին ընթացքը, որ կը կազմէ գործողութեան մը օրէնքը։ Այդ կիրքն է, որ Օշական կը կոչէ «ներքին գործողութիւն» (Հժ 167)։ Այսինքն՝ կեանքը. «Կեանքը համազօր է գործողութեան, կը հասկցուի, թէ Օշական կրնայ մեզ իրեն հետ քաշել, տանիլ նայնիսկ, երբ կը վերլուծէ» (Հժ 168)։ Գործողութիւնը կը հաւասարի կեանքին, այսինքն՝ կիրքին, եւ ըստ իս, կիրքին ելեւէջն ու անկումը կը կազմէ պահերու հաւաքածոյին ներքին օրէնքը։ Այսինքն՝ կանգունը, չափը, մկրատը կը միջամտեն ի վերջոյ անմիջապէս որ կիրքին հոսանքը հասնի։

(Վերջը յաջորդով) ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

14) Աւելի ուշ, վաթսու նական թուականներուն՝ Նոր վեպը, Ա. Ռուպ-Կրիշէի, Փլ. Սիմոնի եւ քանի մը ուրիշ գրողներու գրքով կ'ապատագրէ ինքզինք պատու-մէն, դէպքէն, գրուագէն, սակայն չէ կրցած ապատագրուիլ պահերու կամ թեմաներու դասաւորումէն, գրութեան ընթացքին կանոն մը տուող կարգէն։ Տիրու նիստ առած օրինակը «puzzle» ընդունելի չէ, քանի որ ի վերջոյ դէպքերը կամ գրութեան մասերը ընթերցողին կը տրուին որոշ կարգով մը։ Պատումին խորտակումը ըստ իս անելի հիմնական է Ռոնէ Լուի Տէ Զօրէի, Պլանշոյի եւ Ռ. Լափորթի «վեպերուն» մէջ։

Գ. Գ. ԱՆԱՆԵԱՆ

**«ՉՈՐ ԱՍԵՄ,
ԱՍԵՄ ԵՒ ՈՉ ԱՄԱՉԵՄ»**

Նոր վարդապետության առաջին դարերում Քրիստոսի ճշմարտությունը գանգուճաններին հասցնելու հիմնական եղանակը քարոզն էր, որ իրականացում էր գաղտնի հաւաքներում, հագլաղէպ՝ հրապարակներում, քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելուց յետոյ՝ եկեղեցիներում: Այստեղից էլ այն մեծ նշանակութիւնը, որ տրւում էր քարոզին ու քարոզչին: Հայ եկեղեցական հրապարակախօսութիւնը արդէն ճշդ դարում իւրացրել էր եւ քրիստոնէական քարոզչութեան, եւ հետտրական արուեստի աւանդութիւնը: Դրա վկայութիւնը ոչ միայն «Գիրք պիտոյից»ն է, քարոզի էութեան բացայայտումը եւ քարոզչին ներկայացուող պահանջները, այլեւ նոյն դարի մատենագրութիւնը, որ պատմագրութիւն է ու գեղարուեստական գրականութիւն, փիլիսոփայութիւն է ու հրապարակախօսութիւն, ճարտասանութիւն է ու գրական քննադատութիւն...

Հայ եկեղեցին երբեք արգելք չի դրել իր սպասաւորների առջեւ, անկախ աստիճանից ու դիրքից՝ նրանք ոչ միայն կարող, այլեւ պարտաւոր էին ծառայել «աստուածային բանին», նաեւ դրսում, ընտանիքում, ամէնուրեւ: Եւ, այնուամենայնիւ, հիմնական քարոզչալը եկեղեցին էր, գլխաւոր քարոզիչը՝ վարդապետը Քարոզելու իրաւունքը, մասնաւորաբար տօնական արարողութիւնների ժամանակ, վերապահւում էր այդ նպատակով յատուկ կրթութիւն ստացած անձանց: «Ոչ միայն վարդապետութեան, այլ եւ Մայրագունութեան առանձին աստիճաններ սահմանուած են աւետարանումի գործը բարձրացնելու համար»⁽¹⁾, Աւելին՝ «Քարոզչախօսութիւնը այնքան կարեւոր նշանակութիւն ստացած էր Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, որ ըստ Փարպեցիի վկայութեան յատուկ տեղ կար հայ եկեղեցիներուն ներքին սարուածքին մէջ քարոզ տալու համար»⁽²⁾,

Քրիստոնէական հրապարակախօսութեան նշանաւոր ներկայացուցիչները, եկեղեցու յայտնի գործիչները վկայութիւններ են թողել վարդապետին, որ նշանակում է քարոզչին ու հրապարակախօսին, ներկայացուող պահանջների մասին: Դեռևս Ծրդ դարում վարդապետին ձեռնադրողը, նրա գիտելիքները ստուգելուց բացի, ներկայացնում էր նաև այն պահանջները, որոնցով պէտք է առաջնորդուէր ապագայ քարոզչին:

Լուսաւորել «մեղաւորաց, ազիտաց եւ անհաւատից»: Հետաքրքիր է, որ անմեղները, դիտուեններն ու հաւատացեալները դուրս են մնում քարոզչի տեսադաշտից, այդպէս է նաև Աստուածաշնչում: Քրիստոսը երկիր է իջնում մեղաւորներին փրկելու համար, երեւոյթ, որի դէմ ծառայաւ մեծ Նարեկացին: Քարոզչիը աներկիւզ եւ համարձակ պէտք է լինի, ամէն ինչից վեր պէտք է դառի աստուածային ճշմարտութիւնը եւ յանուն նրա տարածման ու հաստատման շնորհիւ: Ինչպիսի իր անձը: Նրա համար նշանակութիւն չպէտք է ունենայ դիմացինի անձնաւորութիւնը: Շինական է նա, իշխան, թէ թագաւոր, միեւնոյն է, քարոզչիը պէտք է ասի իր խօսքը: Յաջորդ պահանջը լրացնում է կերպարը՝ պէտք է քարոզել «առանց երեսանց եւ առանց ակնառութեանց»: Քրիստոսի վարդապետութեան սպասարկուն անաչառ պէտք է լինի ու անանձնական, մարդկանց պէտք է ծառայի առանց շահի ակնկալութեան: Հասարակական շահի այսպիսի բարձր գիտակցումն ու իրականացումը դարձաւ հոգեւոր առաջնորդների, եկեղեցու նշանաւոր գործիչների վարձագիծը: Քարոզչին ներկայացուող պահանջների մէջ յատուկ տեղ է յատկացւում քարոզչութեան միջոցներին: քարոզը պէտք է լինի «պարզ եւ յստակ»: Շատ էական է նաև քարոզիտօքի բովանդակութիւնը՝ «իմաստութեամբ քարոզել»: Սա կարող էր վերաբերել նաև բովանդակութեանը, նաև ձեռին: Հասկանալի է ինքնին, որ պարզ ու յստակ ձեւերով քրիստոնէական դաւանութեան բարձր սկզբունքներն ու գաղափարները պէտք է բացատրել, հասկանալի դարձնել ժողովրդին: Ամենավերջին պահանջը շատ աւելի խորն է ու տարողունակ, քան կարող է թուալ առաջին հայեացքից: Ձեռնադրողը պատուիրում է քարոզիտօքով «կշտամբել, յանդիմանել եւ միտմարել»: Երեւոյթները ոչ թէ արձանագրել տարեգրի նման, այլ որոշակի, տուեալ դէպքում քրիստոնէական հաւատամքի հայեցակէտից գնահատել, ճշմարիտ ուղուց շեղուողներին կշտամբել ու յանդիմանել, դժբախտներին, թող հոգի ունեցողներին միտմարել ու յուսադրել:

Օրինաչափ պէտք է համարել նաև հայ օջախներում ճարտասանութեան կրթութեան յատկացուող մեծ դերը:

Բանաւոր խօսքի նկատմամբ այս ուշադրութիւնը երբեք չի դադարել: Ամբողջ միջնադարում ժողովրդի հետ խօսելու, նրա միտքն ու ճաշակը ձեւաւորելու պարտականութիւնը ծանրացած

էր եկեղեցու հայրերի ուսերին, ահա թէ ինչու այն ամէնը, ինչ պահանջուած է նրանցից ու վերագրուած նրանց, հաւասարապէս վերաբերուած է հրապարակախօսին ու հրապարակախօսութեանը: Հետագայ դարերու վերոյիշեալ պահանջները խորացուել են ու քրացուել:

Ներսէս Շնորհալու համար, օրինակ, եկեղեցու առաջնորդը, հոգեւոր գործիչը բժիշկ է, որ «հոգեւոր բժշկութեան» հնարանքներով է բուժում ախտաւոր հիւանդներին. «...Ուսուցանել ամենայն անձին՝ զմահարեր ախտից իւրեանց զպատճառսն, եւ զկենդանարար հոգւոց զղեղան»⁽³⁾:

Քրիստոնէական վարդապետութիւնը միշտ էլ առանձին կարեւորութիւն է տուել քարոզչի անձնական յատկութիւններին: Եկեղեցու առաջնորդի դերը յաւակնողը ոչ միայն աստուածաշունչ գրոց հմուտ իմացութեամբ պէտք է օժտուած լինի, որ ինքնին հասկանալի է, այլեւ պէտք է լինի առաքինութեան եւ արդարամտութեան կրող: Առանց այս բարձր յատկանիշների անհնար է ակնկալել հրապարակախօս-քարոզչի դերը, որովհետեւ ճշմարտութեանը լրիւ հասու լինելն անհնար է: Առաքինութիւնը եւ գիտութիւնը առաջնորդի զոյգ աչքերն են, պատկերաւոր համեմատութեամբ ներկայացնում է Շնորհալին, որոնցով պէտք է նայի իրականութեանը, աշխարհին: Եթէ «չամանդաղք մթինք» պատեն նրա աչքերը, «սխալ է եւ ընդ ինքեան ի խորխորատ մահու զբողոր անձն իւր արկանէ»⁽⁴⁾: Միայն այս երկուսի ներդաշնակ միասնութիւնը կարող է երաշխիք լինել վստահութեան եւ յաջողութեան, որովհետեւ թէկուզ մէկի բացակայութիւնը կը խանգարի ամբողջ ճշմարտութիւնը ընկալելուն: «Որ զմի յաչացն լաց ունիցի, եւ միւսովն կափուցեալ իցէ, այսինքն՝ որ կամ գիտութիւն առանց գործոց առաքինութեան, եւ կամ առաքինութիւն առանց գիտութեան ունիցի, թերի է ի բարեաց եւ ոչ կատարեալ. քանզի միականեաց նմանի այնպիսին»⁽⁵⁾:

Արդարութեամբ ու հմտութեամբ քարոզիօսք ասելն էլ դեռ եւս բաւական չէ քարոզչի բարձր ստանձնելու համար: Նրա համար էլ, բնականաբար, պարտադիր է քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր պահանջներից մէկը՝ քարոզածը աստուածահաճոյ գործերով հաստատելու անհրաժեշտութիւնը: Բաւական չէ «չաւիղս արդարութեան... ուսուցանել բանի», պէտք է նոյն շաւղով ընթանայ ուսուցանողն ինքը՝ անձնական օրինակ ծառայելով ուրիշներին: Թէկուզ անգամ Աստոյ ճանապարհով ես ընթանում, բայց եթէ այնքան գիտուն չես, որ ուրիշներին «իմաստութեամբ առաջնորդել» կարողանաս, դարձեալ բարոյական իրաւունք չունես առաջնորդ լինելու:

Այսպէս, ահա, բազմիցս շեշտուած է քարոզչի անձնական յատկութիւնների եւ օրինակի նշանակութիւնը:

Միջնադարեան Հրապարակախօսութեան դասական դէմքերից Ներսէս Լամբրոնացին բաւականին ընդարձակեց Երգ դարում քարոզչին ներկայացուող պահանջները չըջանակները

Հրապարակախօսի պարտականութիւնը ժողովրդի վերքերի բացայայտումն է, գերազնիւ մի նպատակ, որ կարճամիտները նոյնացնում են ազգը «այլաներու» հետ: «Անձն իմ, ազգս իմ, բամբասելովս ոչ այլանեմ, այլ բժշկացդ զվէրս ցուցանեմ... Փութացէք, եղբարք, վասն սիրոյն Քրիստոսի ի բժշկել զվէրս իմ»⁽⁶⁾: «Զվէրս իմ»-ը բոլորի վերքերն էր ընդհանրացնում: Հրապարակախօս-քարոզչին բժշկի հետ համեմատելը նորութիւն չէր, բայց Լամբրոնացին աւելի սուր բնոյթ է հաղորդում սրան: Ինչպէս բժիշկը, որ մարմնի հիւանդ մասերը «խարելով եւ հատանելով ոչ թուի» թշնամի, այնպէս էլ հասարակական ու մարդկային ապականած բարքերը «կակծելի բանիւք» մերկացնողները սիրելի պէտք է լինեն նրանց, «որոնց կամին զփրկութիւն»: Այս գիտակցութիւնը նրան իրաւունք է տալիս համարձակօրէն վեր հանել ազգային արատները: Իբրև ճշմարիտ քրիստոնեայ իրեն մեղաւոր է դուռ իր ազգակիցների մոլորութեան համար եւ դրանց վերացումը համարում է իր սրբազան պարտքը՝ «քանզի իմ է եղբօրն վէրն եւ բժշկութիւնն»⁽⁷⁾: Հրապարակախօսութեան գերի ու նշանակութեան տեսանկիւնից շատ կարեւոր է նրա ըմբռնումը, թէ ճշմարտութիւնն ու կեղծիքը պէտք է գտնել իրարից, թէ իսկական քարոզիչը պէտք է բացատրի նրանց ծագումը, որպէսզի հեշտանայ «ստութեան» վերացման ուղիների յայտնաբերումը: «Զէ բաւական ցուցանել զճշմարտութիւնն, այլ կարեւոր է եւ գտնութիւն ի նմանէ բացատրել, որպէսզի իւրաքանչիւրն ի վերայ իւրոյ արմատոյ արձանասցի»⁽⁸⁾: Այնուհետեւ աւելի հեշտ կը լինի տեսնել «զարմատն... չար ախտիս», թշնամանալ նրանց հանդէպ եւ խորանել այնպէս, ինչպէս «զբժիշկն, որ զվէր հիւանդին խարէ»: «Պատարագի մեկնութիւնը» հէնց ազգի վերքերի բացայայտումն է՝ դերագանցապէս եկեղեցու եւ հոգեւորականութեան աշխարհում: Վերադառնալ ակունքներին, սա է բուժման գլխաւոր միջոցը, որի շուրջ լուրջ վէճեր է մղել դեռեւս գիրքը գրելու չըջանում: Մի սեղ խոստովանում է, որ իր բացակայութեամբ աւանդամուլ են համարում իրեն, բայց դէմ առ դէմ գրուցելիս ընդունում են իր արդարացիութիւնը՝ նման ճակատամարտեր շատ է մղել Լամբրոնացին, չկայ ոչ մի վկայութիւն, թէ որեւէ դէպքում պարտուած է հեռացել, մինչդեռ յաթանակների վկայութիւններ շատ կան: Թերեւս իր փորձն էր ընդհանրացնում մեծ ճարտարախօսը, երբ քարոզչին, ճարտասանին, Հրապարակախօսին նոյնացնում էր քաջ գինուորի հետ: Լեւոն Բ-ի յղած նշանաւոր «Թղթում» պատրաստակամութիւն է յայտնում գնալ «ի մէջ նոցին (ձորողեոցիներին — Գ.Ա.) եւ զոր յունկն ձեր խօսիմք՝ քարոզեմք առաջի նոցա»⁽⁹⁾:

Գերադասելի է, եթէ արքայի «հրամանաւ» նրանք գան «առաջի ձեր ընդ մեզ ի մրցումն»: Թէ չէ ինչի նման է, երբ Ձորոգեհոտում նստում եւ հիլիկիտում իրեն բամբասում են: «...Ոչ է այս արիութիւն գինուորի՝ յիւր ապարանն թուր շողացուցանել եւ յոգս հարկանել, այլ որ ի հանդիսի տեղն իջանէ, եւ ընդդէմ ախոյեանին կայ»⁽¹⁰⁾:

Միանգամայն բնական է, որ Լամբրոնացիին խորապէս հաւատում է գրաւոր ու բանաւոր խօսքի ներգործման ուժին, այլապէս անբացատրելի պիտի մնայ այն վիթխարածաւալ աշխատանքը, որի արդիւնքը եղան սուրբ գրքերի մանրակրկիտ ու ծաւարուն մեկնութիւնները («Մեկնութիւն Պատարագին», «Մեկնութիւնք Առակաց, ժողովողի, Իմաստութեան եւ Երգոց Երգոյն», «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն ժԲ մարգարէից» եւ ուրիշներ)։ Ասենք ինքն էլ խոստովանել է դաւ «Լուարո՛ւք խրատական բանիցը»,— յորդորում է քարոզիչ-հրապարակախօսը, որովհետեւ դա է երանութեան հասնելու ճանապարհը։ Բայց ոչ միայն այս «Նրատական բանից» ունկնդրողը ընթանում է իմաստութեան ընդառաջ։ «Լուարո՛ւք գիմաստութիւն,— երկրորդում է արքեպիսկոպոսը,— եւ իմաստուն լերուք, եւ մի՛ պաշարիցիք»⁽¹¹⁾։ Ահա թէ ինչու յորդորում է, որ լսեն իրեն. դրանով կը մաքրուեն ախտերից եւ կ'արժանանան Աստուծոյ բարեգթութեանը։ Իրեն ունկնդրելու, իր մեկնութիւններով լուսաւորուելու ջերմագին յորդորն, ուրեմն, ոչ թէ սնափառութիւնից է բխում, ինչպէս փորձում են ներկայացնել ոմանք, այլ հանրութեանը օգտակար լինելու ցանկութիւնից։ «Արդ՝ որդեակ, լո՛ւր ինձ, եւ երանելի են, որ զճանապարհս իմ պահիցն»⁽¹²⁾։

Իսկ իր ճանապարհը եւ իր առաջարկած ճանապարհը վարդերով չէր պատուած։ Մի ուրիշ տեղ Լամբրոնացիին քարոզիչ-հրապարակախօսին համեմատում է երեխային խրատող-դաստիարակող հօր հետ։ Եթէ հայրը անտեսի որդու թերութիւնները եւ անընդհատ գովի նրան, երկու բնոյթի վատութեան պատճառ կը դառնայ՝ «առաջին զհպարտութիւն, եւ յետ այնք զի ոչ հանէ զչարն դոր ունի»⁽¹³⁾։ Ճիշտն ու աստուածահաճը յանդիմանութեամբ արատների բուժումն է։

Այդպէս պէտք է վարուել նաեւ ազգի ու ազգերի հետ։ Սոցիոմոնի առակների մեկնութեան առաջաբանում իբրեւ առակի (կարատ) ժանրային բնորոշ առանձնայատկութիւն ընդգծում է յանդիմանութեան անհրաժեշտութիւնը։ «Նրատ առանց յանդիմանութեան մոլա՛ր է։ Զի խրատն՝ չար գործոցն եւ սովորութեանցն է ուղղութիւն։ Եւ թէ զայն չյանդիմանէ ոք եւ գարչելի առնէ գործողին, այլ ըստ կամաց խաւաի, եւս մոլորեցուցանէ գիրատեալն»⁽¹⁴⁾։ Եւ ամբողջ մի տեսութիւն է զարգացնում, թէ ինչ «բազում օգուտներ» է տալիս յանդիմանութեամբ դաստիարակելը։

Դեռևս երիտասարդ հոգեւորականը հաւաստում է իր նուիրում-ծուծութիւնը քարոզչին ներկայացուող պահանջներին՝ ընդարձակելով նրանց սահմանները «Նախ զի անաչառ լիցուք ի յուսուցանել»։ Երկրորդ՝ դրանով յայտնի կը լինի խոհեմներին, որ ժողովրդի մէջ տարածուած արատների բացայայտումով, որոնց առիթով էլ արւում են յանդիմանութիւնները, ոչ թէ «իմում ազգիս թշնամի», այլ «քննիչ եւ յաջողութիւնն փութացող» է։ Երրորդ՝ երիտասարդ աստուածաբանը խորապէս համոզուած է, որ դովեստները կարող են վատ ծառայութիւն մատուցել, մինչդեռ աշաւորջ քարոզիչը «զէտ եւ զգուշացուցիչ» պէտք է լինի։ Զորրորդ՝ սեփական ազգի փառաբանութիւնը «զայլս» բամբասելուն զուգակցելը «անձնահաճութեան... եւ ամբարտաւանութեան» է համագոր շինգերորդ՝ «զսոսա բամբասելով եւ նախատելով, յանդիմանիչ անուանիմ եւ ուսեցիչ»...։ Վեցերորդ՝ անընդունելի է համարում նաեւ այլոց «բարի», «զմերս չար» անուանելը, այս դէպքում, խոստովանում է Լամբրոնացին, «Եսալի բարբառով վային հարկանէ զզէմս իմ» այն բանի համար, որ «ասէ զչարն բարի եւ զբարին չար»... Եւ, վերջապէս, եթէ երրորդ՝ ուշադիր եւ ողջախոհ պէտք է լինել սեփական ազգի ու այլոց մասին խօսելիս, որպէսզի չնմանուես այն վաճառականին, որ «խառնէ զժուրն ընդ գինին...»⁽¹⁵⁾։

Լամբրոնացի հրապարակախօսին բնորոշ է երեւոյթների համակողմանի քննութիւնը։ Նա չի բաւարարում հայ եկեղեցու սովորոյթների անբարեձեւութիւնները նշելով, ձգտում է անպայման պարզել՝ «ո՞ր աղագաւ եմուտ այսպիսի անբարեձեւութիւն ի մէջ մեր, եւ այլ բազումս առ սոքօք»⁽¹⁶⁾։ Հարցադրում, որ յաջողութեամբ իրականացնում է արդէն ու ամէնից շատ «Պատարագի մեկնութեան» մէջ։ «Բայց սակայն կարօտիմ ապացուցիւ զբանս յայտնել»,- եւ յայտնաբերում է ապացոյցնր նրա զէնքը, ի հարկէ, սուրբ գրքերն են, բայց ոչ միայն։ Յաճախ է դիմում պատմութեանը, կենցաղին, տրամաբանութեանը, ժամանակակիցներին՝ «Քննութեամբ հաւանեցուք օրինացն, եւ մի յիմարութեամբ»։ Մի ուրիշ տեղ աւելի ամբողջական է ներկայացնում հետազօտութեան իր մեթոտը- «Զի բան իմացութեան պարտ է ընդ ամենայն ընթացքս մեր խառնել, այսինքն միշտ քննել խոհականութեամբ մտաց եւ որոնել՝ զի՞նչ է այս գործ, է՞ր վասն աւանդեցաւ, կամ ո՞ւր յանգի կատարումն սորա, որ եւ միով դիմառութեամբ յայտնեցի»⁽¹⁷⁾։ Այս հայեացքը նրան հնարաւորութիւն է տալիս խուսափել խնդիրների զոգմատիկ լուծումներից եւ ամէն անգամ կոնկրետ վճիռներ կայացնել։ Այսպէս՝ նրա հիմնական ելակէտը կրօնական-եկեղեցական սկզբունքների ու սովորոյթների քննարկման յենւում է սուրբ գրոց եւ սուրբ հայրերի աւանդածին։ Բայց երբ պատմական հանգամանքների, ստեղծուած իրավիճակի թելադրանքով փոփոխութիւններ են կատարուել դրանցում, որոնք հետապնդել

են եկեղեցու պայծառութեան բարձրացման, հաւատի ծաւալման, ժողովրդի կենսական խնդիրները իրականացման նպատակ, արժանանում են նրա հաւանութեանը: Եւրբ եկեղեցու առաջնորդները ժողովրդից ստացած նուէրները սկսեցին ծախսել իրենց կանանց ու երեխաների վրայ, «բարձին զունելն նոցա կանայս... Եւ գովելի է յետոյ մտեալ յորէնս ի փառս Աստուծոյ»⁽¹⁸⁾: Նոյն սկզբունքով ինքը երկրորդ անգամ այրիացածներին, հակառակ եկեղեցու սահմանած օրէնքներին, երրորդ անգամ ամուսնանալու իրաւունք պէտք է տար՝ որդեծնութիւնը խրախուսելու նպատակով:

Պատանի հոգեւորականը հէնց սկզբից հակառակորդներ է ունեցել: «Պատարագի մեկնութիւնը» գրում է իրական ու երեւակայական ընդդիմախօսների հետ վիճելով: Յաճախ բացայայտ, երբեմն տողամէջ գրսեւորում է այս բանավէճը՝ բնութագրելով իր սկզբունքներին անվերապահօրէն հաւատացող, անսքող մերկութեամբ հարցերը առաջադրող, համարձակ աստուածաբանին: Յամառ է նաեւ ու հետեւողական, ոչ մի բան նրան ետ չի կանգնեցնի իր համոզմունքներից: «Ձոր ասեմ, ասեմ եւ ոչ ամաչեմ», — համոզմունքով յայտարարում է: Ամենայն հաւանականութեամբ գրքի համար նիւթեր հաւաքելիս քարոզել է իր տեսակէտները, բացատրել է բարեկամներին, եւ շարակամներին: Ոմանք վիճել են զէմառդէմ եւ պարտուել, ոմանք էլ բամբասել են իր բացակայութեան ժամանակ կամ ապսպրել ինչ-որ բան, «քանզի լուայ յոմանց ասացեալ»⁽¹⁹⁾, «գարձեալ մանր խուզելով թէ ասեն ոմանք»⁽²⁰⁾: Ահա, այսպիսի անհանգիստ, ոչ միշտ բարեկամական միջնորդում է ստեղծել իր գիրքը:

Համբրոնացի քարոզչի իւրայատկութիւններից մէկն էլ այն է, որ ձգտում է խնդրի համակողմանի քննութեան՝ ընդդիմախօսներին զրկելով իրեն առարկելու հնարաւորութիւնից: Սա նկատելի է յատկապէս «Պատարագի մեկնութեան» եւ «Ատեճաբանութեան» մէջ: Առաջինում, խօսելով քրիստոնէութեան տիեզերական բնոյթի մասին, այն մասին, որ քրիստոնեաները տարբեր լեզուներով մի Քրիստոս են պաշտում, բայց նրան յայտնի է նաեւ հակառակ հայեացքը, շտապում է լռեցնել հակառակորդին՝ պարզելով «յաչաղանքի» ոչ աստուածային բնոյթը: «Դու մի ինձ այժմ զյաչաղանս ոմանց ի մէջ բերեր, եւ զհերձուածողական իրերաց անուանադրութիւն. քանզի գիտեմ եւ ես զամենայնս, բայց մարդկան գիտեմք զայն կամք, եւ ոչ Աստուծոյ»⁽²¹⁾:

Եկեղեցու առաջնորդը, հոգեւորականը, քարոզիչը պէտք է ներգործի հասարակութեան վրայ, մերկացնի արատները, ցոյց տայ Աստուծոյ ճշմարիտ ուղին: Այս նպատակով է գրել «Պատարագի մեկնութիւնը»: «...Ձշաւիդս ոտից մերոց ուղղեսցուք», — ահա նրա կլակէտը: Պատանի աստուածաբանը երբեմն անյարմարութեան զգացում է ապրում, որ իրեն է վերապահել առաւել տարեցներին

ուսուցանելու դերը: Բայց համարելով դա Աստծոյ կամքի արտա-
 յայտութիւն, ունի իր կատարածի պատմական նշանակութեան
 զգացում: «Եւ թէ զի՞նչ խառնեցաւ ընդ սոսին, ինձ՝ դատելն եւ
 դիմս ազգ ժպրհութիւն է՝ որ օգտի ի դատելոյն եւ յանդիմանե-
 լոյն»⁽²²⁾: Ուրիշ ազգերն էլ յանդիմանութեան արժանի շատ բան
 ունեն, բայց ինքը չի անդրադառնում դրանց, որովհետեւ «ոչ
 կարգեցայ քննիչ, եւ ոչ օգտեցուցանեմ ի քննելն»: Օգտակար
 լինել ազգին, ահա քարոզչի, հրատարակախօսի, հոգեւորական
 գործչի գերագոյն նպատակը:

Այդ նպատակին պէտք է նուիրուել անմնացորդ, այդ նպա-
 տակը է իրականացնել համարձակութեամբ: Երբեք չիտաա-
 փել ճշմարտութիւնն ասելուց, որքան էլ դառն ու դժբան լինի
 այն: Իր կարճատեւ, բայց բեղմնաւոր ու իմաստալից գործու-
 նէութեամբ այս սկզբունքի իրականացնողը եղաւ Նման վարքա-
 գիծ պէտք է ունենան բոլորը, առաջին հերթին երկրի ղեկավար-
 ները՝ հոգեւոր թէ աշխարհիկ: Երբ թագաւորը խորհրդի է հրաւի-
 բում իր իշխաններին աշխարհի խաղաղութեան, յաղթանակի եւ
 սրանց նման ինչիւրեք քննելու համար, նրանք պարտաւոր են
 «առ տէրն իւրեանց համարձակ խօսել վասն ուղղութեան խորհրդ-
 դոյն եւ օգտի աշխարհի»⁽²³⁾: Նոյն կերպ պէտք է վարուեն հոգե-
 ւոր «իշխանները» եւս, ճիշտ է՝ այս զուգահեռը կարծես անցին
 անց է կացնում հիմնաւորելու համար, թէ ինչու պատարագի
 ժամանակ հոգեւոր հայրերը «ի պատշաճ ժամու» առանձնանում
 են հաւատացեալներին՝ «չուրջ կացեալ զ[Աստուծոյ], բայց էականը
 դա չէ, այլ առանձնանալու կերպն ու նպատակը: Աստուծն ու
 ժողովրդին անմնացորդ ծառայելու ուղին ընտրած արքեպիսկոպո-
 սը խորապէս զգացել է ամբոխի ու ամբոխավարութեան վտանգը:
 Թագաւորը իշխաններին հեռացնում է ամբոխից, որպէսզի սսեն
 այն, «զոր առաջի բազմացն ոչ համարձակէին»:

Երկուստարդ հոգեւորականը գործունէութեան առաջին խի-
 քայլերից զգացել է արդարամիտ ու համարձակ քարոզչին ըս-
 պասուող խաչի ծանրութիւնը, զգալով հանդերձ երբեք չի ընկրկել
 սպասուող ու բաժին հասած դժուարութիւնների առջեւ: «Պատա-
 րագի սեկնութեան» մէջ հեղինակային գեղումները, թաքուն ու բա-
 ցալալալ բանավէճը, ազնիւ ու շիտակ կեցուածքը ընդդիմախօսների
 հանդէպ դարերի հեռաւորութիւնից մեզ են հասցնում այն խոսի-
 վքն ու տաքնապնները, տառապանքն ու հաւատը, որ ապրել է իր
 կոչմանը այնպէս հաւատացող հոգեւորականը՝ Ներկայացնում է
 որեւէ իրողութիւն եւ աւելացնում՝ «տեսեալ էք ամէնեքեան»⁽²⁴⁾,
 ի՞նչքան տեղ հասցնելու համար մտերմիկ զրոյցի է հրաւիրում ըն-
 թերցողին՝ «Դարձեալ եւ այլ խորհուրդ քեզ յայտ, զոր ոչ գի-
 տես», շարադրում է իր խորհուրդը՝ ունկնդրին եւ իրեն փրկելով
 մեղք գործելու վտանգից: «Եւ լուր սիրով, շարունակում է յոր-

դոր-խնդրանքը,— գի մի՛ դու վասն մեղացո դատապարտեցիս, եւ ես վասն ոչ զգուշացուցանելոյս»⁽²⁶⁾։ Դեռ չաւարտած իր գիրքը՝ ազգատեաց են անուանել նրան, օտարասէր։ Այդ բնութագրումները, որ դժբախտաբար յետնորդներն էլ պէտք է կրկնէին, հասնում էին իրեն։ Իրեն յատուկ շիտակութեամբ չի թաքցրել ոչինչ, ամէն ինչ թղթին է յանձնել՝ դրանով իսկ լուեցնելով թէ՛ ժամանակակիցներին, թէ՛ սրանց յետնորդներին։ «Բամբասեն, թէ զազգս ատէ,— ցաւով արձանագրում է եւ վստահ պատասխանը պատգամում գալիք սերունդներին,— Չազգս կարի քաջ սիրեմ»⁽²⁶⁾։ Բայց սիրել ազգը բոլորովին էլ չի նշանակում մոռացութեան տալ նրա վէրքերը, այլ՝ ընդհակառակը՝ «...եւ զվէրն՝ որով ազգս տառապի՝ թշնամանեմ»։

Այսպէս էր հասկանում ազգասիրութիւնը քսանհինգամեայ պատանին։ Նա դատապարտում էր ազգային սնապարծութիւնը, դէպի ուր փորձում էին մղել նեղմիտ ժամանակակիցները։ «Այսպէս ասեն եւ այժմ բազումք,— գտնատուում է արքեպիսկոպոսը,— զքո ազգս գովեա՛ եւ զօտարն բամբասեա՛. եթէ բամբասող եմ, եւ զօտարն եւ զիմս բամբասելովս մեղանչեմ. ապա թէ յանդիմանութեամբ ջան իմ ուղղութեան է, յորժամ զիմս տիրապէս ուղղեմ՝ ապա հարկաւոր է ինձ նոցին քարոզ լինելը»⁽²⁷⁾։ Աստուած իրեն օտարներին «վերակացու եւ ուսուցիչ» չի կարգել, բացի այդ՝ նման արարքը կարող է միայն թշնամութեան առիթ տալ՝ «բամբասանք համարին եւ ոչ խրատ»։

Ընդունողների ու հիացողների մեծ մի բանակի հետ ունեցաւ նոյնքան զօրաւոր հակառակորդներ եւս։ Ամբողջ կեանքում մեղադրանքներ բարդեցին՝ «չար եւ վատ ծառայ անսխիտան», եւ այլն, բայց իր կեանքը ազրեց իրրեւ ճշմարիտ քրիստոնեայ եւ կեանքի վերջում կարող էր կրկնել այն, ինչ գրել էր գործունէութեան սկզբում. «Աղաչեմ զամենեւեան, եւ զոտս եղբարցդ սրբոց արտասուօք սիրոյն համբուրեմ. ներեցէք իմոյ անզգամութեանս, եւ իրրեւ վշտակից ծառայակից ընկալարուք զիս, եւ զձեզ ընկալցի Քրիստոս Յիսուս տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն»⁽²⁸⁾։ Այս թեման, որ ինքը Աստուծոյ պատուէրն է կատարում եւ ոչ թէ սնափառութեան է հետամուտ, տարբեր ձեւակերպումներով անընդհատ կրկնում է մեկնութեան տարբեր էջերում։ Իրրեւ ճշմարիտ քրիստոնեայ, նա իրեն չի անջատում հօտից, առաւել եւս չի հակադրում ընդհանուրին։ Առինքնող մի անկեղծութեամբ մեղքի իր բաժինն է ընդունում այն վիճակի համար, որի մէջ գտնուում է ժողովուրդը, բայց եւ ընդգծում է, որ ինքը գիտակցել է իր մեղքը եւ ձգտում է նոյն ճանապարհին մղել միւսներին։ «Չկշաւամբանս բանիս նախ յանձն իմ եւ ապա յայլս ձըբեմ. մեղաւոր եմ եւ ես, եւ ըստ այժմ մասին հաւասար յոգուեցսակայն զղջացեալ՝ ողորութիւն եւ տեղի ապաշխարութեան գտի

ի բարերար ահռուհէն. ոչ եթէ իբր արդար՝ յանցաւոր դատեմ զայլս, այլ յանցաւորս զտեսակ յանցանացն զգացեալ խորշիմ, եւ այլոց քարոզիմ. իբրեւ ընդ փորձ անցեալ՝ փորձանաւորացդ ի յայտեսակ մեղաց լինիմ օգնական»⁽²⁰⁾.

Համբրոնացին լուստեղեակ էր արուեստի այն գաղտնիքին, որ ամէն ինչ չափի մէջ է գեղեցիկ: Համարձակ ու կրթոս պերճախօսը, որքան էլ օժտուած Աստուծոյ կողմից ու նրա պատուէրի յանձնակատար, մշտապէս ձգտել է մնալ չափի մէջ՝ «եւ ես յորժամ ըստ իմ չափն ելանեմ՝ անմտութիւն է»:

ԳԱՌՆԻԿ Գ. ԱՆԱՆԵԱՆ

ԵԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ.—

- 1.—Գեորգ Մեսրոպ, Հովուական աստուածաբանութիւն Հայաստանաց ս. եկեղեցոյ, Անթիլիաս, 1979, էջ 153:
- 2.—Գարեգին Բ. քթոռակից կաթողիկոս, Համառօտ ձեռնարկ Քովուական աստուածաբանութեան, Անթիլիաս, 1979, էջ 101:
- 3.—Թուրք ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեսան Ներսէսի Յնորհապոյ, Էջմիածին, 1865, էջ 20 (պատճենէ՝ Թուրք ընդհանրական):
- 4.—Նոյն տեղում, էջ 47:
- 5.—Նոյն տեղում:
- 6.—Մեկնութիւն Պատարագին, էջ 441:
- 7.—Նոյն տեղում, էջ 47:
- 8.—Նոյն տեղում, էջ 178:
- 9.—Գրիգոր տղայ, Ներսէս Համբրոնացի, Նամակագի, Վենետիկ, 1865, էջ 245:
- 10.—Նոյն տեղում:
- 11.—Մատենադարան, ձեռ. ճ. 2602, էջ 2Բ:
- 12.—Նոյն տեղում:
- 13.—Մեկնութիւն Պատարագին, էջ 550:
- 14.—Մատենադարան, ձեռ. 2602, էջ 12:
- 15.—Մեկնութիւն Պատարագին, էջ 553:
- 16.—Նոյն տեղում, էջ 54:
- 17.—Նոյն տեղում, էջ 435:
- 18.—Նոյն տեղում, էջ 184:
- 19.—Նոյն տեղում, էջ 91:
- 20.—Նոյն տեղում, էջ 161:
- 21.—Նոյն տեղում, էջ 412-413:
- 22.—Նոյն տեղում, էջ 185:
- 23.—Նոյն տեղում, էջ 153:
- 24.—Նոյն տեղում, էջ 320:
- 25.—Նոյն տեղում, էջ 441:
- 26.—Նոյն տեղում, էջ 416:
- 27.—Նոյն տեղում, էջ 551:
- 28.—Նոյն տեղում, էջ 445:
- 29.—Նամակագի, էջ 210-211:

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

«ՊԵՂԱՐԳ»

ՍՈՒՐԻԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ-Ե. ՀԱՏՈՐ

(Աշխատանք եւ հրատարակութիւն՝ Հալեպի
«Վ. ՃԵՊԵՃԵԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆԻ-1996)



Տարեգիրքերու հրատարակութիւնը, էր երբեմն, պահանջք մը կը նկատուէր Սփիւտֆի եւ օգտաշատ աշխատանք մը միանգամայն: Սուրիա-Լիբանանէն մինչեւ Թեհրան, Պոլիս, Սերպա եւ Ամերիկա, հայ տիպ ու տառին սիրահար բանիբուն խմբագիրներ հաճելի ու օգտակարը իրար խառնած՝ ընթերցումի մնայուն մատենաներ կը հրամցնէին հանրութեան, սովորաբար տարեկան տոնակալ օրերուն: Առանց մէջ գերակշռող տեղ կը բռնէին մասնատրարար պատմագրական նիւթերը, ու յատկապէս՝ գաղութներու անցեալ քէ ներկայ կեանքին, համայնապատկան հաստատութեանց, կառոյցներու, համբաւաւոր դէմքերու մասին տեղեկութիւններ, վիճակագրական տուեալներ, վկայութիւններ, հետաքրքրական յուշեր, եւայլն: Ու ժամանակի ընթացքին, կողք կողքի խմբուած տարեգիրքերու այդ շարքերը կը վերածուէին իւրայատուկ յուշամատենաներու, երբեմն՝ հանրագիտարանային պատկանելի բովանդակութեամբ:

Այսպէս էր եղած պարագան, օրինակ, տարեգիրքերու անկրկնելի վարպետ Թեոդիկի «*Ամէնուն տարեցոյցը*»-ներուն (1907-1929), Կարօ Գեորգեանի նոյնքան արժէքաւոր «*Ամէնուն տարեգիրքը*»-ներուն (Պէլրուք, 1954-1966), կամ Պոլսոյ Ս. Փրկիչ հիւանդանոցի երբեմնի ընդարձակ ու փառաւոր տարեցոյցներուն (1900-1910, հուսկ՝ 1924-1949), յիշած ըլլալու համար ամենէն հանրայայտները:

Տարիներու սահմանին հետ, Սփիւտֆի պարգած մշակութային ձեռնարկները ժխտական ազդեցութիւն ունեցաւ նաեւ տարեգիրքերուն վրայ: Մէկը միւսին ետեւէն խամրեցան անոնք: Այսօր, հայագիտական մէկ քանի տարեգիրքերէ անդին («*Հայկագեան*», «*Հասկ*»), հայ գաղթաշխարհը չունի հանրամատչելի ու ժողովրդային տարեգիրք մը:

Հալեպ, որ պարբերական հայ մամուլի անելի քան 100 անուններ պարարտ հող գտած են անցեալին, 20ական կամ 40ական բուսականներուն ինք եւս ծննդավայրն է եղած քանի մը կարճատեւ տարեգիրքերու, մերթ ամհատական, մերթ միութեանական նախաձեռնութեամբ: Առանց մէջ, Բերիայ թեմի նախկին առաջնորդ Արտաւազդ վրդ. Սիրմելեանի (հետագային՝ արքեպիսկոպոս) «*Տաթեւ*» տարեգիրքերու շարքը (1925-1930) կը մնայ լաւագոյն օրինակը իր կալուածին մէջ: 70 տարուան անջրպետը արգելք մը չէ, որ գայն այսօր եւս քղբատենք հանայնով, այլեւ՝ հետաքրքրութեամբ: Նայենք է եղած մեր համարումը նաեւ «*Գեղարդ*»ի նկատմամբ, որ լոյս կը

տեսնել 1975-ին ի վեր, անկանոն պարբերականությամբ, որպես հրատարակություն Հ.Բ.Ը.Մ.-ի Մատենագիտական Ցանձնախումբին եւ «Վ. Ճեպէնեան» գրադարանին:

«Գեղարդ»-ի Ա. թիւին ընծայումը, Քսանաւեան մը առաջ, ընդունուած էր մեծ խանդավառութեամբ, շրջանի մը մէջ՝ երբ սուրիահայ գաղութը ամբողջովին զրկուած էր սեփական մամուլ ունենալու սփռվածքէն: Տարեգիրքին ձեռննաս խմբագիրը՝ Հայկ Պարիկեան, կրցած էր ի մի բերել այնտեղ Սուրիայէն թէ արտասահմանէն քանի մը տասնեակ գրողներ, արձակ, չափածոյ թէ պատմա-քանասիրական լուրջ գրութիւններով: Յաջորդ թիւերը յոյս տեսան կարգաւ 1978-ին, 1985-ին, 1991-ին եւ, վերջապէս՝ 1996-ին: Այլ խօսելով՝ «Գեղարդ» դադարեցաւ տարեգիրք ըլլալէ ու վերածուեցաւ պարբերագիրքի, թերեւս այն պարզ պատճառով, որ խմբագիր ու հրատարակիչ չէին կրցած տակալ ձեռնարկին պահանջած յոգնութիւններուն ու մեծղի ծախքերուն: Հիմնականը այն է սակայն, որ տարեգիրքին բոլոր հատորներն ալ դարձան մնայուն գործեր, մասնաւորաբար սուրիահայ գաղութի պատմութեան ուսումնասիրութեան տեսակետէն: Արդարեւ, հան խումբը ցանցան գաղութի անցեալ թէ այժմու կեանքին առընչուող բազմաթիւ նիւթեր, որոնք անկասկած կարեւոր ատաղձ մը պիտի դառնան աշխարհագրական այս գօտիին պատմութիւնը շարադրող անպակաս բանասերին:

Հիմա մեր սեղանին է հասած «Գեղարդ»-ի վերջին (5րդ) թիւը, որ որպէս խմբագիր յայտնուած է բժ. Ռոպէր Ճեպէնեան (այժմ՝ ՑԴամեայ), մէկը՝ որուն նիւթա-բարոյական օժանդակութիւնը լծակն է եղած այս տարեգիրքին, իր ծննդոցէն ի վեր:

650 էջոց հաստափոր այս հատորին բովանդակութիւնը առանցք ունի միակ կիզակէտ մը՝ սուրիահայ մայր գաղութի պատմութեան ուսումնասիրութիւնը: Եւ իրաւամբ, տարեգիրքի խմբագրութիւնն հաւատացած է, որ այս գաղութին պատմութեան գրառումը մեծապէս պիտի նպաստէ Սփիւռքի պատմութեան գրառումին, քանի «Հալէպէն է, որ նամբները կը բաժնուին դէպի այլ գաղութներ»:

Հատորը, առանձին բաժիններով, կը ջանայ ցոյցանել պատմական այս գաղութին հարուստ անցեալը եւ ճշգրտօրէն դերը հայ համայնքին՝ սուրիական հայրենիքի ծաղկման, բարգաւաճման եւ տնտեսական վերելքին մէջ: Պատուաբեր իրագործումներու երկար շրջայ մըն է ներկայացուածը այստեղ, յատկապէս նկատի առած այն պարագան, որ հայը կատարակուած ու տարագիր եկաւ այստեղ ու կարճ ժամանակի ընթացքին ո՛չ միայն ռուքի կանգնեցաւ ու շէնցուց իր ազգային շրջապատը, այլեւ գարմանալի ձեռնբերութեամբ նշանակալից նպաստ բերաւ Սուրիայ վերելքին, մէկէ աւելի մարզերու մէջ: Ահա այս կէտն է, գոր ցոյց կու տայ «Գեղարդ»-ը որ ուսանելի կրնայ ըլլալ իւրաքանչիւր հայու համար:

Տարեգիրքի ներկայ թիւին իրենց աշխատակցութիւնը բերած են տասնեակ մը սուրիահայ գրիչներ: Տիրակն ու բացարձակ ներկայութիւն մըն է սակայն բժ. Ռոպէր Ճեպէնեան, որ ստորագրած է շուրջ 50 (չիսուն) կարճ ու երկար յօդուածներ, յուշերու պատասխաններ, վկայութիւններ: Ասանց մէջ, պարագայականին ու մասնակիին կողմէն, կան անշուշտ հետաքրքրական էջեր ալ, յատկապէս ինչ կը վե-

րաբերի 40ական թուականներու որոշ անցքերուն, Հալեպի եւ շրջաններու մէջ ծաւալած ազգային կեանքին, հայրենաբաղձ շարժումներու, եւայլն, որոնց գործօն մասնակից մը եղած է ինք, եւ առ այդ՝ պահած յուշերու հարուստ տպարակ մը... Այս առընչութեամբ, յիշատակութեան արժանի են յատկապէս իր «Հայկազայ գաղութը 20ական թուականներուն» (էջ 32-53), «Կիրիւնքներուն քննարկ» (էջ 124-131), «Հասարակական գործունէութիւններու Համաշխարհային Բ. պատերազմի տարիներուն» (էջ 313-320), «Հայ գաղութին ներդրումը Սուրիոյ առողջապահական մարզէն ներս» (420-446) խորագրեալ յօդուածները, որոնք նորութիւններ կը յայտնաբերեն մասնաւորաբար երիտասարդ ընթերցողին համար:

Օգտաշատ եւ մեծապէս գնահատելի աշխատասիրութիւն մըն է վարդ Քելշիշեանի «Ուրուազիծ-մատենագիտութիւն Սուրիոյ Հայ գաղութի պատմութեան» խորագրեալ համախորհուրդ, ուր 18 էջերու երկայնքին ու առանձին ենթաբաժիններով ցանկագրուած են այն գիրքերն ու մամուլի յօդուածները, որոնց մէջ կը խօսուի սուրիական գաղութին մասին, անոր կազմաւորման շրջանէն մինչեւ մեր օրերը: Աշխատանք, որ կրնայ ուղեցոյց ծառայել բանասերին՝ պարպտումի դիրքութիւններ ընծայելով անոր: Ներկայացուած մատենագիտական նախափորձը ամբողջական չըլլալով հանդերձ, վկայութիւնն է այն հարուստ «գրականութեան», որ արդէն գոյութիւն ունի Սուրիոյ մայր գաղութին մէջ:

Վիճակագրական կարեւոր նախնականութիւն մըն է ԹՎԻ-Հոնի-սիմէ Պոյանեանի համառօտ տեսութիւնը՝ «Սուրիայէն Երեւանի Համալսարան ընդունուած Հայ սաներու մասին»: Հոն նշուած է, որ Հայաստանի պետական համալսարան ընդունուած սուրիական առաջին ուսանողները (6 հոգի) երկիր մեկնած են 1958ին: Այնուհետեւ, այդ թիւը տարուէ տարի անելով ցայժմ հասած է 800ի: Ամփոփ կենսագրականներով յիշատակուած են բոլոր այն շրջանաւարտները, որոնք ներդրում ունեցած են գաղութին կեանքին՝ թատերական, նկարչական, ճարտարապետական, երաժշտական, հայագիտական կամ հանրային-ժառանգական ասպարէզներէն ներս: Միւս կողմէ՝ հետաքրքրական է իմանալ, որ միեւնոյն ժամանակաշրջանին Հալեպի Պետ. համալսարանէն ալ շրջանաւարտ եղած են զանազան մասնագիտութիւններու տէր շուրջ 970 հայ երիտասարդ-երիտասարդուհիներ, ինչ որ համալսարաններու պատկանելի թիւի մը գոյութիւնը կ'ապացուցէ գաղութին մէջ ու յարակարծօրէն խոտոր կը համեմատի վերջին տարիներուն «Երազային Հայէպ»ի ապրած տխուր նահանջին՝ յատկապէս մշակութային նակատի վրայ...

Խնամքով պատրաստուած բաժին մըն է Հալեպի հայկական երկրորդական կրթօճախներուն նուիրուած գլուխը, ուր առանձնաբար ներկայացուած են համառօտ պատմութիւնը Քարէն Սփիէ Ազգ. շեմարանին (Յակոբ Զոլաբեան), ՀԲԸՄի Լազար Նաճարեան-Գ. Վիւլպէնկեան վարժարանին (Լեւոն Պերդուտեան), Կիլիկեան շեմարանին եւ հայ անտարանականներու համաւարտ «Ալեքիօ գոլէն»ին, որուն հայկական դիմագիծը դժբախտաբար խաթարուած եւ ի սպառ կորսուած է 1978էն ետք, եւ աշակերտներու թիւին անհամեմատ նուազումով եւ վարչա-համայնքային ինչ-ինչ հարցերու պատճառով:

«Գեղարդ» ամփոփ, բայց համապարփակ ակնարկներ ունի նաև «հարեան գաղութներ»՝ Յորդանանի և Իրաֆի մասին: Աշխատասիրութիւնը, զոր գրի առած է Լեւոն Պերդուտեան, թարմագոյն տեղեկութիւններ կը հաղորդէ գոյգ երկիրներու հայկ. գաղութներու այժմու կացութեան մասին, ականատեսի հետաքրքրական տուեալներով: Նպատակայարմար էր, կը խորհինք, այս բաժնին մէջ ընդգրկել նաև Լիրանանը, յատկապէս սեւեռնով տեղոյն հայ համայնքին յետպատերազմեան իրավիճակը:

Ինչպէս սովորութիւն է տարեգիրքերու պարագային, «Գեղարդ» զանց չէ ըրած գաղութին երեսիլի դէմքերը: Լուսանկարներու ընկերակցութեամբ՝ ներկայացուած են սուրիահայ համրաւատր կապալառուները (Քօփեան եղբայրք, դամասկոսաբնակ Սագուպեաններ, Արամ Սալաթեան, Միքայէլեան եղբայրք, Պօղոսեան եղբայրք, Նուպար Գարամանուկեան, Յակոբ Աղամեան, Երջանիկ Կարպուշեան, Եւայլն), սուրիական խորհրդարանի եին ու նոր հայ երեսփոխանները (Հրանդ Սիւլահեան, Մովսէս Տէր Գալուստեան, Լեւոն Ղազէլ, Հրաչ Փափագեան, Տիգրան Զրաքեան, Գրիգոր Էպիփրոսեան, Սիմոն Լիպարեան, Եւայլն), կրօնական, կրթական և ազգային տասնեակ դէմքեր: Դեռ կան տեղեկագրական նշմարներ սուրիահայ հրատարակիչներու, հայերէն-արաբերէն թարգմանչական աշխատանքներու, մշակութային միութիւններու, առևտրական հաստատութեանց մասին, Եւայլն, Եւայլն: Այլ խօսեով՝ հաւաքագրումի շնորհակալ ճիգ մը, որ ինչպէս ըսինք, անհրաժեշտ ատարճ մը պիտի ըլլայ գաղութին համընդհանուր պատմութեան գրառումին:

*

* *

«Գեղարդ»ի նման ծաւալուն հատոր մը, իր ընդգրկած տարածուն թովանդակութեամբ, պարզ է, որ պիտի ունենար իր թերիները: Պակասաւոր տեղեկութիւններ, անճիշդ արձանագրութիւններ, մոռացումներ թէ վրէպներ «ընթացիկ»ի կարգն անցած են այլևս ու մենք պիտի չգրադինք անոնցմով՝ հակառակ պատմագրական նման գործերու պարագային այդ մեղանշումներուն անընդունելութեան: Կան սակայն այնպիսի թերացումներ, որոնք տակաւով մը կը գեղչեն գործին հանդէպ ընթերցողէն ակնկալուած համարումը ու մինչեւ իսկ կը խրտչեցնեն զայն: Նշենք հիմնական ճանի մը կէտեր—

ա) «Գեղարդ» լոյսին եկած է խիստ անխնամ տպագրութեամբ: Օգտագործուածը վատթարագոյն տառատեսակն է հայերէն այբուբենին, ժամանակաշրջանի մը մէջ՝ երբ հայ տպագրութիւնը (անլի ճիշդ՝ տպագրական արուեստը) կ'ապրի իր փառքի օրերը, գեղատիպ, ակնախտիղ ու աննախադէպօրէն նաշակաւոր մատենաններու հրատարակութեամբ: Տառատեսակի միօրինակութիւնը, էջադրումի չգոյութիւնը և գեղարուեստական ներքին ձեւաւորումի անտեսումը մեծապէս վնասած են նորատիպ այս գիրքին արտաքին երեսփոխան:

բ) «Գեղարդ»ի 650 էջերը ազատ լողաւագան մը դարձած են սուղագրական և լեզուական բազմաեւրիւր սխալագրութեանց: Տա-

րեզիդէնտը, որ հեւք չի պահանջեր օրաթերթերու մման, եւ որուն պատրաստութիւնը խած է քանի մը տարուան հանդարտ ու դանդաղ աշխատանք, արդարանալի՞ է միթէ, որ վոյթ չընէ լեզուական մաքրութեան: Վերջին հաշուով, որպէս սփիւռահայ, ի՞նչ ունինք աւելի նուիրական, քան մեզի վախանցած միակ աւանդը՝ լեզուն, իմա՞՝ արեւմտահայերէնը: Ինչո՞ւ չգուրգուրալ անոր վրայ, տեղ-տեղ լղրեն-լով գայն...

գ) Ակներեւ խառնաշփոթութիւնը, դասաւորումի պակասն ու նիւթերու համակարգումի անտեսումը է՛ նաեւ այլ թերացում մը: Մատուցուած յօդուածները շարադասուած են գրեթէ ըստ բախտի, առանց ժամանակագրական հետեւողականութեան կամ պատմագրական նուագագոյն մեթոտի, ինչ որ շուարումի կը մատնէ ընթերցողը ու անելանելի բաւիղի մը մէջ գտնուած ըլլալու տպաւորութիւնը կը թողու յաճախ...

դ) Հատորին յառաջաբանը, որպէս տեսակետ թէ գաղափարախօսութիւն, անյարիր կը գտնենք տարեգիրքին բովանդակութեան: Խըմբագրին կողմէ ստորագրուած 2 էջանի այդ գրութեան մէջ, աւաղելով Խորհ. Միութեան անսպասելի վախճանը, կ'ըսուի, թէ *«Դաշնակցային բազմազգ այդ համակարգի փլուզումով, Հայաստան վերադարձաւ առանձնացումի նախկին իր գոյավիճակին: Յանկարծ ինքզինք գտնելով խոցելի, ան սկսաւ դիմել տարբեր միջոցներու, յարաբերական անվտանգութիւն մը ապահովելու նպատակաւ. անգամ ձեռք երկարեց երդուեալ ոսոխին»:*

Այնուհետեւ, «անհաշուելի ստանդարտում» որակելով Հայաստանի անկախացումը, խմբագիրը կը շարունակէ.

«Ապահորհրդայինացումէն ետք, Հայաստանի Հանրապետութիւնը չուշացաւ զգալու, թէ ինք «փոքր ածու» է իրօք, տէր՝ սահմանափակ միջոցներու: Ուստի՝ հրաժարեցաւ մինչ այդ գետին շահած ազգային հիմնական ծրագիրներէ՝ հովանաւորումը աշխարհացրիւ իր հատուածին, ազգահաւաք ու Հայ Դատ:

«...Դժուար է նախատեսել յուսադրիչ հեռանկար այս կացութենէն դուրս դալու, որքան ատեն որ Հայաստան մնայ մեկուսացած՝ յամուռելով ժամանցուած «բացարձակ անկախութեան» մը վրայ», եւայլն, եւայլն:

Յարգելով հանդերձ իւրաքանչիւր հայու տեսակետը, կը տարուինք հարց տալ, թէ ատանց պարզաբանման կամ վիճարկումին համար այլ ամպիտն չէ՞ մնացած պատմագրական տարեգիրքէ մը գատ...: Ի՞նչ առընչութիւն այդ յառաջաբանին ու անոր յաջորդող էջերուն միջեւ:

«Անհրաժեշտ անջատում» մը, իրաւամբ, որուն գոն գացած է *«Գեղարդ»*ի ծերուանագարդ խմբագիրը...

Հալէպ ԼԵՒՈՆ ԸԱՌՈՑԵԱՆ

**«ԷՋԵՐ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»**

(Խմբագիրներ՝ փրոֆ. Վ. Բարխուդարեան
Դոկտ. Չ. Եկանեան Երևան 1996 թ.)



Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի կողմից 1996 թյս է տեսել **«Էջեր Հայ գաղթավայրերի պատմություն»** ժողովածուն, որ տեղ են գտել տասից ասելի յոդուածներ, նուիրուած հայ գաղթավայրերին: Հատորը խմբագրուել է Պրոֆ. Վլադիմիր Բարխուդարեանի եւ Դոկտ. Ջաւէն Եկանեանի կողմից եւ նուիրուել Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի արտասահմանեան անդամ Ռոպեր Յիւլպէնկեանի ծննդեան 70ամեակին:

Գիրքը տառաշարուել է Քալիֆորնիայում, իսկ տպագրուել՝ Փարիզ-գալիայում: Ունի միջակ ծաւալ 4 + 12 + 294 էջ. սկզբի երկու խօսքում տաուած է, որ այս հատորը նուիրուած է հայ գաղթավայրերին, շատ խնդիրներ յուսաբանելու համար, որոնք դեռ մնում են մութի մէջ, թէւ վերջին շարք չորս տասնամեակներում, շատ քան է արուել, քայց եւ շատ քան կայ անելիք, այս գիրքը նուիրուած է այդ քացը մասամբ ծածկելու գործին եւ այդ բերուումով էլ **«Երկու խօսք»**ում այսպէս է տաւում:

«Հայ պատմագրութիւնը, յատկապէս 20րդ դարում, որոշակի յաջողութիւնների է հասել ժողովրդի քաղաքարեան պատմութեան ուսումնասիրութեան գործում: Սակայն հայ ժողովրդի պատմութեան բայտը խընդիրները չէ, որ հաւասար ուշադրութեան են արծանացել: Տակալին կան պատմագիտական առանձին ասպարեզներ, որոնք կարու են հիմնաւոր ընդգրկուն հետազուուման: Դրանցից է հայկական գաղթավայրերի պատմութիւնը, մի բնագաւառ, որի նշանակութիւնը հայ ժողովրդի պատմութեան համար դուար է գերագնահատել:»

Ունի նաեւ դրա անգլերէնը:
«**Երկու խօսք**»ից յետոյ տրուել է Դոկտ. Ռոպեր Յիւլպէնկեանի «Համառու կենսագրութիւն»ը, ըստ որի՝ նա սկսեալ 1955 թուից, երբ իր մահականցուն կնքեց մեծ քարերար Դաւուտ Յիւլպէնկեանը, նախ եղել է Հիմնարկութեան Հայկական քաժնի վարիչը, ապա՝ ասիլի քարծ պաշտօններ է վարել, ինչպէս եւ ստացել է մեծ թաւով յաշանշաններ ու գնահատագրեր եւ տպագրութեան յանձնել շարք երկու տասնեակի հասնող կարեւոր ուսումնասիրութիւններ:

Ասեմք միջանկեալ, որ Դոկտ. Ռ. Յիւլպէնկեանին 1971 թուին Նոր Զուղայի վանքի թանգարանի նոր շէնքի քացման ժամանակ ընդունելու պատիւն ենք ունեցել:

Ինչպէս ասուեց, ժողովածուն նուիրուած է Հայ գաղթավայրերին, որի յոդուածներն ունեն հետեւեալ խորագրերը.

1. **Հայկական գաղթավայրերը. տառաշարումը, նշանակութիւնը**

- Վ. Բարխուդարեան:
- 2. Հայկական արտագաղթը -Վ. Միքայելեան:
- 3. Ուրուագծեր Հայ-անգլիական պատմական կապերի -Ռ. Եղիազարեան:
- 4. Փոխպոպոսի Հայկական բնակչութիւնը եւ Հայ բիւզանդական եկեղ. փոխ-յարար. ժ.Բ. դարի երկրորդ կէսին -Ա. Բոզոյեան:
- 5. Հայկական գաղթավայրերի առաջացումը Ուկրանիայում եւ Լեհաստանում -Ջ. Գալստեան:
- 6. Անտոն Սուլթանիեցի՝ ճանապարհորդութիւն Չինաստան -Հ. Մարտիրոսեան:
- 7. Կոռնէյ լը Բրիւնի «Ուղեգրութիւն»ը որպէս Հայ գաղթօջախների պատմ. ուսումնս. աղբիւր -Է. Թանիրեան:
- 8. Հայերը Վրաստանի առեւտրատնտեսական կեանքում -Վ. Մարտիրոսեան:
- 9. Հայ-վրաց-ուսական յարաբերութեան պատմութիւնից -Պ. Չորանեան:
- 10. Հայ վաճառականութիւնը Ռուսաստանում -Ժ. Անանեան:
- 11. Հայ տպագրութիւնը Ասորիստանում -Վ. Խաչատրեան:
- 12. Ջմիւռնահայ գաղթօջախի մշակույթը -Ա. Խառատեան:

Բոլոր յօդուածներն ունեն անգլերէնով ամփոփումներ, նաեւ ունեն ցանկը անգլերէնով:

Այս յօդուածներից մեզ առանձնապէս անելի հետաքրքիրց *«Անտոն Սուլթանիեցի՝ ճանապարհորդութիւնը Չինաստան»* եւ Գոռնէյ լը Բրիւնիի *«Ուղեգրութիւն»*ը: Վերջինիս մէջ կայ նոր Ջուղայի կենցաղի, տների, եկեղեցիների, հագուստի, կրօնական արարողութիւնների, եւ-այլնի մասին մանրամասն տեղեկութիւններ, գրի առնուած 18րդ դարի սկիզբներին՝ 1703 թուին, Շահ Սուլթան Հոսէյնի ժամանակ:

Այս նկարագրութիւնները աննշան տարբերութեամբ համապատասխանում են հայկական աղբիւրներին եւ այլ ուղեգիրների գրութիւններին: Մի երկու անունի սխալներ կան, որ գրում ենք ճիշտը, Ջուղայի քաղերից մէկն է Գաւաթաղը, որ այժմ եւս կոչւում է Փոչեր, գրքում (էջ 128) գրուել է Փոչեց, նաեւ Շամշարաղը պետք է լինի Շամսարաղ: «Սեֆեան»ն եւս պետք է գրուի Սաֆաւեան:

Մէկ քառի սխալ կայ նաեւ էջ 132ում. «եագմա» պետք է լինի «եաշմա», կամ ըստ ժողովրդականի՝ «եաշմաղ»:

Ռ. Կիւլպէնկեանի կենսագրութեան մէջ (էջ VI), «Հումայումի» քա- ուր (1973 թ. Իրան), պետք է լինի «Հումայումի»:

Նոր Ջուղայի եկեղեցիների մասին, քացի էջ 129 (տողատակի թիւ 18ում) յիշուած աղբիւրներից, կան նաեւ այլ յօդուածներ եւ մենագրու- րութիւններ, որոնք բերուած են *«Նոր Ջուղայի եկեղեցիները»* գրքում (Լ. Գ. Միմասեան, Նոր Ջուղա, 1992 թ. էջ 6-7):

Ժողովածուի մէջ կայ նաեւ Ռ. Կիւլպէնկեանի գումամար եւ սեւ ու սպիտակ երեք նկարներ, սրանցից երկուսը Նոր Ջուղային են պատ- կանում, իսկ մէկը՝ Կ. Բրիւնիի ինքնանկարն է:

16 Յուլ. 1996 թ. Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ
Նոր Ջուղա

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՈՒՇԱԳՐԱԻ ԵԼՈՅԹ ՄՇ

Գահիրեի Պետական Օփերայի միջազգային բեմին վրայ, վերջերս տեղի ունեցած է հայկական եւ օտար մշակութային գործերու ներկայացում, մասնակցութեամբ հայ անուանի արուեստագէտներու:

Առաջին ելոյթով հանդես եկած է ասմունքող եւ երգչուհի Տիկին Շաքէ Յովակիմեան, որ վեց տարբեր լեզուներով ներկայացած է արուեստաւեր հասարակութեան: Ան նախ արտասանած է Վահագն Դաւթեանի, Վահան Տէրեանի, Գէորգ Էմինի բանաստեղծութիւններէն, ապա երգած է հայերէն եւ օտար լեզուներով երգեր, ինչպէս՝ «Ժմ ահուշ տաւոյ», «Երգիր ինձ համար», "La Vie en rose", "My fair lady", «Ջարթիր, լաօ»:

Յաջորդած է երիտասարդ ջութակահար մը՝ «Կոուսկի» մեկնաբանութեամբ, Վալերի Թիրին՝ «Եմաչիք» ռուսական ժողովրդական երգով, որմէ ետք Շ. Յովակիմեան երգած է «Օլիւրիկա» երգը:

Թարմ ուժերէ կազմուած պարախումբը ելոյթ ունեցած է սոլոփական պարով մը, որուն յաջորդած է արաբական երգերու եւ պարերու շարք մը: Նորա եւ Արա Բէօհնէլեաններ, ընկերակցութեամբ ջութակահար եւ դիուլահար Ռուբէն Թէրզիպաշեանի, կատարած են «Տէք Եման», «Գետաչէն» եւ «Կարս, Կարս» երգերը: Յայտագիրի ամբողջ տեսողութեան, դաշնակի վրայ երգիչներուն ընկերակցած է Տիկին Ճորթինի Իսիտ:



ՊԱՐԳԵԻ-ՄՐՑԱՆԱԿ՝ ՓՐՈՖ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆԻ

Փրոֆ. Վահագն Տատրեանի վերջերս լոյս տեսած «Հայկական Յեղասպանութեան պատմութիւնը» անուն հատորը, որ բարձր գնահատանքի արժանացած էր ամերիկեան ակադեմիական շքանակներու կողմէ, նաեւ գրաւած է ուշադրութիւնը Ռուս-հայ Չեռնարկներու Կեդրոնին, երբ վերջնապէս կեդրոնին տնօրէնը՝ Տոքթ. Արկադի Վարդանեան յայտարարած է, թէ որոշած է 5000 տոլարի իր «Մեծ մրցանակ»ով պարգևատրել ամերիկահայ պատմագիրին նորագոյն հատորը՝ «իր բացառիկ արժէքին համար»:

Կեդրոնին կողմէ պաշտօնի կոչուած դատակազմը այս ընտրութիւնը կատարած է՝ հիմնուելով Մոսկուայի եւ Աճն Փեթերսպորկի մէջ պաշտօնավարող ռուս պատմագէտներու կշռադատումներուն վրայ: Կարգալէ ետք Փրոֆ. Վահագն Տատրեանի «Հայկական Յեղասպանութեան պատմութիւնը» խորագրեալ ստուար հատորը, իրենց մարզին մէջ ականատր դեմ-

քեր հանդիսացող ռուս պատմաբաններ բարձր գնահատած են այս գործին մէջ կատարուած պրպտումներուն լայն տարողութիւնը եւ պատմագիտական վերլուծումներուն անվիճելի մակարդակը:

Դրանական պարզեփն կցուած միջանակագիրը յատկապէս կը նըշէ, որ Փրոֆ. Վահագն Տատրեանի այս գիրքը «այքառու է իր գիտական խորաթափանց վերլուծումներով, ինչպէս նաեւ՝ մեծ թիւով վաւերագիրներու օգտագործումով»:

Նկատի առնելով ռուսական ակադեմական շրջանակներու այս բարձր գնահատականը եւ տունայ հատորին հիմնական արժէքը, Ռուս-հայ Չեռնարկներու Կեդրոնը որոշած է ստանձնել անոր ռուսերէնի թարգմանութեան եւ հրատարակութեան ծախսերը, որպէսզի «*Հայկական ցեղասպանութեան պատմութիւնը*» արժանանայ լայն տարածումի՝ Ռուսիոյ եւ նախկին Խորհրդային Միութեան ռուսախօս շրջանակներու մէջ:



րունի «Անտիս Ահարոնեան» արահին մէջ, Ջ. Խալափեանի «*Վասիլ Սեօ, Հայ կայսր Բիւզանդիոսի կամ Կոնստնտինի թագաւորը*» վէպի հրատարակութեան առիթով՝ կազմակերպուած է գինեձօն մը, որուն բացումը կատարած է Գանատայի Շրջ. Վարչութեան ատենապետ Վրէժ-Արմէն Արթինեան:

Ներածական խօսքով ելոյթ ունեցած է Յակոբ Մանճիկեան, որ «Նամագգային»ի «Նայրենի մտաւորականութեան ֆունտ»ի գործունէութեան եւ հետապնդած նպատակներուն անդրադառնալէ ետք, ծանօթացուցած է հրաւիրեալ հայրենի գրագէտն ու օրուան բանախօսը՝ բանաստեղծ եւ մտաւորական Յարութիւն Պէրպէրեանը: Այս վերջինը, բնորոշ վերլուծումներով եւ մէջբերումներով, մանրամասնօրէն ներկայացուցած է վիպագիր Զօրայր Խալափեանի վաստակը եւ, մանաւանդ՝ իր նորագոյն հատորը:

Զանազան հատուածներու ընթերցումէն ետք, կատարուած է գինեձօնի արարողութիւնը, որուն յաջորդած է հեղինակին շնորհակալութեան խօսքը:

ԶՕՐԱՅՐ ԽԱԼԱՓԵԱՆԻ ԳԱՆԱՏԱ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

«Նամագգային»ի Գանատայի Շրջանային Վարչութեան հրավրով՝ արձակագիր ու թատերագիր Զօրայր Խալափեան Յունիս ամսուն Գանատա այցելած է եւ հայ գաղութի գրասէր հասարակութեան հետ ունեցած է հանդիպումներու շարք մը:

Երեքշաբթի, 18 Յունիս 1996ի երեկոյեան, Մոնթրէալի Հայ Կեդ-

Չեռնարկի աւարտին, Ջ. Խալափեան պատասխանած է ներկայներու գրական, մշակութային եւ հայրենական հարցումներուն, ապա մակագրած է ընթերցողներու տրամադրութեան տակ դրուած իր նորագոյն վէպին օրինակները:

**ԶՕՐԱՅՐ ԽԱԼԱՓԵԱՆ
ԿՄՅՑԵԼԷ
ՆԱԵԻ
ԳԵՐՄԱՆԻԱ**

**...ՆԱԵԻ՝
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ**

Մոնթրէալի մէջ տեղի ունեցած զինեձօճէն եւ հանդիպումներէն ետք, 24 Յունիսին, Զօրայր Խալափեան այցելած է Թորոնթօ եւ դիմատրուած՝ «Նամագային»ի Շրջանային եւ տեղական վարչութիւններու ներկայացուցիչներուն կողմէ:

Ծանօթացման, մտերմիկ համդիպումներու, Ջ. Խալափեանի «Որտե՞ղ էիր, մարդ Աստուծո՞ր սնսերիզի ցուցադրութեան երեկոյին եւ այցելութիւններու շարքին փակումը կատարուած է Կիրակի, 30 Յունիս 1996ի երեկոյեան տեղի ունեցած գրական երեկոյթով, որ տեղի ունեցած է Ս. Աստուածածին եկեղեցոյ «Յովնանեան» սրահին մէջ:

Հրատիրեալ գրագէտին կենսագրականն ու վաստակը ներկայացնելէ ետք, Տիկին Սոնա Յովհաննէսեան յատուկ կարեւորութեամբ անդրադարձած է Ջ. Խալափեանի վերջին գործին՝ «Վառիկ մեծ, հայ կայսր Բիզանդիոսի...» խորագրեալ հատորին:

Գործադրուած է գեղարուեստական յայտագիր, որուն աւարտին ելոյթ ունեցած է հիւր արձակագիրը, ապա պատասխանած՝ ներկայներու հարցումներուն:

Գերմանիոյ մայրաքաղաքի գրական կարեւորագոյն կեդրոններէն մէկուն՝ Litertaur WERK Stadt Berlin-ի հրատիրով, անցեալ Սեպտեմբերին Պերլին այցելած է Զօրայր Խալափեան:

Հայրենի հող մը գրողներու մէջէն միջոյթով ընտրուած Զօրայր Խալափեան, Պերլին իր կեցութեան ընթացքին, զանազան հանդիպումներ ունեցած է գերման գրական շրջանակներու, մամոյ ու հաղորդակցութեանց միջոցներու ներկայացուցիչներուն եւ տեղւոյն հայ զաւոյթին հետ:

Litertaur WERK Stadt Berlin, որ առաւելաբար կը հետաքրքրուի նախկին Արեւելեան Եւրոպայի երկիրներու գրականութեամբ, միայն անցեալ տարի սկսած է հետաքրքրութիւն ցոյց տալ նաեւ հայ գրականութեան նկատմամբ, երբ Պերլին հրատիրած են Սիլվա Կասպրատիկեան, Գէորգ Էսին եւ երեք այլ գրողներ:

Այս առիթով կ'արժէ նշել, որ Պերլինի գրական մէկ այլ հաստատութեան՝ Literarisches Colloquium Berlinի հրատիրով՝ 1994ին, Գերմանիոյ մեծագոյն քաղաքը հիւրաբար այցելած են նաեւ երկու այլ հայ գրողներ՝ արձակագիր Ռուբէն Յովսէփեան եւ քանաստեղծ Հենրիկ Էդոյեան:

**ԽՐԻՍՏԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ
ԿՕՃՏՈՒԻ «ՍՈՒԿԲԻԱԶ»
ԱՍՏԱԳԻՐՈՎ**

Խրիստի Հայկական Ընկերության հովանաորութեամբ վերջերս լոյս տեսած է «*Սուրբ Խաչ*» ռուսերէն ամսագիրին առաջին թիւը:

Ամսագիրը լոյս պիտի տեսնէ տարին չորս անգամ, հազար տպարանակով: «Ամսագիրին հիմնական նպատակը հայկական մշակութի քարոզչութիւնն է, Խրիստի մշակութային կեանքին մէջ խրիստոնէական ունեցած դերին լուսարանումը», նշած է խմբագրական կազմի անդամ Վլադիմիր Գասպարեան:

Ամսագիրը դարձած է խրիմահայոց երկրորդ պարբերութեան: Առաջինը՝ միեւնոյն ընկերութեան «*Մասնաց աղանի*» երկլեզու (հայերէն եւ ռուսերէն) լրագիրն է: 1855ին Գաբրիէլ Ալվազովսկիի կողմէ հիմնադրուած թերթը երկրորդ տարին է, որ կը վերահրատարակուի Խրիստի մէջ:



Իտալիայէն, Ֆրանսայէն եւ Միացեալ Նահանգներէն հրապարակուած վաստակատու ու մեծանուն երաժշտագէտներ ու մտաւորականներ:

Մոնթրէալի Հայ Երաժիշտներու Ընկերացութեան կազմակերպութեամբ եւ «Համագային»-ի ու տեղւոյն հայ մշակութային միւս միութիւններուն գործակցութեամբ տեղի ունեցած ձեռնարկներու շարքը սկսած է Ուրբաթ, 25 Հոկտեմբերի երեկոյեան, գոլէճ Վանիէի սրահին մէջ, դասախօսութեամբ մը: Տիկին Մարի Քենտրիճեան դասախօսած է Մայր-Նովայի արուեստին եւ առհասարակ հայ երաժշտութեան նուաճումներուն մասին: Դասախօսութեան յաջորդած է համերգ՝ նուիրուած հայ հոգեւոր երաժշտութեան:

Յաջորդ օրը, առաւօտեան ժամը 8:30ին սկսեալ, Մոնթրէալի

**ՄԱՅԱՔ-ՆՈՎԱՅԻ
ՆՈՒԻՐՈՒԱՄ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ**

Մայր-Նովայի մահուան 200ամեակին առիթով, անցեալ տարուան Հոկտեմբերի վերջին օրերուն, Մոնթրէալի մէջ տեղի ունեցած է գիտաժողով մը, որուն իրենց մասնակցութիւնը բերած են

համալսարանի B421 սրահին մէջ տեղի ունեցած է Սայաթ-Նովայի երաժշտական ու գրական ժառանգութեան նուիրուած գիտաժողով, որուն իրենց մասնակցութիւնը բերած են այս առիթով հրաւիրուած երաժշտագէտներն ու մտաւորականները՝ Նիկողայոս Թահմիզեան (Լոս Անճելըսէն), Մարկ Նշանեան (Նիւ Եորքէն), Յասմիկ Ինճէճիկեան (Մոնթրէալէն), ինչպէս նաեւ՝ Սիլվի Պոլ-Ջէմբէ Եւ ժան Տիւրինկ (Ֆրանսայէն), Ճիանթիերո Պելլիկէրի (Իտալիայէն) եւ Քիվըն Թոփթ (Մոնթրէալէն):

Նոյն օրը երեկոյեան, գոլէճ Վանիէրի հանդիսասրահին մէջ, Բուրէն Յարութիւնեանէ (թառ եւ երգ), Վերճինիա Փաթթի Զերովբեանէ (երգ), Արամ Զերովբեանէ (քանոն) եւ Էդմոնդ Զարդարեանէ (դիոյ) բաղկացած Փարիզի «Կոչնակ» համոյթը տուած է յատուկ համերգ մը: Հայկական երաժշտութեան, բայց յատկապէս հենթանսական եւ միջնադարու երաժշտական ժառանգութեան մեկնաբանման մէջ մասնագիտացած «Կոչնակ»-ի համերգը արժանացած է երաժշտաւէր հասարակութեան եւ մասնագէտներու բարձր գնահատանքին:

Կիրակի, 27 Հոկտեմբերին, գիտաժողովը շարունակած է իր աշխատանքները: Յատուկ զեկոյցներով ելոյթ ունեցած են Արամ Զերովբեան (Ֆրանսայէն) եւ Միհրան Էսէկիլեան (Մոնթրէալէն): Դասախօսութիւններուն յաջորդած է կարծիքներու փոխանակում եւ գիտաժողովի ընթացքին արտայայտուած մտածումներու եզրակացում, որմէ ետք գիտաժողովը աւարտած է իր աշխատանքները:

**...ՆԱԵՒ՝
ՕԹԹԱՌԻԱՅԻ ԵՒ
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ**

Սայաթ-Նովայի շարքին մասնակցած «Կոչնակ» համոյթը եւ զեկոյցաբեր մասնագէտներէն ոմանք իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ Օթթաուայի եւ Մոնթրէալի մէջ տեղի ունեցած ձեռնարկներու:

Կիրակի, 27 Հոկտեմբերին, «Կոչնակ» համոյթը համերգ մը տուած է Օթթաուայի մէջ եւ ապա անցած Թորոնթօ՝ Սայաթ-Նովայի երկօրեայ ձեռնարկներուն իր մասնակցութիւնը բերելու համար:

Թորոնթոյի մէջ, հայ երաժշտութեան նուիրուած ձեռնարկները սկսած են Չորեքշաբթի, 30 Հոկտեմբերին, դասախօսութեամբ մը: Ֆրանսայէն հրաւիրուած Արամ Զերովբեան դասախօսած է հայ հոգեւոր երաժշտութեան մասին:

Յաջորդ օրը, 31 Հոկտեմբերին, Society for Ethnomusicology-ի 41րդ տարեկան հանդիպումի ծիրէն ներս, Թորոնթոյի «Հաուլըրտ Ճոնսըն Փլազա» պանդոկին մէջ ելոյթ մը տուած է «Կոչնակ» համոյթը: Յայտագիրի գործադրութենէն առաջ, ներածական խօսքով հանդէս եկած է Մոնթրէալէն հրաւիրուած Յասմիկ Ինճէճիկեան:

**...ԵՒ ԹԻՖԼԻՍԻ
ՎԱՐԴԱՏՕՆԸ**

Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի մէջ, վերջերս նշուած է ամանդոնիստական կարգ անցած «Սայաթ-Նովայի օրը» կամ «Բա-

րեկամութեան, եղբայրութեան, խաղաղութեան եւ սիրոյ վարդապետներ», որուն իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ Հայաստանէն հրաւիրուած բազմաթիւ արուեստագէտներ:

Ընթացիկ ձեռնարկներու զուգահեռ՝ տեղոյն Ս. Գէորգ եկեղեցոյ մէջ տեղի ունեցած արարողութիւնէն ետք, կազմակերպուած ձեռնարկին իր մասնակցութիւնը բերած է Շարլ Ազնաւուր, որ առաջին հերթին բարձր գնահատած է Սայաթ-Նովայի երաժշտական ժառանգութիւնը, ապա յայտնած իր յատուկ ուրախութիւնը՝ իր հօր ծննդավայրին տուած այս այցելութեան առիթով: Նոյն նպատակով ելոյթ ունեցած է նաեւ հանրածանօթ դերասան Արմէն Ճիգարխանեան:


զահայ ունկնդիրները: Տոնիզեթիի եւ Շթրաուսի յօրինումներուն փայլուն կատարումներէն ետք, Ա. Մխիթարեան ֆրանսահայ երաժշտասէր հասարակութեան հրամցուցած է «Կիլիկիան», Կոմիտասի «Զինար ես»-ը, «Կարապիկ»ը, «Կոռունկ»ը, Առնօ Բարաջանեանի մշակած «Յորժամ»ը եւ Արտեմիս Ալվազեանի «Երեւան»ը:

Երեւանի Օփերայի եւ Պալէթատրոնի առաջնակարգ մենակատարներէն հաղիսացող Անահիտ Մխիթարեան, բազմաթիւ ներկայացումներու մէջ, ստանձնած է գլխաւոր դերեր եւ մարմնաւորած Անոյշի («Անոյշ» օփերա), Օլիմփիայի («Արշակ Բ.»), Տեգտեմնայի («Օթելլօ») եւ Կարինէի («Կարինէ») կերպարները:

ԱՆԱՀԻՏ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՅԱԶՈՒԹԻՒՆԸ

«Նամագգային»ի Փարիզի մասնաճիւղին կազմակերպութեամբ եւ Փարիզի հայոց առաջնորդ Գիտ արքեպս. Նազգաշեանի հովանաւորութեամբ, 25 Սեպտեմբերին, Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցոյ «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ տեղի ունեցած է հայրենի նշանաւոր մեներգչուհի Անահիտ Մխիթարեանի համերգը:

22 Սեպտեմբերին, Սպանիոյ Փամփլոնա քաղաքին մէջ կայացած «Julian Gayarre» մրցանքի դափնեկիրի տիտղոսին արժանացած մեներգչուհին իր իրօրինակ ձայնով հմայած է փարի-



ՅԱՐԳԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ Վ. ԷԹԻԵՄԵՉԵԱՆԻՆ

Արտի տաղնապի մը հետեանքով վաղաժամօրէն մահացած

լիբանանահայ մտատրական եւ գրող Վազգէն Էթիեմեզեանի վաստակն ու յիշատակը մեծարելու նպատակով, «Նամագգային»ի Նայագիտական Բարձրագոյն Հիմնարկի Շրջանաւարտից Միութիւնն ու «Նամագգային»ի Լիբանանի Շրջ. Վարչութիւնը կազմակերպած էին յարգանքի հանդիսութիւն մը, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի, 26 Նոյեմբեր 1996ի երեկոյեան, «Յ. Տէր Մելքոնեան» հանդիսասրահին մէջ:

Բացման խօսքի փոխարէն՝ հանդիսութիւնը սկսաւ կարճ տեսերիզի մը ցուցադրութեամբ: Երիտասարդ տարիքին մահացած լիբանանահայ այլ արուեստագէտի մը՝ երաժիշտ-յորինող Ալեք Մնակեանի մահուան առիթով կազմակերպուած յիշատակի հանդիսութենէն քաղուած Վազգէն Էթիեմեզեանի օրին արտասանած խօսքը ստեղծեց յազական սրահ մը, երբ իր կենդանի ձայնին ու պատկերին ընդմէջէն՝ ներկաները դարձեալ հաղորդակից դարձան եղերաբախտ գրողին ապրումներուն ու մտածումներուն հետ:

Վազգէն Էթիեմեզեան մտածողը ներկայացնելու նպատակով այնուհետեւ ըեմ բարձրացաւ Նազարէթ Պէրպլեան, որ կենդանի վկայութեամբ ներկայացուց հակադիր եզրերը յետ քննարկման ընդհանուր յայտարարի մի բերող մտածողը, որուն առաջին յատկանիշներն էին մտքի կարգապահութիւնը, աշխուժութիւնը եւ հաւատքն ու նովորումը իր գործին ու մարդկային միտքին հանդէպ:

Ապա, նշելէ ետք Վ. Էթիեմեզեանի անդով աշխատասիրութիւնը, Ն. Պէրպլեան վեր առաւ իր երբեմնի գործընկերոջ մարդկային եւ նկարագրային արժանիքները, որոնց շնորհիւ դարձաւ փնտռուած

ներկայութիւն ու հայ միտքի հաստատար խուզարկուներէն մէկը:

Բլօտ Տեպիսիի «Ոտնահետքեր ձիւնի վրայ» յօրինումի կատարումէն ետք, զոր դաշնակի վրայ մեկնաբանեց Տիկին Լիզա Թիսթինճեան-Պէրպլեան, ըեմ բարձրացաւ օրուան երկրորդ բանախօսը՝ Մարգիս Կիրակոսեան՝ ներկայացրնելու Վազգէն Էթիեմեզեան արձակագիրը:

Յայտնելէ ետք, թէ ուսանողական գրասեղաններուն վրայ 60ական թուականներուն իր գրական նախափորձերը կատարած երիտասարդին վաստակը կը մնայ ցրուած լիբանանահայ մամուլի հաւաքածոներուն մէջ, Մարգիս Կիրակոսեան վաղամեռիկ գրողին թիով 19 ստեղծագործութիւնները բաժնեց երեք հանգրուաններու: Ապա, արագ բնորոշումներով, ներկայացուց «Սփիւռք» շաբաթաթերթի, «Ահեկան» հանդէսի եւ «Բաղին» ամսագիրի մէջ ձեւատրուած իր երայացողը երեք հանգրուանները:

Եզրակացնելով, բանախօսը անդրադարձաւ Վ. Էթիեմեզեանի գրութեանց յատկանիշներուն, ընդգծեց անոնց հասարակ յայտարարները եւ կոչ ուղղեց կորուստէ փրկելու զանոնք, որպէսզի հատորի մը մէջ ամփոփուած Վ. Էթիեմեզեան արձակագիրը դառնայ «մնալուն ներկայութիւն»:

Ներկաները անյի եւս հաղորդակից դարձան Վ. Էթիեմեզեանի արձակին, երբ Սեդա Գրիգորեան զուսպ ու անպաճոյճ ապրումով կարողաց անոր «Մահուան բաղձանք» խորագրեալ արձակ կտորը:

Չեռնարկին երրորդ բանախօսն էր Վ. Էթիեմեզեանին աշակերտած Վարուժան Թէրպլեան, որ վեր առաւ աշակերտին հարցերը լուծող, զայն մտածելու առաջնոր-

դող, սրտակից ու բարեկամ ուսուցիչին մարդկային ու իմացական արժանիքները: Իր դաւանած սկզբունքները կեանքի կենդանի օրինակով յարգած ուսուցիչին տիպարը ընդգծելով, ան յիշեցուց իր դասընկերներուն իրենց ուսուցիչին կեանքի օրինակին եւ ամենդարձ սկզբունքներուն հաւատարիմ մնալու անհրաժեշտութիւնը:

Ստեղծուած պահը ամէի ջերմացաւ, երբ Զաքար Բեշիշեան-Թամար Գապարեան զոյգը մեկնարանեցին Խաչատուր Աւետիսեանի «Յուշեր» եւ «Տաղ յայտնութեան» անուն յօրինումները թաւ շուիի, շուիի եւ դաշնակի ներդաշնակ հնչիւններով:

Վերջին խօսողը եղաւ Կարօ Յովհաննէսեան՝ «Վազգէն Էթիւմեզեան մարդը» բնարանով:

Անդարադառնալէ ետք Վ. Էթիւմեզեանի մարդկային տոկուն նկարագիրին, Ա. Յովհաննէսեան տուաւ ընդհանուր կերպարը նուիրեալ ընկեր, բարեկամ, կուսակցական եւ ուսուցիչ, խոնարհ ու միշտ լաւատես այն տիպարին, որուն վաղաժամ մահը կորուստ մը նկատեց մեր գաղութին համար:

Այնուհետեւ, Վ. Էթիւմեզեանի կեանքէն վերցուած բնորոշ օրինակներով, բանախօսը բարձր գնահատեց իրաւ մարդու անոր վարքը, ափսոսաց կորուստը եւ իր խօսքը փակեց մարդու պակասէն տառապող մեր գաղութը նոր ուժերով ծաղկած տեսնելու բաղձանքով:

1996Ի ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐԸ

3 Հոկտեմբեր 1996ին, աշխարհի գրական շրջանակները անա-



կընկալի մատնուեցան, երբ Շըււտական Ակադեմիան 1996 տարւան Նոպելեան գրական մրցանակը շնորհեց յարաբերաբար անծանօթ լեհ բանաստեղծուհիի մը՝ 73ամեայ Վիսլաւա Սիմպորսքայի:

Միմպորսքայի անունը թէւ նըշած էր Նոպելեան մրցանակի թեկնածուներու ցանկին վրայ, սակայն անոր ընտրութիւնը զարմանքով դիմաւորուեցաւ, որովհետեւ գրական շրջանակները կը ապաստին, որ իրլանտացի բանաստեղծ Շէյմուս Հինէյէն ետք վիպագիր մը շահի 1996 տարուան մրցանակը:

Շուտական Ակադեմիան, իր այս վճիռը հիմնաւորող յայտարարութեան մէջ, վեր առնելէ ետք պատմական ու կենսաբանական տարրերու ընդմէջէն մարդկային վաւերական իրականութիւններ ամենայն ներդաշնակութեամբ գրականազննելու Սիմպորսքայի նուրբ իմաստութիւնը, անոր քերթողութիւնը բնորոշած էր իբրեւ «*ողբի, ստեղծագործութեան եւ յուզականութեան ու-*

շաղրաւ միութիւն մը, որ կը յիշեցընէ Վերածնունդն ու Պարոզը:

1945ին իր առաջին քանաստեղծութիւնը ստորագրած արտաքինապետ համետ, սրամտ եւ քաղաքի ժողովը խրտչող Վիսլաա Սիմպորսայի քերթողութիւնը բնորոշելով՝ լեի գրականութեան մասնագէտները ծանրացած են անոր գրականութեան ոճային ալլազանութեան, մարդկային յարաբերութիւնները գոապ ու ժուկալ քնարեցութեանց վերածելու արժանիքին եւ քանաստեղծական այն ինքնուրոյն արուեստին վրայ, որուն անդրադառնալով՝ Շուէտական Ակադեմիայի յայտարարութիւնը կ'աւելցնէ.

«Ի դուր չէ, որ ան նկարագրուած է իբրև բանաստեղծութեան Մոցարթը, նկատի ունենալով անոր ներշնչումի հարստութիւնը եւ ակներև դիւրասահ ոճը, ուր իւրաքանչիւր բառ իր ճիշդ տեղը գնտեղուած է: Սակայն անոր ստեղծագործական աշխատանքին մէջ կայ նաև Պեթհովէնի խոռվըրը»:

Բանաստեղծութեանց 9 փոքր հատորներու եւ բազմաթիւ ծաղկաքաղներու հեղինակ Վիսլաա Սիմպորսա Լեհաստանի գրասէր զանգուածներուն սրտին խօսող քանաստեղծուի մըն է, որովհետեւ պարզ թուացող հարցադրումներու ձայնով զանոնք կը վարակէ պայծառ ու դիտաւիզող փիլիսոփայական եզրակացութիւններով:

Լեի գրական քննադատ Եան Փիեսչախովիչ, որ յաճախ վերլուծած է Սիմպորսայի քերթողութիւնը, դիտել կու տայ, թէ անոր քանաստեղծութիւնները կը խուսափին 20րդ դարու գրականութեան որոշ չափով խելացնոր կշռոյթէն. «Միմ-

պորսա, իր անփոփոխ ստոյիկ ժպտով, իր բնթերցողներուն կը տեղեկացնէ, թէ իրերը այնքան ալ վատ չեն», կ'ընդգծէ առիթով մը:

Լեհաստանի գրական, մշակութային եւ նոյնիսկ քաղաքական շրջանակները մեծ խանդավառութեամբ եւ հպարտութեամբ դիմաւորեցին Սիմպորսայի յաղթանակը:

**ԱՐՏԱԽԱԶԴ
ՓԵԼԷՇԵԱՆԻ
ԺԱՊԱԻԷՆՆԵՐԸ
ԿԸ ՑՈՒՑԱԴՐՈՒԻՆ
ՓԱՐԻԶԻ ՄԷՉ**

Ֆրանսայի Ազգային գրադարանին նախաձեռնութեամբ կազմակերպուած եւ Հայաստանի ու հայրութեան նուիրուած ձեռնարկներու շարքին բացումը կատարուած է 18 Սեպտ. 1996ին: Նախկին Խ. Միութեան սինեմարուեստի մեծագոյն քննադրիչներէն՝ Արտաւազ Փելշեանի «Մենք», «Եղանակները», «Վերջ եւ Կեանք» անուն ժապավենները յաջորդաբար ցուցադրուած են շաբաթական դրութեամբ՝ 18, 25 Սեպտ. եւ 2, 9 Նոյեմբ. Ծուցադրութեանց յաջորդած են գրոյց-դասախօսութիւններ, որոնց իրենց մասնակցութիւնը բերած են դերասան քննադրիչ Մերժ Աւետիսեան, թղթակից-քննադրիչ Փաթրիք Բազայի եւ համալսարանի դասախօս Ժան Ռատվանի:



Փրոֆ. Ռ. Մարտիրոսյանը յուշամուկը մեջ կը յամենէ Ե. Փամբուրեանի

**ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՒ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի
«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»Ի ՄԻՋԵՒ**

«Համազգային»ի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի տնօրէնութեան հրաւերով, անցեալ Դեկտեմբերի առաջին օրերուն, Պէտրոս Կոչարեան Երեւանի Պետական Համալսարանի նախագահը՝ ակադեմիկոս Փրոֆեսոր Ռատիկ Մարտիրոսեան, վերահաստատելու համար 25 Յունիս 1991ին Երեւանի մէջ կնքուած այն համաձայնագիրը, որուն շնորհիւ Հ.Յ.Բ.Հ.ի ուսանողներուն առիթը կ'ընծայուի իրենց մասնագիտական ուսումը շարունակելու Ե.Պ. Հ.ի մէջ:

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր երեկոյեան, «Ռիվիերա» պանորկի սրահին մէջ, տեղի ունեցաւ համաձայնագրի ստորագրութեան

պաշտօնական հանդիսութիւնը՝ Հ.Յ.Բ.Հ.ի տնօրէն Երուանդ Փամբուրեանի եւ Ե.Պ.Հ.ի նախագահ Փրոֆ. Ռատիկ Մարտիրոսեանի միջեւ, Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութեամբ:

Ներկայ էին պետական, ազգային, եկեղեցական, միութենական եւ կրթական անձնատրութիւններ եւ ներկայացուցիչներ: Համաձայնագրի ստորագրումէն ետք, առաջին հերթին խօսք առաւ Արամ Ա. Կաթողիկոս, որ կարեւորութեամբ ընդգծեց հայագիտական այս երկու կեդրոններու գործակցութեան արժէքն ու կարեւորութիւնը: Ապա, հայագիտական նիւթերու աւանդման յատուկ նշա-

նակութիւնը ընդգծելով՝ վեհափառը ըստ. *«Այս պահը կարեւոր է այն խմատով, որ մենք որոշակի եւ պերճախօս արտայայտութիւն կը տեսնենք Հայաստան-Սփիւռք գործակցութեան, ինչ որ մեր հիմնական ուղին է: Մենք մէկ ամբողջութիւն ենք, մէկ ազգ ենք, հետեւաբար՝ Հայաստան-Սփիւռք միասնաբար պէտք է գործեն»:*

Արամ Ա. կաթողիկոսի խօսքին ետք, յաջորդաբար ելոյթ ունեցան Հ.Վ.Բ.Հ.ի տնօրէն Երուանդ Փամպուքեան եւ ակադեմիկոս Փրոֆեսէսոր Ռատիկ Մարտիրոսեան:

Պոչոյնելէ ետք անցնող 5 տարիներու ընթացքին Ե.Պ.Հ.ի ցուցարեւած օժանդակութիւնը Հ.Վ.Բ.Հ.ին, Ե. Փամպուքեան յայտնեց, որ Ե.Պ.Հ.ի եւ Հ.Վ.Բ.Հ.ի միջեւ գործակցութիւն պատահականութեան արդիւնք չէ, այլ ունի խոր արմատներ: Նշելէ ետք, թէ Երեւանի Պետական Համալսարանի հիմնադրման հրամանագիրը ստորագրած Նիկոլ Աղբալեան նաեւ «Համազգային»ի հիմնադիրներէն է, ան շեշտեց, թէ ազգային նոյն ոգին եւ համազգային սիւննոյն նպատակները կը տիրեն երկու հաստատութիւններուն մէջ:

Իրրեւ Ե.Պ.Հ.ի կրօններ գործընկեր՝ Ե. Փամպուքեան շնորհակալութիւն յայտնեց Ե.Պ.Հ.ին, որ վերջին 5 տարիներուն տասնեակ մը մտաւորական դասախօսներով օգտակար հանդիսացաւ ո՛չ միայն «Հիմնարկ»ին, այլեւ՝ Լիբանանի հայ համայնքին:

Եզրակացնելով, ան յատուկ կարեւորութեամբ ծանրացաւ գործակցութիւնը ամրապնդելու եւ զարգացնելու անհրաժեշտութեան վրայ:

Վերջին խօսք առնող եղաւ Ե.Պ.Հ.ի նախագահը, որ երկրորդելէ ետք Ե. Փամպուքեանի արտասանած խօսքը, արելցուց, թէ Ե.Պ.

Հ.ի հիմնադիրները սխրագործութիւն կատարեցին եւ 9 Դեկտեմբեր 1920ին վերակազմաւորեցին այս կրթական մեծ օճախը, որ երբեք պիտի չմոռնայ իր հիմնադիր ռահվիրաները:

Այս հաստատումը կատարելէ ետք, Փրոֆ. Ռ. Մարտիրոսեան նշեց, որ Ե.Պ.Հ. իր պարտքը կատարած է եւ կը շարունակէ ծառայել մեր ժողովուրդին՝ ամէն տարի տալով նորանոր շրջանաւարտներ: Այս առիթով, ան իրրեւ օրինակ նշեց, թէ ներկայիս Գալիֆորնիոյ մեր գաղութին մէջ կը գործեն շուրջ 2000 շրջանաւարտներ, իսկ աշխարհի չորս տարածքին գործող մասնագէտները 70.000 են:

Վերանորոգ համաձայնագիրը նոր որակով եւ բովանդակութեամբ ամրապնդելու գաղափարը ընդգծելով, Փրոֆ. Ռ. Մարտիրոսեան շեշտեց, թէ Ե.Պ.Հ. իր գլխատր հարցը կը համարէ Սփիւռքի բոլոր կրթօճախներուն հետ գործակցութիւնը, որ միայն միակողմանի օժանդակութիւն չէ: Որովհետեւ այս համագործակցութեամբ Հայաստան կը նպաստէ Սփիւռքի զօրացման, իսկ Սփիւռք այցելելով՝ հայրենի մտաւորականութեան կ'ընծայուի Սփիւռքի մտաւորական ու մշակութային գանձերը մօտէն ճանչնալու, ուսումնասիրելու եւ Հայաստանի ուսանողութեան փոխանցելու առիթը:

Մէկ շարքով Պէրոյթ իր գտնուած միջոցին, «Հայագիտական հիմնարկ»էն ետք, Փրոֆ. Ռ. Մարտիրոսեան այցելեց «Համազգային»ի «Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան» ճեմարան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Անթիլիասի Մատուռը եւ Պիթֆալայի յուշարձանը: Ան պաշտօնական հանդիպումներ ունեցաւ նաեւ Լիբանանի կրթական նախարարին եւ Ամերիկեան ու Լիբանանեան

Պետական Համալսարանի պատասխանատուներուն հետ եւ միասնաբար քննեց հաւաքական գործակցութեանց հեռանկարները: Պետական հանդիպումներու շրջան փակուեցաւ մամուլը ատուի ստուգումը, որ տեղի ունեցաւ 6 Դեկտեմբեր 1996ին, Լ.Օ.Խ.ի «Արաքսի Պուլ-դորձեան» Կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՅԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ

«Գ.Մ.Գ.Մրցանակ»ի դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 1997ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

«Գ.Մ.Գ.Մրցանակ»ը կ'ընտրուի գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր՝ առ ի գնահատում եւ հրատարակութիւն:

Գրական, ինստաստիքական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ Հայ Մշակոյթի այլ կարածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասած ըլլան ամենաուշը մինչեւ 30 Ապրիլ 1997: Առաքուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած եւ երեք օրինակով:

Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

«Գ.Մ.Գ.Մրցանակ»ի նախագահն է Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոս Արամ Ա. Թեյշեան, դատակազմի անդամներն են՝ Գերշ. Տ. Արտաւազդ Արք. Թրթոնեան, Գերշ. Տ. Զարեհ Արք. Ազնաւորեան, Տիար Հրաչ Տասնապետեան (ատենապետ), Տիար Պօղոս Մնայեան (ատենադպիր), Տիար Գեորգ Գանտահարեան, Տոքթ. Արմենակ Եղիայեան, Տիար Պեպօ Միսնեան:

Դատակազմի հասցեն.-
 Armenian Catholicos of Cilicie
 Antelias-Liban

Դիւան «Գ.Մ.Գ.Մ.»ի դատակազմի

ՀԱՅ-ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Լիբանանի մօտ Ֆրանսայի դեսպանատան միացեալ նախաձեռնութեամբ՝ 2էն 4 Դեկտեմբեր երկարող օրերուն, Անթիլիասի եւ Ֆրանսական Մշակութային Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ գիտաժողով մը, նուիրուած՝ Ֆրանսահայկական մշակութային յարաբերութիւններուն:

«Մշակութային երկխօսութիւնը» ընդհանուր խորագիրը ունեցող այս գիտաժողովին բացումը կատարուեցաւ Երկուշաբթի, 2 Դեկտեմբերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանին մէջ, նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսին: Իրենց ներկայութեամբ ձեռնարկին մասնակցեցան Ֆրանսայի դեսպանը՝ Պր. Ժան Փիլեռ Լաֆոն, հոգեւորականներ, համալսարաններու մէջ գործող հրափրեալ դասախօսներ, մտատրականներ եւ մամուլի ներկայացուցիչներ: Յաջորդաբար զեկուցեցին Փարիզ XIII համալսարանի դասախօս Պր. Բլուտ Մուֆաֆեան, Պէյրութի Աէն ժոզէֆ համալսարանի դասախօս Օրիորդ Մելինէ Թովաթեան: Երկրէն բացակայած ըլլալուն պատճառով՝ պետական երեսփոխան Մեթր Խաչիկ Պապիկեանի գրատր ելոյթը կարդաց Պր. Գրիգոր Շահինեան:

Յաջորդ օրերուն, զանազան նիւթերու շուրջ տրուած դասախօսութեանց կողքին, տեղի ունեցաւ հանդիպում մը՝ «Մելանթոն եւ

Հայկ Արսլանեան» ձեռնարանի եւ Լիւսէ Ֆրանքօ-Լիպանէզի աշակերտութեան միջեւ, ինչպէս նաեւ՝ հայ հոգեւոր երաժշտութեան համերգ մը, զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ երաժշտաւոր հանրութեան հրամցուց կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը:

Մշակութային այս ձեռնարկները փակուեցան «Համարկում-ձուլում» թեմային նուիրուած կրթնետղանով մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին համալսարանական դասախօսներ Բլուտ Մուֆաֆեան, Ժանին Ալթունեան, Գրիգոր Պղլտեան եւ մեթր Խաչիկ Պապիկեան: Զրուցավարն էր պետական նախարար Պր. Միշէլ Էտտէ:

Հայ մշակոյթի եւ ի մասնաւորի Ֆրանսայի հայութեան կրած ֆրանսական ազդեցութիւններուն, հայկական պատկանելիութեան գիտակցութեան, հայ լեզուի, եկեղեցւոյ եւ մշակոյթի անվտանգութեան դերակատարութեան, ազգային ինքնութեան զարգացման սփիւռքեան կենսափորձին եւ յարակից նիւթերու կողքին, զրուցակիցները յատուկ կարեւորութեամբ անդրադարձան Յեղասպանութեան հետեւանքները յարթահարելու հայկական փորձառութեան:

Ապա խօսք առաւ պետական նախարար Միշէլ Էտտէ, որ մեծ գովեստով արտայայտուեցաւ Լիբանանի վերելքին ի իմոյթի հայութեան բերած նպաստին, շինարար եւ ստեղծագործ ոգիին, հասարակութեան եւ միասնականութեան մասին:

Կրթնետղանի եւ գիտաժողովին եզրափակումը կատարեց Արամ Ա. կաթողիկոս, որ ջերմ շնորհակալութիւն յայտնեց գիտաժողովի մասնակցողներուն եւ յատկապէս Լիբանանի մօտ Ֆրանսայի դեսպանին:

«ԿԵԱՆՔԻՍ ՎԷՊԸ»

Զարուհի Պահրիի «Կեանքիս Վէպը» անուն յուշագրությունը տպագրության համար պատրաստած ու մեզի յանձնած անձնատրոփինը, Սուրեն Նաթրեան, հաւաստիացուցած էր, որ գործը անտիպ է, բայց ինչպէս նշուեցաւ անգամ մը, հագիւ անոր առաջին երկու հատուածները «Բազին»ի մէջ լոյս ընծայած, պարզուեցաւ, որ անիկա, ուրիշ ձեռագիրի մը հիմամբ, արդէն լոյս տեսած է հատորով:

Մեր նախորդ համարով խօսք եղաւ երկրորդ ձեռագիրին մասին, ու բացուած խօսքը բնաւ հաճելի չէր, այն պարզ պատճառով, որ հանգուցեալ Զարուհի Պահրիի հարազատները կամ հրատարակիչները մատիտ խաղցուցած էին էջերուն մէջ ու հեղինակին անունով կուսակցական ու անհատական իրենց համարումներն ու հակակրօնները մուծած էին հոն, վերաբերում մը՝ որ բոլորովին խորթ է ձեռագիրներուն հետ վարուելու մեր սկզբունքներուն:

Տպագրուած ըլլալու հանգամանքին պատճառով, «Կեանքիս Վէպը» յուշագրութեան շարու-



նակութիւնը այլեւ տեղ չի գտներ «Բազին»ի էջերուն:

Չհաշուած խիստ բացառիկ պարագաներու մատնանշուած առանձին վկայութիւնները, եւ դէմքերու ու դէպքերու նուիրուած բացառիկ համարներուն առիթով օգտագործուած նմոյշները, «Բազին» իր էջերը բացած է բացառաբար անտիպ գրութիւններուն եւ կը շարունակէ հաւատարիմ մնալ առաջին օրէն որդեգրած իր այդ անխախտ սկզբունքներուն:

ԴՈՆ ԲԻՍՈՒ
-թատերգություն-
Ժան Ռիշպեն, հայացուց՝ Մարտիրոս Մինասեան,
Ժընևի, 1996, 92 էջ

ՍԵՐԵՆԱՏ
-բանաստեղծություններ-
Գեորգ Թեմիզեան, Հայէպ, 71 էջ,
«Բարեկամություն» հրատարակչատուն

ԿՐՕՆԸ ԵՒ ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹԻՒՆ
-ուսումնասիրություն-
Թամար Տասնապետեան, Անթիլիաս, 1996, 332 էջ,
տպարան՝ Կաթողիկոսություն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ

ՊԵՏՈՆ
-յուշագրություն-
Համլետ Գեորգեան, Պէյրուք, 1996, 263 էջ,
Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան

ԿՐԿԻՆ ՀԵՄՈՒԹԻՒՆ
-բանաստեղծություններ-
Լեոն Վարդան, Պէյրուք, 1996, 62 էջ,
հրատարակություն՝ Մատենաշար «Ծիրակ» ամսագրի

ՄԻՐԱՆԻ ԳՕՏԻ
-բանաստեղծություններ-
Արիև Արմենեան, Միացեալ Նահանգներ, 1996, 82 էջ,
«Վեհաբք» հրատարակչատուն

ՀԻՔԱՆԱՆ

Հատավաճառ 10.000 Լ.Ռ.
Տարեկան բաժնեգին 40.000 Լ.Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

باکین
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك فراغيجان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄԱՍԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ԳՕԴՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban